2. Մշակել և ներդնել ուսուցման բոլոր ձևերով իրականացվող ՄԿԾ-ների դասընթացներին, ուսումնական այլ մոդուլներին կրեդիտների հատկացման և դրանց հաշվարկման նոր մեթոդաբանություն, ուսումնական գործընթացում հետևողականորեն կիրառել կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչները, բարձրացնել դրանց արդյունավետությունը: Ներդնել ուսանողների ուսումնական բեռնվածության պլանավորման և մշտադիտարկման մեխանիզմներ:

Իրականացված աշխատանքները՝

Վերանայվել են ուսումնական պլանները՝ ուսանողների ակադեմիական տեղաշարժի դյուրացման, կրեդիտների կուտակողական գործառույթի լիարժեք իրականացման տեսանկյունից:

Ակադեմիական քաղաքականության բաժնի կողմից ակադեմիական շարժունության ծրագրի մասնակցած ուսանողների ակադեմիական տեղեկագրերը կենտրոնացված ձևով մշակվել և տրամադրվել են դեկանատներին:

Արդյունքը՝

Վերանայված գործող ուսումնական պլաններ առկա և հեռակա ուսուցման համակարգերում, ուսանողների կրեդիտային չափումներով ակադեմիական տեղեկագրեր, վերանայված ձևաչափեր:

Նպատակը՝

3.Բազմազանեցնել դասընթացների ընթացքում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ Ա, Բ, Գ կոմպետենցիաների համար դարձնելով հստակ տարբերակված: Դասավանդման, ուսումնառության նախընտրելի մեթոդները սահմանելիս՝ հաշվի առնել վերջնարդյունքների առանձին տեսակների առանձնահատկությունները:

Իրականացված աշխատանքները՝

Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից վերանայվել են առարկայական ծրագրերը՝ հաշվի առնելով ուսուցման և ուսումնառության, սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդների և վերջնարդյունքների փոխկապակցման մեթոդաբանությունը:

Արդյունքը՝

Առարկայական ծրագրերի՝ էլեկտրոնային ուսուցման համակարգում լուսաբանում, բոլոր կրթական աստիճաններում և ուսուցման եղանակներում ուսանողների համար հասանելիության ապահովում:

Նպատակը՝

4. Հնգամյա կտրվածքով գնահատել է ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագրում ամրագրված նպատակների իրականացման աստիճանը և պլանավորել հաջորդ՝ 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, մշակել

դրանց իրականացման գործողությունների պլանը, սահմանել կատարողականի արդյունավետության ցուցիչները:

Իրականացված աշխատանքները՝

Մշակվել է Գավառի պետական համալսարանի 2017-2022թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների հնգամյա մշտադիտարկման պլանը, արդյունքները վերլուծվել և հրապարակվել են:

Մշտադիտարկման արդյունքների հաշվառմամբ սահմանվել են 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, մշակվել են գործողությունների արդյունավետության ցուցիչները:

Մշակվել է 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների հնգամյա պլանը, ներկայացվել է կառուցվածքային ստորաբաժանումներին, հրապարակվել ԳՊՀ պաշտոնական կայքէջում:

Արդյունքը՝

Ներքին և արտաքին շահակիցների կարիքների հաշվառմամբ, սպասելիքներին համապատասխան, ազգային կրթական քաղաքականությանը համապատասխան մշակված, արդյունավետության ցուցիչներով նկարագրված, շահակիցների ակնկալիքներին համապատասխանող տեսլականով, տարանջատված գերակա 5 ուղղություններով հաստատված հնգամյա 2023-2027թթ. ռազմավարական ծրագիր:

Նպատակը՝

5. Վերանայել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսություններին ներկայացվող պահանջները, ընդհանուր վերջնարդյունքների ստուգմանը միտված բաղադրիչները:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ու գնահատման ընթացակարգերը վերանայվել և հստակեցվել են, կատարման ժամանակացույցերը վերանայվել և հրապարակվել են, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները մշտադիտարկվել են:

Արդյունքը՝

Մագիստրոսական թեզերի արտաքին գնահատման արդյունքների վերլուծության արդյունքներով գնահատականների 80%-ը գերազանց է եղել:

Ամփոփիչ ատեստավորման գործընթացից արձանագրվել է շահակիցների բավարարվածության 3%-ով աճ:

Նպատակը՝

6. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումները պայմանավորել ՄԿԾ-ների դասավանդման համար առաջնահերթ կարիքներով՝ կարևորելով նաև արտաքին մասնագիտական վերապատրաստումները, ինչպես նաև միջազգայնացումը:

Իրականացված աշխատանքները՝

Իրականացվել են ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման ծրագրեր:

Շարունակվել են ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական շարժունության ծրագրերը:

Արդյունքը՝

Որպես հրավիրյալ դասախոսներ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում թեմատիկ դասախոսությունների շարքով ԳՊՀ դասախոսները հանդես են եկել Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանում, Պովոլժիեի կառավարման ինստիտուտում, ինչպես նաև Բելառուսի Հանրապետության Մինսկի պետական լեզվաբանական համալսարանում:

Բարեխիղճ աշխատանքի համար խրախուսվել են ԳՊՀ 9 դասախոսներ, այս ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցել են 4 դասախոս:

II. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նպատակը՝

1. Շարունակել ապահովել արդյունավետ աշխատանքներ համալսարանի գիտահետազոտական գործունեության կառավարման հստակ քաղաքականության իրականացման ուղղությամբ՝ սահմանված ընթացակարգերի դրույթների պահպանմամբ:

Իրականացված աշխատանքները՝

Լրամշակվել և արդյունավետ գործարկվել են ԳՊՀ-ում գիտահետազոտական աշխատանքների կատարումը կանոնակարգող և խրախուսող կարգերն ու գործիքակազմը:

ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բովանդակային և տեխնիկական պահանջները համապատասխանեցվել են ազգային և միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում տպագրություններին ներկայացվող պահանջներին:

Ուսանողների շրջանում իրականացվել են գիտության և գիտահետազոտական գործունեության նկատմամբ հետաքրքրության բարձրացման ծրագրեր:

Արդյունքը՝

2023թ. մայիսի 5-6-ին զուգակցված՝ առկա-առցանց ձևաչափով կայացած Գավառի պետական համալսարանի հիմնադրման 30-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, որին 11 մասնագիտական բաժանմունքներում մասնակցել են 7 երկրի 40-ից ավելի բուհերի և գիտահետազոտական հաստատությունների 100-ից ավելի ներկայացուցիչներ, այդ թվում՝ ՌԴ և Բելառուսի Հանրապետության գործընկեր բուհերի դասախոսներ:

Համալսարանի գիտահետազոտական պլանավորված գործունեություն, դրա արդյունավետության գնահատման վերլուծություններ, հրապարակված հաշվետվություններ: Պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմայի իրականացում ԳՊՀ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի կողմից: Ծրագրի շրջանակներում 2023-ի հունիսի 10-11-ը Գավառի պետական համլսարանում առկա և առցանց ձևաչափով տեղի ունեցած միջազգային գիտաժողով՝ «Գրականություն և բանահյուսություն» թեմայով, որի նյութերը տպագրվեցին առանձին ժողովածուով:

«Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածուի բնագրերի ձևավորման և ներկայացման, գրախոսման և հրատարակման» բարելավված կանոնակարգ:
Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ընդունելի պարբերականների ցանկում ներառված ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, որը գրանցված է պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման համակարգում, խմբագրական խորհրդի 23

անդամից 9-ը արտերկրի բարձրակարգ մասնագետներ են, որը կազմում է խորհրդի անդամների 39 %-ը:

Նպատակը՝

2. Ապահովել գիտահետազոտական գործունեության պլանավորման և իրականացման համակարգված մոտեցում՝ հստակեցնելով հետազոտությունների աջակցության և ֆոնդհայթայթման գործընթացները, մշակել և գործարկել գիտահետազոտական աշխատանքների գործողությունների պլաններ, որոնց արդյունքներով մշակել զարգացման հայեցակարգային ծրագրեր:

Իրականացված աշխատանքները՝

Գիտահետազոտական գործունեության ընթացակարգերը և համապատասխան մեխանիզմները շարունակաբար բարելավվել են, որոնք միտված են չափելու և գնահատելու ԳՊՀ դասախոսների գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը, ստացված վերջնարդյունքները և դրանց ազդեցությունը ԳՊՀ կրթական ու գիտական գործընթացներին:

Շարունակվել են ԳՊՀ գիտական պարբերականների էլեկտրոնային համակարգի համալրման աշխատանքները, ԳՊՀ գիտական պարբերականում տպագրության ներկայացվող հոդվածների հակագրագողության ծրագրերով ստուգումները:

Արդյունքը՝

ԳՊՀ դասախոսների գիտական հետազոտությունների, հեղինակած հոդվածների, մենագրությունների, դասագրքերի, ԳՊՀ դասախոսների՝ միջազգային և հանրապետական գիտաժողովներին մասնակցության, կազմակերպած միջոցառումների մշտադիտարկման արդյունքների վերլուծություններ վերջին հինգ տարիների համար /38 մենագրություն, 3 դասագիրք, 14 ուսումնական ձեռնարկ, 21 ուսումնամեթոդական ձեռնարկ, 664 հոդված և այլ/: Նկատվել է տարեկան հարաբերական աճ:

Նպատակը՝

3. Ապահովել միջազգային հետազոտական դրամաշնորհային նոր ծրագրերին մասնակցություն:

Իրականացված աշխատանքները՝

Ըստ համապատասխան ոլորտների՝ մշակվել են գիտահետազոտական նախագծեր, մասնակցել ենք դրամաշնորհային մրցույթներին:

Ազգային և միջազգային դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական միջոցները ներգրավվել են ԳՊՀ նյութատեխնիկական պաշարների, լաբորատորիաների, համակարգչային լսարարանների, մասնագիտական աշխատասենյակների հնարավորությունների համալրման, ենթակառուցվածքների բարելավման գործընթացներում:

Արդյունքը՝

ԵՄ «Էրազմուս+ Կարողությունների զարգացում բաղադրիչով» նոր ծրագիր «Բուհական կրթության փոխակերպում՝ հանուն կանաչ և կայուն ապագայի (T-GREEN)», որի համակարգողն է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը: Ծրագրի կոնսորցիումի արտերկրի համալսարաններն են Հռոմի Սապիենզիայի համալսարանը (Իտալիա), Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանը, Լունդի համալսարանը (Շվեդիա) և Կրակովի Յագելոնյան համալսարանը (Լեհաստան): Ծրագրի նպատակն է բարեփոխել մագիստրոսական կրթությունը՝ անցում կատարելով ավանդականից

դեպի ապագայի կրթական «կանաչ» ծրագրերի, համագործակցային ցանցի ստեղծումը և «կանաչ» կրթության համար ազգային ու ինստիտուցիոնալ գործիքակազմի ստեղծումը:

Նպատակը՝

4. Զարգացնել դասախոսական կազմի, ինչպես նաև ուսանողների՝ օտար լեզվի տիրապետման, հետազոտական մեթոդներին տիրապետման կարողությունները:

Իրականացված աշխատանքները՝

Պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմի համար կազմակերպվել են օտար լեզուների ուսուցման արդյունավետ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ վերապատրաստումներ:

Մշակվել է «Հետազոտության մեթոդաբանություն» մոդուլի առարկայական ծրագիր, սահմանված կարգով հաջորդ ուստարում արտոնվել է մոդուլի ներառումը բակալավրիատի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում, վերջնարդյունքները սահմանելիս կարևորվել է ուսանողների մոտ հետազոտական հմտությունների, վերլուծելու և եզրահանգելու կարողությունների զարգացումը:

Իրականացվել են ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմի ակադեմիական շարժունության ծրագրեր, խրախուսվել են միջազգային ծրագրերին նրանց անդամակցությունը:

Արդյունքը՝

Վերապատրաստում անցած ԳՊՀ դասախոսներ և ուսանողներ, ովքեր ռուս գործընկերների և ուսանողների հետ առցանց ձևաչափով մասնակցել են միջազգային գիտամեթոդական սեմինարի՝ «Օտար լեզուների դասավանդման ակտիվ մեթոդներ՝ հեռավար ուսուցման ձևաչափով» թեմայով, Եվրոպական միության «ERASMUS+» ծրագրի շրջանակներում ԳՊՀ պրոֆեսորադասախոսական 11 և ուսանողական 8 ակադեմիական շարժունության իրականացում:

III. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակը՝

1. Շարունակել համալսարանի գործունեությունը կարգավորող ներբուհական փաստաթղթերի և բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գերատեսչական և այլ նորմատիվ իրավական ակտերի հետ համապատասխանության ապահովումը:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ տարբեր ոլորտների գործունեությունը կարգավորող 10 ներբուհական փաստաթղթեր վերանայվել և համապատասխանեցվել են ՀՀ օրենքներին, ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գերատեսչական և այլ ակտերին:

Արդյունքը՝

Վերանայվել և լրամշակվել են հետևյալ ներբուհական ակտերը.

1.Գավառի պետական համալսարանում բակալավրի ու մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ (փոփոխություններով):
2. Գավառի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգ:
3.Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ (փոփոխություններով):
4.Գավառի պետական համալսարանի ամբիոնների կանոնակարգ (փոփոխություններով):
5.Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածուի բնագրերի ձևավորման և ներկայացման, գրախոսման և հրատարակման կարգ (փոփոխություններով):
6.Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) տրամադրելու կարգ (փոփոխություններով):
7.Գավառի պետական համալսարանի ուսանողների ներքին կարգապահական կանոններ (փոփոխություններով):
8.Գավառի պետական համալսարանում բակալավրի ու մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ:
9.Գավառի պետական համալսարանի և ԳՊՀ արհեստակցական կազմակերպության միջև կնքված կոլեկտիվ պայմանագիր:
10.Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և նպաստի ձեվով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) տրամադրելու կարգ:

Նպատակը՝

2.Ընդլայնել և թարմացնել համալսարանի գրքապաշարը՝ բաժանորդագրվելով թվային գրադարանների, ուսանողներին խրախուսել՝ կատարելու հետազոտություններ ժամանակակից աղբյուրների օգնությամբ:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ շահակիցների կարիքների հաշվառմամբ համալրվել է գրադարանային ֆոնդը:

Շարունակվել է ապահովվել ԳՊՀ ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավման քաղաքականության սկզբունքները՝ օժանդակելով նրանց հետազոտական հմտությունների զարգացմանը, անհատական կամ համահեղինակությամբ գիտական հրապարակումների թվաքանակի աճին:

Արդյունքը՝

ԳՊՀ գրադարանային ֆոնդի 439 միավոր մասնագիտական, մեթոդական գրականությամբ համալրում:

ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի՝ https://library.gsu.am/ 80 միավոր թվայնացված գրականությամբ համալրում:

ԳՊՀ-ում առկա նյութատեխնիկական բազան կրթական գործընթացի կազմակերպման համար բավարար են համարել հարցումներին մասնակցած ուսանողների 94,5%-ը:

Նպատակը՝

3. Օգտվել գործընկեր բուհերի և գիտական հաստատությունների գրադարանների պաշարներից և էլեկտրոնային ռեսուրսներից, անդամակցել արտերկրի գիտական գրադարաններին և օգտվել նրանց ծառայություններից:

Իրականացված աշխատանքները՝

Տարբեր կառուցակարգերի կիրառմամբ ընդլայնվել է գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հանրահռչակման աշխարհագրությունը, գիտահետազոտական ուղղությամբ համագործակցային կապերը, ներգրավվել են արտերկրի մասնագետներ թե՛ խմբագրական խորհրդում, թե՛ գիտական հոդվածների հեղինակների շարքում:

Ապահովվել է հետազոտողների գործունեությանը համապատասխան պայմաններն ու միջավայրը:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից ԳՊՀ ուսանողների բավարարվածության աստիճանը կազմել է 88,1%:

Արդյունքը՝

Տեխնիկապես վերազինված և վերանորոգված սխեմատեխնիկայի լաբորատորիա, բնագիտության լաբորատորիա, կրիմինալիստիկայի լաբորատորիա, նկարչության ստուդիա, մանկավարժա-հոգեբանական կենտրոն, ԳՊՀ պատմության թանգարան, լինգաֆոնային մուլտիմեդիական համակարգչային լսարան, ԵՄ Էրասմուս «SMART» ծրագրի շրջանակներում վերազինված «SMART» կենտրոն:

Ուսանողների շրջանում էլեկտրոնային ուսուցման համակարգից, հետազոտությունների իրականացման համար այլ կրթական, հետազոտական միջավայրից անցկացված հարցումների արդյունքներով նրանց բավարարվածության աստիճանը կազմել է նախորդ ուստարվա 74%-ի փոխարեն՝ 94,5%:

Նպատակը՝

4. Բարելավել համալսարանում առկա էլեկտրոնային հարթակները, ստեղծել կապեր առկա համակարգերի միջև՝ ձևավորելով միասնական հարթակ:

Իրականացված աշխատանքները՝

Ստեղծվել է ԳՊՀ կայքի՝ Առցանց դիմումի հարթակ, նախագծվել են ԳՊՀ ներքին կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի թվայնացման համար անհրաժեշտ բաղադրիչները, շարունակվում են մշակվել և ներդրվել անհրաժեշտ թվային գործիքներ:

Արդյունքը՝

Տարանջատված գործող, դեռևս ոչ միասնական էլեկտրոնային համակարգեր:

Նպատակը՝

5. Ուսումնասիրել և համադրել ներքին և արտաքին շահակիցների կարիքներն ու ապագա տեսլականը ԳՊՀ գործունեության տարբեր ուղղություններով՝ բուհի հնգամյա ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների իրականացման նպատակով:

Իրականացված աշխատանքները՝

Շահակիցների ակնկալիքներին համապատասխանող տեսլականով, հստակ տարանջատված գերակա ուղղություններով մշակվել և հաստատվել է ԳՊՀ 2023-2027թթ. հնգամյա ռազմավարական ծրագիրը /ՌԾ/, ինչպես նաև ՌԾ-ի իրականացման գործողությունների պլանը, որում որպես գերակա ուղղություն է սահմանվել «Կրթական և սոցիալ-մշակութային գործունեություն»-ը՝ համապատասխան ակնկալվող արդյունավետության ցուցիչով:

Արդյունքը՝

Չափելի և համադրելի գործողությունների պլան, որը ներկայացվել է բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին՝ որպես պարտադիր կատարման պահանջներ:

IV. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նպատակը՝

1. Բարելավել ուսանողների հավաքագրման կառուցակարգերը, բարձրացնել իրականացվող միջոցառումների արդյունավետությունը, իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի գծով պարբերաբար կազմակերպել «Ամառային դպրոցներ» մարզի հանրակրթական դպրոցների ավագ դպրոցների աշակերտների համար:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակվել է ապահովվել ուսանողների համար գրավիչ ակադեմիական միջավայրը, բարելավվել է ենթակառուցվածքների նյութատեխնիկական բազան:

ԳՊՀ ուսանողական առօրյայի վերաբերյալ տեղեկատվությունը պաշտոնական կայքում և սոցցանցերում օպերատիվ ձևով տարածվել է՝ հասանելի արտաքին և ներքին շահակիցներին:

Ուսանողների համար կազմակերպվող միջոցառումներին մասնակից են դարձել նաև մարզի դպրոցների աշակերտները:

ԳՊՀ-դպրոցներ կապերի ապահովման համար կազմակերպվել են համատեղ միջոցառումներ, քննարկումներ:

Հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում մասնագիտությունների ընտրության նպատակով անցկացվել են հարցումներ, վերլուծվել արդյունքները:

Արդյունքը՝

Մարզի դպրոցների հետ կնքված կամ վերակնքված համագործակցության թվով 6 նոր պայմանագրեր և 7 հուշագրեր: Առցանց և անցանց իրականացված տարաբնույթ 21 միջոցառումներ՝ ուղղված հանրակրթական դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը, բազմաթիվ աշակերտների, այդ թվում՝ ‹‹Իմ կյանքը համայնքում›› ծրագրի շրջանակում Գեղարքունիքի մարզի համայնքներում հյուրընկալված աշակերտների մասնակցությամբ, իրականացված լրացուցիչ կրթական ծրագրեր, օրինակ էկոտուրիզմին նվիրված անվճար լրացական դասընթաց, որն անցկացվեց ֆրանսիական ‹‹AFRAT›› կազմակերպության հետ համատեղ, նաև դպրոցների աշակերտների մասնակցությամբ:

ԳՊՀ պաշտոնական կայքում և մշտապես համալրվող տեղեկատվություն ԳՊՀ գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ:

Նպատակը՝

2. Ակտիվացնել աշխատանքները սովորողների շրջանում ուսանողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման ուղղությամբ, պարբերաբար ծանոթացնել ուսանողներին իրենց առնչվող համապատասխան իրավական ակտերին:

Իրականացված աշխատանքները՝

Սովորողների իրավունքներին և օրինական շահերին առնչվող կարգերը, որոշումների կայացման գործընթացներում ուսանողների մասնակցության մեխանիզմները մշտապես

ծանուցվել է ուսանողներին, նրանց ծնողներին, ներկայացվել դրանցից օգտվելու աղբյուրներն ու անհրաժեշտությունը:

Սովորողներին ակադեմիական աջակցության և կրթական լրացուցիչ ծառայությունների տրամադրման, նրանց ուսումնական առաջընթացի բարելավման նպատակով պարբերաբար մշտադիտարկվել են սովորողների ակնկալիքներն ու սպասումները, ձեռնարկվել համապատասխան միջոցներ:

Արդյունքը՝

Համալսարանում իրականացվող գործընթացներից սովորողների բավարարվածության աստիճանը կազմել է 98,3%, ապահովվել է 1% աճ:

Նպատակը՝

3. Ակտիվացնել ուսանողական կառույցների՝ Ուսանողական խորհրդի, Ուսանողական գիտական ընկերության աշխատանքները, ուսանողներին տարբեր ձևերով իրազեկել ՈՒԽ, ՈՒԳԸ գործունեության մասին, կիրառել այդ մարմիններին ուսանողների մասնակցության խրախուսման տարբեր կառուցակարգեր, պարբերաբար անցկացնել ֆակուլտետային և համալսարանական ՈՒԽ-ի, ՈՒԳԸ-ի համատեղ նիստեր, բարձրացնել նրանց դերը ուսանողների շրջանում:

Իրականացված աշխատանքները՝

Խրախուսվել է ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմիններին՝ ՈՒԽ-ին և ՈՒԳԸ-ին սովորողների մասնակցությունը:

Շարունակվել է ՈՒԽ և ՈՒԳԸ գործունեության ակտիվացման աշխատանքները ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերում, նրանց ինքնուրույնության մակարդակի բարձրացման, գիտաժողովներին մասնակցության ակտիվացման, ամբիոնների հետ կապերի ամրապնդման հարցերում:

Արդյունքը՝

ՈՒԳԸ ակտիվ գործունեություն, շահագրգիռ մասնակցություն համալսարանի կառավարման, որոշումների ընդունման գործընթացներին, կազմակերպված միջոցառումներից ուսանողների բավարարվածության աստիճանը կազմել է 96,7%:

«Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթի ներբուհական փուլի արդյունքներով 7 ուսանողի թեկնածություն ներկայացվել է ԿԳՄՍՆ, որտեղ և հաղթող է ճանաչվել ԳՊՀ 5 ուսանող, որից 4-ը նվաճել են 1-ին կարգի, իսկ 1-ը՝ 2-րդ կարգի մրցանակներ,

Նպատակը՝

4. Ստեղծել ուսանողական թիրախային խմբեր՝ ուսումնասիրելու ԳՊՀ ուսանողների ակնկալիքներն ու սպասումները կրթական և գիտական ուղղություններով ԳՊՀ գործունեությունից ապագա հինգ տարիների կտրվածքով՝ համալսարանի նոր ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում նրանց առաջարկությունները ներառելու նպատակով:

Իրականացված աշխատանքները՝

Ուսանողական կառույցների կողմից ուսանողների կարիքների վերհանման ներդրված կառուցակարգերով աշխատանքներ են տարվել սովորողներին կրթության բովանդակության ձևավորման ու բարելավման, ՄԿԾ-ների վերանայման, բուհի գործունեության տարբեր ոլորտների արդյունավետության գնահատման, համալսարանի ամենամյա ինքնավերլուծության, ուսանողների փոխատեղման, սովորողներին անվանական

կրթաթոշակների ներկայացման և այլ գործառույթներում ներգրավելու նպատակով, նրանց մասնակցությամբ ստեղծվել են ֆակուլտետային և համալսարանական հանձնաժողովներ:

Արդյունքը՝

Տարբեր հանձնաժողովներում ներգրավված են եղել բուհի 24 ուսանողներ, նրանք կազմում են սովորողների 3,4%-ը, նրանց մասնակցությամբ լուծումներ են ստացել տարբեր հարցեր:

V. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Նպատակը՝

1. Բարձրացնել ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի ներուժի օգտագործման արդյունավետությունը՝ ուժեղացնելով խորհրդի անդամների ներգրավվածությունը բուհի զարգացման գործընթացներում: Պարբերաբար ուսումնասիրել ԳՊՀ կառավարման գործընթացից շահակիցների բավարարվածությունը, արդյունքները ներկայացնել խորհրդի անդամներին:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, կառուցվածքային ստորաբաժանումների նիստերի որոշումներն ու արձանագրությունները ԳՊՀ պաշտոնական կայքէջում շարունակաբար տեղադրվել են՝ հասանելի ներքին և արտաքին շահակիցներին:

ԳՊՀ ներքին և արտաքին շահակիցների հետ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ, քննարկվել համալսարանի գործունեության վերաբերյալ հարցեր:

Շարունակաբար իրականացվել են ԳՊՀ ՌԾ գերակա ուղղություններով կատարված աշխատանքների արդյունավետությունից շահակիցների բավարարվածության գնահատումներ, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման պլանների միջոցով վերահսկվել է արդյունավետության ցուցիչների կատարողականը, դրանցից շեղումները, դրանց պատճառները վերլուծվել, տարեկան գործունեության հաշվետվությունների արդյունքները ներկայացվել ամենշաբաթյա պարբերականությամբ տեղի ունեցող ԳՊՀ ռեկտորատի, ամիսը առնվազն մեկ անգամ տեղի ունեցող գիտական խորհրդի և տարեկան առնվազն մեկ անգամ տեղի ունեցող հոգաբարձուների խորհրդի նիստերին:

Արդյունքը՝

Ամենամյա հրապարակված ինքնավերլուծության զեկույցներ՝ ըստ ՌԾ գերակա ուղղությունների, միջնաժամկետ և հնգամյա հաշվետվություններ:

Շահակիցների բավարարվածության գնահատման նպատակով ՈԱԲ-ի կողմից իրականացված թվով 14 վերլուծություններ:

Նպատակը՝

2. Համալսարանի կառավարման տարբեր մակարդակներում որոշումների նախագծերի քննարկման գործընթացում ակտիվացնել շահակիցների դերը, որոշումների կայացման և կատարման վրա նրանց ազդեցությունը:

Իրականացված աշխատանքները՝

Հոգաբարձուների խորհրդի և ԳՊՀ կառավարման մյուս մարմինների միջոցով ապահովվել է ԳՊՀ կառավարման լիարժեք կոլեգիալություն:

Մշտապես ապահովվել է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, բոլոր ստորաբաժանումների նիստերին ուսանողների, դասախոսների մասնակցությունը:

Արդյունքը՝

ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կարճաժամկետ գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման պլաններ, հրապարակված, շահակիցներին հասանելի վերլուծություններ:

Նպատակը՝

3. Ներդնել կառավարման համակարգի, դրա առանձին օղակների և հատկացվող ռեսուրսների արդյունավետության գնահատման նոր մեխանիզմներ և հետևողականորեն արձագանքել գնահատման արդյունքներին:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակվել են աշխատանքներ՝ բարելավելու ԳՊՀ ֆինանսական, նյութատեխնիկական միջոցների կառավարման, ներբուհական տնտեսության կազմակերպման, գնումների կատարման կառուցակարգերը:

ԳՊՀ ներքին կառավարման տեղեկատվական համակարգը դեռևս գործել է դիֆերենցված՝ ըստ առանձին բաղադրիչների, վիճակագրական և այլ տվյալները պարբերական մուտքագրվել, վերլուծվել և հրապարակվել են, միաժամանակ նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել նախագծելու միասնական կառավարման համակարգ:

Արդյունքը՝

Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Նպատակը՝

4. Մշակել ընդհանուր մոտեցում ու մեխանիզմ՝ գործողությունների պլաններում արտացոլված որակական և քանակական ցուցիչների ճշգրտությունն ապահովելու նպատակով: Մշտադիտարկել գնահատման ցուցիչների չափելիության աստիճանը:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ բոլոր ուղղություններով գործունեության հաշվետվությունների կազմման, բովանդակային և ընթացակարգային մեխանիզմների բարելավման աշխատանքներն ընթացքի մեջ են:

ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմերի գործունեության արդյունավետության գնահատման և խրախուսման բազմագործոն համակարգի մշակումը ընթացքի մեջ է:

Արդյունքը՝

ԳՊՀ զարգացման 2023-2027թթ. ռազմավարական ծրագիր, իրականացման գործողությունների պլան՝ արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցիչներով:

VI. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Նպատակը՝

1. Իրականացնել 2023-2027 թթ. հնգամյա ֆինանսական պլանավորում:

Իրականացված աշխատանքները՝

Գավառի պետական համալսարանի 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների հնգամյա ծրագիրը պլանավորվել է ակնկալվող համապատասխան ֆինանսական հատկացումներով:

Արդյունքը՝

Համալսարանի հնգամյա 2023-2027 ռազմավարական ծրագրի իրականացման պլան՝ համապատասխան ֆինանսական ռեսուրսներով:

Նպատակը՝

2. Մշակել ԳՊՀ ֆինանսական գործունեության ռազմավարական նպատակներ և խնդիրներ, դրանց լուծման երկարաժամկետ գործողությունների պլաններ:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ 2023-2027թթ. ռազմավարական ծրագրում բուհի ֆինանսական գործունեության ռազմավարական նպատակները առանձին՝ որպես գերակա ուղղություն սահմանվել է, տարեկան և միջնաժամկետ մշտադիտարկման պլանների մշակումն և գործարկումը, արդյունքների վերլուծությունը, հրապարակումը ընթացքի մեջ են:

Արդյունքը՝

Ֆինանսական հրապարակված տարեկան վերլուծություններ, գնումների թափանցիկ, հրապարակված տվյալներով գործընթացներ:

Նպատակը՝

3. Բազմազանեցնել աշխատակիցների նյութական աջակցման ծրագրերը, կիրառել խրախուսման առավել արդյունավետ համակարգ:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմերի գործունեության արդյունավետության գնահատման և խրախուսման բազմագործոն համակարգը մշակվել է:

ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացումը խթանելու նպատակով աշխատանքի վարձատրության և խրախուսման տարբերակման մեխանիզմների մշակման և ներդրման աշխատանքներն ընթացքի մեջ են: Բարեխիղճ աշխատանքի համար խրախուսվել են ԳՊՀ դասախոսներ, աշխատակիցներ:

Արդյունքը՝

Խրախուսված 9 աշխատակիցներ:

Նպատակը՝

4. Շարունակել ապահովել բուհի ֆինանսական կայունության ծրագրերը՝ ֆինանսական հոսքերի ճշգրիտ պլանավորման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով: Շարունակել համալսարանի առկա նյութատեխնիկական բազայի պահպանման և ընդլայնման, լաբորատոր բազայի, ուսումնական տարածքի, տեխնիկական հնարավորությունների վերազինման, համալսարանի գույքի նպատակային և խելամիտ տնօրինման, խնայողաբար օգտագործման ծրագրերը:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ ֆինանսական կայունության բարելավում՝ աստիճանաբար ավելացնելով ու բազմազանեցնելով ֆինանսական հոսքերը՝ օրենքով չարգելված աղբյուրներից:

ԳՊՀ ֆինանսական, նյութատեխնիկական միջոցների կառավարման, ներբուհական տնտեսության կազմակերպման, գնումների կատարման կառուցակարգերի, էլեկտրոնային հաշվապահության գործող ծրագրի կատարելագործման, բարելավման նպատակով իրականացվեցին ֆինանսական վերլուծություններ, որոնք հիմք հանդիսացան բուհի ընթացիկ տարվա գործունեությունը իրականացնելու երկու մասնաշենքերում, խուսափելով լրացուցիչ ֆինանսական ծախսերից:

Արդյունք՝

Ուսումնական, հետազոտական անհրաժեշտ ռեսուրսներով ապահովված ՄԿԾ-ներ, համալսարանի համալրված նյութատեխնիկական բազա, աշխատակիցներով համալրված կազմ:

Նպատակը՝

5. Շարունակել աշխատակիցների տարեկան հաշվետվությունների հիման վրա իրականացնել գնահատումներ, կիրառել խրախուսման կառուցակարգեր, ԳՊՀ տարեկան բյուջեում հնարավորինս ավելացնել աշխատակիցների խրախուսմանը տրամադրվող հատկացումները, հատկապես գիտահետազոտական ծրագրերի իրականացման, ինչպես նաև բուհ-դպրոց համագործակցային նախաձեռնությունների համար: Մշտադիտարկել խրախուսման մեխանիզմների արդյունավետությունը, դրանց արդյունքների հաշվառմամբ մշակել և կիրառել դասախոսական կազմի վարկանիշավորման համակարգ՝ տարբերակված աշխատավարձերի տրամադրմամբ:

Իրականացված աշխատանքները՝

Համալսարանի աշխատակիցների գործառույթների կիսամյակային և տարեկան հաշվետվությունների արդյունքներով իրականացնել գնահատումներ,

ԳՊՀ տարեկան բյուջեում հնարավորինս ավելացնել աշխատակիցների խրախուսմանը տրամադրվող հատկացումները:

VII. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նպատակը՝

1. Շարունակել այլ բուհերի հետ իրականացնել համագործակցային ծրագրեր՝ կրթական, գիտական, հետազոտական ուղղություններով, օգտվել առաջատար կազմակերպությունների հետազոտական լաբորատորիաներից, ուսումնամեթոդական, նյութատեխնիկական ռեսուրսներից:

Իրականացված աշխատանքները՝

Իրականացվել է ուսանողների մագիստրոսական թեզերի արտաքին գրախոսություններ՝ ներգրավելով գործընկեր բուհերի պրոֆեսորադասախոսական կազմին:

Կիրառվել է ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համատեղ գիտական ղեկավարման փորձ՝ այն տարածելով բակալավրատում և մագիստրատուրայում, ներգրավելով գործընկեր գիտակրթական հաստատությունների բարձրակարգ մասնագետների:

Գործընկեր բուհերի հետ համատեղ պլանավորվել և իրականացվել են գիտաժողովներ:

Արդյունքը՝

2022-2023 ուստարում մագիստրոսական թեզերի արտաքին գրախոսում՝ գործընկեր բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի գործընկերների ներգրավմամբ:

Գործընկեր բուհերի հետ համատեղ իրականացված գիտաժողովներ, մասնավորապես՝

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտում և Գավառի պետական համալսարանում անցկացված «Արվեստը որպես հոգևոր-մշակութային արժեքների զարգացման աղբյուր» թեմայով միջազգային գիտաժողով, որին առկա ձևաչափով մասնակցեցին ԳՊՀ և Ռուսաստանի, Բելառուսի, Լեհաստանի գործընկեր բուհերի դասախոսներ: Միաժամանակ, կայացավ ուսանողական հեռուստակամուրջ, որի ընթացքում զեկուցումներով հանդես եկան Գավառի պետական համալսարանի, Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի և Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի ուսանողներն ու դասախոսները:

ԳՊՀ դասախոսները մասնակցել են նաև Երևանի պետական համալսարանում և Հայ-Ռուսական համալսարանում կայացած «Գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը՝ տնտեսության արդիականացման շարժիչ ուժ» խորագրով հայ-ռուսական գիտակրթական երկօրյա համաժողովին:

Նպատակը՝

2. Համալսարանի համացանցային կայքում ապահովել եռալեզու տեղեկատվություն՝ բուհի վերաբերյալ անհրաժեշտ իրազեկում ապահովելու և հանրային վստահությունը բարձրացնելու նպատակով:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ կայքէջի բոլոր հարթակները աստիճանաբար համալրվում են անգլերեն, ռուսերեն նյութերով՝ արտաքին գործընկերներին և արտասահմանցի շահառուներին հասանելի դարձնելու նպատակով:

Արդյունքը՝

ԳՊՀ կայքէջի հարթակների համալրում անգլերեն, ռուսերեն նյութերով:

Նպատակը՝

3. Ընդլայնել համագործակցությունը արտասահմանյան գործընկեր բուհերի հետ տարբեր ուղղություններով, այդ թվում՝ համատեղ և կրկնակի աստիճանաշնորհմամբ կրթական ծրագրերի իրականացման ոլորտում:

Իրականացված աշխատանքները՝

Արտասահմանյան գործընկեր բուհերի հետ պլանավորվել և իրականացվել են բազմազանեցված համագործակցային ծրագրեր՝ ըստ ՄԿԾ-ների ուղղվածության, գործընկեր բուհերի դասախոսներից հրավիրվել են համալսարան՝ լավագույն փորձի փոխանակման, նորագույն կրթական և հետազոտական մեթոդների կիրառման նպատակով:

Արդյունքը՝

Բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնում փորձի փոխանակման ծրագրով հրավիրված, Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի դասախոսները հանդես եկան դասախոսությունների շարքով՝ կիրառելով իրենց հետազոտությունների արդյունքներ հանդիսացող ուսուցման նորարարական մեթոդներ, արդի տեխնոլոգիաներ:

Նպատակը՝

4. Շարունակել ներդնել համալսարանում ուսուցանվող մասնագիտությունների գծով հնարավոր դիմորդների մասնագիտական կողմնորոշման նոր կառուցակարգեր՝ շարունակաբար գնահատելով դրանց արդյունավետությունը:

Իրականացված աշխատանքները՝

Ուսումնասիրվել է հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների կրթական կարիքները, անցկացվել համատեղ հանդիպումներ, քննարկումներ, մարզի դպրոցների հետ համատեղ իրականացվել են կրթադաստիարակչական ծրագրեր:

Ուսումնասիրվել է հանրակրթական դպրոցների ուսուցիչների ակադեմիական, մեթոդական, մանկավարժական թեմաներով աջակցության կարիքները, դրանց հաշվառմամբ համալսարանը պատրաստակամ է եղել կազմակերպելու լրացուցիչ կրթական ծրագրեր, վերապատրաստումներ, սակայն ուսուցիչներից արձագանքներ չեն եղել:

Արդյունքը՝

Մարզի դպրոցների հետ կնքված կամ վերակնքված համագործակցության թվով 6 պայմանագրեր և 7 հուշագրեր: Առցանց և անցանց իրականացված տարաբնույթ 21 միջոցառումներ՝ ուղղված հանրակրթական դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը, բազմաթիվ աշակերտների մասնակցությամբ իրականացված լրացուցիչ կրթական ծրագրեր, շնորհված հավաստագրեր:

Նպատակը՝

Հստակեցնել և ըստ անհրաժեշտության վերանայել ԳՊՀ միջազգայնացման ռազմավարությունը՝ սահմանելով հստակ նպատակներ, գործողությունների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլաններ:

Իրականացված աշխատանքները՝

Միջազգային գործընկերների հետ համատեղ գիտագործնական ծրագրերը շարունակաբար իրականացվել են:

Արդյունքը՝

Վերանայված են համալսարանի և գործակից հաստատությունների հետ կնքված պայմանագրերի ժամկետները, վերակնքված են ժամկետները լրացած պայմանագրերը թվով 23 ՀՀ պետական, ոչ պետական ուսումնական հաստատությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, գիտահետազոտական կենտրոնների, ուսանողների պրակտիկաների բազաներ հանդիսացող ինստիտուտների և տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկությունների, պետական և համայնքային կազմակերպությունների հետ: ԳՊՀ աշխատակազմի շրջանում անցկացված հարցումների արդյունքում հարցվողների 75,9%-ը» /նախորդ ուստարվա 60%-ի փոխարեն/ «գերազանց» է գնահատել Արտաքին կապերի և լրատվության բաժնի աշխատանքը, «բավարար» և «անբավարար» պատասխաններ չեն գրանցվել:

VIII. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակը՝

1. Շարունակաբար բարձրացնել համալսարանի սոցիալական պատասխանատվության աստիճանը, բազմազանեցնել որակի ապահովման գործընթացներում տեղեկությունների

հավաքագրման գործիքները և վերլուծել գործիքակազմի արդյունավետությունը՝ ընտրելով շահակիցների յուրաքանչյուր խմբի հետ աշխատելու առավել արդյունավետ մոտեցումներ:

Իրականացված աշխատանքները՝

Կրթական միջավայրի վերաբերյալ ներքին շահառուների և արտաքին շահակիցների շրջանում հարցումների անցկացման պարբերականությունը և ժամանակացույցը, արդյունքների վերլուծությունը, համապատասխան եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը հստակեցված են:

Շարունակաբար իրականացվել են համալսարանի լուսավորչական, աջակցման ծրագրերը մարզի գործատուների, ազգաբնակչության համար:

Որակի ապահովման ներբուհական գործընթացներում ուսանողների մասնակցությունը ակտիվացել է, իրականացվել են թիրախային խմբերի հետ կրթության որակի բարձրացմանը միտված աշխատանքներ:

Ուսանողների կարիքների վերհանման և դրանց բավարարման հնարավոր ուղիների վերաբերյալ անցկացվել են հարցումներ, դրանց արդյունքները վերլուծվել, ներկայացվել են առաջարկություններ և դրանց բարելավման միջոցառումներ:

Արդյունքը՝

Իրականացվել է հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վերաբերյալ վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են ՀՀ Գեղարքունիքի մարզի պետական ոչ առևտրային կազմակերպությունների 75 հաշվապահներներ:

ՈԱԲ կողմից շահակիցների շրջանում իրականացրած թվով 14 հարցումներ, համապատասխան վերլուծություններ: ՈԱԲ շահակիցների մասնակցությամբ թվով 9 նիստ, շոշոփված հարցերում շահակիցների արձագանքի կարևորում և հետևողական հաշվառում:

Նպատակը՝

2. Շարունակել զարգացնել ներառական կրթական միջավայրը, ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթության մատչելիությունը, ԳՊՀ ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորությունները, իրականացնել սանհանգույցների հարմարեցման աշխատանքներ:

Իրականացված աշխատանքները՝

Մասամբ ապահովվել է հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար մատչելի կրթական միջավայրն ու հանրակացարանային պայմանները, սակայն դեռևս այս ուղղությամբ անելիքներ կան:

Արդյունքը՝

Հաշմանդամություն ունեցող անձանց համար բավարար կրթական միջավայր:

Նպատակը՝

3. Թվայնացնել համալսարանի աշխատակիցների և սովորողների անձնական գործերը՝ նրանց սոցիալական կարգավիճակի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերով, շարունակել աշխատանքները համալսարանում շահակիցներին տրամադրվող աջակցման ծրագրերի արդյունավետության գնահատման ուղղությամբ, ներկայացնել տարեկան վերլուծություններ և հաշվի առնել դրանց արդյունքները:

Իրականացված աշխատանքները՝

Համալսարանի կրթական և գիտահետազոտական գործընթացների կազմակերպման փուլերը աստիճանաբար թվայնացվում են, ‹‹Վիրտուալ համալսարան›› համակարգը աստիճանական գործարկվում է, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման (Learn.gsu.am) համակարգի ծրագրային և տեխնիկական հիմքերն ու լուծումները մշտադիտարկվում են, ըստ անհրաժեշտության կազմակերպվում հեռավար և զուգակցված արդյունավետ ուսուցում, կիրառվել են կրթական արդի տեխնոլոգիաներ, հետազոտական նորագույն մեթոդներ:

Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման, ակադեմիական քաղաքականության բաժինների փաստաթղթերը մասամբ են թվայնացվել:

Արդյունքը՝

Ծրագրերն ընթացքի մեջ են:

IX. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակը՝

1. Շարունակել ուսանողական ինքնակառավարման մարմինների, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի միջոցով մշակել և իրականացնել դպրոցականների, մանկատան սաների, հանրության այլ թիրախային խմբերի իրավագիտակցության բարձրացման ծրագրեր:

Իրականացված աշխատանքները՝

Մշակվել և հաստատվել է ԳՊՀ 2023-2027թթ. հակակոռուպցիոն նոր ծրագիր:

Շարունակաբար իրականացվել են ԳՊՀ ուսանողների իրավագիտակցության բարձրացման ծրագրեր, բաց դասախոսություններ և հանրային քննարկումներ, դասախոսների, ուսանողների, աշխատակիցների շրջանում հնարավոր կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ իրականացվել են անանուն հարցումներ, արդյունքներն ամփոփվել, հրապարակվել են:

Արդյունքը՝

ԳՊՀ ուսանողական, դասախոսական կազմի ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացվել է Դիլիջանում «Փախստականների իրավունքի 11-րդ աշնանային դպրոց» և Գավառ քաղաքում «Փաստաթուղթ չունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը» թեմայով աշխատաժողովներ:

Գավառի պետական համալսարանի և Պովոլժիեի կառավարման ինստիտուտի համատեղ կազմակերպած միջբուհական առցանց գիտագործնական սեմինարին՝ նվիրված ուսանողների շրջանում հակակոռուպցիոն աշխարհայացքի ձևավորմանը և բարեվարքության կանոնների արմատավորմանը, մասնակցեցին ԳՊՀ դասախոսներ և ուսանողներ, ինչպես նաև ուսանողներ Պովոլժիեի, Սարատովի, Կազանի, Չեբոկսարիի բուհերից:

Նպատակը՝

2. Ակտիվացնել բուհում անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի աշխատանքի արդյունավետությունը, արձանագրել և քննել անազնվության դեպքերը, ներդնել հաշվետվողականության կառուցակարգ, իրականացնել դրանց գնահատումներ, վերլուծություններ, ապահովել արդյունքների մասին շահակիցներին իրազեկումը:

Իրականացված աշխատանքները՝

ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների կատարման, կոռուպցիոն ռիսկերի վերհանման, կանխարգելման և վերահսկման մեխանիզմները մշտապես գտնվել են բուհի առանցքային կարևորության հարցերի շարքում, հետևողականորեն պահպանվել են ԳՊՀ բարեվարքության կանոնները:

Արդյունքը՝

Գնահատվել է ակադեմիական միջավայրից շահակիցների բավարարվածությունը, հրապարակվել են արդյունքները, որոնք փաստում են ազնիվ ակադեմիական միջավայրի պահպանման հանգամանքը: Տարբեր կառույցների կողմից անանուն հարցումների արդյունքում ներքին և արտաքին շահակիցների կողմից բուհը շարունակաբար գնահատվում է որպես ակադեմիական ազնիվ միջավայրում աշխատող, կոռուպցիայից զերծ կառույց:

Նպատակը՝

3. Շարունակել որակի ապահովման գործիքների և կառուցակարգերի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ դրանցում պարտադիր ներառել կոռուպցիոն ռիսկերի բացահայտման բաղադրիչներ:

Իրականացված աշխատանքները՝

Ապահովվել է բուհի գործունեության բոլոր ոլորտների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:

Համալսարանի որակի ապահովման բաժնի կողմից կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը միտված ներքին և արտաքին շահակիցների շրջանում անանուն հարցումների անցկացումը կրել է պարբերական բնույթ, իրականացված վերլուծությունները հրապարակվել են:

Արդյունքը՝

ՈԱԲ-ի կողմից իրականացված 2 հարցում, հրապարակված վերլուծություններ:

Համալսարանում կոռուպցիոն երևույթների առկայության, կամ դրանց հետ գոնե մեկ անգամ շփման դեպքերի վերաբերյալ ուսանողական անանուն հարցումներում արձանագրված է 0% ցուցանիշ, ինչի մասին ուսանողները, նրանց ծնողները, արտաքին շահառուները փաստում են նաև թիրախային խմբերում տեղի ունեցող քննարկումների, շփումների ժամանակ:

2023-2024 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գործունեության զարգացման ռազմավարական ուղղությունները

2023-2024 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը սահմանել է «Կրթությունը՝ առաջընթացի երաշխիք» կարգախոսը

I. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի շարունակական բարելավում՝ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցում, շահակիցների ներգրավում որակի ապահովման գործընթացում, կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում, ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման գործընթացների համադրելիության ապահովում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) որակի ապահովման գործընթացներին, կրթության որակի ապահովման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում: Համալսարանի ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացի տարեկան և միջնաժամկետ ծրագրերի կատարման մշտադիտարկում, համապատասխան արդյունքների ներկայացում Որակի ապահովման ազգային կենտրոն:
2. Ուսանողների ուսումնական, արտադրական, մանկավարժական, նախաավարտական և այլ տեսակի պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում՝ կիրառելով աշխատանքի վրա հիմնված կրթության մեթոդներ:
3. Բակալավրիատի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի ուսումնասիրում՝ ուսանողների մոտ զարգացնելու հետազոտական հմտություններ, վերլուծելու և եզրահանգելու կարողություններ:
4. Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բարելավում, արդիականացում, դրանցում ամրագրված իրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանեցում ՀՀ Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, աշխատաշուկայի արդի պահանջներին, ԵԲԿՏ որակավորումների համընդհանուր շրջանակին, հաշվի առնելով «կանաչ կրթության» սկզբունքը՝ ըստ ՈՈԾ-ների վերջնարդյունքների, իրականացնել կրթական ծրագրերի արդիականացում, ՄԿԾ-ների մասնագրերի լրամշակում, արտաքին գնահատում:
5. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի և թեստավորման գործող ծրագրի համալրում ուսումնական նոր նյութերով, թեստերով, զուգահեռաբար էլեկտրոնային նոր համակարգերի մշակում և շահագործում՝ ՄԿԾ-ների, ուսումնական մոդուլների, ուսումնամեթոդական տարաբնույթ նյութերի, դասախոսությունների առցանց մատուցման նպատակով, ինչպես նաև ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացում էլեկտրոնային գործիքների կիրառում:
6. Ուսանողների և դիմորդների համար ՄԿԾ-ների նկարագրերի, մասնագրերի վերաբերյալ ուղեցույցների մշակում և հրապարակում:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Համալսարանի գիտահետազոտական գործունեության կառավարման հստակ քաղաքականության իրականացման ուղղությամբ՝ սահմանված ընթացակարգերի դրույթների պահպանմամբ արդյունավետ աշխատանքների ապահովում:
2. Գավառի պետական համալսարանի 2023-2027 թվականների գիտահետազոտական գործունեության շրջանակի սահմանում:
3. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բովանդակային և տեխնիկական պահանջների համապատասխանեցում ազգային և միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում տպագրություններին ներկայացվող պահանջներին:
4. Ազգային և միջազգային դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական միջոցների ներգրավում և ԳՊՀ գրադարանային պաշարների, լաբորատորիաների, համակարգչային լսարանների, մասնագիտական աշխատասենյակների հնարավորությունների համալրում, ենթակառուցվածքների բարելավում:
5. ԳՊՀ ներքին և արտաքին շահակիցներին ‹‹Բաց գիտության›› համակարգի բաղադրիչների սկզբունքներին և կանոններին ծանոթացում, լրացական դասընթացների կազմակերպում, գիտահետազոտական համապատասխան ոլորտի անհրաժեշտ իրազեկություններով օժտված փորձագետների ներգրավմամբ:
6. ՀՀ և օտարերկրյա բուհերի, գիտահետազոտական ինստիտուտների և մասնավոր կազմակերպությունների հետ համատեղ գիտահետազոտական դրամաշնորհային նախագծերի իրականացում:

III. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԳՊՀ կառավարման իրավական հիմքերի կատարելագործում՝ ՀՀ օրենսդրական կարգավորումներին համապատասխան:
2. ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների առաջընթացը գնահատող կատարողականի արդյունքային ցուցանիշների (ԿԱՑ) համակարգի և դրանց արդյունքով խրախուսման համակարգ սահմանելու մեխանիզմի մշակում՝ ելնելով ՀՀ կրթության ազգային քաղաքականության և բուհի ռազմավարական առաջնահերթություններից:
3. Դասախոսների և ուսանողների համար անվտանգ կրթական միջավայրի ապահովում:
4. ԳՊՀ-ում կրթական նորարարությունների խթանման ծրագրերի մշակում՝ դիմելով միջազգային, հասարակական ու այլ ազգային և միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցության նպատակով:
5. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի մասնագիտական զարգացման դասընթացների մշակում և վերապատրաստումների իրականացում:
6. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի շարունակական մասնագիտական զարգացումը խթանալու նպատակով աշխատանքի վարձատրության և խրախուսման տարբերակման մեխանիզմների մշակում և ներդրում:
7. ԳՊՀ ենթակառուցվածքների, մշակութային միջոցառումների և մարզական պարապմունքների դահլիճների վերանորոգում և կահավորում՝ համապատասխանեցնելով ներառականության պահանջներին:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Արտասահմանյան գործընկերների, միջազգային դրամաշնորհատու կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունների ուսումնասիրում և ընդլայնում՝ ֆինանսավորում ստանալու նպատակով:
2. ԳՊՀ-ում շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերի համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանների ապահովում և ծրագրերի իրականացում, խորհրդատվական ծառայությունների մատուցում:
3. Միջազգային, այդ թվում՝ ԵԲԿՏ-ի միջբուհական համագործակցության, շարժունության, գիտահետազոտական և այլ ծրագրերին ԳՊՀ-ի ակտիվ մասնակցության խթանում:
4. Ուսանողական թիրախային խմբերի, այդ թվում՝ Արցախից բռնի տեղահանված ուսանողների կարիքների ուսումնասիրում՝ բացահայտելու նրանց ակնկալիքներն ու սպասումները կրթական և գիտահետազոտական ուղղություններով, դրանց բավարարման նպատակով ծրագրերի մշակում:
5. Միջազգային գիտաժողովների կազմակերպում:
6. Միջազգային համագործակցությամբ մագիստրոսական թեզերի համաղեկավարում:
7. ԳՊՀ-ի՝ հասարակայնության հետ կապերի նոր հայեցակարգի մշակում և գործարկում՝ բարելավելով ԳՊՀ գործունեության մասին հանրային իրազեկման մեխանիզմները:

V. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Հակակոռուպցիոն ծրագրի գործողությունների պլանի մշակում և իրականացում:
2. Հակակոռուպցիոն ծրագրի իրականացման մշտադիտարկման պլանի մշակում և գործարկում:
3. Գործողությունների պլաններում արտացոլված որակական և քանակական ցուցիչների ճշգրտությունն ապահովելու նպատակով ընդհանուր մոտեցման և մեխանիզմների մշակում և գործարկում: Մշտադիտարկել գնահատման ցուցիչների չափելիության աստիճանը:
4. Կոռուպցիոն ռիսկերի վերհանման, կանխարգելման և վերահսկման մեխանիզմների կատարելագործում և կիրառում, ԳՊՀ բարեվարքության կանոնների վերանայում և համալրում:
5. Իրավագիտության բաժնի դասախոսների և ուսանողների միջոցով աշակերտների շրջանում իրավագիտակցության բարձրացման ծրագրերի մշակում և իրականացում:
6. ԳՊՀ-ում իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը միտված բաց դասախոսությունների և հանրային քննարկումների պարբերաբար կազմակերպում:

Նելլի Կուփուզյան՝
ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի տարեկան բյուջեի նախագիծը կազմվում է՝ հիմք ընդունելով ԳՊՀ զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման՝ տվյալ տարվա գործողությունների ծրագիրը: 2023 թվականի բյուջեն և 2024 թվականի բյուջեի նախահաշիվը պլանավորելիս՝ հաշվի են առնվել ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանը միտված համապատասխան ուսումնական տարիների գործողությունների ծրագրերը: Բյուջեում համապատասխան հոդվածների համամասնությունը պլանավորելիս՝ հաշվի են առնվում տվյալ ուղղություններով նախատեսված գործողությունների արդյունավետության գնահատման ակնկալվող ցուցիչները: Գավառի պետական համալսարանի 2023 թվականի և 2024 թվականի բյուջեները կազմվել են՝ մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով, որպեսզի ելքերը չգերազանցեն մուտքերին:

Այսպիսով, ըստ համալսարանի 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունների՝ ԳՊՀ 2023, ապա 2024 թվականների բյուջեների ծախսերի տոկոսային բաշխումը կատարվել է հետևյալ կերպ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՊՀ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի 2023 թվականի բյուջեի տոկոսային բաշխումները՝ ըստ ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի հիմնական ուղղությունների կատարվել է հետևյալ կերպ.

1. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության համար օգտագործվել են բյուջեի հետևյալ հոդվածները /ըստ տողերի/.

- աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, որի 48 տոկոսը օգտագործվել է այս նպատակով.
- վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, այս հոդվածի 64 տոկոսից ավելին օգտագործվել է նշված գործունեության համար,
- կոմունալ վճարներ, այս հոդվածի գրեթե 60 տոկոսը օգտագործվել է այս գործունեության համար,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության, այս հոդվածի գրեթե 40 տոկոսը օգտագործվել է այս գործունեության համար,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր, այս հոդվածի գրեթե 47 տոկոսը օգտագործվել է այս ուղղությամբ,

- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, այս հոդվածի 15 տոկոսն է ծախսվել է այս նպատակով,
- Ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, այս հոդվածի 100 տոկոսով այս նպատակով է օգտագործվել,
- Կրթաթոշակ, այս հոդվածը նունպես 100 տոկոսով օգտագործվել է այս նպատակով,
- Գրադարանային ծախսեր, այս հոդվածի գրեթե 90 տոկոսը օգտագործվել է այս գործունեության համար:

Ընդհանուր առմամբ 2023թ-ի բյուջեում կատարված ծախսերի 47 տոկոսը բաժին է ընկնում կրթական և սոցիալ-մշակութային գործունեությանը:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածները /տողերն/ են՝ գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսերը 100 տոկոսով, բացի այս հոդվածից այս գործունեության համար 1 տոկոսի սահմաններում միջոցներ են ծախսվել նաև աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի, կոմունալ վճարների, Ներկայացուցչական և գործուղման ծախսերի հոդվածներով, Ապրանքայնութկայան պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածով 3 տոկոսի չափով, ինչպես նաև Գրադարանային ծախսեր հոդվածով՝ գրեթե 10 տոկոսի չափով:

2023թ-ին այս գործունեության համար ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի մոտ 3 տոկոսը:

3. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության ուղղությամբ ծախսերը կազմել են բյուջեի ընդհանուր ծախսերի 42 տոկոսը՝ հետևյալ տողային հողվածներով.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը /այդ թվում ղեկավար անձնակազմին/ ուղղվող վճարումներ՝ հոդվածի 49 տոկոսը,
- Վճարումներ պետական բյուջե հոդվածի 36 տոկոսը,
- Կոմունալ վճարներ հոդվածի 39 տոկոսը,
- Փոստային և կապի վճարներ հոդվածի 50 տոկոսը,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 49 տոկոսը,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր հոդվածի 43 տոկոսը,
- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր հոդվածի 35 տոկոսը,
- Վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ծախսեր հոդվածի 100 տոկոսը,
- Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր հոդվածի 10 տոկոսը,
- Կապիտալ նորոգություններ հոդվածի 100 տոկոսը:

4. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության իրականացման համար ծախսվել է բյուջեի ծախսերի մոտ 7 տոկոսը՝ ըստ հետևյալ հոդվածների.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը /այդ թվում՝ ղեկավար անձնակազմին/ ուղղվող վճարումներ հոդվածի 1 տոկոսը,
- Փոստային և կապի վճարներ հոդվածի 50 տոկոսի չափով,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 5 տոկոսը,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր հոդվածի 10 տոկոսը,
- Ներկայացուցչական և գործուղման ծախսեր հոդվածի 80 տոկոսը,
- Այլ ծախսեր հոդվածի 97 տոկոսը,
- Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր հոդվածի 90 տոկոսը:

5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության իրականացումն ապահովվել է բյուջեի ընդհանուր ծախսերի 1 տոկոսով, և ծախսերը կատարվել են հետևյալ տողային հոդվածներով.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը /այդ թվում՝ ղեկավար անձնակազմին/ ուղղվող վճարումներ հոդվածի 1 տոկոսը,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 2 տոկոսը,
- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր հոդվածի 50 տոկոսի չափով,
- Ներկայացուցչական և գործուղման ծախսեր հոդվածի 19 տոկոսի չափով,
- Կրթական բարեփոխումների անցկացման և կարիերայի կենտրոնի զարգացման ծախսեր հոդվածի 100 տոկոսի չափով,
- Մարքեթինգի և գովազդի ծախսեր հոդվածի 100 տոկոսի չափով,
- Այլ ծախսեր հոդվածի 2 տոկոսի չափով:

Իսկ ըստ ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունների՝ ԳՊՀ 2024 թվականի բյուջեի նախահաշվում ծախսերի տոկոսային բաշխումը կատարվել է հետևյալ կերպ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳՊՀ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության համար օգտագործվելու են բյուջեի հետևյալ հոդվածները /տողերը/.

- աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, որի 51 տոկոսը օգտագործվելու է այս նպատակով,
- վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, այս հոդվածի 64 տոկոսից ավելին օգտագործվելու է այս գործունեության համար,
- կոմունալ վճարներ, այս հոդվածի գրեթե 83 տոկոսը օգտագործվելու է այս գործունեության համար,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր՝ ներառյալ կրթության և գիտահետազոտության, այս հոդվածի գրեթե 46 տոկոսը օգտագործվելու է նշված գործունեության համար,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր, այս հոդվածի գրեթե 60 տոկոսը օգտագործվելու է այս ուղղությամբ,
- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, այս հոդվածի 15 տոկոսն է նախատեսված այս նպատակով օգտագործվելու համար,
- Ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, այս հոդվածի 100 տոկոսով այս նպատակով է օգտագործվելու,
- Կրթաթոշակ, այս հոդվածը նունպես 100 տոկոսով օգտագործվելու է այս նպատակով,
- Գրադարանային ծախսեր, այս հոդվածի գրեթե 90 տոկոսը օգտագործվելու է նշված ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ 2024թ-ի բյուջեում նախատեսված ծախսերի 47 տոկոսը բաժին է ընկնում կրթական և սոցիալ-մշակութային գործունեությանը:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածով /տողով/ նախատեսված գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսերը 100 տոկոսով, բացի այս հոդվածից այս գործունեության համար 1-ից 2 տոկոսի սահմաններում միջոցներ են նախատեսված նաև աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի, կոմունալ վճարների, Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերի, ներառյալ կրթության և գիտահետազոտության, Ներկայացուցչական և գործուղման ծախսերի հոդվածներով, ինչպես նար Գրադարանային ծախսեր հոդվածով՝ գրեթե 10 տոկոսի չափով:

2024թ-ի բյուջեով նախատեսվել է այս գործունեության համար հատկացնել ծախսերի մոտ 4 տոկոսը:

3. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս գործունեության համար նախատեսվել է օգտագործել ծախսերի 38 տոկոսը, հետևյալ տողային հոդվածներով.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը /այդ թվում՝ ղեկավար անձնակազմին/ ուղղվող վճարումներ՝ հոդվածի 45 տոկոսը,
- Վճարումներ պետական բյուջե հոդվածի 36 տոկոսը,
- Կոմունալ վճարներ հոդվածի 16 տոկոսը,
- Փոստային և կապի վճարներ հոդվածի 50 տոկոսը,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր,ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 45 տոկոսը,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր հոդվածի 30 տոկոսը,
- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր հոդվածի 35 տոկոսը,
- Վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ծախսեր հոդվածի 100 տոկոսը,
- Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր հոդվածի 10 տոկոսը,
- Կապիտալ նորոգություններ հոդվածի 100 տոկոսը:

4. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գործունեության այս ոլորտում նախատեսնվել է բյուջեի ծախսերի ավելի քան 10 տոկոսը՝ ըստ հետևյալ հոդվածների.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը /այդ թվում ղեկավար անձնակազմին/ ուղղվող վճարումներ հոդվածի 2 տոկոսի չափով,
- Փոստային և կապի վճարներ հոդվածի 50 տոկոսի չափով,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 5 տոկոսի չափով,
- Տրանսպորտային միջոցների ծախսեր հոդվածի 10 տոկոսի չափով,
- Ներկայացուցչական և գործուղման ծախսեր հոդվածի 80 տոկոսի չափով,
- Այլ ծախսեր հոդվածի 98 տոկոսի չափով,
- Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր հոդվածի 90 տոկոսի չափով:

5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս ոլորտի համար հատկացվել են բյուջեի ծախսերի ավելի քան 1 տոկոսը, և ծախսերը կատարվելու են հետևյալ տողային հոդվածներով.

- Աշխատանքի վարձատրությանը, լրավճարներին, հավելավճարներին և պարգևատրմանը /այդ թվում՝ ղեկավար անձնակազմին/ ուղղվող վճարումներ հոդվածի 1 տոկոսի չափով,
- Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, ներառյալ կրթության և գիտահետազոտության հոդվածի 2 տոկոսի չափով,

- Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր հոդվածի 50 տոկոսի չափով,
- Ներկայացուցչական և գործուղման ծախսեր հոդվածի 19 տոկոսի չափով,
- Կրթական բարեփոխումների անցկացման և կարիերայի կենտրոնի զարգացման ծախսեր հոդվածի 100 տոկոսի չափով,
- Մարքեթինգի և գովազդի ծախսեր հոդվածի 100 տոկոսի չափով,
- Այլ ծախսեր հոդվածի 2 տոկոսի չափով:

2023 թվականի բյուջեի կատարողականի և
2024 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի վերլուծությունը

Գավառի պետական համալսարանի 2023 թվականի բյուջեի ծախսերը կատարվել են՝ մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով, որպեսզի ելքերը չգերազանցեն մուտքերին՝ պակասուրդ չառաջացնելու նպատակով: Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս անհրաժեշտ է ընդգծել այն փաստը, որ 2023թ-ի ընթացքում ցավոք իրենց շարունակվող հետևանքներն են ունեցել վերջին տարիներում ՀՀ-ում ծագած խնդիրները՝ ուղղակիորեն ազդելով համալսարանի և՛ եկամուտների ձևավորման, և՛ ծախսերի կատարման վրա:

Այսպիսով, 2023 թվականին պլանավորված մուտքերի 73%-ը բաժին էր ընկնում վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտներին, սակայն այս հոդվածի կատարողականը ընդհանուր մուտքերի մեջ կազմել է 62%, այսինքն՝ հոդվածի կատարողականը պլանավորվածից մոտ 10%-ով պակաս է, ինչը պայմանավորված է ընդունելության կրճատումով, հեռացվող ուսանողների քանակի աճով, այնպես էլ ուսանողներին տրամադրված զեղչերով, ինչպես նաև ՀՀ Կառավարության կողմից ուսանողներին տրամադրվող փոխհատուցումների աճով: 2024 թվականի բյուջեով վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտները կազմելու են բյուջեի ընդհանուր մուտքերի 64%-ը, այսինքն՝ 2023 թվականի փաստացի կատարողականից այս մեծությունը ավել է նախատեսվել, քանի որ հնարավոր չէ նախապես կանխատեսել, թե 2024 թվականի պետական բյուջեի միջոցներից որքան ուսման վարձ կփոխհատուցվի սոցիալապես անապահով, սահմանամերձ ընտանիքների, Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից և 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների համար, հետևաբար՝ ենթադրվում է, որ այդ գումարները վճարվելու են ուսանողների կողմից: Թեև պլանավորվում է, այդուամենայնիվ առկա են բազմաթիվ անորոշություններ՝ պայմանավորված 2024-2025 ուստարվա ընդունելության արդյունքներով, ՀՀ-ում և, հատկապես, Գեղարքունիքի մարզում առկա անվտանգության հետ կապված խնդիրներով, հետպատերազմյան սոցիալ-տնտեսական և հոգեբանական անբարենպաստ իրավիճակով, ուստի հնարավոր չէ արժանահավատորեն կանխատեսել և գնահատել այդ մեծությունը:

Մուտքերի հաջորդ, համեմատաբար մեծ տեսակարար մասը բաժին է ընկնում ՀՀ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորմանը, որը, ըստ 2023 թվականի պլանավորման, նախատեսվել է 17.9%, սակայն ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցները գերազանցել են պլանավորված մեծությունը, քանի որ պետության կողմից տարբեր ծրագրերով ուսանողների

ուսման վարձերի ֆինանսավորումն աճել է և կազմել 28.3%, իսկ 2024թ.-ի համար այս հոդվածը պլանավորվել է ընդհանուր մուտքերի 24.5%-ի չափով :

Պլանավորված մուտքերի հաջորդ խումբը՝ 6%-ից մի փոքր ավելի, կազմում են ոչ գործառնական մուտքերը, որոնք իրենց մեջ ներառում են դրամաշնորհներից և բարեգործական նվիրաբերություններից մուտքերը, բանկերում ներդրված գումարներից եկամուտները և վարձակալական եկամուտները: Ոչ գործառնական եկամուտներից մուտքերը կազմել են 6.2%, քանի որ ավանդներից ստացված եկամուտներն են նվազել, նոր դրամաշնորհային ծրագրերով պայմանավորված 2024թ.-ի համար այս հոդվածը պլանավորվել է ընդհանուր մուտքերի 8.6%-ի չափով:

Պլանավորված մուտքերում հաջորդ ոչ էական խումբը՝ 2.4 %-ով, կազմում են գործառնական այլ եկամուտները, որոնք ներառում են մագիստրատուրայի ընդունելությունից մուտքերը, շարունակական մասնագիտական զարգացման կրթական ծրագրի իրականացման, այլ ծառայություններից և վաճառակետից մուտքերը: Այս հոդվածի կատարողականը կազմել է գրեթե 3.5%, իսկ 2024թ.-ի համար այս հոդվածը պլանավորվել է ընդհանուր մուտքերի 3%-ի չափով:

Գավառի պետական համալսարանի ելքերի ամենամեծ բաժինը՝ գրեթե 77%-ը, աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերն են, որը պլանավորված էր 75%-ի չափով: Այս հոդվածն իր մեջ ներառում է և՛ գիտահետազոտական գործունեությունը, և՛ ֆինանսական գործունեության ու ներքուհական տնտեսության կազմակերպումը, և՛ մարդկային ռեսուրսների կառավարումը, և՛ վարչարարության, ինչպես նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտի ծախսերը: Այս հոդվածի՝ բյուջեի մեջ ունեցած մեծ տեսակարար կշիռը դեռևս չի նշանակում, թե համալսարանը չի ապահովում կամ չի կարող ապահովել զարգացում, քանի որ այս հոդվածում ներառվում են նաև շարունակական զարգացում ապահովող այնպիսի ծախսեր, ինչպիսիք են հրավիրյալ դասախոս-մասնագետների կամ վերապատրաստող դասախոսների վարձատրությունը, որոնք էլ հենց ապահովել և ընթացս ապահովելու են շարունակական մասնագիտական զարգացում համալսարանի դասախոսների, աշխատակիցների, ուսանողների, այլ շահառուների համար: Հոդվածով 2024թ-ի համար նախատեսվել է ընդհանուր ծախսերի 77 %-ը:

Վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/ հոդվածը ներառված է ընդհանուր ծախսերի մեջ և ընդգրկում է համալսարանի կողմից վճարվող շահութահարկը, ավելացված արժեքի հարկը, ուսանողական համակազմի 10%-ից ավելիին տրամադրված զեղչերի եկամտային հարկը և այլ հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ: Այս հոդվածի գծով 2023 թվականի համար պլանավորումը կազմել է շուրջ 0.6 %, որը կատարվել է 0.6%: Թերակատարումը պայմանավորված է 2022 թ. դեկտեմբեր ամսվա հարկերի հաջորդ ամիս վճարելով, իսկ 2024թ.-ի համար այս հոդվածով նախատեսվել է բյուջեի ծախսերի մոտ 0.6 %-ը:

Կոմունալ վճարները կազմում են պլանավորված բյուջեի գրեթե 5 %-ը, որն իր մեջ ներառում է և՛ հետազոտական գործունեության համար անհրաժեշտ կոմունալ ծախսերը, և բոլոր այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ են կոմունալ ծախսեր, որի կատարողականը կազմել է 5.5% և 2024թ.-ի համար նախատեսվել է բյուջեի մոտ 5.5 %-ը ծախսել կոմունալ ծախսերի համար:

Փոստային և կապի վճարները պլանավորվել են 0.38 %-ի չափով: Հոդվածի կատարողականը ընդհանուր ծախսերի մեջ կազմել է 0.34%, իսկ 2024թ.-ի համար պլանավորվել է ընդհանուր ծախսերի 0.24%-ը տրամադրել այս հոդվածին:

Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.03 %-ը: Այս բաժինն իր մեջ ներառում է բոլոր ոլորտների համար անհրաժեշտ նյութերը (հետազոտական աշխատանքների, մարդկային ռեսուրսների կառավարման և վարչարարության, արտաքին կապերի և համագործակցության ընդլայնման և ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսերը): Այս հոդվածի կատարողականն ընդհանուր ծախսերի մեջ կազմել է 0.9 %, և 2024 թվականի բյուջեում այս հոդվածը պլանավորվել է մոտ 1 %:

Ծախսերի հաջորդ բաժինը տրանսպորտային միջոցների ծախսերն են, որոնք կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.28 %,-ը, որը նախատեսված է համալսարանի 2 մեքենաների համար, որոնք սպասարկում են ռեկտորին և համալսարանի այլ աշխատակիցներին, և 1 ավտոբուսի համար, որը սպասարկում է համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին: Այսինքն՝ այս հոդվածն իր մեջ ներառում է համալսարանի գործունեության բազմաթիվ ոլորտների ծախսեր. և՛ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտը, և՛ ուսումնական-գիտահետազոտական գործունեության ոլորտները, և՛ արտաքին կապերի-համագործակցության ընդլայնման ոլորտը: Այս հոդվածով կատարողականը ընդհանուր բյուջեում կազմել է 1.39%, սակայն 2024թ-ի բյուջեով նախատեսվել է 1.69%-ը՝ պայմանավորված տրանսպորտային միջոցների սպասարկման համար անհրաժեշտ վառելիքի և այլ պահեստամասերի թանկացումով:

Ծախսերի հաջորդ բաժինը Ծառայությունների ձեռքբերման ծախսերն են: Այս բաժնի համար պլանավորվել էր բյուջեի մոտ 0.6%-ը, որն իր մեջ ներառում է բազմաթիվ ծառայությունների ձեռքբերում, ներառյալ տպագրության, մարքեթինգի և գովազդի համար պահանջվող ծախսերը: Նշված հոդվածի կատարողականը կազմել է 2023 թվականի բյուջեի 0.4%-ը, ինչպես և նախորդ տարի և 2024 թվականի համար նախատեսվել է բյուջեի 0.6%-ը: Հոդվածը ներառում է նաև չնախատեսված իրավիճակների համար միջոցների պլանավորում:

Ծախսերի հաջորդ բաժինը գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ ելքերն են, որոնք 2023 թվականի համար պլանավորվել էր 2.5 %, կատարողականը կազմել է ընդհանուր ծախսերի 2.6%-ը, իսկ 2024թ.-ի համար նախատեսվել է բյուջեի 2.7%-ը ծախսել այս ուղղությամբ: Հոդվածը ներառում է գիտահետազոտական աշխատանքների և նյութերի համար անհրաժեշտ ծախսերը, սակայն այս գործունեության համար անհրաժեշտ վարձատրության, կոմունալ, կապի և այլ անհրաժեշտ ծախսերը ներառված են բյուջեի համապատասխան հոդվածներում: Այսինքն՝ գիտահետազոտական գործունեության համար ծախսերն ավելին են:

Ծախսերի հաջորդ բաժինը թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար անհրաժեշտ ելքերն են, որոնք կազմել են բյուջեի շատ փոքր մասը՝ 0.03%-ը, քանի որ օգտագործվում են էլեկտրոնային լրատվամիջոցներ:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսերը: Այս հոդվածով պլանավորվել է ծախսերի 0.1%-ը, կատարողականը կազմել է 0.1%-ը: 2024 թվականի բյուջեում այս հոդվածը պլանավորվել է 0.1%-ի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը ներկայացուցչական և գործուղման ծախսերն են: Այս հոդվածով ծախսերը կազմել են բյուջեի ընդամենը 0.1 %-ը, կատարողականը կազմել է 0.09%:

Նշված հոդվածը նախատեսված է ԳՊՀ-ում հյուրերի և պատվիրակությունների ընդունելությունների կազմակերպման և գործուղումների համար, որի նպատակը արտաքին կապերի, համագործակցության ծրագրերի ավելացումն է և բարերարների շրջանակի ընդլայնումը: Հաջորդ տարվա համար նախատեսվել է ծախսերի 0.1 %-ը:

Ծախսերի հաջորդ բաժինը ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսերն են: Հոդվածը նախատեսված է ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող միջոցառումների ֆինանսավորման և վերջիններիս ընթացիկ գործունեության ապահովման ծախսերը հոգալու համար: Նախատեսվել էր բյուջեի գրեթե 0.17 %-ը, կատարողականը կազմել է 0.1 %, իսկ 2023թ-ի համար նախատեսվել է 0.13 %-ը: Նշենք, որ ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից գիտահետազոտական գործունեության համար կատարված ծախսերը ներառվել են գիտահետազոտական գործունեության հոդվածում:

Ծախսերի հաջորդ բաժինը ‹‹Այլ ծախսեր›› հոդվածն է, որն իր մեջ ներառում է բազմաբնույթ ծախսեր, ինչպիսիք են հիմնադրամների հետ համագործակցության և բարեգործության համար անհրաժեշտ ծախսերը, աշխատաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման համար պահանջվող ծախսերը, դրամաշնորհների գծով կատարվող ծախսերը: Հոդվածը կազմել է 2023 թվականի պլանավորված ծախսերի 3.37%-ը: Հոդվածի կատարողականը կազմել է ծախսերի 3.89%-ը: 2024 թվականի բյուջեում նախատեսվել է գրեթե 4%-ի չափով: Հոդվածի կատարողականի նվազումը և պլանավորված աճը պայմանավորված է դրամաշնորհային ծրագրերի քանակի 2023թ-ին նվազումով, իսկ 2024թ-ին աճով:

Ծախսերի հաջորդ բաժինը վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ծախսերն են, որոնք պլանավորվել են ծախսերի 0.1%-ի չափով: Հոդվածի կատարողականը կազմել է գրեթե 0.16%, ինչպես նաև 2024 թվականի բյուջեում նախատեսվել է դարձյալ գրեթե 0.13 %-ի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը ուսանողներին վճարվող կրթաթոշակի գումարներն են: Այս հոդվածը պլանավորվել է ծախսերի 4.3 %-ի չափով: Նշված հոդվածով իրականացվում է անվճար սովորող ուսանողների տրամադրվող կրթաթոշակների պլանավորում և վճարում: 2023 թվականին հոդվածի կատարողականը կազմել է 5.17%, քանի որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված ‹‹Լավագույն ուսանող-2022›› մրցույթում ԳՊՀ-ն առաջին տեղը զբաղեցրած ուսանողների թվով հաղթող է ճանաչվել, և նախարարությունը Գավառի պետական համալսարանին ընտրել է որպես ՀՀ բոլոր բուհերի լավագույն ուսանողներին անվանական կրթաթոշակներ շնորհելու գործընթացի կազմակերպիչ՝ պայմանագիր կնքելով և սահմանված կարգով ԳՊՀ-ին փոխանցելով 12.000.000 ՀՀ դրամ: Դրանով, ինչպես նաև պետության կողմից անվճար սովորող ուսանողների տրամադրվող կրթաթոշակների կարգում կատարված փոփոխության հետևանքով 2024թ-ի համար նախատեսվել է մոտ 1%-ի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը՝ ‹‹Կապիտալ ակտիվների ձեռքբերում›› հոդվածն է, որով ծախսերը պլանավորվել էր 2023 թվականի ծախսերի 4.11-%-ը, իսկ կատարողականը կազմել է 2%-ը: Հոդվածի թերակատարումը պայմանավորված է Եվրոպական միության T-Green դրամաշնորհային ծրագրով նախատեսված որոշ գնում հաջորդ տարի տեղափոխելով: Այս հոդվածով ծախսումները 2024 թվականի բյուջեում նախատեսվել է մոտ 4.35%:

Ծախսերի հաջորդ բաժինը ‹‹Ելքեր կապիտալ նորոգումների գծով›› բաժինն է: Այս հոդվածով 2023 թվականի ընթացքում պլանավորվել է բյուջեի 0.77%-ը, 2023թ.-ի ընթացքում կապիտալ վերանորոգումներ գրեթե չեն կատարվել, միաժամանակ կատարվել են կապիտալ վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթեր կազմելու աշխատանքներ, որոնց արդյունքում ծախսը եղել է 0.09%, իսկ 2024 թվականի համար պլանավորվել է բյուջեի մոտ 1%-ը: Անհրաժեշտ է նշել, որ 2023 թվականի ընթացքում համալսարանում արտաքին /կոսմետիկ/ վերանորոգման են ենթարկվել մի շարք լսարաններ, սենյակներ, որոնց համար կատարված ծախսերը չեն ներառվել այս հոդվածում, քանի որ իրականացվել են համալսարանի աշխատակիցների ուժերով, որոնց համալսարանը պարգևատրել է որպես խրախուսանք կատարած լրացուցիչ աշխատանքի համար:

2023 թվականի ընթացքում ԳՊՀ գրադարանային ֆոնդի համալրման համար նախատեսվել էր բյուջեի ընդհանուր ծախսերի 0.13 %-ը, ընդհանուր ծախսերի 0.1%-ի չափով տեղի է ունեցել գրադարանային ֆոնդի համալրումը, որում, ինչպես և նախորդ տարիներին, իրենց կարևոր դերն ունեն տարբեր անձանցից արդեն ավանդույթ դարձած նվիրատվությունները գրքերի տեսքով: Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ ինչպես և նախորդ տարի, այս տարի ևս իրականացվել է էլեկտրոնային գրադարանի համալրում: 2024 թվականի համար այս հոդվածը պլանավորվել է բյուջեի ընդհանուր ծախսերի 0.18%-ի չափով:

Գուրգեն Մուրադյան՝
ԳՊՀ գլխավոր հաշվապահ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ասոյան Թաթուլ Արտիկի,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Դեկանի տեղակալ՝ Սարգսյան Ռուզաննա Մարատի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	011401.00.6 Մասնագիտական *մանկավարժություն*	
011401.19.6	*Հայոց լեզու և գրականություն*	Մանկավարժության բակալավր
011401.20.6	*Ռուսաց լեզու և գրականություն*	Մանկավարժության բակալավր
011401.21.6	*Անգլերեն լեզու և գրականություն*	Մանկավարժության բակալավր
	011401.00.7 Մասնագիտական *մանկավարժություն*	
011401.19.7	*Հայոց լեզու և գրականություն*	Մանկավարժության մագիստրոս
011401.20.7	*Ռուսաց լեզու և գրականություն*	Մանկավարժության մագիստրոս
011401.21.7	*Անգլերեն լեզու և գրականություն*	Մանկավարժության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 67
Շրջանավարտների թիվը՝ 21

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացն իրականացվել է ինչպես Գավառի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի դրույթների, այնպես էլ բանասիրական ֆակուլտետի տարեկան զարգացման հայեցակարգի համաձայն, որը կազմվել է՝ հաշվի առնելով նոր մշակված և քննարկված ռազմավարական զարգացման ուղղություններն ըստ գործունեության գերակա ոլորտների, որոնք ընկած են ԳՊՀ զարգացման 2023-2027թթ. հնգամյա զարգացման ռազմավարական ծրագրի հիմքում: Նշենք նաև, որ հայեցակարգում գերակա ոլորտները ներկայացվել են ենթաոլորտներով՝ այդպես համադրելով կոնկրետն ու ընդհանուրը, նշելով նպատակները, խնդիրները և գործողությունները: Հաշվի են առնվել նաև 2021-2022 ուստարվա կատարողականը և բացթողումները, ֆակուլտետի զարգացման հեռանկարները՝ գնահատելով աշխատաշուկայում և բանասիրության ոլորտում կատարվող հարափոփոխ գործընթացները: Եթե ընդհանուր առմամբ չեն փոխվում համալսարանական գործունեության ռազմավարական ուղղությունները, ապա մասնավորապես ենթադրում են նոր մոտեցումներ, ճկուն կառուցակարգեր, ուսումնական գործընթացի կազմակերպման նոր ձևեր՝ ժամանակին և հասարակական զարգացմանը համահունչ:

Գործողությունների տարեկան պլանում ներառվել էին գերակա ոլորտները, որոնք նախանշում են կրթադաստիարակչական, գիտահետազոտական և նորարական, կառավարչական, ֆինանսատնտեսական և ռեսուրսների, հանրային պատասխանատվության, արտաքին կապերի ընդլայնման և միջայնականացման, հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ գործընթացներ:

Ուսուցման գործընթացի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ ֆակուլտետի զարգացման հայեցակարգային դրույթները մեծ մասամբ իրագործվել են:

Կատարված աշխատանքները ներկայացնենք ըստ ոլորտների՝ համաձայն կատարված մշտադիտարկման:

1.Կրթական և դաստիարակչական ոլորտ

Ուսուցման արդյունավետության և կրթության որակի ապահովումը կապված է մասնագիտական կրթական ծրագրերի լրամշակման, առարկայական ծրագրերում փոփոխությունների, ուսումնական պլանների վերանայման և թարմացման իրականացման ճանապարհով՝ հաշվի առնելով գիտության նվաճումները, հենանշումների, որակի ապահովման բաժնի՝ արտաքին ու ներքին շահառուների շրջանում անցկացված հարցումների արդյունքները: Առարկայական ծրագրերում ապահովվել է դասախոսություն-սեմինար-գործնական աշխատանք համամասնությունն ըստ ժամաքանակների, պահպանվել է նաև ավարտական աշխատանքներն

ու մագիստրոսական թեզերն ըստ տեսական և մեթոդական թեմաների բաժանման սկզբունքը: Վերջիններիս թեմատիկ բազմազանությունն ապահովելու և կատարման որակը բարձր պահելու նպատակով քննարկվել են ատեստավորող հանձնաժողովի դիտարկումները և առաջարկությունները, որոնք հաշվի են առնվել և դրվել գործողության մեջ: Այս առումով արժևորվել են նաև ուսանողների առաջարկություններն ու հետաքրքրությունները՝ պայմանավորված արդիակա-նությամբ:

Որոշակի հաճախականությամբ անցկացվել են դասալսումներ, բաց դասեր, տարաբնույթ քննարկումներ, մեթոդական զեկուցումներ, որոնց արդյունքները վերլուծվել են ՈԱԲ-ի համագործակցությամբ:

Վերլուծվել են ԳՊՀ որակի ապահովման բաժնի հարցումների արդյունքները, դրանց հիման վրա արված առաջարկությունները ուսանողների կրթական կարիքների բացահայտման, ուսանողների՝ կրթական միջավայրից բավարարվածության, դասավանդողների և դասավանդման, արտաքին շահառուների կարծիքների մասին անցկացված հարցումների, դասալսումների վերաբերյալ: Հարցումների միջոցով բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ տարվելիք աշխատանքները ներառվել են գործողությունների պլանում:

1.1.Ընդունելությունը և ուսանողների շարժը

Ուսանողների թիվը բանասիրական ֆակուլտետում եղել է 67: Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետ ընդունվել է 15 ուսանող, որից՝ հայոց լեզվի և գրականության բաժնի բակալավրիատ՝ 3, մագիստրատուրա՝ 2, անգլերեն լեզվի և գրականության բաժին՝ 9, ռուսաց լեզվի և գրականության բաժին՝ 1 ուսանող:

Ֆակուլտետի շրջանավարտների թիվը եղել է 21, որից 12 բակալավր, 9 մագիստրոս: Բուհից հեռացվել են 2 ուսանողներ, ազատվել է 3 ուսանող: Իր ուսանողական իրավունքները վերականգնել է 1 ուսանող, ներբուհական տեղափոխության արդյունքում ՀՈՒՖ հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսից առկա ուսուցման բանասիրական ֆակուլտետի նույն բաժնի 3-րդ կուրս է տեղափոխվել 1 ուսանող:

1.2.Առաջադիմությունը

Ներկայացնենք բանասիրական ֆակուլտետում առաջադիմության ցուցանիշները:

Առաջին կիսամյակ

100% առաջադիմություն ունեցել են հայոց լեզվի և գրականության ու ռուսաց լեզվի և գրականության բաժինների առաջին, հայոց լեզվի և գրականության ու անգլերեն լեզվի և գրականության բաժինների երկրորդ, անգլերեն լեզվի և գրականության բաժնի երրորդ, մագիստրատուրայի հայոց լեզվի և գրականության բաժնի առաջին, ռուսաց լեզվի և գրականության բաժնի երկրորդ կուրսերը:

Անգլերեն լեզվի և գրականության բաժնի առաջին կուրսը ցույց է տվել 88,89 % արդյունք, հայոց լեզվի և գրականության բաժնի երրորդ կուրսը՝ 71,43 % (ամենացածր արդյունքն է):

Հայոց լեզվի և գրականության բաժնի չորրորդ կուրսի ուսանողները ցուցաբերել են 80,00%, իսկ անգլերեն լեզվի և գրականության բաժնի չորրորդ կուրսի ուսանողները՝ 85,71% առաջադիմություն:

Մագիստրատուրայում 75,00% արդյունք ունեցել են հայոց լեզվի և գրականության բաժնի, իսկ 66,67%՝ անգլերեն լեզվի և գրականության բաժնի երկրորդ կուրսերի ուսանողները:

Համեմատության համար նշենք, որ եթե նախորդ ուստարում՝ 1-ին կիսամյակում, բակալավրիատում առաջադիմությունը կազմել է 88,46%, ապա հաշվետու ուստարում այն կազմում է 91,07%, մագիստրատուրայում՝ համապատասխանաբար 83,33% և 81, 82%: Նկատելի է նվազում, սակայն ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը առաջին կիսամյակում կազմել է 89,55%: Նախորդ ուստարում նույն ժամանակահատվածում այն կազմել է 87,14%:

Երկրորդ կիսամյակ

100% առաջադիմություն ցուցաբերել են բոլոր առաջին կուրսեցիները թե՛ բակալավրիատում, թե՛ մագիստրատուրայում, և անգլերեն լեզվի և գրականության երրորդ կուրսը: Բակալավրիատի մյուս կուսերում առկա է հետևյալ պատկերը.

2-րդ կուրս – հայոց լեզու և գրականություն՝ 75%, անգլերեն լեզու և գրականություն՝ 85,71%,

3-րդ կուրս – հայոց լեզու և գրականություն՝ 71,43%:

Բակալավրիատում առաջադիմությունը կազմել է 88,64% (նախորդ ուստարում՝ 95,35%), մագիստրատուրայում՝ 100% (նախորդ ուստարում՝ 100%), ֆակուլտետում՝ 89,13% (նախորդ ուստարում՝ 96,15%): Բակալավրիատի ցածր ցուցանիշը ազդել է ֆակուլտետի ընդհանուր առաջադիմության ցուցանիշի վրա:

1.3.Ամփոփիչ ատեստավորում

2022-2023 ուստարում ամփոփիչ ատեստավորումն անցկացվել է առկա ձևաչափով հաստատված ժամանակացույցով: Հաշվետու ուստարում ատեստավորմանը մասնակցել է 21 ուսանողներ, որոնցից 12-ը՝ բակալավրիատից, 9-ը՝ մագիստրատուրայից: Սահմանված ժամկետներում ուսանողները ավարտին են հասցրել իրենց ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը, ներկայացրել են կիսամյակային հաշվետվությունները:

Ներկայացնենք ամփոփիչ ատեստավորման արդյունքներն ըստ կրթական աստիճանների և մասնագիտությունների:

Հայոց լեզվի և գրականության բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների թիվը ուստարվա սկզբին 5 էր, սակայն 1 ուսանող հեռացվեց համալսարանից՝ ֆինանսական պարտավորությունները չկատարելու և ավարտական աշխատանքը սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով (հր. 21-ու, 4 մարտի, 2023թ.): Ամփոփիչ ատեստավորման արդյունքում հայոց լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսն ավարտեցին 4 ուսանողներ, որոնցից 3-ը ստացան գերազանցության դիպլոմներ: Նույն բաժնի մագիստրատուրան ավարտեցին 4 ուսանողներ, որոնցից 3-ը ստացան գերազանցության դիպլոմներ:

Անգլերեն լեզվի և գրականության բաժնի բակալավրիատն ավարտեցին 8 ուսանողներ, որոնցից գերազանցության դիպլոմներ ստացան 6-ը: Նույն բաժնի մագիստրատուրան ավարտեցին 3 ուսանողներ, և բոլորը ստացան գերազանցության դիպլոմներ:

Ռուսաց լեզվի և գրականության բաժնի մագիստրատուրան ավարտեցին 2 ուսանողներ, և երկուսն էլ ստացան գերազանցության դիպլոմներ:

Հայոց լեզվի և գրականության (նախագահ՝ Մ.Հալաջյան, անդամներ՝ Լ.Սեյրանյան, Վ. Գրիգորյան), անգլերեն լեզվի և գրականության (նախագահ՝ Ա. Այունց, անդամներ՝ Ս. Կարապետյան, Ս. Մուրադյան), ռուսաց լեզվի և գրականության (նախագահ՝ Կ. Հովհաննիսյան, անդամներ՝ Ա. Զուրաբյան, Գ. Միրիբյան) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների անդամները բարձր են գնահատել ուսանողների պատրաստվածության աստիճանը, աշխատանքների կատարման մակարդակը, նշել են, որ թեմաները արդիական էին և համահունչ մասնագիտական հիմնախնդիրներին, տպավորիչ է եղել հետազոտական բաղադրիչը: Առաջարկվել է իրականացնել համագործակցության ծրագրեր այլ բուհերի հետ, նախապես՝ մինչև ատեստավորումը, աշխատանքները տրամադրել հանձնաժողովների անդամներին՝ դրանց առավել հանգամանալից ծանոթանալու նպատակով:

2.Գիտահետազոտական և նորարական գործունեություն

Բանասիրական ֆակուլտետում իրականացվել է գիտահետազոտական աշխատանքների համակարգում ամբիոններում: Այս ուղղությամբ տարվող աշխատանքները որոշակի արդյունքներ են տվել: Մասնավորապես մշտապես հետևել ենք ամբիոններում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների ընթացքին, խրախուսվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ ծավալելու ակտիվ գիտահետազոտական գործունեություն, մասնակցելու հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, բանավեճերի, քննարկումների, հրատարակելու գիտական, գիտահետազոտական, ուսումնամեթոդական աշխատանքներ:

Ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության, օտար լեզվի և գրականության ամբիոնների դասախոսներն իրենց գիտական, գիտահետազոտական

ուսումնասիրությունները ներկայացրել են ԳՊՀ հոբելյանական 26-րդ միջազգային գիտաժողովին՝ նվիրված ԳՊՀ հիմնադրման 30-ամյակին:

Հաշվետու ժամանակաշրջանում հայոց լեզվի և գրականության, օտար լեզվի և գրականության ամբիոնների դասախոսների գիտական հրապարակումների թվում են մենագրություններ /2/, ուսումնամեթոդական ձեռնարկներ /2/, գիտական հոդվածներ /63/, զեկուցումների թեզիսներ /4/:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնում իրականացվում է ՀՀ գիտական կոմիտեի կողմից ֆինանսավորվող ««Սասունցի Դավիթ» էպոսը և եվրոպական էպիկական ավանդույթը» թեման (թեմայի ղեկավար՝ Վ.Գրիգորյան, Ա.Առաքելյան, Ն.Իսկանդարյան, Ա.Նազարյան): Այդ թեմայի շրջանակներում հայոց լեզվի և գրականության ամբիոնի կողմից անցկացվել է միջազգային գիտաժողով՝ «Բանահյուսություն և գրականություն» ընդհանուր խորագրով (10-11 հունիսի, 2023), որին մասնակցել են Գավառի պետական համալսարանի, հանրապետության այլ բուհերի, գիտական կազմակերպությունների, արտերկրի հայտնի գիտնականներ: Գիտական զեկուցումներով ներկայացան հայոց լեզվի և գրականության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Վարդուհի Կարապետյանը, 1-ին կուրսի ուսանողուհի Թեհմինե Բատիկյանը:

Գիտաժողովի նյութերը կհրապարակվեն առանձին ժողովածուով:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Լ. Ղռեջյանը ընդգրկված է Գիտության և բարձրագույն կրթության կոմիտեի 21T-6B027 ծածկագրով «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» թեման իրականացնող խմբի կազմում, որի ներկայացուցիչները՝ Շիրակի հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ գիտաշխատողները, Շիրակի տարածաշրջանի բանահյուսական նյութերի վերաբերյալ 2023թ. մայիսի 7-ին բանասիրական ֆակուլտետում հանդես եկան գիտական զեկուցումներով:

Օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, «Talk & Travel» կենտրոնի ղեկավար Եղիշե Դաշտոյանը 2022 նոյեմբերի 28-ին դասախոսների, ուսուցիչների, մագիստրոսների համար անցկացրեց ‹‹Հեռավար ձևաչափով օտար լեզուների դասավանդման ակտիվ մեթոդները›› թեմայով առցանց մեթոդական սեմինար:

2023 թվականի փետրվարի 27 –ին Գավառի պետական համալսարանի, Վոլգա-տարածաշրջանի կառավարման ինստիտուտի (Սարատով, Ռուսաստանի Դաշնություն) և “Talk & Travel” կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ Եղիշե Դաշտոյանը անցկացրեց «Հակակոռուպցիոն մտածելակերպի ձևավորումը ուսանողական միջավայրում» թեմայով միջբուհական գիտական սեմինար:

2023թ. մայիսի 17-ից 22-ը Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնում վերապատրաստման դասընթաց անցկացրեց Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի դասախոս Օլգա Շումանսկայան:

Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի խոսքի լեզվաբանության և հաղորդակցության տեսության ամբիոնի դոկտորանտ Իննա Իլիչևան հանդես եկավ դասախոսությունների շարքով՝ կիրառելով իր դոկտորական ատենախոսությունում առաջարկվող ուսուցման և ուսումնառության նորարարական մեթոդները:

Ամբիոններում աշխատանքներ են տարվում բարձր վարկանիշ ունեցող միջազգային շտեմարաններում գիտահետազոտական աշխատանքներ հրատարակելու ուղղությամբ (Վ. Գրիգորյան, Ա. Առաքելյան, Ն. Իսկանդարյան, Ռ.Սարգսյան, Գ. Մուրադյան):

Գավառի պետական համալսարանը հարթակ է հանդիսացել և աջակցել ռուս բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ և թարգմանիչ Վալերի Բրյուսովի ծննդյան 150-ամյակին նվիրված թարգմանության մրցույթի անցկացմանը, որը կազմակերպել էին «Ռուսական գրքի տունը Երևանում» և «Լիվըր» ընկերությունը Հայաստանի 7-12-րդ դասարանների աշակերտների համար: Գեղարքունիքի մարզից մասնակիցների հետ կազմակերպչական աշխատանքներն իրականացրել է օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Աննա Մելքոնյանը:

3.Կրթական միջավայրի արդիականացում

Ֆակուլտետում կրթական միջավայրի արդիականացումը պայմանավորված է համալսարանում առկա տեխնիկական-տեխնոլոգիական, ՏՀՏ միջոցների նպատակային օգտագործմամբ, ուսումնամեթոդական նյութերի համալրման և հարստացման գործընթացով: Իրականացվել են ԳՊՀ «Learn.gsu» էլեկտրոնային հարթակում առարկայական տիրույթների համալրման աշխատանքները: Առարկայական ծրագրերի թեմատիկ պլանները կազմվել են դասախոսություն-սեմինար-գործնական աշխատանք եռաբաղադրիչների դասաժամերի տարբերակմամբ: Ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր կատարելիս ապահովվել է ղեկավար-ուսանող կապը, իսկ առանձին ուսանողների դեպքում այն եղել է հեռավար ձևաչափով:

Շատ կարևոր են ՄԿԾ-ներում, ուսումնական պլաններում իրականացվող փոփոխություններն ու շարունակական բարելավումները՝ հենանշումների հիմքով:

4.Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում նպատակային աշխատանքներ են տարվում ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ: Խնդիր է դրվում հետևել ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքին, ըստ անհրաժեշտության ուղղորդել նրանց՝ իրենց գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, նպաստել նրանց ինքնուրույնության և նախաձեռնողականության մակարդակի բարձրացմանը: Այդ հանգամանքներով պայմանավորված՝ կազմակերպվել են

հանդիպումներ ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ՝ նրանց հետաքրքրող հարցերի պարզաբանման նպատակով: Հանդիպումների ընթացքում խրախուսվել են ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու և տարբեր հարթակներում ներկայանալու ջանքերը: Աշխատանքներ են տարվել դասախոս-ուսանող համագործակցությամբ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ուղղությամբ, ապահովվել է ուսանողների մասնակցությունը ԳՊՀ հանրապետական և միջազգային ուսանողական գիտաժողովների՝ օգտագործելով ինչպես անմիջական, այնպես էլ առցանց մասնակցության հնարավորությունները, հրապարակվել են ինչպես հեղինակային, այնպես էլ համահեղինակությամբ հոդվածներ:

Ուսումնառության արդյունավետությունը մեծ մասամբ պայմանավորված է նաև համապատասխան գիտամեթոդական բնույթի էլեկտրոնային նյութերի առկայությամբ: Այս առումով ապահովվել է «Learn.gsu» էլեկտրոնային հարթակում առարկայական ծրագրերի էլեկտրոնային նյութերի առկայությունը, դասախոսությունների ընթացքում՝ տեսական և գործնական աշխատանքի համամասնությունը՝ որոշակի մեթոդական հիմքով: Համագործակցելով ՏՏ բաժնի հետ՝ խորացվել է ուսանողների գիտելիքները տեղեկատվական տեխնոլոգիաների, առցանց դասերի անցկացման ձևաչափերի, համակարգչային և ՏՀՏ միջոցների օգտագործման վերաբերյալ: Որակի ապահովման բաժնի համագործակցությամբ՝ պարզվել են կրթական միջավայրից, աշխատակազմից, դասախոսներից ու դասախոսություններից ուսանողների բավարարվածության աստիճանը, քննարկվել են արդյունքները, կատարվել են վերլուծություններ, արվել հետևություններ:

Ֆակուլտետում մեծ ուշադրություն է դարձվել միջազգային շարժունության ծրագրերին ուսանողների մասնակցության հարցերին, օգտագործվել է արտերկրում ուսանած ուսանողների փորձը:

Գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հակում ունեցող ուսանողները մասնակցել են ուսանողական համալսարանական, հանրապետական, միջազգային գիտաժողովների, գիտամեթոդական ուղղվածություն ունեցող սեմինարների, քննարկումների: Գրադարանի հետ համատեղ կազմակերպվել են գրքերի քննարկումներ: Նշենք մի շարք տարաբնույթ միջոցառումներ, որոնք իրականացվել են բանասիրական ֆակուլտետում հաշվետու ժամանակաշրջանում.

1. Բարև, մենք ենք (17. 11. 2022)
2. Ե. Չարենց-125. Չարենցը սերունդների աչքերով (16. 12. 2022)
3. Բաց դաս. Քյոլնի լեգենդները (05. 12. 2022)
4. Հայաստան-Գերմանիա. Սուրբ Ծննդյան տոների տեսակամուրջ (23. 12. 2022)
5. Բաց դաս. Թումանյանի աշխարհում (09. 12. 2022)

Ուշադրության կենտրունում են եղել մագիստրոսների գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաները: Նրանց հնարավորություն է տրվել անցկացնելու բաց դասեր: Մասնավորապես.

1. Արցախյան առաջին ազատամարտի արտացոլումը հայ գրականության մեջ (վարող՝ Ս. Բաղդասարյան, ՄՀԼԳ 2, 25.03.2023)

2. Կանանց կերպարները «Սասնա ծռեր» էպոսում (վարող՝ Վ. Կարապետյան, ՄՀԼԳ 2, 01.04.2023)

3. Միակազմ նախադասությունների կառուցվածքային և կիրառական առանձնահատկությունները (վարող՝ Ֆ. Հակոբյան, ՄՀԼԳ 2, 08.04.2023)

4. Անգլերենի ուսուցումը համացանցային գործիքների կիրառմամբ (վարող՝ Շ. Բադալյան, ՄԱԼԳ 2, 08.04.2023)

Երկրորդ կիսամյակում անցկացվել են այլ միջոցառումներ ևս.

1. Քննարկում. «Գրքերի աշխարհում» (19.02.2023)

2. Գրական – երաժշտական միջոցառում. «Կանաչ արև» (30.03.2023)

3. Միջոցառում. «Ձոն մայրերին» (20.04.2023)

4. Միջոցառում՝ նվիրված ԳՊՀ հիմնադրման 30-ամյակին. «Հր.Հակոբյանի «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գիրքը բուհի ծննդյան վկայական» (13.05.2023):

Շատ կարևոր էր, որ գրեթե բոլոր միջոցառումներին, բաց դասերին ներկա են եղել Գավառի տարբեր դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ:

Հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթում մրցանակային տեղեր են գրավել անգլերեն լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Զառա Պետրոսյանը, մագիստրատուրայի հայոց լեզվի և գրականության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Սուսաննա Բաղդասարյանը:

2023թ. հունվարի 25-ին բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի ռուսաց լեզվի և գրականության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մելքոնյանը մասնակցեց ՌԴ Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղում կայացած, Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության, Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի, Հայաստանում ռուսական բուհերի մասնաճյուղերի ուսանողների ասոցիացիայի կողմից կազմակերպված, ուսանողների տոնին նվիրված միջոցառմանը և հաղթող ճանաչվեց «Տարվա լավագույն ուսանող» անվանակարգում:

2023 թվականի մարտ-ապրիլ ամիսներին բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Լիլիթ Վահագնի Սեյրանյանը, հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհիներ Լաուրա Մանուկյանը և Քրիստինե Բատիկյանը մասնակցեցին Գավառի պետական համալսարանի և Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի համատեղ կազմակերպած ռուսերեն էսսեների մրցույթին՝ նվիրված արհեստական

բանականությանը, և Լիլիթ Սեյրանյանը հաղթող ճանաչվեց մրցույթի եզրափակիչ փուլում:

5.Վարչարարություն և աշխատակազմի կայունության ապահովում

Հաշվետու ժամանակաշրջանում պարբերաբար անցկացվել են ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստեր: Ուշադրություն է դարձվել ֆակուլտետի աշխատակազմի համախմբվածությունը ֆակուլտետում իրականացվող գործընթացներում ապահովելու խնդիրներին: Հաշվի առնելով աշխատակիցների անհատական որակները՝ դրանք ծառայեցնել ի նպաստ ֆակուլտետի, բարձրացնելու աշխատանքային կարգապահությունը և իրենց վերապահված գործառույթների իրականացման նկատմամբ պատասխանատվությունը:

Աշխատանքներ են տարվել կատարելագործելու դեկանատ-դասախոս-ուսանող փոխհարաբերությունները ԳՊՀ ազնվության հայեցակարգի դրույթներին և բարեվարքության կանոններին համապատասխան, խորացնելու ներֆակուլտետային, ֆակուլտետի և համալսարանի մյուս ստորաբաժանումների միջև ձևավորված համագործակցային կապերը: Միաժամանակ պահպանվել և արդյունավետ օգտագործվել են ֆակուլտետում առկա նյութատեխնիկական միջոցները /լսարաններ, գույք, համակարգիչներ, լինգաֆոնային լսարան/: Թե՛ աշխատանքային կարգապահության, թե՛ աշխատակիցների՝ իրենց գործառույթներն իրականացնելու, թե՛ ուսանող-դասախոս, ուսանող-դեկանատ-ամբիոններ հարաբերություններում հաշվետու ժամանակաշրջանում դեպքեր չեն գրանցվել:

6. Արտաքին կապեր և համագործակցություն

Համակարգված աշխատանքներ են տարվել Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի ընդլայնման ու ամրապնդման ուղղությամբ: Ֆակուլտետի դասախոսներն ու ուսանողները օգտվել են արտերկրում սովորելու, վերապատրաստվելու և դասավանդելու հնարավորություններից: Նաիրա Իսկանդարյանը, Վաչագան Գրիգորյանը, Անիկ Բալագոզյանը, Եղիշե Դաշտոյանը, Ռուզաննա Սարգսյանը, Լիլիթ Թոռչյանը, Գայանե Մուրադյանը առկա և առցանց ձևաչափերով մասնակցել են միջազգային գիտաժողովների և աշխատաժողովների:

ԵՄ «Էրազմուս+» ակադեմիական շարժունության ծրագրով Իսպանիայի Թագավորության Կորդոբայի համալսարանում 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում ուսանել է բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Զառա Պետրոսյանը:

Գնալով սերտանում են բանասիրական ֆակուլտետի համագործակցային կապերը հատկապես ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ, կազմակերպվել են առցանց հանդիպում-քննարկումներ: Այս տեսակետից բանասիրական ֆակուլտետը կապող օղակ է և ապահովում է ոչ միայն ուսանողների, այլև Գեղարքունիքի մարզի բարձր դասարանների աշակերտության և ուսուցչության

կապը լեզվի, հնագիտության և ազգագրության ինստիտուտների, բժշկական համալսարանի հայոց լեզվի և բժշկագիտական տերմինաբանության ամբիոնի հետ: Ասվածի լավագույն օրինակը 2023թ. փետրվարի 21-ին լեզվի ինստիտուտի հետ համատեղ նոր ձևաչափով կազմակերպած միջազգային գիտաժողովն էր՝ նվիրված Մայրենի լեզվի օրվան: Բանասիրական ֆակուլտետը համակարգեց Գեղարքունիքի մարզի բարբառային հայերենի առանձին բարբառների և խոսվածքների կրողների մասնակցությունը գիտաժողովին:

Շարունակվել է համագործակցությունը Գեղարքունիքի մարզի կրթական հաստատությունների հետ: Առավելապես ուշադրություն է դարձվել բարձր դասարանների աշակերտների մասնակցությանը ֆակուլտետում անցկացվող բաց դասերին և միջոցառումներին: Ֆակուլտետի դասախոսներն ու ուսանողները մասնակցել են դպրոցներում և Գավառի մարզային ու քաղաքային գրադարաններում կազմակերպված քննարկումներին և հոբելյանական միջոցառումներին:

Ֆակուլտետը համագործակցել է Գավառի պետական համալսարանի կառուցվածքային մյուս ստորաբաժանումների հետ՝ համակողմանի գործունեությունը ապահովելու և աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

7.Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ակադեմիական ազնվության հայեցակարգի, բարեվարքության կանոնների իրականացում

Ֆակուլտետում ապահովված է ընթացող գործընթացների հրապարակայնությունը և թափանցիկությունը: Քննությունների, ստուգարքների, ամփոփիչ ատեստավորումների ընթացքում բացառվել են անազնվության, մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքում՝ գրագողության դեպքերը: Ուսանող-դասախոս հարաբերությունները կառուցվել են ԳՊՀ բարեվարքության կանոններին համապատասխան:

8.Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացում

Համալսարանի կարևորագույն առաքելությունը մասնագիտական որակյալ ու արդյունավետ կրթական ծառայություններ մատուցելն է: Դրա համար պետք է սերտ կապեր հաստատել Գեղարքունիքի մարզի ազգաբնակչության հետ: Այս առումով ֆակուլտետում ուսումնասիրվել են մարզի տարածաշրջանում ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից անցկացված հարցումներն ու վերլուծությունները կրթության, մասնագիտական կողմնորոշման, մասնագիտությունների պահանջարկի վերաբերյալ: Կարևոր դեր են խաղում դպրոցներում անցկացվող մանկավարժական պրակտիկաները, որոնց ժամանակ անմիջական կապեր են ստեղծվում դպրոցների հետ, որոնց կարծիքները հավաքվում և գնահատվում են:

Ուշադրություն է դարձվել սոցիալապես անապահով ուսանողների կարիքներին: Նրանք ուղղորդվել են դեպի հիմնադրամները և ըստ ԳՊՀ կանոնակարգերի՝ ստացել

ուսման վարձերի զեղչեր: Այսպես՝ Նիշանյան հիմնադրամի շահառուներ են ֆակուլտետի 17 ուսանողներ, ՀՀ միասնական սոցիալական ծառայության շահառուներ են 11 ուսանողներ, 2 ուսանողներ ֆինանսավորվել են Գավառի համայնքապետարանի բյուջեից, ԳՊՀ-ն զեղչեր է տրամադրել 5 ուսանողների:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Նպատակը

Կրթություն՝ որակի, տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ու հմտությունների ապահովմամբ, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ:

Սոցիալ-մշակութային զարգացում՝ ազգային արժեհամակարգի և համամարդկային մշակութային արժեքների իմացության, քաղաքացիական բարեվարքության հիմքերով:

Խնդիրները

1.Մասնագիտական կրթական և առարկայական ծրագրերի ամենամյա բարելավում՝ գիտության նվաճումներին համապատասխան վերջնարդյունքների հասանելիությամբ:

2.Ըստ անհրաժեշտության՝ ուսուցման ընթացքում, համագործակցային հարաբերություններում տարբեր ձևաչափերի կիրառման ճկուն դրսևորում:

3.Ուսուցման որակի և արդյունավետության բարձրացում՝ նորագույն տեխնոլոգիաների, մեթոդների կիրառմամբ, դասալսումների, բաց դասերի, քննարկումների կազմակերպմամբ:

4.Համագործակցություն ԳՊՀ որակի ապահովման բաժնի հետ՝ կրթական միջավայրից, դեկանատի, ամբիոնների, դասախոսների աշխատանքից ուսանողների բավարարվածության աստիճանի որոշման և դրա հիման վրա ֆակուլտետում տարվող աշխատանքների բարելավման նպատակով:

5. Ուսանողների գեղագիտական ճաշակի, ազգային արժեհամակարգի, քաղաքացիական ակտիվ դիրքորոշման ձևավորում տարաբնույթ միջոցառումների կազմակերպման և անցկացման միջոցով:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Նպատակը

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների գիտահետազոտական ներուժի բացահայտում արդի և տարածաշրջանային հիմնախնդիրներին վերաբերող թեմաների արծարծմամբ:

Արդի կրթական, ուսուցման մեթոդների, առկա նորագույն տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում:

Խնդիրները

1.Պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների գիտահետազոտական գործունեության կազմակերպում հանրապետական և միջազգային գիտաժողովներին մասնակցության միջոցով:
2.ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ գիտահետազոտական ծրագրերի իրականացում:
3. Բանասիրական ֆակուլտետի համագործակցային կապերի ընդլայնում հանրապետության առաջատար գիտահետազոտական ինստիտուտների, քոլեջների, հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ:
4.Միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում գիտահետազոտական աշխատանքների հրապարակում:
5.Համալսարանի և այլ գիտական պարբերականներում հրատարակվելիք հոդվածներին ներկայացվող միջազգային չափանիշների ապահովում:
6.Մենագրությունների, ժողովածուների, ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակում:

3.ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏ

Նպատակը

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի կառավարման, աշխատանքային և բարոյահոգեբանական առողջ միջավայրի ապահովում:
Ֆակուլտետի նյութատեխնիկական ռեսուրսների պահպանում:

Խնդիրները

1.Ֆակուլտետում աշխատանքային կարգապահության ապահովում:
2.Ուսման վարձավճարների հավաքագրման ամենամսյա պարբերականության ապահովում:
3.Խորհրդատվություն և իրազեկում ուսանողներին հիմնադրամներից օգտվելու հնարավորությունների մասին:
4.Դեկանատ – ամբիոն-դասախոս- ուսանող հարաբերություններում բարեվարքության և ազնվության ապահովում:

4.ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ

Նպատակը

Գավառի պետական համալսարանի բարի համբավի ամրապնդում բնակչության կրթական կարիքների բավարարման, ուսանողներին սոցիալական աջակցության տրամադրման, սոցիալ-մշակութային ծառայությունների մատուցման միջոցով:
Միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերին ֆակուլտետի դասախոսական անձնակազմի և ուսանողների մասնակցության ապահովում:

Խնդիրները

1.Ֆակուլտետում իրականացված ծրագրերի, աշխատանքների թափանցիկության և հաշվետվողականության ապահովում, ԳՊՀ կայքում լուրերի տեղադրում:
2. Ֆակուլտետում անցկացվող միջոցառումներին, քննարկումներին, բաց դասերին բարձր դասարանների աշակերտների, ուսուցիչների, քոլեջների սովորողների մասնակցության ապահովում թե՛ առցանց, թե՛ անցանց ձևաչափերով:
3. Ֆակուլտետի ուսանողների և դասախոսների ակտիվ ներգրավում միջազգային շարժունության ծրագրերի:
4.Հենանշային ուսումնասիրությունների իրականացում համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հետ:

5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ

Նպատակը

Գավառի պետական համալսարանի նկատմամբ հանրային վստահության ապահովում՝ բարեվարքության, ակադեմիական ազնվության, սոցիալական արդարության պահանջների կատարմամբ:

Խնդիրները

1.Ֆակուլտետում ԳՊՀ հակակոռուպցիոն ծրագրի իրականացում, հակակոռուպցիոն միջավարի պահպանում:
2. Ֆակուլտետի գործունեության իրականացում առանց կոռուպցիոն դրսևորումների:
3.Ֆակուլտետում բարեվարքության կանոնների և ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների իրականացում:

Թաթուլ Ասոյան՝
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջա նին մասնակցել են	Անբավա րար գնահատա- կան ստացած ուսանող- ների թիվը	Գերա զան- ցիկնե րի թիվը	Առաջադիմու թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	3	-	3	100,00
2-րդ	7	-	2	100,00
3-րդ	7	-	-	71,43
4-րդ	5	-	3	80,00
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	9	-	3	88,89
2-րդ	7	-	2	100,00
3-րդ	10	-	4	100,00
4-րդ	7	-	4	85,71
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	1		1	100,00
Ընդամենը	**56**	**-**	**22**	**91,07**
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին կուրս	2	-	1	100,00
Հայոց լեզու և գրականություն 2-րդ կուրս	4	-	3	75,00
Անգլերեն լեզու և գրականություն 2-րդ կուրս	3	-	1	66, 67
Ռուսաց լեզու և գրականություն 2-րդ կուրս	2	-	2	100,00
Ընդամենը	**11**	**-**	**7**	**81. 82**

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	**Քննաշրջանին մասնակցել են**	**Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը**	**Գերազանցիկների թիվը**	**Առաջադիմության %-ը**
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	3	-	-	100.00
2-րդ	8	-	-	75. 00
3-րդ	7	-	3	71. 43
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	9	-	4	100. 00
2-րդ	7	-	-	85. 71
3-րդ	9	-	6	100. 00
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	1		-	100. 00
Ընդամենը	**44**	**-**	**13**	**88.64**
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին կուրս	2	-	1	100. 00
Ընդամենը	**2**	**-**	**1**	**100.00**

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

2022/2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	**Մենագրություն**	**Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ**	**Գյուտերի հայտ, արտոնագիր**	**Հոդված**	**Զեկուցումների թեզիս**
-	2	2	-	63	4

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի*
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ասոյան Թաթուլ Արտիկի** - ԲՖ դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. **Կատվալյան Վիկտոր Լիպարիտի** - բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Առաքելյան Արա Հրաչիկի** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
4. **Ներսիսյան Վարսիկ Արմենի** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Ղռեջյան Լուսինե Խաչատուրի** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
6. **Ղարիբյան Ալինա Ամբիկի** – ասիստենտ
7. **Խանդանյան Սիրանուշ Կառլենի** – ասիստենտ
8. **Սարգսյան Ռուզաննա Մարատի** - ասիստենտ
9. **Կարապետյան Գայանե Լևիկի** - ասիստենտ
10. **Բագոյան Ալլա Սահակի** - դասախոս
11. **Ղազարյան Օլգա Ալբերտի** – դասախոս
12. **Իսկանդարյան Լիլիթ Հրաչիկի**- – դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂ

1. **Իսկանդարյան Նաիրա Մանվելի** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց լեզվի պատմության հիմնահարցեր
2. Արևելահայերենի և արևմտահայերենի հիմնախնդիրներ
3. Բայազետի բարբառի և նրա խոսվածքների ուսումնասիրություն
4. ՀՀ Գեղարքունիքի մարզում բանահավաքչություն, բանահյուսական առանձին ժանրերի ուսումնասիրություն
5. Հայ ժողովրդական դյուցազնավեպի և եվրոպական էպիկական երկերի առնչությունների քննություն
6. Հայ գրականության պատմության հիմնահարցեր
7. Արդի հայ և արտասահմանյան գրականության զարգացման միտումների ուսումնասիրություն
8. Սփյուռքահայ գրականության ուսումնասիրություն

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	2	-	-	38	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Գրիգորյան Վ. Ռ.,** Մուշեղ Գալշոյանի ստեղծագործությունը, Երևան, «Արմավ» 2022, 259 էջ:
2. **Գրիգորյան Վ. Ռ.,** Գևորգ Հարությունյանի դրամատուրգիան, Երևան, «Արմավ» 2022թ., 187 էջ:
3. **Գրիգորյան Վ. Ռ.,** Արևելքը «Սասնա ծռեր» էպոսում // ԳՊՀ «Բանահյուսություն և գրականություն» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գավառ, 2023 թ., էջ 13-34:
4. **Գրիգորյան Վ. Ռ.,** Համաչափությունը «Սասնա ծռեր»-ում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 16, հանձնված է տպագրության:
5. **Գրիգորյան Վ. Ռ.,** Հոգեբանական արձակի առանձնահատկությունները Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության մեջ // Մաթևոսյանական ընթերցումներ, 4, ԵՊՀ հրատարակչություն, 2022 թ., էջ 147-160:
6. **Գրիգորյան Վ. Ռ.,** Հրանտ Մաթևոսյանը և այսօրը // Մաթևոսյանական ընթերցումներ, Հայ-ռուսական համալսարան, Երևան, 2023 թ., էջ 16-29:
7. **Գրիգորյան Վ. Ռ.,** Gavar State University, Ara Arakelyan, Ani Nazaryan, Naira Iskandaryan // The Basic Principles of Perception of Phenomena in Eastern and Western Folklore, Wisdom, 2023, vol. 26, 165-173.
8. **Գրիգորյան Վ. Ռ.,** Exposing the Crisis of Rationalism and Overcoming IT In Hrant Matevosyan's literature, ՎԷՄ, 2022 թ., 3, p.116-136.
9. **Առաքելյան Ա. Հ.,**Գրիգորյան Վ. Ռ., Իսկանդարյան Ն. Մ., Քոսյան Ա.Ա., Հին գերմանները և նրանց մշակույթը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023, էջ 234-248:
10. **Առաքելյան Ա.** Հ., Կերակրի սեմանտիկան և միֆաէպիկական ավանդույթը // ԳՊՀ «Բանահյուսություն և գրականություն» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գավառ, 2023 թ., էջ 34-60:
11. **Առաքելյան Ա. Հ.,** Խնջույքն իբրև տոն և իբրև դավադրություն // Բանբեր Երևանի պետական համալսարանի, Բանասիրություն, 2023, թիվ 2, էջ 3-17:
12. **Առաքելյան Ա. Հ.,** The novel "The Glass Bead Game" by Hermann Hesse and Postmodernism // Armenian Folia Anglistika, Vol. 19, Issue 1 (27), 2023, p.118-128:
13. **Ասոյան Թ. Ա., Պողոսյան Ն.Բ.**, Ժողովրդական էպոսը ազգային լեզվամտածողության արտահայտման հիմնական միջոց // ԳՊՀ «Բանահյուսություն

և գրականություն» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գավառ, 2023 թ., էջ 108-125:

14. **Ասոյան Թ. Ա.,** Մխիթարյանների հայերենագիտական գործունեությունը էդ. Աղայանի գնահատմամբ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2023թ.:
15. **Ասոյան Թ. Ա., Հակոբյան Ֆ. Մ., Հակոբյան Հ. Հ.**, Միակազմ նախադասությունների կիրառությունը և ոճական արժեքը Համո Սահյանի «Ինձ բացակա չդնեք» ժողովածուում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2023թ., հանձնված է տպագրության:
16. **Ասոյան Թ. Ա.,** Լեզվի հարցերը Վիեննայի Մխիթարյանների «Եւրոպա» պարբերականում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, էջ 217-234թ:
17. **Ասոյան Թ. Ա.,** Մեծ հայագետ լեզվաբանը // «Բանբեր հայագիտության» ամսագիր, Երևան, 2023թ.:
18. **Կատվալյան Վ. Լ.,** Բարբառային հայերենի շարահյուսական որոշ առանձնահատկությունների շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2023թ., հանձնված է տպագրության:
19. **Կատվալյան Վ. Լ.,** Սուրմալուի գավառի հայերեն խոսվածքների մասին // Ջահուկյանական ընթերցումներ, 1/19/, Երևան, 2023թ., էջ 33-44:
20. **Կատվալյան Վ.Լ.,** Հայերենի Ը ձայնավորի մասին // «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» գիտաժողովի նյութեր, Երևան, 2023 թ., հանձնված է տպագրության:
21. **Կատվալյան Վ. Լ., Խաչատրյան Լ. Մ.** Основные направления развития современной армянской лингвистики // Филологические науки. Научные доклады высшей школы, М., 2023, вып. 4, с. 3-9:
22. **Կատվալյան Վ. Լ., Ղարիբյան Ա. Ա.** Some Peculiarities of Manifestation of National Language Thinking in the Epic "Sasna Tsrer" // Ջահուկյանական ընթերցումներ, 2/20/, Երևան., 2023թ., հանձնված է տպագրության:
23. **Կատվալյան Վ. Լ.,** About 500 Dialect Versions H.Tumanyan's Fairy Tale «The liar» in one book // Ջահուկյանական ընթերցումներ, 1/19/, Երևան, 2023 թ, էջ 102-103:
24. **Ղարիբյան Ա., Ա.** Պառավի կերպարը «Սասնա ծռեր» էպոսի առաջին ճյուղում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023թ., էջ 269-287:
25. **Ղարիբյան Ա., Ա.,** «Սասնա ծռեր» էպոսի Պառավի կերպարը ծիսական պատկերացումների համատեքստում // ԳՊՀ «Բանահյուսություն և գրականություն» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գավառ, 2023թ., էջ 211-229:
26. **Ղարիբյան Ա., Ա.,** Կանանց նվիրագործման ծեսի արտացոլումը «Սասնա ծռեր» էպոսում // Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, N16, հանձնված է տպագրության:
27. **Ղարիբյան Ա., Ա.,** Արտատեր Պառավի կեպարը «Սասնա ծռեր» էպոսում // Պատմաբանասիրական հանդես, 2023թ., N2, էջ 128 -145:
28. **Ներսիսյան Վ.Ա.,** Հինհայերենյան լեզվական իրողությունների ուսումնասիրման նշանակությունը բուհի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնում //

Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 16, հանձնված է տպագրության:

29. **Ավետիսյան Ե.Վ., Ներսիսյան Վ.Ա.,** Նախադասության ուսումնասիրման դերը կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման գործում // Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, N15, 2023 թ., հանձնված է տպագրության:
30. **Իգնաթևոսյան Ն. Վ., Ներսիսյան Վ.Ա.,** Բառակազմության ուսումնասիրումը՝ որպես կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման միջոց // Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, N15, 2023 թ., հանձնված է տպագրության:
31. **Ներսիսյան Վ. Ա.**, Բաղադրյալ բառերի դասակարգումը Մանուկ Աբեղյանի աշխատություններում // ՀՏԴ 81, 10.56246/18294480-2023.14-19, Գիտական հոդվածների ժողովածու, N 14, Երևան, 2023 թ., էջ 249-268:
32. **Ներսիսյան Վ. Ա.**, Բառակազմության հարցերի քննությունը Գուրգեն Սևակի աշխատություններում // «Ջահուկյանական ընթերցումներ» 1(19), DOI:10.54412/2738277X-2023.1.19-50, ԳԱԱ ԼԻ, Երևան, 2023 թ., էջ 50-69:
33. **Ղռեջյան Լ. Խ.,** «Շիրակի ասույթաբանական բանահյուսությունը» // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, գիտական աշխատություններ, N 1(26), Գյումրի, 2023 թ., էջ 86-99:
34. **Հայրիյան Լ. Վ., Ղռեջյան Լ. Խ**. «Ազգային էպոսները Ավետիք Իսահակյանի հետազոտական դիտակետում» // ԳՊՀ «Բանահյուսություն և գրականություն» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գավառ, 2023թ., էջ 347-366:
35. **Ղռեջյան Լ. Խ. Բատիկյան Թ. Կ.** «Ժողովրդական երգերը իբրև Թումանյանի բանաստեղծությունների նախահիմք» // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2023 թ., հանձնված է տպագրության:
36. **Ղռեջյան Լ Խ.**. Օրինանք-բարեմաղթանքները ժողովրդական երգերում (հայրեններ, անտունիներ, խաղիկներ) // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ, միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գյումրի, 2023 թ., էջ 162-175:
37. **Ղռեջյան Լ. Խ., Միրիբյան Գ.Ա.** Заклинательные формулы в армянской и русской народной паремиологии (на материале армянских и русских проклятий, клятв, благословений-благопожеланий) // Человек и его пространство / коллективная монография, Мінսկի պետական լեզվաբանական համալսարան, 2023, էջ 112-118:
38. **Իսկանդարյան Ն. Մ**., Նմանակ-երկվորյակների արքետիպի զուգահեռները համաշխարհային առասպելաբանության մեջ և Սասնա ծռերում, // ԳՊՀ «Բանահյուսություն և գրականություն» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գավառ, 2023թ., էջ 125-151:

39. **Բագոյան Ա.Ս.,Հովհաննիսյան Լ.,** Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգության ուսուցումը համագործակցային մեթոդներով // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023թ. էջ 356-371:
40. **Բագոյան Ա.Ս.,** Իմպրեսիոնիզմը Ակսել Բակունցի պատմվածքներում // Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, N15, 2023թ., հանձնված է տպագրության:

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Գայանե Աշոտի Միրիբյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի**- մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. **Դաշտոյան Եղիշե Նորիկի –** բանասիրական գիտությունների թեկնածու
3. **Հայթյան Սաթենիկ Հայրապետի** - ասիստենտ
4. **Մուրադյան Սիրանուշ Հովհաննեսի –** ասիստենտ
5. **Բալագոզյան Անիկ Կարապետի** - ասիստենտ
6. **Մելքոնյան Աննա Վրեժի –** դասախոս
7. **Թոռչյան Լիլիթ Գրիգորի –** դասախոս
8. **Մկրտչյան Սիրանույշ Սարգսի**- դասախոս
9. **Նալբանդյան Նարինե Նորայրի –** դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Մուրադյան Գայանե Հարությունի**- բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. **Սարգսյան Ռուզաննա Ռուբենի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Կարապետյան Սիրարփի Հովիկի** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
4. **Հովհաննիսյան Ալլա Բորիսի** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Տիգրանյան Սաթենիկ Սաշայի** - ասիստենտ
6. **Եղիազարյան Անդրանիկ Ռաֆիկի** - ասիստենտ
7. **Սիմոնյան Սոնա Կոստանտի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Օտար լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի արդի հիմնահարցեր և ուսուցման նորագույն տեխնոլոգիաներ
2. Համեմատական լեզվաբանություն
3. Ռուս և հայ ազգային մշակույթի, բանահյուսության և գրականության համեմատական ուսումնասիրություն

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	2	-	25	4

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Միրիբյան Գ. Ա., Ղռեջյան Լ. Խ.,** Заклинательные формулы в армянской и русской народной паремиологии (на материале армянских и русских проклятий, клятв, благословений - благопожеланий) // Человек и его пространство / коллективная монография – Минск, Минский государственный лингвистический университет, 2023, էջ 112-118:
2. **Թոռչյան Լ. Գ.,** Դիտարկումներ անգլերենի նախդիր+գոյական կապակցության՝ ժամանակակից հայերենի համապատասխանությունների վերաբերյալ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023, ISSN 1829-4480, էջ 321-335:
3. **Թոռչյան Լ. Գ.,** Interactive Methods of Memory Development at Foreign Language Classes // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023, ISSN 1829-4480, էջ 371-379:
4. **Կարապետյան Ս. Հ.,** Անվանական հիմքերով բաղադրությունների ուսուցումը անգլերենում և հայերենում, ուսումնամեթոդական ձեռնարկ // Երևան, «Էդիթ պրինտ», 2022, 216 էջ:
5. **Կարապետյան Ս. Հ.,** Գրաբարյան փոխառությունների դերը արդի հայերենի տերմինակերտման մեջ // Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, 1, Երևան, 2022, DOI: 10.53614/18294952-2022.1-104, էջ 104-115:
6. **Կարապետյան Ս. Հ.,** Ղազար Փարպեցու «Թուղթը» երկի բառային կազմի իմաստաարժեքային տեղաշարժերը հայերենում (տարժամանակյա քննություն) // Հայագիտական հանդես, 5 (59), Երևան, 2022, ISSN 1829-0531, էջ 38-49:
7. **Կարապետյան Ս. Հ.,** Արդի հայերենի ռազմական տերմինահամակարգի հարստացումը գրաբարյան եզրույթներով (ըստ Ղ. Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկի) // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 13, 2022, DOI: 10.56246/18294480-2022.13-34, էջ 420-431:
8. **Կարապետյան Ս. Հ.,** Ռազմական եզրույթ-կաղապարների զարգացումը Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում // «Էջմիածին» կրօնագիտական հանդես, դեկտեմբեր, Սբ. Էջմիածին, 2022, Doi: 10.56737/2953-7843-2022.11-124, էջ 124-135:
9. **Կարապետյան Ս. Հ.,** Գեղարվեստական թարգմանության առանձնահատկությունների ուսուցումը բուհում (Է. Հեմինգուեյի «Ծերունին և ծովը» վիպակի և դրա հայերեն թարգմանության հիման վրա) // Հայագիտական հանդես 1 (55), 2022, ISSN 1829-0531, էջ 179-189:

10. **Կարապետյան Ս. Հ.,** Հանրային կառավարման բառապաշարի դասավանդումը բուհում անգլերենով // Մանկավարժական միտք, «Զանգակ հրատ.», 1-2 (78-79), 2022, ISNN 1829-0213, էջ 311-315:
11. **Կարապետյան Ս. Հ.,** Ծիսական հանդերձանքի հինհայերենյան անվանումները՝ որպես արդի հայերենի բառային կազմի հարստացման աղբյուր // Հայագիտական հանդես, 2023, 2 (61), ISSN 1829-0531, էջ 4-17:
12. **Կարապետյան Ս. Հ.,** Ծիսական առարկաների հինհայերէնեան անուանումները՝ որպէս արդի հայերէնի բառային կազմի հարստացման աղբիւր // «Էջմիածին» կրօնագիտական և հայագիտական ամսագիր, (2023), համար Ե, Doi: 10.56737/2953-7843-2023.05-133, էջ 133-145:
13. **Կարապետյան Ս. Հ.,** Ռազմական բառերն ու եզրույթները Էռնեստ Հեմինգուեյի «Հրաժեշտ զենքին» վեպում և դրա հայերեն թարգմանության մեջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2023, հանձնված է տպագրության:
14. **Կարապետյան Ս. Հ.,** The Development of Legal Word Units in Armenian according to Ghazar Parpetsi's Work "History of Armenia" (a Synchronic-Diachronic Analysis) // 2023, 2, DOI: 10.54503/2579-2903-2023.2-108, pp. 108-121.
15. **Հայթյան Ս. Հ.,** Գնահատման մեթոդաբանություն // Կզնակ հիմնադրամ, Գնահատման մշակման և զարգացման բաժին, https://kznakgnahatum.blogspot.com/2023/09/blog-post.html, 70 էջ:
16. **Մկրտչյան Ս.Ս.** Social Media Related French Borrowings in English // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 16, հանձնված է տպագրության:
17. **Մուրադյան Գ. Հ.,** Change in Science Fiction Theory and Discourse: A Conceptual Ideology. // Research Aspects in Arts and Social Sciences, 7. London, West Bengal: Book Publisher International, 2023, Print ISBN: 978-81-19102-14-3, eBook ISBN: 978-81-19102-12-9, pp 1-10.
18. **Մուրադյան Գ. Հ.,** Գիտաժողովի թեզիս՝ Language in Pro-War Rhetoric: Linguistic Manipulation. April Conference Fifteen: Humanity // Humanities, Book of Abstracts, Poland, Krakow: Jagellonian University, 20-22 April, 2023, 32 p.
19. **Մուրադյան Գ. Հ.,** Գիտաժողովի թեզիս՝ Questions in Academic Lectures: Phatic Tokens or Information Units? April Conference Fifteen: Humanity // Humanities. Book of Abstracts. Poland, Krakow: Jagellonian University, 20-22 April, 2023, 40p.
20. **Մուրադյան Գ. Հ.,** Գիտաժողովի թեզիս՝ Multimodality and Communication. Mumultimodality and Transmediality: Cognitive, Pragmatic, and Semiotic Vantages. // Book of Abstracts. Ukraine, Kharkiv: V. N. Karazin Kharkiv National University, 22-23 April, 2022, 63p.
21. **Մուրադյան Գ. Հ.**, Գիտաժողովի թեզիս՝ Epistemology, Extrapolation and Science Fiction. Mumultimodality and Transmediality: Cognitive, Pragmatic, and Semiotic Vantages // Book of Abstracts, Ukraine, Kharkiv: V. N. Karazin Kharkiv National University, 22-23 April, 2022, 63p.
22. **Մուրադյան Գ. Հ.,** Գիտաժողովի թեզիս՝ The Warfare Metaphor in the Media. Series of Academic Seminars: Language & Politics. // Yerevan, YSU, 2022.
23. **Սարգսյան Ռ. Ռ.,** Проектирование электронного курса в СДО MOODLE с опорой на принципы LX-дизайна (на примере курса русского языка для студентов экономического вуза) // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 3, 2022, էջ 200-216:

24. **Սարգսյան Ռ. Ռ., Հարությունյան Լ. Ա., Մկրտչյան Ա. Ե., Հակոբյան Լ. Ռ.,** Էքսպերիմենտալ դասավանդում. լեզուների իմացության գնահատման բաղադրիչային –կուտակային համակարգի ներդրումը ՀՊՏՀ օրինակով // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 4, 2022, էջ 156-174:

25. **Սարգսյան Ռ. Ռ., Մնացականյան Ա.. Լ.,** Creating Online Visuals and Applying them in EFL Class // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023, էջ 380-391:

26. **Սարգսյան Ռ. Ռ.,** Использование таксономии Б. Блума при создании заданий в СДО MOODLE (на примере курса русского языка для студентов АГЭУ) // Восток – Запад: теоретические и прикладные аспекты, преподавания европейских и восточных языков: материалы, VI Междунар. науч.-практ. конф. (Новосибирск, 16 марта, 2023 г.), Новосибирск: Изд-во СГУПСа, 2023, с. 208-214:

27. **Սարգսյան Ռ. Ռ.,** Репрезентация компонента «Деловое письмо» в электронном курсе русского языка для студентов-экономистов в СДО MOODLE // II Международная научно-практическая конференция «Русский язык в поликультурной среде: наука, культура, межкультурная коммуникация» (14-15 марта 2023 г.), հանձնված է տպագրության:

28. **Սարգսյան Ռ. Ռ.,** Развитие коммуникативных навыков студентов на уроке русского языка в экономическом университете и использование возможностей СДО MOODLE // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 16, հանձնված է տպագրության:

29. **Սարգսյան Ռ. Ռ., Օհանյան Ա. S.,** Observations and Preparations for Blended Learning in a Foreign Language Class // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2023, հանձնված է տպագրության:

30. **Սիմոնյան Ս. Կ.**, Ժամանակակից անգլերենի և հայերենի up, above-վեր/վերև, against-դեմ/ընդդեմ բաղադրիչ ունեցող բայական հարադրությունների զուգադրական քննություն //Խ. Աբովյանի պետական մանկավարժական համալսարան, Հայագիտական հանդես, հանձնված է տպագրության:

31.**Սիմոնյան Ս. Կ.**, Նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող բայական հարադրությունների ուսուցումը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2023, հանձնված է տպագրության:

Թաթուլ Ասոյան՝
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ավագյան Մարտին Պատվականի,
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ Խանդանյան Սիրանուշ Կառլենի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	011401.00.6 Մասնագիտական *մանկավարժություն*	
011401.01.6	*Կենսաբանություն*	Մանկավարժության բակալավր
011401.03.6	*Աշխարհագրություն*	Մանկավարժության բակալավր
	011401.00.7 Մասնագիտական *մանկավարժություն*	
011401.01.7	*Կենսաբանություն*	Մանկավարժության մագիստրոս
011401.03.7	*Աշխարհագրություն*	Մանկավարժության մագիստրոս
	052201.00.6 *Բնապահպանություն և բնօգտագործում*	
052201.01.6	*Բնապահպանություն և բնօգտագործում*	Շրջակա միջավայրի բակալավր
	052201.00.7 *Բնապահպանություն և բնօգտագործում*	
052201.01.7	*Բնապահպանություն և բնօգտագործում*	Շրջակա միջավայրի մագիստրոս
	053101.00.6 Քիմիա	
053101.02.6	Դեղագործական քիմիա	Քիմիայի բակալավր
	054201.00.6 *Աշխարհագրություն*	
054201.02.6	*Քարտեզագրություն և կադաստրային գործ*	Աշխարհագրության բակալավր
	061103.00.6 *Համակարգչային ճարտարագիտություն*	
061103.01.6	*Համակարգչային ճարտարագիտություն*	Ինֆորմատիկայի բակալավր
	061103.00.7 *Համակարգչային ճարտարագիտություն*	
061103.01.7	*Համակարգչային ճարտարագիտություն*	Ինֆորմատիկայի մագիստրոս
	101801.00.6 *Սերվիս*	
101801.01.6	*Սերվիս*	Սերվիսի բակալավր

Ուսանողների թիվը՝ 55
Շրջանավարտների թիվը՝ 18

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Հիմք ընդունելով ԳՊՀ զարգացման հայեցակարգը, ինչպես նաև բնագիտական ֆակուլտետի գործունեության ծրագիրը՝ 2022-2023 ուսումնական տարում հետևողական աշխատանքներ են կատարվել կրթական ծրագրերի որակյալ իրականացման, արդի պահանջներին համապատասխան մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետող մասնագետների պատրաստման ուղղությամբ:

Պարբերաբար գումարվել են ֆակուլտետի խորհրդի նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող բազմաթիվ հարցեր, ուղիներ նախանշվել՝ այն իրականացնելու համար:

Ամբիոնների կողմից հետևողական աշխատանքներ են կատարվել գիտական գործունեության ակտիվացման, գիտական և գիտահետազոտական աշխատանքներում մագիստրոսների և ուսանողների մասնակցության ապահովման, ուսանողների շրջանում առողջ մրցակցային միջավայրի ստեղծման համար:

Ֆակուլտետում գործող ուսումնական պլանները պարբերաբար վերանայվել և թարմացվել են, որը համարվում է ամբիոնների առաջնահերթություններից մեկը: Բացառություն չէ նաև հաշվետու ժամանակաշրջանը, որի ընթացքում վերանայվել և արդիականացվել են գործող կրթական ծրագրերը:

Առարկայական ծրագրերի համապատասխանությունը գործող ուսումնական պլաններին մշտապես գտնվում է ամբիոնների ուշադրության կենտրոնում:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում զգալի աշխատանքներ են իրականացվել ամբիոնները նոր դասախոսական կազմով համալրելու ուղղությամբ. ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոն են ընդունվել երիտասարդ դասախոսներ՝ Բալագոզյան Արմինե Հովիկի, Մաստոյան Կարեն Արթուրի, Նավոյան Ռուստամ Լևիկի, Մարտիրոսյան Արմեն Էդիկի, Սարգսյան Երեմ Նորայրի, Սարոյան Սվետլանա Գեղամի:

Համալրում է տեղի ունեցել գրադարանային ֆոնդում: Գրադարանը համալրվել է 217 գրքով, որից 145-ը նվիրել է Բնագիտական ֆակուլտետի դասախոս Մամիկոն Հակոբյանը (սխեմոտեխնիկայի վերաբերյալ), 70-ը՝ Եվրոպայի Խորհուրդը (մարդու իրավունքներին և կենսաբժշկության վերաբերյալ), իսկ 2-ը՝ Գայանե Կարապետյանը (գյուղատնտեսության վերաբերյալ):

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիմնադրվել և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով համալրվել է համակարգչային նոր լսարանը:

Ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համագործակցային հուշագրեր են կնքվել «Գավառի բժշկական կենտրոն» և «Ինստիգեյթ մոբայլ» ՓԲԸ-ների միջև:

Դպրոց-բուհ համագործակցային կապի ամրապնդման, ինչպես նաև ուսանողների մասնագիտական կողմնորոշման ապահովման նպատակով կազմակերպվել են հանդիպումներ դպրոցականների հետ. բնագիտական ֆակուլտետ են այցելել 200-ից ավել

աշակերտներ, կազմակերպվել են հանդիպումներ, կատարվել են լաբորատոր փորձեր: Սակայն հարկ է նկատել, որ ներդրված ջանքերը և ծախսված ռեսուրսները լիարժեք չեն նպաստել ուսանողական համակազմի համալրմանը, ցավոք սրտի չի աճել դիմորդների թիվը, բավականին մեծ է երևանյան բուհեր մարզային հանրակրթական դպրոցներից դիմորդների շարժը:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից իրականացված 2022-2023 ուսումնական տարվա հարցման արդյունքներով պարզվել է, որ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականը 4,55-ից աճել է 4,78-ի:

Դասախոսի՝ լսարանում ժամանակը կառավարելու և պլանավորելու տեսանկյունից ցուցանիշը Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում 2021-2022 ուստարվա համեմատությամբ 2022-2023 ուստարում 4,66-ից աճել է 4. 80-ի, Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում՝ 4,66-ից 4,83-ի սահմաններում:

Դասախոսը «Դասավանդման ընթացքում կիրառո՞ւմ է ինտերակտիվ մեթոդներ» հարցմանը պատասխանի ցուցանիշը 2021-2022 ու տարվա համեմատությամբ 2022-2023 ուսումնական տարում Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում 4. 61-ից դարձել է 4,72-ի, Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում 4,79-ից նվազել է 4,76-ի:

Ընդունելությունը, ուսանողական համակազմը.

Կատարվել է համեմատություն 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիներին Բնագիտական ֆակուլտետ ընդունված դիմորդների թվի միջև: Այն դիագրամի տեսքով ներկայացված է ստորև:





2022-2023 ուսումնական տարում բնագիտական ֆակուլտետ են ընդունվել բակալավրիատի 9 և մագիստրատուրայի 5 ուսանողներ՝ Համակարգչային ճարտարագիտություն, Սերվիս, Դեղագործական քիմիա, Կենսաբանություն, Քարտեզագրություն և կադաստրային գործ, Աշխարհագրություն մասնագիտություններով: Ֆակուլտետի 1-ին կուրսում սովորել են 14 ուսանողներ:

Նախորդ ուսումնական տարում Բնագիտական ֆակուլտետ ընդունվել էին բակալավրիատի 7 ուսանողներ: Հաշվետու ժամանակահատվածում Բնագիտական ֆակուլտետում իրենց ուսանողական իրավունքները տարկետումից հետո վերականգնել են 6 ուսանողներ:

Հաշվետու ժամանակահատվածում դասերից անհարգելի բացակայելու և ակադեմիական ու ֆինանսական պարտքեր ունենալու պատճառով հեռացվել են բակալավրիատի, մագիստրատուրայի մեկական ուսանողներ, և մեկ ուսանողի տրամադրվել է տարկետում:

Համակարգչային ճարտարագիտություն բաժնի երկու ուսանողներ իրենց ուսումնառությունը շարունակել են Եվրոպական Միության « Erasmus +» կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում՝ Օնիկ Մկրտչյանը Պորտուգալիայի Բրագանսա քաղաքի պոլիտեխնիկական համալսարանում, իսկ Մարատ Սարգսյանը Շվեդիայի Կառլ Լինեուսի անվան համալսարանում: Օնիկ Մկրտչյանը ուսումն ավարտելուց հետո ակադեմիական կրեդիտներ չի ներկայացրել և հեռացվել է համալսարանից:

2022-2023 ուսումնական տարում ֆակուլտետն ունեցել է 60 ուսանող (48 բակալավր և 12 մագիստրոս):

I. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը, ակադեմիական առաջադիմությունը.

2022-2023 ուսումնական տարում 1-ին կիսամյակում առաջադիմությունը բակալավրիատում կազմել է 93.6%, մինչդեռ նախորդ տարում եղել է 89.9%, իսկ մագիստրատուրայում 77.10%-ից բարձրացել է 94.20%-ի:





Ուսումնական տարվա 1-ին կիսամյակում բակալավրիատում բացարձակ առաջադիմությունը կազմել է 82,4%, իսկ 2-րդ կիսամյակում՝ 94,87%:

Մագիստրատուրայում 1-ին կիսամյակում առաջադիմությունը կազմել է 91,2%, 2-րդ կիսամյակում՝ 96,8%:

Հաշվետու ժամանակահատվածում անհարգելի բացակայությունների համար գրավոր նկատողություն են ստացել բակալավրիատի 7 ուսանող, մագիստրատուրայի 1 ուսանող և խիստ նկատողություն՝ բակալավրիատի 2 ուսանող:

Պարբերաբար իրականացվել են դասալսումներ, արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում, առաջարկվել են դասավանդման արդյունավետ ձևեր և տեխնոլոգիաներ՝ ուսուցման որակի բարձրացման նպատակով:

Բնագիտական ֆակուլտետի այն ուսանողները, ովքեր ցուցաբերել են ուսման բարձր առաջադիմություն, նախորդ տարիների պես կրկին օգտվել են բարերարների և կրթական հիմնադրամների ֆինանսական օժանդակությունից, ինչպես նաև՝ համալսարանի կողմից կիրառված զեղչերից. ՀՕՖ-ի Ժիրայր Նիշանյան հիմնադրամից՝ 9 ուսանող, Հայ կրթական հիմնարկությունից՝ 2 ուսանող, Գավառի համայնքապետարանից՝ 2 ուսանող:

II. Կրթական ծրագրերի բարեփոխումները և զարգացումները.

Իրականացվել են բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի թարմացում, դրանց բովանդակային և կառուցվածքային բարեփոխում, արդիականացում և բազմազանեցում: Ամբիոնների կողմից կատարվել են ՄԿԾ-ների մշտադիտարկում և շարունակական բարելավման աշխատանքներ:

III. Ֆակուլտետի ամբիոնների գերակա գիտական ուղղություններն են հանդիսանում.

Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում՝

- Հողային ռեսուրսների մելիորատիվ վիճակի բարելավման հիմնախնդիրները,
- ՀՀ Գեղարքունիքի մարզում տուրիզմի զարգացման հնարավորություններն ու հեռանկարները,
- Ջրակենսաբանական հետազոտությունները, ֆիտոպլանկտոնի քանակական և որակական ցուցանիշների հետազոտությունը,
- Բարդ օրգանական նյութերի սինթեզը և կիրառումը դեղաբանության մեջ:

Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում՝

- Արհեստական բանականության համակարգերը և նեյրոնային ցանցերը,
- Ծրագրային ապահովման մշակումը,
- Mobile տեխնոլոգիաները,
- WEB-տեխնոլոգիաները,
- Էլեկտրոնային ուսուցումը, առցանց կրթական տեխնոլոգիաները,
- Համակարգչային թեստավորումը, գիտելիքների ստուգումը և գնահատումը համակարգչային ծրագրի միջոցով:

Բնագիտական ֆակուլտետի երկու ամբիոններում էլ կատարվել են կրթական ծրագրերի համեմատություն այլ բուհերի կրթական ծրագրերի հետ, որոնց փոփոխությունների վերաբերյալ ամբիոներում կատարվել են համապատասխան արձանագրություններ: Մասնակի փոփոխությունների են ենթարկվել մասնագիտական ուսումնական պլանները: Ավելացվել են նոր առարկաներ, փոփոխվել են առարկանների անվանումները, կիսամյակից կիսամյակ տեղափոխություններ են իրականացվել՝ համաձայն ուսումնական պլանների:

Բնագիտական ֆակուլտետը ակտիվ մասնակցություն է ունեցել ամենամյա գիտաժողովներին: 2023թ. գիտաժողովը նվիրված էր Գավառի պետական համալսարանի հիմնադրման 30-ամյակին, որին ակտիվ մասնակցություն ունեցավ Բնագիտական

ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը: Գիտաժողովին ներկայացվել են 14 հոդվածներ, որոնցից 9-ը կենսաբանական և էկոլոգիական գիտությունների, 5-ը՝ տեխնիկական գիտությունների գծով:

IV. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2022-2023 ուսումնական տարում Բնագիտական ֆակուլտետում ամփոփիչ ատեստավորմանն ընդհանուր առմամբ թույլատրվել են մասնակցելու 18 ուսանողների՝ 9-ը բակալավրի կրթական աստիճանով, 9-ը՝ մագիստրոսական կրթական աստիճանով, որոնցից երկուսը վերականգնել են իրենց ուսանողական իրավունքները: Ուսանողներից մեկը 2018-2019 ուստարվա «Ինֆորմատիկա և հավողական տեխնիկա» բաժնի շրջանավարտ էր եղել, սակայն ամփոփիչ ատեստավորմանը չէր ներկայացել, իսկ մյուս ուսանողը Աշխարհագրություն բաժնի 2006-2007 թվականի շրջանավարտ էր, ով պետական քննությունից ստացել էր անբավարար: Այսպիսով.

- Համակարգչային ճարտարագիտություն բաժնի բակալավրիատի 4 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել է 1-ը, լավ՝ 2-ը, բավարար՝ 1-ը: Գերազանցության դիպլոմի չեն արժանացել:
- Սերվիս բաժնի բակալավրիատի 4 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել է 4-ը: Գերազանցության դիպլոմի է արժանացել 3 շրջանավարտ:
- Դեղագործական քիմիա բաժնի բակալավրիատի 2 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել է 2-ը: Գերազանցության դիպլոմի է արժանացել 2 շրջանավարտ:
- Աշխարհագրություն բաժնի բակալավրիատի 1 շրջանավարտը ստացել է բավարար գնահատական և ոչ գերազանցության դիպլոմ:
- Համակարգչային ճարտարագիտություն բաժնի 5 մագիստրոսներից գերազանց գնահատականով ավարտել է 2-ը, լավ՝ 1-ը, բավարար՝ 2-ը: Գերազանցության դիպլոմի է արժանացել 2 շրջանավարտ:
- Կենսաբանություն բաժնի 2 մագիստրոսներից գերազանց գնահատականով ավարտել է 2-ը և արժանացել գերազանցության դիպլոմի:

Ամփոփիչ ատեստվորման հանձնաժողովի նախագահները ավարտական աշխատանքների վերաբերյալ հայտնել են դրական կարծիքներ:

Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի կողմից ներկայացված աշխատանքների վերաբերյալ կատարվել են հետևյալ դիտարկումներն ու առաջարկությունները.

Բակալավրիատ

Դիտարկումներ.

1. Շրջանավարտներն ունեն պատրաստվածության բավականին բարձր մակարդակ և չեն զիջում այլ բուհերի շրջանավարտներին: Թեմաներն արդիական են, աշխատանքները ծավալուն են և ունեն կիրառական բնույթի արդյունքներ: Այս համատեքստում կարելի է առանձնացնել ներկայումս մեծ արդիականություն ունեցող արհեստական բանականությունը, պատկերների ճանաչմանը, մոբայլ ծրագրային համակարգերի մշակման առնչվող աշխատանքները:

Առաջարկություններ.

1. Շարունակել արհեստական բանականության, նեյրոնային ցանցերի ուղղությամբ հետազոտություններն ու աշխատանքները: Հնարավորության դեպքում ներառել նաև ամպային տեխնոլոգիաների կիրառմամբ ծրագրային համակարգերի մշակման, զուգահեռ ծրագրավորմանն առնչվող թեմաներ:

Մագիստրատուրա

Դիտարկումներ.

1. Մագիստրոսների մեծ մասը կարողացան ներկայացնել բավականին բարձր մակարդակի թեզեր: Ուշադրություն էին դարձրել ներկայումս զարգացման մեծ արդիականություն ունեցող արհեստական բանականությանը, պատկերների ճանաչմանը, բնական լեզվի վերլուծությանը: Մոբայլ ծրագրային համակարգերի մշակման առնչվող աշխատանքները հետագայում կունենան մեծ կիրառություն:

Առաջարկություններ.

2. Շարունակել արհեստական բանականության, նեյրոնային ցանցերի ուղղությամբ հետազոտություններն ու աշխատանքները: Հնարավորության դեպքում հետազոտական մասն ավելի ծավալուն դարձնել և շեշտադրում կատարել հենց հետազոտական մասում նորույթների ձևակերպմանը:

Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի կողմից ներկայացված աշխատանքների վերաբերյալ կատարվել են ներքոգրյալ դիտարկումներն ու առաջարկությունները.

Բակալավրիատ

Դիտարկումներ

1. Բակալավրիատի աշխատանքները հիմնականում գերազանց մակարդակի են: Ընդհանուր տպավորությունը դրական է, բոլոր ուսանողները տիրապետում են բակալավրի կոչմանն արժանանալու համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների:

Առաջարկություններ

1. Շարունակել ընտրված ուղղությունների շարունակական բարելավման գործընթացը: Հնարավորության դեպքում հետազոտական մասն ավելի ծավալուն դարձնել և ամփոփիչ մասում առավել ծավալուն ներկայացնել առաջարկություններ, որոնք արված են ավարտական աշխատանքի հիմնական մասում:
2. Կատարել շեշտադրում շնորհանդեսների պատրաստման և ներկայացման կարողությունների զարգացման վրա:

Մագիստրատուրա

Դիտարկումներ.

1. Ամփոփիչ ատեստավորմանը մագիստրոսների մեծ մասը կարողացան ներկայացնել բավականին բարձր մակարդակի թեզեր:
2. Թեմաները շատ արդիական էին:

Առաջարկություններ.

1. Հետագայում ևս ապահովել արդիական և կիրառական նշանակության թեմաների ընտրությունը:

V. Համագործակցային կապերը և դրանց ակտիվացումը

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետն ակտիվ է եղել արտաքին համագործակցության ոլորտում: Ամրապնդվել է համագործակցությունը «Luseen mobile» ընկերության՝ որպես գործատու կազմակերպության հետ: Նոր համագործակցություն է ձեռք բերվել «Գավառի բժշկական կենտրոն» և «Ինստիգեյթ Մոբայլ» ՓԲԸ-ների հետ: Համագործակցության հուշագիր է ստորագրվել «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հետ:

Ակտիվորեն իրականացել են համագործակցության ծրագրեր գործընկեր կազմակերպությունների հետ:

VI. Միջոցառումներ

- 2022թ. սեպտեմբերի 29 - ին բնագիտական ֆակուլտետի կողմից առաջնագիծ է ուղարկվել օգնություն:
- հոկտեմբերի 21-ին կազմակերպվել է կինոդիտում, որին մասնակցել են Բնագիտական ֆակուլտետի ուսանողները:
- նոյեմբերի 4-ին կայացավ «Բարև, մենք ենք» միջոցառումը:
- նոյեմբերի 12-ին Կենսաբանության էկոլոգիայի և առողջ ապրելակերպի դասախոս Լալա Մկրտչյանի գլխավորությամբ կայացավ Սերվիս մասնագիտության ուսանողների պրակտիկաների հաշվետու միջոցառումը, որին ներկա էին ԳՊՀ ուսանողներ և դպրոցականներ:
- Նոյեմբերի 24-ին Բնագիտական ֆակուլտետի Կենսաբանության էկոլոգիայի և առողջ ապրելակերպի դասախոս Լալա Մկրտչյանի աջակցությամբ կազմակերպվեց գրական ցերեկույթ: Ցերեկույթի շրջանակներում ուսանողները ընթերցեցին իրենց ստեղծագործությունները և քննարկվեց Վիլյամ Սարոյանի «Հայ մուկը» պատմվածքը:
- Դեկտեմբերի 2-ին կայացավ «Աշխարհագրական մեծ հայտնագործություններ» թեմայով միջոցառում, որն անցկացվեց դասախոս Լալա Մկրտչյանի նախաձեռնությամբ: Ներկա էին Գավառի տարածաշրջանի դպրոցների աշակերտները:
- Բնագիտական ֆակուլտետի ուսանողները Վանաձորում մասնակցել են «Ուսանողական գարուն» փառատոնին և հավուր պատշաճի հանդես եկել:
- Կազմակերպվել է Գիտաժողով՝ նվիրված ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի հոբելյանական տարելիցին՝ ծննդյան 95-ամյակին, որին մասնակցություն են ունեցել ԳՊՀ ուսանողներ:
- Կազմակերպվել է Համո Սահյանին նվիրված ցերեկույթ:
- Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Կարեն Մաստոյանը կազմակերպել է սեմինար քննարկում՝ նվիրված մասնագիտական աճին ու շարունակական զարգացմանը:
- Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի ղեկավարությամբ կազմակերպվել են մասնագիտական այցեր Տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար ընկերություններ, ակտիվ մասնակցություն են ցուցաբերել SS ոլորտի տարբեր փառատոներին:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Իրականացնել կրթական ծրագրերի շարունակական բովանդակային և կառուցվածքային բարեփոխում, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հասնելու համար տարբերակված դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակում և կիրառում: Էլեկտրոնային ուսուցման մեթոդների կատարելագործում, համակարգչային լսարանների հնարավորությունների ամբողջական օգտագործում:
2. Դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների և միջոցների լայնամասշտաբ օգտագործմանն ուղղված աշխատանքների իրականացում (ինտերակտիվ, էլեկտրոնային ուսուցման մեթոդներ, արհեստական բանականության հենքով միջոցներ, նախագծերի կառավարման գործիքներ (Trello, JIRA և այլն)): Learning.gsu համակարգում դասախոսությունների և այլ կրթական նյութերի շարունակական համալրում, ուսանողների և դասախոսների կողմից օգտագործման արդյունավետության բարձրացում:
3. Բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի շարունակական թարմացում, մասնագիտական կրթական ծրագրում ոչ մասնագիտական կրթամասի դասընթացների վերանայում:
4. Կրթության որակի շարունակական բարելավման նպատակով դասալսումների կազմակերպում, ուսումնական գործընթացի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում:
5. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների բովանդակային բարելավում, կիրառական նշանակության թեմաներում փորձարարական մասի ավելացում, դրանց՝ ուսանողների կողմից ընտրության հնարավորության ապահովում:
6. Ուսումնական պլաններում կամընտրական մոդուլների նկարագրերի, վերջնարդյունքների իրազեկում, ուսանողների կողմից դրանց ընտրության թափանցիկության ապահովում:
7. Ֆակուլտետում պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրում երիտասարդ դասախոսներով, նրանց մասնագիտական որակների շարունակական բարելավում, վերապատարաստումների խրախուսում: SS ոլորտի նորագույն մեթոդների կիրառման վերաբերյալ դասախոսների համար վերապատրաստումների կազմակերպում:
8. Սերվիս մասնագիտության մագիստրատուրայի լիցենզիայի ստացման նպատակով փաստաթղթերի փաթեթի պատրաստման աշխատանքների իրականացում:
9. Երիտասարդ դասախոսների ներգրավում ամբիոնի ուսումնամեթոդական, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքներում (համատեղ հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ և այլն):

10. Համակարգչային մասնագիտական լսարանների, ինչպես նաև էլեկտրոտեխնիկայի լաբորատորիայի տեխնիկական և ծրագրային ապահովումների մշտական թարմացումների, համալրումների իրականացում:
11. Մասնագիտական ամբիոններում մասնագիտական գրականության շարունակական համալրում, հայալեզու և օտարալեզու մասնագիտական գրականության ձեռքբերում:
12. Կրթական ծրագրում տարբեր առարկաների մակարդակով **նախագծահեն (project based), ինչպես նաև աշխատանքահեն (work based) ուսուցման** մեթոդների կիրառման ընդլայնմանը և խթանմանն ուղղված աշխատանքների իրականացում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս խմբային առաջադրանքների միջոցով գնահատել տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները, թիմային աշխատանքի հմտությունները, արտադրանքի մշակման ամբողջական փուլին ներգրավվելու կարողությունները, ինչպես նաև զարգացնելու միջառարկայական կապերը:

ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Ամբիոնի գիտահետազոտական գերակա ուղղություններով հետազոտական աշխատանքների իրականացման խրախուսում:
2. Ամենամյա հանրապետական և միջազգային գիտաժողովներին ակտիվ մասնակցություն:
3. Ըստ մասնագիտական ամբիոնների՝ ուսանողական գիտաժողովների կազմակերպում, արդյունքների հրապարակում:
4. Եվրամիության ««Erasmus+» փոխանակման, հետազոտական, նորարարական ծրագրերում պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի ակտիվ ներգրավմանն ուղղված աշխատանքների իրականացում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1. Համագործակցային նոր կապերի հաստատում հանրապետության գիտական կառույցների հետ, նոր հուշագրերի կնքում՝ ուսումնական պրակտիկան համատեղ կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ:
2. Ոլորտային ընկերությունների, կազմակերպությունների հետ համագործակցության ցանցի ընդլայնում, ինչպես նաև նոր ձևաչափերի (ինթերնշիփ, մենթորշիփ, մասնագիտական էքսկուրսիաներ, պրակտիկա և այլն) կիրառում:
3. Ուսանողների համար տարաբնույթ կրթադաստիարակչական, ժամանցային միջոցառումների կազմակերպում՝ «Լավագույն խումբ», «Լավագույն ուսանող» անվանակարգերում, «Բնագետի ակումբ»-ի և «Տուրիզմի ակումբ»-ի աշխատանքների ակտիվացում:
4. Արցախից բռնի տեղահանված և Գեղարքունիքի մարզ եկած, ուսումը ԳՊՀ-ում շարունակող ուսանողներին բազմակողմանի և օպերատիվ աջակցության ցուցաբերում, նրանց հետ աշխատանքների համակարգված գործընթացի կազմակերպում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

1. Բնագիտական ֆակուլտետի ամբիոնների սպասարկած մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ իրազեկման միջոցառումների իրականացում Գեղարքունիքի մարզի դպրոցներում: Կրթական ծրագրերի առանձնահատկությունների, ամբիոնների ուժեղ կողմերի ներկայացում, դպրոցների ավարտական դասարանների աշակերտների շրջանում մասնագիտական կողմնորոշման ծրագրերի իրականացում: Սոցիալական մեդիայի դաշտում ՄԿԾ-ների և ամբիոնների ներկայացում:
2. Մարզում գործող ՄՈՒՀ-երի, դպրոցների, Արմաթ ինժեներական լաբորատորների ցանցի հետ համագործակցության ակտիվացում, նոր ձևաչափերի կիրառում և նոր հուշագրերի կնքում:
3. Ոլորտային ընկերությունների, կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ ծրագերի իրականացում, վարպետաց դասերի, սեմինարների, վեբինարների, աշխատաժողովների կազմակերպում:

Մարտին Ավագյան՝
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան,
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջա-նին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	3	1	1	66.7
2-րդ	7	-	-	57.0
3-րդ	6	-	3	100
4-րդ	3	-	-	100
Դեղագործական քիմիա				
2-րդ	4	-	1	75.0
3-րդ	4	-	3	75.0
4-րդ	2	-	1	100
Սերվիս				
1-ին	5	-	4	100
2-րդ	2	-	0	0
3-րդ	6	-	3	100
4-րդ	4	-	3	100
Աշխարհագրություն				
1-ին	1		-	100
Քարտեզագրություն և կադաստրային գործ				
1-ին	1	1	-	0
2-րդ	2	-	2	100
Ընդամենը	**50**	**2**	**21**	**82,00**
Մագիստրատուրա				
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	2	-	1	50.0
2-րդ	5	-	-	100
Կենսաբանություն				
1-ին				
2-րդ				
Ընդամենը	**5**	**-**	**1**	**83,33**

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	3	-	1	100
2-րդ	7	-	4	75.0
3-րդ	6	-	3	100
Դեղագործական քիմիա				
2-րդ	4	-	1	100
3-րդ	3	-	3	75.0
Սերվիս				
1-ին	5	-	4	100
2-րդ	2		1	100
3-րդ	6	-	3	100
Աշխարհագրություն				
1-ին	1	-	-	100
Քարտեզագրություն և կադաստրային գործ				
1-ին	1	1	-	
2-րդ	2	-	2	0
				100
Ընդամենը	**40**	**1**	**22**	**94.87**
Մագիստրատուրա				
Համակարգչային ճարտարագիտություն 1-ին	2	-	2	100
Կենսաբանություն 1-ին	3	-	2	66.7
Ընդամենը	**5**	**-**	**4**	**80,00**

2022/2023 ՈՒՍ.ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	14	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ավագյան Մարտին Պատվականի** – գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Առաքելյան Լյուդմիլա Նիկոլայի** - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Սարգսյան Վահան Արշավանի** – ԳՊՀ դոցենտ
4. **Հասասյան Գագիկ Գուրգենի** – դասախոս
5. **Մկրտչյան Լալա Արշալույսի** - դասախոս
6. **Հովհաննիսյան Մարինե Հրահատի** - դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Ավագյան Արամայիս Ռուստամի** – աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. **Թադևոսյան Արտաշես Վահանի** – տեխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
3. **Մխիթարյան Ազնիվ Կառլենի** – տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Սիմոնյան Ռուզան Մաքսիմի** – կենս. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
5. **Ավետիսյան Կարինե Սամվելի** – քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. **Այվազյան Գրիգորի Բաղդասարի** - քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. **Մուրադյան Էդիկ Կամսարի** – տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
8. **Խաչիկյան Թերմինե Գագիկի** - կենս. գիտ. թեկնածու
9. **Խուդավերդյան Նանե Արմենի** - տեխ. գիտ. թեկնածու
10. **Էֆենդյան Պարույր Սերգեյի** տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
11. **Մուրադյան Վահագն Սոսի** – աշխ. գիտ. թեկնածու
12. **Գալոյան Ռուսլան Պապինի** – դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Հողային ռեսուրսների մելիորատիվ վիճակի բարելավման հիմնախնդիրներ
2. ՀՀ Գեղարքունիքի մարզում տուրիզմի զարգացման հնարավորությունները և հեռանկարները
3. Ջրակենսաբանական հետազոտությունների, ֆիտոպլանկտոնի քանակական և որակական ցուցանիշների հետազոտություն
4. Բարդ օրգանական նյութերի սինթեզը և կիրառումը դեղաբանության մեջ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ արտոնագիր	Հոդված	Ձեկուցումների թեզիսներ
-	-	-	-	**9**	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Սիմոնյան Լ. , Սիմոնյան Ա. , Հովհաննիսյան Մ. ,** Օրգանիզմի հարմարվողական հնարավորությունների գահատումը վեգետատիվ կարգավիճակի տարբեր մակարդակներում: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N12 2022, էջ 26-36,
2. **Համբարձումյան Ա. , Ենգիբարյան Տ. , Հովհաննիսյան Ս. , Ավագյան Ա. ,** Օրգանական գյուղատնտեսության ներդրմնա արդյունավետությունը: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N12 2022, էջ 105-114,
3. **Մկրտչյան Լ. ,** Ճամբարակի տարածաշրջանի պատմաճարտարապետական հուշարձանները և դրանց պահպանման հիմնախնդիրները աղետների ռիսկի տեսանկյունից: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N12 2022, էջ 44-55
4. **Այվազյան Գ. , Հակոբյան Հ. ,** Կարկուտի աճի դինամիկան ըստ հետերոկոագուլյացման մեխանիզմի: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N12 2022, էջ 67-73,
5. **Այվազյան Գ. , Հակոբյան Հ. ,** Կարկտահատիկային երթևեկության անվտանգության միջոցառումների կառավարումը զարգացած և զարգացող երկրներում: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N12 2022, էջ 73-74,
6. **Գրիգորյան Վ. , Շչերբակով Օ. , Հակոբյան Ա. , Գրիգորյան Լ. ,** Վարագաջուր գետի ձկների հելմինթները: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N12 2022, էջ 33-43,
7. **ԱՎԱԳՅԱՆ Մ. , ԷՖԵՆԴՅԱՆ Պ. ,** Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի հողակադաստրային բնութագիրը, հողատեսքերի որակական գնահատման չափանիշները: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N13 2023, էջ 27-39,
8. **Սիմոնյան Լ. , Սիմոնյան Ա. , Հովհաննիսյան Մ. ,** Տարբեր վեգետատիվ տոնուսով ուսանողների հարմարվողականությունը ուսումնական և ֆիզիկական

ծանրաբեռնվածությունը: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N15 2022, էջ 48-55,

9. **ԱՌԱՔԵԼՅԱՆ Լ. , Ստեփանյան Հ., Հովհաննիսյան Մ., Պարոնյան Զ.,** Պրոլինով հարուստ պեպտիդի (ՊՀՊ-1) ազդեցությունը ածխաջրա ֆոսֆատային փոխանակության ֆերմենտների ակտիվության վրա: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N15 2023, էջ 56-64

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ավետիսյան Վարազդատ Կորյունի,
տեխնիկական գիտությունների թեկնածու

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Շեկյան Արտյոմ Լավրենտիի** - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Հակոբյան Մամիկոն Զալիբեկի**- տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Խուրշուդյան Արմեն Կորյունի** – տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Հովհաննիսյան Անդրանիկ Պարույրի**- տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Կուտուզյան Նելլի Ալբերտի**- ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Դարբինյան Ալբերտ Սարգսի** - դասախոս, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Հովհաննիսյան Մարգար Արտավազդի –** դասախոս
4. **Միրիբյան Արթուր Աշոտի** – դասախոս
5. **Գասպարյան Շահեն Հրաչիկի** – դասախոս
6. Ղազարյան Արմեն Յուրիկի, տ.գ.թ. դոցենտ
7. Բալագոզյան Արմինե Հովիկի, ԳՊՀ դասախոս
8. Սարոյան Սվետլանա Գեղամի, ԳՊՀ դասախոս
9. Մաստոյան Կարեն Արթուրի, ԳՊՀ դասախոս
10. Սիրականյան Կարեն, ԳՊՀ դասախոս
11. Նավոյան Ռուստամ , ԳՊՀ դասախոս
12. Մարտիրոսյան Վահրամ Արթուրի , տեխ. գիտ. թեկնածու,
13. Սարգսյան Երեմ Նորայրի, ԳՊՀ դասախոս
14. Մարտիրոսյան Արմեն , ԳՊՀ դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Արհեստական բանականության համակարգեր և նեյրոնային ցանցեր,
2. Ծրագրային ապահովման մշակում,
3. WEB-տեխնոլոգիաներ,
4. Էլեկտրոնային ուսուցում,առցանց կրթական տեխնոլոգիաներ,
5. Համակարգչային թեստավորում, գիտելիքների ստուգում և գնահատում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	5	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Կուտուզյան Ն. , Շեկյան Ա. ,** Առաձգական սողացող հիմքի վրա առաձգական հեծանների ճկումը լայնական և երկայնական ուժերով. , N15 2023, էջ 124-133,
2. **Հակոբյան Մ. ,** Էլեկտրոնային սխեմաների վերլուծությունը և մեքենայական հաշվարկը հանգուցային պոտենցիալների մեթոդով. , N15 2023, էջ 149-154,
3. **Նեյչև Ռ. , Ստեփանյան Ա. ,** Օբյեկտի հայտնաբերումը այլընտրանքային տրանսֆորմերի միջոցով. , N15 2022, էջ 149-154,
4. **Միրիբյան Ա. , Բաղոյան Վ.,** HDD և SSD հիշող սարքերի հիմնական առանձնահատկությունների ուսումնասիրությունը և նշանակությունը ՏՀՏ ոլորտում: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12 2022,
5. **Հակոբյան Մ. ,** Схема управления нагрузкой с переменным током ՀԱՊՀ, Բանբեր. Էլեկտրատեխնիկա, Էներգետիկա Գիտական հոդվածների ժողովածու, N 2 2023

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ղաջոյան Համլետ Գրիշայի, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ Գևորգյան Գոհար Վոլոդյայի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011301.00.7 *Ընդհանուր մանկավարժություն*		
011301.01.7	*Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*	Մանկավարժության մագիստրոս
011401.00.7 *Մասնագիտական մանկավարժություն*		
011401.18.7	*Պատմություն*	Մանկավարժության մագիստրոս
042101.00.6 *Իրավագիտություն*		
042101.01.6	*Իրավագիտություն*	Իրավագիտության բակալավր
042101.00.7 *Իրավագիտություն*		
042101.01.7	*Իրավագիտություն*	Իրավագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 90
Շրջանավարտների թիվը՝ 38

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2022-2023 ուսումնական տարին, նախորդ տարիների համեմատությամբ անցավ ավելի նպաստավոր պայմաններում: Սա իր դրական ազդեցությունը թողեց թե՛ բուն ուսումնական գործընթացի, և թե՛ կազմակերպչական առումով՝ միջոցառումների կազմակերպման և արտաքին համագործակցության ծրագրերի ակտիվացման վրա: Բայց հոգեբանական առումով նախորդ՝ համավարակային և պատերազմական տարիներն անհետևանք չանցան. դասեր քաղեցինք և արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, ցայտնոտային իրավիճակներից խուսափելու ունակությունները զարգացան:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներն իրականացրել ենք հետևյալ հիմնական ուղղություններով.

Ընդունելությունը և ուսանողական համակազմը.

2022-2023 ուսումնական տարում ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը (ՀՄՖ) կրթական ծրագրեր է իրականացրել բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում՝ հետևյալ մասնագիտություններով. իրավագիտություն, պատմություն, տարրական մանկավարժություն և մեթոդիկա:

Թեև դիմորդների քանակը դարձյալ մեծ չէր, այնուամենայնիվ փաստացի առաջին կուրս ընդունվածների և դիմորդների քանակի միջև տարբերություն կար, բացասական առումով ի վնաս ընդունվածների: Ընդհանուր առմամբ արդեն հստակ ուրվագծվում է, որ դիմորդների մի զգալի մասը չի կարողանում հաղթահարել միասնական ընդունելության քննությունների անցողիկ շեմը: Այս առումով մտահոգիչ է վիճակը տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնում, ինչը կապված է ընդունելության քննություններում փոփոխություն կատարելու հետ: Եթե նախկին կարգի համաձայն՝ դիմորդը «Մաթեմատիկա» առարկայի միասնական ընդունելության քննությունից ստանում էր ցածր գնահատական, ապա իրավունք ուներ օգտագործելու իր ատեստատի գնահատականը և վճարովի հիմունքներով ընդունվելու բուհ: Այժմ կարգը փոխվել է, և պարտադիր է դարձել դրական գնահատականը հենց միասնական ընդունելության քննությունից: Այս փոփոխության հետևանքով նվազել է բուհ ընդունվողների թիվը, սակայն այն կունենա որակական առումով դրական ազդեցություն, քանի որ դիմորդներն առավել լրջորեն կնախապատրաստվեն ընդունելության քննություններին և բուհ կընդունվեն ավելի խորը մեկնարկային գիտելիքներով:

2022-2023 ուսումնական տարում ընդունելության քննությունների արդյունքներով ՀՄՖ իրավագիտության բաժնի 1-ին կուրս ընդունվել են 9 ուսանող (նախորդ տարում՝ 9), պատմության բաժին՝ 3 (նախորդում՝ 1), տարրական մանկավարժության և մեթոդիկա բաժին՝ 2 (նախորդում՝ 6): Այս հանգամանքը իր ազդեցությունն է թողել նաև մագիտրոսական խմբերի վրա, որոնք հիմնականում ձևավորվում են բակալավրիատի շրջանավարտներից: Այստեղ էլ պատկերը հետևյալն է. իրավագիտության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրս ընդունվել են 6 ուսանող (նախորդը՝ 18), տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժին՝ 6 ուսանող (նախորդը՝ 15), պատմության բաժին՝ 2 ուսանող (նախորդը՝ 6):

1. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը և ակադեմիական առաջադիմությունը.

Պայմանավորված ուսանողական փոքր խմբերով և ոչ մեծ համակազմով՝ ուսանողների շարժը գրեթե էական ազդեցություն չի ունեցել: Մասնավորապես համալսարանի այլ ֆակուլտետներից հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ են տեղափոխվել 3 ուսանողներ (նախորդ տարում՝ 2): Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետից տեղափոխվել են այլ ֆակուլտետներ 2 ուսանողներ (նախորդում՝ 1): Զինվորական ծառայությունից վերադարձել են 3 ուսանողներ (նախորդում՝ 1), ուսանողական իրավունքները վերականգնել է 1 ուսանող (նախորդում՝ 4): Տարբեր պատճառներով հեռացվել են 5 ուսանողներ (նախորդում՝ 8), ազատվել են 2-ը:

Հաշվետու ժամանակահատվածում զգալիորեն նվազել է նկատողություն ստացած ուսանողների թիվը: Նախկինում բացակայողների մեջ գերակշռողը հանրապետության այլ վայրերից եկած ուսանողներն էին, նրանց բուհի կողմից մատչելի գնով հանրակացարանով ապահովելը նպաստեց բացակայությունների թվի նվազմանը:

2022-2023 ուսումնական տարում ուսման առաջադիմությունը ֆակուլտետում կազմել է 92,3% (նախորդում՝ 86%): 100 % առաջադիմություն գրանցվել է 7 կուրսում:

Ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը նպաստել են տարաբնույթ հիմնադրամներից օգտվելու հնարավորությունները: Այս հարցի կարգավորումը, ուսանողներին խորհրդատվությամբ ու համապատասխան փաստաթղթերով օգնելը միշտ էլ եղել է դեկանատի ուշադրության կենտրոնում:

Այդ հիմնադրամներից օգտվելու համար անհրաժեշտ է ունենալ հնարավորինս բարձր ՄՈԳ, իսկ սա իր հերթին նպաստում է ուսման առաջադիմության արդյունքների բարելավմանը, նպաստում ֆինանսական կարգապահության բարձրացմանը: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում ուսանողները օգտվել են հետևյալ հիմնադրամներից. Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամից՝ 8 ուսանող (նախորդը՝ 6), «ԱՄՔՈՐ» բարեգործական հիմնադրամից՝ 1 (նախորդը՝ 2), Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ՝ 1 (նախորդը՝ 2), «Դիակոնիկա» բարեգործական հիմնադրամից՝ 1 (նախորդը՝ 1), Գավառ քաղաքային համայնք՝ 1 (նախորդը՝ 2): «Փարոս» համակարգի շահառուներ են եղել՝ 12 ուսանող, Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից՝ 8 (նախորդը՝ 9), Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից՝ 1 (նախորդը՝ 1): Համալսարանի կողմից տրվել է ուսման վարձի զեղչ 9 ուսանողի:

Հաշվետու ժամանակաշրջանում պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխատուցմամբ (անվճար) տեղերում սովորել են ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա և պատմություն բաժինների բակալավրիատի 10 ուսանող, մագիստրատուրայի՝ 8 ուսանող: Դեկանատը առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերել տարրական մանկավարժություն և մեթոդիկա ու պատմություն բաժինների այն խմբերի նկատմամբ, որտեղ կան պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխատուցմամբ (անվճար) տեղերում սովորող ուսանողներ. նպատակը՝ փոխատեղման գործընթացում արդարության սկզբունքի պահպանումն է: Դա վերաբերվում է ինչպես դասալսումներին, ուսանողների հաճախելիության և ակտիվության գործոնների ամրագրմանը, որոշ դեպքերում էլ ստուգարքներն ու քննությունները հանձնաժողովային կարգով ընդունմանը: Արդյունքում՝ անվճար տեղերում սովորող ուսանողների փոխատեղման արդյունքներն ամփոփելուց և հրապարակելուց հետո չի արձանագրվել բողոքարկման դեպք: Այս հանգամանքն էլ իր հերթին դառնում է հենքային «Լավագույն ուսանող» մրցույթի համար

հավակնորդների միջև ծավալված լարված «պայքարի» ինչպես ներֆակուլտետային, այնպես էլ համալսարանական մրցույթում և ավարտվում հաղթանակով:

Ֆակուլտետի բարձր առաջադիմություն ունեցող, հանրապետական և միջազգային ուսանողական գիտաժողովներում զեկուցումներով հանդես եկած, տպագրված աշխատանքներ ու հավաստագրեր ունեցող, ինչպես նաև հասարակական ակտիվ աշխատանքներ կատարող 2 ուսանող մասնացեցին «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին, և 2-ն էլ՝ Անիկ Ավետիսյանը և Ջուլիետա Մարգարյանը արժանացան Հայաստանի Հանրապետության «Լավագույն ուսանող» մրցանակին:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցեցին բակալավրիատի 8, մագիստրատուրայի 30 ուսանող: Արդյունքում՝ ամփոփիչ ատեստավորման առաջադիմությունը կազմեց 100%: Գերազանցության դիպլոմի արժանացան բակալավրիատի 6, մագիստրատուրայի 13 ուսանող: Վերլուծվել են հանձնաժողովների նախագահների առաջարկությունները և դիտարկումները, որոնք հաշվի են առնվել 2023-2024 ուստարվա գործընթացը կազմակերպելիս:

2. Վիճակագրական տվյալներ ծրագրի ավարտից հետո շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ·

Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկություններ ենք ստանում Հայաստանի Հանրապետության և Գեղարքունիքի մարզի իրավապահ մարմիններից, հանրակրթական դպրոցներից, մրցույթներին մասնակցող մեր շրջանավարտներից, ում տալիս ենք բնութագիր-երաշխավորագրեր: Շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ անցկացվում են հարցումներ գործատուների շրջանում, որոնց արդյունքները վերլուծվում են՝ ուժեղ և թույլ կողմերը վեր հանելու, եզրահանգումներ անելու, գործողությունների պլաններում դրանք ներառելու և լուծում տալու նկատառումներով:

3. Կրթական ծրագրերի զարգացումն ու փոփոխությունները·

Ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը պարբերաբար վերանայվում ու համեմատվում են հանրապետության մյուս բուհերի նույնատիպ կրթական ծրագրերի, ինչպես նաև գործատուների պահանջների և ակնկալիքների հետ, և անհրաժեշտությունից ելնելով համապատասխան փոփոխություններ են կատարվում: Միաժամանակ փոփոխություններ ու լրացումներ են կատարվել իրավագիտության ամբիոնի 62, հասարակական գիտությունների ամբիոնի 86 դասընթացների ծրագրերում: Բոլոր փոփոխությունների նպատակը մեկն է, դասավանդումը տանել իրական կյանքին և հասարակության հոգևոր պահանջներին համահունչ, վերջինս հասարակական գիտությունների ոլորտում ունի իր առանձնահատկությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ամբիոնների և ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի հետ համատեղ կազմվեց դասալսումների ժամանակացույց, իրականացվեցին համատեղ դասալսումներ: Դասալսումների արդյունքները վերլուծվեցին ակադեմիական քաղաքականության բաժնի կողմից և քննարկվեցին ամբիոններում:

5. **Ծրագրի ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացները.**

Ֆակուլտետի ռազմավարական նպատակներից է դասախոսական կազմի կայունության ապահովումը: Ֆակուլտետի 2 ամբիոններում ընդգրկված են գիտությունների դոկտորներ, թեկնածուներ, երիտասարդ ասիստենտներ, տվյալ ոլորտի աշխատանքային փորձ և հմտություններ ունեցող, առաջատար պրակտիկ մասնագետներ:

2023թ. մայիսի 5-6-ը կայացած գիտաժողովին ակտիվորեն մասնակցեցին մասնագիտական 2 ամբիոններում ընդգրկված դասախոսները:

Հաշվետու ժամանակաշրջանում հանրապետության տարբեր բուհերում կազմակերպված հանրապետական և միջազգային ուսանողական գիտաժողովներին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև ուսանողները: Արդյունքում ակտիվ ուսանողները մասնակցեցին «Լավագույն ուսանող» բուհական և հանրապետական մրցույթի, նրանց շնորհվեցին հավաստագրեր:

6. Ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները.

Հաշվետու ժամանակահատվածում ժամանակակից և անհրաժեշտ կահավորանքով հագեցած հոգեբանամանկավարժական կենտրոնը իրագործեց իր առջև դրված մի շարք խնդիրներ: Կենտրոնում գործնական աշխատանքներ անցան ֆակուլտետի, ինչպես նաև համալսարանի մյուս ֆակուլտետների ուսանողները: Այն ծառայեց որպես խորհրդատվական կենտրոն տարածաշրջանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար: Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնն ունեցավ 85 այցելուներ, 5-ով ավելի նախորդ տարվա համեմատությամբ: Գավառի մանկատնից հոգեբանամանկավարժական կենտրոն են այցելել 15 սաներ, իսկ կենտրոնի մասնագետ Արմինե Դավթյանը հրավիրվել է մանկատուն, համագործակցել է «Արևի աշխարհ» մանկական զարգացման կենտրոնի հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի բոլոր լսարանները ապահովվել են անհրաժեշտ միջոցներով՝ որակյալ ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

Ֆակուլտետը համագործակցել է տարածաշրջանի կրթամշակութային հիմնարկությունների և հանրակրթական դպրոցների հետ: Բարձր դասարանների աշակերտների և բուհ ընդունվել ցանկացող ապագա դիմորդների համար կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշմանը նվիրված խորհրդատվություններ, հանդիպումներ, որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ կազմակերպվել են այցելություններ մարզի դպրոցներ:

2022-2023 ուստարում իրականացվել են ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման ‹‹Learn.gsu.am›› համակարգի շարունակական բարելավման աշխատանքներ, թարմացվել է ուսումնական նյութերի բովանդակությունը:

Կազմվել է խորհրդատվությունների անցկացման ժամանակացույց, և ակադեմիական խորհրդատուների կողմից իրականացվել են խորհրդատվություններ ինչպես ժամանակացույցին համապատասխան, այնպես էլ՝ ուսանողների կարիքներից ելնելով:

Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետի ակադեմիական խորհրդատու Անի Ամիրյանի կողմից կազմակերպվել է դաս-քննարկում իրավագիտության բաժնի ուսանողների հետ, որը նվիրված էր Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման պատմությանն ու նպատակին:

Ֆակուլտետը իր գործունեությունը իրականացրել է ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, բուհի էթիկայի կանոնների և ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթներին համապատասխան:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

I. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում և արդիականացում, վերջնարդյունքների սահմանում՝ ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների հաշվառմամբ, աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրություն և արդյունքների հաշվառում,
2. իրավագիտություն, պատմություն, տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ-ների բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի վերանայում և բարելավում, ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից կրթության բովանդակության, դասավանդման մեթոդների արդիականացում և հարստացում,
3. ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման կառուցակարգերի արդյունավետության բարձրացում, հետևողական աշխատանքների իրականացում ուսանողների կողմից ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի նախապատրաստման, ժամանակին ու ներկայացվող պահանջներին համապատասխան կատարելու ուղղությամբ, ինչպես նաև դասախոսների կողմից աշխատանքների ղեկավարման որակի բարձրացում,
4. ըստ անհրաժեշտության ֆակուլտետում առցանց և զուգակցված ձևաչափերով ուսումնական գործընթացի կազմակերպում,
5. ուսանողներին խոր մասնագիտական գիտելիքների հաղորդում, համապատասխան ոլորտների տեսական և գործնական իմացության ապահովում, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, շարունակական կրթության մշակույթի ձևավորում,
6. ՈԱԲ-ի կողմից ուսանողների և դասախոսների շրջանում՝ նրանց կարիքների վերհանման համար իրականացրած հարցումների վերլուծությունների արդյունքների շարունակական բարելավման ուղղությամբ հետևողական աշխատանքների իրականացում,
7. ԱՔԲ-ի հետ համատեղ դասալսումներ կազմակերպում, դասալսումների արդյունքների վերլուծություն և բարելավման հետևողական աշխատանքների իրականացում,
8. ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում,
9. միջազգային ծրագրերին ուսանողների մասնակցության ապահովում:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Ֆակուլտետի ամբիոնների գիտահետազոտական գործունեության ուղղությունների հստակեցում և համապատասխանեցում ժամանակի մարտահրավերներին,
2. գիտահետազոտական աշխատանքների հրապարակում բարձր գործակից ունեցող պարբերականներում, որոնք ներառված են Web of Science, Scopus, Crossref, РИНЦ և այլ համակարգերում,
3. գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրում, ուսանող - դասախոս համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացում,
4. դասախոսների գիտահետազոտական գործունեության բարոյական և նյութական խրախուսում:

III. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Ֆակուլտետի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների հաշվետվողականության ապահովում՝ ըստ աշխատանքային նկարագրերի,
2. պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի անդամների կարողությունների շարունակական զարգացում,
3. միջազգային և հանրապետական գիտաժողովներին գիտամանկավարժական կազմի անդամների մասնակցության խրախուսում,
4. ֆակուլտետի ուսանողների անձնական գործերի էլեկտրոնային բազայի շարունակական համալրում,
5. դասախոսների բարոյական և նյութական խրախուսման կառուցակարգերի կիրառում:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

1. Ֆակուլտետի ուսանողների սոցիալական վիճակի ուսումնասիրություն, աջակցության ծրագրերի իրականացում,
2. ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ անձնակազմերի անդամների և ուսանողների միջազգային ակադեմիական շարժունության խթանում,
3. համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի կրթական ծրագրերի հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում և առաջավոր փորձի կիրառում (բենչմարքինգի իրականացում),
4. հանրությանը համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի կրթական ծառայությունների ներկայացում և լիարժեք տեղեկատվության տրամադրում,
5. համագործակցություն հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ, մասնագիտական կողմնորոշման նպատակով աշակերտներին խորհրդատվության տրամադրում:

V. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի հիման վրա ֆակուլտետում ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանում,
2. ակադեմիական անազնվության դեպքերի կանխում,
3. ԳՊՀ էթիկայի կանոնների և բարոյական նորմերի ու արժեքների արմատավորում ուսանողների շրջանում:

Համլետ Ղաջոյան՝
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	10	-	3	100
2-րդ	4	-	1	50
3-րդ	5	-	1	80
4-րդ	4	-	3	100
Պատմություն				
1-ին	3	-	3	100
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
1-ին	2	-	-	100
2-րդ	7	-	6	85,7
3-րդ	7	-	1	66,6
4-րդ	4	-	-	100
Ընդամենը	**46**	**-**	**18**	**86,6**
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	6	-	1	66,6
2-րդ	14	-	3	36
Պատմություն				
1-ին	2	-	1	100
2-րդ	6	-	4	66,6
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
1-ին	5	-	3	60
2-րդ	12	-	3	83
Ընդամենը	**45**	**-**	**15**	**62,2**

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	10	-	2	100
2-րդ	5	-	1	60
3-րդ	4	-	1	75
Պատմություն				
1-ին	4	-	3	100
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
1-ին	2	-	-	100
2-րդ	7	-	-	100
3-րդ	7	-	1	100
Ընդամենը	**39**	**-**	**8**	**92,3**
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	6	-	2	100
Պատմություն 1-ին	2	-	1	100
Տարր. մանկավարժ. և մեթոդիկա 1-ին	5	-	-	80
Ընդամենը	**13**		**3**	**92,3**

2022/2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Ձեկուցումների թեզիս
	2		-	27	

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 2

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Թունյան Վալերի Գեորգիի - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. Պողոսյան Աշխունջ Ամիրխանի - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. Հակոբյան Արսեն Աշոտի - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
4. Ղաջոյան Համլետ Գրիշայի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
5. Պապիկյան Կարինե Միշայի - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
6. Քուրքչյան Լուսիկ Ներսեսի - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
7. Հայրապետյան Քանաքարա Խաչիկի – ասիստենտ,
8. Գարեյան Մելանյա Վարդանի - դասախոս,
9. Խաչիկյան Հայկ Խաչիկի – դասախոս,
10. Դավթյան Արմինե Վահրամի – դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Այվազյան Էդվարդ Իշխանի – մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. Բարսեղյան Պարգև Աշոտի - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. Պետրոսյան Քնարիկ Ռազմիկի – պատմական գիտությունների թեկնածու,
4. Զարգարյան Արփինե Հրանտի - դասախոս,
5. Կոտոլկյան Թամարա Հակոբի - դասախոս,
6. Սաֆարյան Ալիտա Սոսի – դասախոս:

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը 21-րդ դարում,*
2. *Ներառական կրթության մանկավարժական, սոցիալ-մանկավարժական, հոգեբանական հիմնախնդիրները,*
3. *Մանկավարժների մասնագիտական-մանկավարժական իրազեկությունները (կոմպետենտությունները),*
4. *Հայ գրողների և պատմիչների փիլիսոփայական հայացքների վերլուծություն:*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Ձեկուցումների թեզիս
	2		-	**14**	

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Тунян В. Г. Армянская церковь и этнические конфликты: мифы и реалии// Ежегодник Богословского факультета, Երևան, 2022, N2, էջ 205-218:
2. Тунян В. Г. Переселение армян Ереванской области 1804-1808 гг.// Պատմություն և քաղաքականություն, Երևան, 2023, N 1, էջ 3-16:
3. Тунян В.Г. Позиции по делимитации границ, Պատմություն և քաղաքականություն// Երևան, 2023, N 2, էջ 3-24:
4. Тунян В. Г. Армения в первой половине 1913 г.// Введение – В кн. Т. Ольгенин, Երևան, 2023, էջ 3-13:
5. Тунян В. Г. К истории русско-армянских отношений: мифы и факты// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 16 /հանձնվել է տպագրության/:
6. Тунян В. Г. Освещение Армянского вопроса и Геноцида армян в Азербайджанской историографии, Начало XXI в.// Чартарагет, Ереван, 2023, 140 էջ:
7. Тунян В.Г. Армянская Апостольская церковь: воззрения и реалии// Лусакн, Ереван, 2023, 240էջ:
8. Պողոսյան Ա. Ա. Բուսածաղկային հորինվածքներով բնորոշվող գորգերի տիպերը Վասպուրականի գորգագործական կենտրոններում /Ըստ ՀԱԹ-ի գորգերի հավաքածուի// Նոր Ազգագրական հանդես, 2023 /հանձնվել է տպագրության/:
9. Պողոսյան Ա. Ա. Կոգովիտի ու հարակից տարածաշրջանների գորգագործական ավանդույթների մասին// Պատմամշակութային ժառանգության հետազոտման կենտրոն, 2023 /հանձնվել է տպագրության/:
10. Պողոսյան Ա. Ա. Գորգագործական մշակույթի հետազոտման գիտական սկզբունքների մասին /կովկասյան գորգեր// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, N 15:
11. Բարսեղյան Պ. Ա. Կրոնական պրակտիկայի առանձնահատկությունները բուդդայականության մեջ// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, N 15:
12. Պետրոսյան Ք. Ռամկավար ազատական կուսակցության գործունեությունը Հայաստանի երրորդ Հանրապետությունում// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 16 /հանձնվել է տպագրության/:
13. Ղաջոյան Հ. Գ.*Մարդկային ներուժը բացահայտող անզուգական վարպետը. Հրանտ Խաչատուրի Հակոբյան*// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 16 /հանձնվել է տպագրության/:

14. Հայրապետյան Ք. Խ. Մայր Աթոռ-նվիրապետական աթոռներ փախհարաբերություններն Ամենայն հայոց Խորեն Ա կաթողիկոսի հովվապետության տարիներին// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, N 15:
15. Պապիկյան Կ. Մ., Դիշաղաջյան Նունե Նախագծային ուսուցումը անցյալի և ներկայի համատեքստում// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, N 15:
16. Քուրքչյան Լ., Վահանյան Ա. Հուզական ինտելեկտը որպես մանկավարժի անձի կառուցվածքային բաղադրիչ// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, N 15:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի - իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,**
2. **Խաչատրյան Սամվել Արտաշեսի - իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,**
3. **Հովհաննիսյան Օլգա Արտյոմի - ԳՊՀ դոցենտ,**
4. **Ամիրյան Անի Սամվելի – լաբորանտ, դասախոս:**

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Հակոբյան Հրանուշ Հրանտի - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,**
2. **Հարությունյան Մնացական Հայկի - իրավաբանական գիտությունների թեկնածու,**
3. **Խաչատրյան Հայկ Աշոտի - իրավաբանական գիտությունների թեկնածու,**
4. **Վարդանյան Գեղեցիկ Մարատի - ասիստենտ,**
5. **Բադալյան Տիգրանուհի - դասախոս,**
6. **Վարդանյան Մարզպետունի Գոռի - ասիստենտ,**
7. **Մուրադյան Պապին Օնիկի- դասախոս,**
8. **Ղաջոյան Վարդան Համլետի – դասախոս,**
9. **Մոսիկյան Դանիել Կարապետի – դասախոս,**
10. **Հարությունյան Արևիկ Տելեմակի– ասիստենտ,**
11. **Գրիգորյան Տարոն Վրեժի - ասիստենտ,**
12. **Բախտիկյան Լուսինե Վանիկի - ասիստենտ:**

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,*
2. *ՀՀ սահմանադրական, քաղաքացիաիրավական ինստիտուտներ,*
3. *Հայաստան-Սփյուռք գործակցություն:*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	17	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության մի քանի հարցեր // ‹‹Հանրային կառավարում››, 1/2022, էջ 129-140
2. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** Հայաստանի Հանրապետության քաղաքացու ընտրվելու իրավունքի իրացման հիմնահարցերը // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, № 12, էջ 512-530,
3. **Հակոբյան Ռ. Խ.** Ինչ և ինչու է արգելում ՀՀ Սահմանադրությունը // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, № 13, էջ 507-525,
4. **Հակոբյան Հ. Հ.** «Պետություն-Սփյուռք» փոխհարաբերությունների որոշ հիմնախնդիրների մասին // «Հանրային կառավարում» գիտական պարբերական, Երևան, 1/2023, էջ 155-165,
5. **Հակոբյան Հ. Հ.** Հայապահպանությանը նվիրված հիմնախնդիրների մասին զեկուցում ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած միջազգային առցանց գիտաժողովին, 21.01.2022թ.,
6. **Հակոբյան Հ. Հ.** Մայրենի լեզվի անաղարտության պահպանման արդի հիմնախնդիրների մասին զեկուցում ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած առցանց գիտաժողովին՝ նվիրված Մայրենի լեզվի օրվան, 21.02.2023թ.,
7. Акобян Р. Х. , Акобян Г. Г. Эволюция формы правления Республики Армения // Государство и право. – 2023. – С. 146-152 . URL: http://gospravo-journal.ru/s102694520024780-9-1/Научный журнал Российской академии наук, РФ (Журнал включен Высшей аттестационной комиссией (ВАК) при Министерстве высшего образования и науки РФ в перечень ведущих рецензируемых научных журналов и изданий, в Российский Индекс Научного

Цитирования (РИНЦ) и зарегистрирован в научной электронной библиотеке Elibrary.ru; в базу Russian Science Citation Index (RSCI) на платформе Web of Science),

8. Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ. Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակները և ՀՀ Սահմանադրության դրույթները (համեմատահիրավական վերլուծություն) // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, № 14, էջ 419-435,
9. Hakobyan H. H., Hakobyan R. Kh. Subjects of the legislative initiative in the Republic of Armenia // Scientific journal ‹‹Parliamentary Affairs››, Oxford University Press, Submitted for publication (Մեծ Բրիտանիայում հրատարակվող գիտական պարբերական, որն ընդգրկված է ցիտման բարձր գործակից ունեցող Web of Science համակարգում), հոդվածը ներկայացված է տպագրության, 2023,
10. Հակոբյան Հ. Հ. Հայկական Սփյուռքի ձևավորման պատճառների և ցեղասպանության միջազգային իրավական հիմնահարցերի մասին // Զեկուցումը ներկայացվել է Գավառի պետական համալսարանի հիմնադրման 30-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, № 15, էջ 511-529,
11. Հակոբյան Հ. Հ. Տարածաշրջանում խաղաղության և անվտանգության պահպանման գործում կանանց դերակատարությանը նվիրված զեկուցում Հայ կանանց միջազգային միության նիստում, Երևան, 06.06.2023թ.:
12. Խաչատրյան Ս. Ա. Հայոց իրավունքի ու պետության ծագման պատճառների ու միջոցի մասին// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, N 13, էջ 526-561:
13. Խաչատրյան Ս. Ա. Բաքվի «Աղջկա աշտարակ»-ի շուրջ// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, N 13, էջ 436-476:
14. Ամիրյան Ա. Ս. Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական լիազորությունները ՀՀ դատական իշխանության անկախության ապահովման ոլորտում// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, N 13, էջ 477-498:
15. Վարդանյան Գ. Մ. Հաշտարարության ինստիտուտը՝ պատմական զարգացումների և միջազգային փորձի համատեքստում և դրա ներդրումը Հայաստանի Հանրապետությունում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, N 13, 573-587:
16. Մուրադյան Պ., Գրիգորյան Մ. Մարզային գրադարանների զարգացման միտումները // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, N 13, էջ 404-418:
17. Оганесян О. А., Мартиросян Т. Л. Некоторые проблемы совершенствования трудового законодательства// Հայ-ռուսական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2023, N 2, էջ 50-55:

Համլետ Ղաջոյան՝
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ամիրխանյան Սամվել Գրիգորի,
տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ Հերգնյան Մարիամ Նորիկի,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	041101.00.6 *Հաշվապահական հաշվառում և հարկում*	
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
	041101.00.7 *Հաշվապահական հաշվառում և հարկում*	
041101.01.7	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	Տնտեսագիտության մագիստրոս
	041201.00.6 *Ֆինանսներ*	
041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
	041201.00.7 *Ֆինանսներ*	
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Տնտեսագիտության մագիստրոս
	031101.00.6 *Տնտեսագիտություն*	
031101.01.6	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության բակալավր
	031101.00.7 *Տնտեսագիտություն*	
031101.01.7	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 94
Շրջանավարտների թիվը՝ 28

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1. Ընդունելությունը և ուսանողական համակազմը.

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ 2022-2023 ուսումնական տարում ընդունվել են 28 ուսանողներ, այդ թվում՝ բակալավրիատում 14, մագիստրատուրայում՝ 14 ուսանող, իսկ նախորդ տարում ընդունվել էր 31 դիմորդ:

Հաշվետու ժամանակաշրջանում տնտեսագիտական ֆակուլտետում արձանագրվել է ուսանողների հետևյալ շարժը.

- ✓ քոլեջներից և այլ բուհերից տնտեսագիտական ֆակուլտետ տեղափոխված ուսանողների թիվը նախորդ տարի կազմել է 9 ուսանող, հաշվետու ուսումնական տարում կազմում է 11 ուսանող,
- ✓ բանակ է զորակոչվել նախորդ տարի 2 ուսանող, հաշվետու ուսումնական տարում՝ դարձյալ 2 ուսանող,
- ✓ ֆակուլտետից հեռացվել են 9 ուսանողներ, որոնցից 7-ը մագիստրատուրայից, 2-ը բակալավրիատից, իսկ նախորդ տարում հեռացվել էին 7 ուսանողներ,
- ✓ վերականգնվել են 4 անձանց ուսանողական իրավունքները, իսկ նախորդ տարում վերականգնվել է 8 ուսանող,
- ✓ այլ ֆակուլտետներից տնտեսագիտական ֆակուլտետ են տեղափոխվել 2 ուսանողներ, իսկ նախորդ տարում ֆակուլտետ են տեղափոխվել 5 ուսանողներ,
- ✓ հեռակա ուսուցման ֆակուլտետում ուսումը շարունակել է 2 ուսանող, նախորդ ուստարում՝ 3 ուսանող,
- ✓ ազատվել է 2 ուսանող:

2. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը և ուսումնական առաջադիմության արդյունքները.

2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետի առաջադիմությունը կազմել է 87,9%, որը նախորդ կիսամյակի համեմատությամբ աճել է 5,6%-ով, իսկ 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ աճել է 8,5%-ով: Այս ցուցանիշը և բակալավրիատում, և մագիստրատուրայում աճել է՝ կազմելով համապատասխանաբար 87,5% և 90%:

	2021-2022 ուստարվա II կիսամյակ	2022-2023 ուստարվա I կիսամյակ	2022-2023 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2021-2022 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2022-2023 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Տնտեսագիտակ անֆակուլտետ	79,4	82,3	87,9	+8,5	+5,6
Բակալավրիատ	86	84,9	87,5	+1,5	+2,6

Մագիստրատուրա	54	73,9	90	+36	+16,1

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները տոկոսներով (%)

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները
Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժնում

Տոկոսներով (%)

Կուրսը	2021-2022 ուստարվա II կիսամյակ	2022-2023 ուստարվա I կիսամյակ	2022-2023 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2021-2022 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2022-2023 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	80	100	0	+20
Երկրորդ	91,7	84,6	78,6	-13,1	-6
Երրորդ	62,5	90,9	72,7	+10,2	-18,2

Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում ուսման առաջադիմությունն 2022-2023 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ աճել է 20%-ով և կազմել 100 %:

Երկրորդ կուրսում առաջադիմությունը ինչպես 2021-2022 ուստարվա II կիսամյակի, այնպես էլ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է և կազմել 78,6%:

Երրորդ կուրսում հաշվետու ժամանակաշրջանի երկրորդ կիսամյակում առաջին կիսամյակի համեմատությամբ առաջադիմությունը նվազել է 18,2 %-ով և կազմել է 72,7%, իսկ 2021-2022 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ աճել է 10,2%-ով:

Չորրորդ կուրսում 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջադիմությունը կազմել է 62,5 %, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 23,2 %-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ բաժնում

Տոկոսներով (%)

Կուրսը	2021-2022 ուստարվա II կիսամյակ	2022-2023 ուստարվա I կիսամյակ	2022-2023 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2021-2022 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2022-2023 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	100	100	0	0
Երկրորդ	66,7	100	100	+33,3	0
Երրորդ	100	66,7	100	0	+33,3

Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ մասնագիտության առաջին և երկրորդ կուրսում առաջադիմությունը հաշվետու ժամանակաշրջանի երկու կիսամյակներում էլ կազմել է 100%, երրորդ կուրսում առաջադիմությունը հաշվետու ժամանակաշրջանի առաջին կիսամյակի համեմատ աճել է 33,3% -ով և կազմել է 100%:

Չորրորդ կուրսում 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջադիմությունը կազմել է 83,3 %:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները

Տնտեսագիտություն բաժնում

Տոկոսներով (%)

Կուրսը	2021-2022 ուստարվա II կիսամյակ	2022-2023 ուստարվա I կիսամյակ	2022-2023 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2021-2022 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2022-2023 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	100	100	0	0
Երկրորդ	66,7	71,4	100	+33,3	+28,6
Երրորդ	100	100	83,3	-16,7	-16,7

Տնտեսագիտություն մասնագիտության առաջին և երկրորդ կուրսերում ուսման առաջադիմությունը կազմել է 100%, երրորդ կուրսում ուսման առաջադիմությունը 2022-2023 ուստարվա առաջին և նախորդ տարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 16,7%-ով և կազմել 83,3 %:

Չորրորդ կուրսում 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջադիմությունը կազմել է 100 %, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 66,7 %-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները
Մագիստրատուրայում

Տոկոսներով (%)

Բաժինը, կուրսը	2021-2022 ուստարվա II կիսամյակ	2022-2023 ուստարվա I կիսամյակ	2022-2023 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2021-2022 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2022-2023 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ I կուրս	40	83,3	100	+60	+16,7
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ I կուրս	60	66,7	67	+7	+0,3
Տնտեսագիտություն I կուրս	67	66,7	100	+33	+33,3

Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսում ուսման առաջադիմությունը ինչպես 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի, այնպես էլ հաշվետու տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է, կազմելով 100%:

Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտության մագիստրատուրայի երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 50%:

Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսում ուսման առաջադիմությունը հաշվետու ժամանակահատվածի առաջին կիսամյակի համեմատ աճել է 0,3%-ով, իսկ 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ աճել է 7%-ով և կազմել 67 %: Երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 80%:

Տնտեսագիտության մագիստրատուրայի առաջին կուրսում ուսման առաջադիմությունը 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 33,3%-ով և կազմել 100%: Երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 100%:

Տնտեսագիտական ֆակուլտետում հետևողականորեն արձանագրվում են ուսանողների հաճախումները: Ամենօրյա հաշվառման արդյունքում որոշ ուսանողներ ստացել են նկատողություն, խիստ նկատողություն, մեկ ուսանող մագիստրատուրայից հեռացվել է բուհից: Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի 16 ուսանողներ ստացել են նկատողություն, 2 ուսանող՝ խիստ նկատողություն:

Ֆակուլտետի դեկանատը ուշադիր է նաև ուսանողների սոցիալական խնդիրները ժամանակին բարձրացնելու հարցում՝ նրանց նյութապես աջակցելու նպատակով:

Բակալավրիատում և մագիստրատուրայում անվճար տեղերի առկայությունը խթանում է ուսանողների ակտիվությունը և նպաստում ուսման առաջադիմության բարձրացմանը: Տնտեսագիտական ֆակուլտետի սոցիալապես անապահով ընտանիքների բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներն օգտվում են պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերից: Բակալավրատի 27 և մագիստրատուրայի 14 ուսանողներ սովորում են պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, իսկ մեկ ուսանող սովորում է ԳՊՀ միջոցների հաշվին:

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողներն օգտվում են ներքոհիշյալ հովանավոր կազմակերպությունների կրթաթոշակներից.

Տնտեսագիտական ֆակուլտետի
կրթաթոշակառու ուսանողների թիվը

Հովանավոր կազմակերպություններ	Ուսանողների թիվը
Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	11
ԳՊՀ կողմից կատարված ուսման վարձի զեղչեր	7
Ընտանիքի անապահովության համակարգում ընդգրկված ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում պետբյուջեից	9
Գավառի համայնքապետարան	2
Հայ կրթական հիմնարկություն	2
Ընդամենը	31

3. Վիճակագրական տվյալներ ծրագրի ավարտից հետո շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ.

Տնտեսագիտական ֆակուլտետում գործում և շարունակաբար նոր համագործակցային կապեր են հաստատվում գործատուների հետ, որոնց նպատակը շրջանավարտների մասնագիտական հմտությունների կատարելագործումը և աշխատաշուկայում նրանց մրցունակության ապահովումն է, որի արդյունքում համալրվում է շրջանավարտների մասին տեղեկատվական բազան:

Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ
վիճակագրական տվյալներ

Շրջանավարտները՝ ըստ մասնագիտությունների	**Ֆինանսներ /ըստ ոլորտի/, Ֆինանսներ, դրամաշրջանա-ռություն և վարկ**	**Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/,**	**Տնտեսագիտություն**

			Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/			
	2022թ.	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.	2023թ.
Բակալավրիատի շրջանավարտ	**8**	**8**	**-**	**6**	**4**	**4**
Մագիստրատուրայի շրջանավարտ	**6**	**4**	**4**	**4**	**3**	**2**
Նրանցից աշխատում են /այդ թվում՝ իրենց մասնագիտությամբ/	**6/3/**	**4/3/**	**3/2/**	**6/6/**	**6/3/**	**2/2/**

2022 թվականի ֆինանսներ մասնագիտության գծով բակալավրիատի և մագիստրատուրայի 14 շրջանավարտներից աշխատում են 6-ը, որոնցից 3-ը՝ մասնագիտությամբ: Հաշվապահական հաշվառում մասնագիտության 4 շրջանավարտներից աշխատում են 3-ը, որոնցից 2-ը՝ մասնագիտությամբ: Տնտեսագիտություն մասնագիտությամբ 7 շրջանավարտներից աշխատում են 6-ը, որոնցից 3-ը՝ մասնագիտությամբ:

2023 թվականի ֆինանսներ մասնագիտության գծով բակալավրիատի և մագիստրատուրայի 12 շրջանավարտներից աշխատում են 4-ը, որոնցից 3-ը՝ մասնագիտությամբ: Հաշվապահական հաշվառում մասնագիտության 10 շրջանավարտներից աշխատում են 6-ը, որոնցից 6-ը՝ մասնագիտությամբ: Տնտեսագիտություն մասնագիտությամբ 6 շրջանավարտներից աշխատում են 2-ը, որոնցից 2-ը՝ մասնագիտությամբ:

Այսպիսով, 2023 թվականի շրջանավարտների 43 տոկոսն աշխատում է, ընդ որում, նրանցից 39 տոկոսը՝ մասնագիտությամբ:

Տնտեսագիտական ֆակուլտետում պարբերաբար կազմակերպվում են դասալսումներ, իսկ ուսանողների շրջանում հարցումներ՝ դասախոսների դասավանդման որակից և կրթական միջավայրից բավարարվածության վերաբերյալ: Հարցումների արդյունքները քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետի խորհրդի նիստերում, աշխատանքներ են տարվում գործողությունների ծրագրում դրանք ներառելու և նկատված թերությունները շտկելու ուղղությամբ, ապա կատարվում է բակալավրիատի, մագիստրատուրայի, ուսումնական պլանների բարելավում:

Դասալսումները պետք է ուղղված լինեն ՄԿԾ-ների լիարժեք իրականացմանը և լուրջ ուշադրություն դարձնել թեմատիկային, որոնք կարող են հաճախ կրկնվեն տարբեր դասախոսների կողմից:

Ֆակուլտետում կարևորվում է համալսարանի որակի ապահովման բաժնի հետ շրջանավարտների գիտելիքներից և կարողություններից գործատուների բավարարվածության վերաբերյալ հարցումների անցկացումը, որը նպաստում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստմանը: Այս առումով, բավականաչափ նկատելի է շրջանավարտների միավորման գործունեության դերը:

Այստեղ ուսանողների կողմից բացասական պատասխանները մեր համար դառնում են թերությունները շտկելու հնարավորություն: Այսպես՝ ՄԿԾ վերջնարդյունքները ուսանողներին մատչելի ներկայացնելը, մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման հնարավորությունների պարզաբանումները, խորհրդատվական ծառայությունների մակարդակը բարձրացնելու, այն ավելի անմիջական դարձնելու և հաղորդակցման ժամանանակից մեթոդներ կիրառելու ուղղությամբ:

4. Մասնագիտական կրթական ծրագրերի փոփոխությունները, դասավանդման և գնահատման մեթոդների արդիականացումը.

Տնտեսագիտական ֆակուլտետում ուսումնական տարվա ընթացքում և տարեվերջում ամբիոններում քննարկվում են կրթական ծրագրերի հնարավոր և անհրաժեշտ՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան փոփոխությունների մասին հարցեր, որը նպաստում է ՄԿԾ-ների արդիականացմանը և աշխատաշուկային համապատասխանեցմանը:

Կրթական ծրագրերում բարելավման փոփոխություններն իրականացնելիս՝ հաշվի են առնվել դասախոսների, ուսանողների, շրջանավարտների կարծիքները: Վերանայվել են դասընթացները, կատարվել են որոշ առարկաների կիսամյակային տեղաշարժեր:

2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային և ուսումնական պլաններում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

«Ֆինանսներ /ըստ ոլորտի/» և «Տնտեսագիտություն» մանագիտությունների 2-րդ կուրսերում «Աշխատանքի տնտեսագիտություն» դասընթացի փոխարեն 2022-2023 ուսումնական տարում նախատեսվեց ուսումնառել «Ձեռնարկության տնտեսագիտություն» դասընթացը /48 ժամ/, որն այդ մասնագիտություններում ավելի կարևոր էր, իսկ «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» մասնագիտությունում այն մնաց նույնը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տնտեսագիտություն» մանագիտության 2-րդ կուրսում ուսուցանվող «Տնտեսական գործունեության կազմակերպման տեսություն» դասընթացի թեմաներին ավելի հանգամանալից անդրադառնում են «Ձեռներեցության հիմունքներ» դասընթացի շրջանակներում՝ 3-րդ կուրսում, ուստի՝ նպատակահարմար է դրա փոխարեն ուսումնասիրել «Գործարարության հոգեբանություն» առարկան:

Ինչպես նշվեց «Գործարարության հոգեբանություն» /48 ժամ/ առարկան առանձնացվեց 1-ին կուրսի հոսքից և ներդրվեց «Տնտեսագիտություն» բաժնի 2-րդ կուրսում որպես մասնագիտական առարկա /64 ժամ/, իսկ «Գործարարության բարոյագիտություն» դասընթացը 48 ժամից դարձավ 32 ժամ և նախատեսվեց հոսքային բոլոր բաժինների 1-ին կուրսերում:

«Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» բաժնի 2-րդ կուրսում քննությունները 6-ն էին և նպատակահարմար էր «Ծառայությունների ոլորտի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում և հարկում» դասընթացը դարձնել ստուգարք:

«Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» բաժնի 3-րդ կուրսերում «Միջազգային տնտեսական հարաբերություններ» դասընթացի ժամաքանակը կրճատվել է և դարձել 48 ժամ՝ նախկին 64 ժամից:

«Ֆինանսներ /ըստ ոլորտի/» և «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» բաժինների 3-րդ կուրսում «Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշվապահական հաշվառումում» դասընթացի ժամաքանակն ավելացվել և դարձել 48 ժամ՝ նախկին 32 ժամից:

Ֆակուլտետի բոլոր բաժինների 3-րդ կուրսերում «Արժեթղթերի շուկա» դասընթացի ժամաքանակը կրճատվել է և դարձել 48 ժամ՝ նախկին 64 ժամից:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների, գիտելիքների գնահատման ձևերի ու չափանիշների շարունակական բարելավումը մշտապես գտնվում է դասախոսների ուշադրության կենտրոնում:

Դասախոսությունների, գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ ակտիվորեն ու արդյունավետ են օգտագործվում համալսարանում առկա և տնտեսագիտական ֆակուլտետում վերջին տարիներին ձևավորված նոր ու վերանորոգված լսարանների հնարավորությունները /2023 թվականին վերանորոգվել 2 լսարան, Հաշվապահական հաշվառման ամբիոնը, միջանցքի մի մասը/:

Համալսարանում ներդրված նոր տեխնիկական միջոցների կիրառումը թույլ է տալիս ավելի արդյունավետ կազմակերպել դասընթացները, որի արդյունքում ուսանողների մոտ ձևավորված հմտությունները և կարողությունները դառնում են համահունչ կրթական ծրագրերում նախատեսված վերջնարդյունքների հետ:

Մասնագիտական կրթական ծրագրերը իրականացնելիս կարևոր է նաև դասընթացների դասախոսությունների և գործնական պարապմունքների միջև դասաժամերի արդյունավետ վերաբաշխումը, որը ամբիոնների կողմից վերանայվելուց հետո իր դրական ազդեցությունն է թողնում ուսանողների պրակտիկ գիտելիքները և հմտությունները էլ ավելի բարելավելու գործում:

Դասախոսները արդյունավետ օգտագործում են նաև համացանցի ընձեռած հնարավորությունները՝ ուսանողների գործնական հմտությունները զարգացնելու նպատակով: Այս տեսանկյունից ուսանողները տարբեր դասընթացների շրջանակներում օգտվում են «**miros**», «**mindmup**» համակարգերից, որոնց արդյունքում համակարգչի վրա ստանում են տվյալ օրվա թեմայի ամփոփ պատկերը՝ տպավորիչ գծապատկերների միջոցով՝ միաժամանակ հարստացնելով իրենց գործնական և համակարգչային հմտությունները: Այս մեթոդը առաջարկել ենք օգտագործել նաև մյուս առարկաների դասավանդման ժամանակ:

Դասախոսությունների և սեմինար-գործնական պարապմունքների անցկացման մեթոդների բարելավումը նպաստում է նաև ինչպես թեմայի, այնպես էլ առարկայի վերջնարդյունքների ապահովմանը: Պրակտիկան ցույց է տալիս, որ մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների քարտեզագրման հիմքը ավելի ամուր է դառնում վերոնշյալ գործընթացների արդյունավետ իրականացման պայմաններում:

5. Ուսումնագիտական ռեսուրսները և օժանդակ ծառայությունները.

Տնտեսագիտական ֆակուլտետում կարևորվում է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովումը, ուսումնամեթոդական բազայի բարելավումը: Ուսումնական տարվա սկզբին, ուսումնական գործընթացին ինտեգրելու նպատակով առաջին կուրսեցիներին տրվում է խորհրդատվություն՝ ԳՊՀ էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու և ուսումնառությանը վերաբերվող հարցերի վերաբերյալ:

2022-2023 ուսումնական տարում զգալի աշխատանքներ են կատարվել դասախոսների կողմից ուսուցման մեթոդների բազմազանեցման ու արդիականացման ուղղությամբ: ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի, օգտակար համացանցային կայքերի հնարավորությունների օգտագործմամբ ուսումնական գործընթացը դարձել է ավելի հետաքրքիր և արդյունավետ: Ելնելով դասընթացների բնույթից և առանձնահատկություններից՝ դասախոսների կողմից կիրառվել են դասավանդման տարբեր ձևեր ու մեթոդներ: Ուսանողների գիտելիքները ստուգելու և գնահատելու նպատակով պրոֆեսորադասախոսական կազմը շարունակում է կիրառել է «exam.gsu.am» ԳՊՀ էլեկտրոնային քննական համակարգը: Ուսումնառության արդի մեթոդների կիրառման գործընթացում հաշվի են առնվել ուսանողների նախասիրությունները, հետաքրքրությունների շրջանակը: Կիրառվող մեթոդների արդյունավետությունը գնահատվել է ուսանողների շրջանում պարբերաբար իրականացվող հարցումներով, որոնց արդյունքները և դրանց վերլուծությունները քննարկվել են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերում:

6.Որակի ապահովման գործընթացը.

Կրթության որակը լինելով ընդհանրական հասկացություն բազմագործոն է, որտեղ ներկայում ավելի կարևորում ենք դասաժամը գրավիչ դարձնելը և մնացորդային գիտելիքների

ապահովման գաղափարը: Այստեղ կարևորվում են նաև ՄԿԾ-ներում կատարված բարելավումները, որոնք պետք է այսուհետև կատարվեն խորը, բազմակողմանի ուսումնասիրությունների և համեմատությունների արդյունքում:

Կրթության որակը որոշվում է ուսուցման և ուսման բովանդակային հատկանիշների ու ցուցանիշների համակցությամբ: Ներկայումս ուսուցման որակի բարձրացման միջոցառումները ավելի շատ բխեցվում են աշխատաշուկայի պահանջներից:

Տնտեսագիտական ֆակուլտետում մշտապես քննարկվել են նաև ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից դասընթացների որակի վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, որտեղ արված դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա մշակվել է բարելավման գործիքակազմ՝ միտված դասավանդման որակի բարձրացմանը:

Ֆակուլտետն ունի կայուն պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որն իրականացնում է որակյալ գիտամանկավարժական գործունեություն: Ֆակուլտետի ամբիոններում դասավանդում են 30 դասախոսներ, այդ թվում՝ գիտությունների 3 դոկտոր և 12 թեկնածու: 2022-2023 ուսումնական տարում ֆակուլտետի դասախոսները մասնակցել են բուհի ամենամյա 26-րդ գիտաժողովին, ներկայացրել են 9 հոդվածներ, իսկ նախորդ տարի ներկայացվել էր 31 հոդված:

Տնտեսագիտական ֆակուլտետի առանցքային խնդիրներից է պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական և մանկավարժական որակների շարունակական բարելավումը և այդ նպատակով վերապատրաստումների իրականացումը:

Ելնելով զարգացման հայեցակարգի պահանջներից՝ ամբիոններում քննարկվել են առաջարկություններ որակի ապահովման վերաբերյալ:

Հայեցակարգի պահանջ է նաև ամբիոնները երիտասարդ մասնագետ կադրերով ապահովելու անհրաժեշտությունը:

Դասավանդողների շրջանում իրականացված հարցումների շնորհիվ բացահայտվում են նրանց կարիքները: Այնուհետև ամփոփելով և վերլուծելով արդյունքները, կատարվում են եզրահանգումներ, ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ դրանց բարելավման ուղղությամբ:

Նշենք, որ ուսանողների դիտողությունները վերաբերվում են դասապրոցեսն ավելի արդյունավետ դարձնելուն, ինտերակտիվ զանազան մեթոդներ կիրառելուն, կրթության բովանդակությունը տնտեսության զարգացման առաջնահերթություններին համապատասխանեցնելուն, որոնց ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

Ֆակուլտետում կրթության որակի և դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատման կարևոր գործիք են դասալսումները: Այդ գործընթացում նկատվել են թերություններ՝ կարիք կա այն համակարգելու և դասալսումների արդյունքներին ընթացք տալու: Արդունավետ պետք է դարձնել դասալսումները, որը կնպաստի ՄԿԾ-ների բարելավման գործին:

Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների շրջանում մեթոդական, խորհրդատվական աշխատանքներ են իրականացվում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի որակի բարելավման ուղղությամբ՝ այդ գործընթացներում ներգրավելով տնտեսության իրական հատվածի մասնակիցներին:

7.Տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարման և ֆինանսների», «Հաշվապահական հաշվառման» ամբիոններում իրականացվող գիտական հետազոտությունների ուղղությունները. համագործակցային կապերը և դրանց ակտիվացումը.

- ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունը և դրա բարելավման ուղիները,
- ՀՀ-ում տարածքային և տեղական համաչափ զարգացման ապահովման հիմնահարցերը,

- ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները,
- Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի կազմակերպման հիմունքների և մեթոդոլոգիայի կատարելագործման հիմնահարցերը,
- Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակման և կատարելագործման հիմնախնդիրները,
- Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման ոլորտում հաշվապահական հաշվառման և վերլուծության մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման խնդիրները և կատարելագործման հնարավորությունները:

Տնտեսագիտական ֆակուլտետը հետազոտական գործունեության ոլորտում անդամակցում է հանրապետական և եվրոպական գործընկեր բուհերի հետ ու օգտագործում նրանց հաջողված փորձը, հաշվի առնելով տնտեսական զարգացման գործընթացում բիզնեսի և հանրային հատվածի տարբեր ոլորտների առաջնահերթությունները: Ծրագրի բարեփոխումները իրականացվում են տնտեսական զարգացման միտումներից և աշխատաշուկայի պահանջներից:

Ֆակուլտետի դասախոսներն ակտիվորեն համագործակցելով գիտահետազոտական գործունեություն ծավալող ՀՀ և արտասահմանյան կազմակերպությունների և կառույցների հետ՝ համատեղ իրականացնում են գիտական քննարկումներ, առկա և առցանց սեմինարներ, միջոցառումներ, համահեղինակությամբ տպագրում գիտական հոդվածներ: Այստեղ կարևոր է ուսանողական գիտական ընկերության դերը /նախագահ՝ ֆինանսներ /ըստ ոլորտի/ 3-րդ կուրսի ուսանողուհի Մերի Խաչատրյան/: Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի 12 ուսանողներ մասնակցել են ԵՊՀ, Վանաձորի, Շիրակի, Արցախի պետական համալսարանների հանրապետական, միջազգային և ԳՊՀ գիտաժողովներին: Ֆինանսներ /ըստ ոլորտի/ 3-րդ կուրսի ուսանողուհի Ռոզա Աբրահամյանը մասնակցել է ԵՊՀ միջազգային գիտաժողովին և ճանաչվել է լավագույն զեկուցում /300 զեկուցողից 12 լավագույնի մեջ/, իսկ Վանաձորի համալսարանում լիագումար նիստի 3 զեկուցողներից մեկը եղել է Ռոզա Աբրահամյանը:

2022 թվականի դեկտեմբեր ամսին անցկացվել է առցանց դասընթաց սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, վերլուծաբան Հայկ Թրունյանի կողմից՝ «Վարքագծային տնտեսագիտությունը և ֆինանսները ժամանակակից աշխարհում», «Հաճախորդակենտրոն բիզնես» թեմաներով, որին մասնակցել են 25 ուսանողներ տարբեր կուրսերից: Նախատեսվում է շարունակել այդ դասընթացները: Հ. Թրունյանի կողմից առաջարկվել է կնքել հուշագիր համալսարանի հետ:

Ուսանողները 2022-2023 ուստարում մասնակցել են նաև Քեյս-քի հանրապետական մրցույթին և բիզնես խնդիրների լուծման արդյունքում գրավել են արժանավոր տեղ: Նշենք, որ այս ուսումնական տարում ևս ձևավորվել և Քեյս-քի հանրապետական մրցույթին մասնակցում են 6 ուսանողներից բաղկացած խումբ:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի բարելավմանը նպաստում են համագործակցային կապերը հայաստանյան բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, մարզպետարանի, համայնքապետարանների, Հայաստանի գործատուների հանրապետական միության, Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի, առանձին ձեռնարկությունների հետ՝ որպես գործատու կազմակերպություններ:

Նրանց հետ համատեղ քննարկումներում արված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվում կրթական ծրագրերում փոփոխություններ կատարելիս:

Ուսանողների պրակտիկ գիտելիքների ամրապնդմանը նպաստում է Հայաստանի Հանրապետության տարբեր արտադրական ձեռնարկությունների, ընկերությունների հետ համագործակցությունը, մասնավորապես, այդ հաստատություններում մեկօրյա արտադրական պրակտիկաների կազմակերպումը:

Հայեցակարգը պահանջում է «Տեսանելի դարձնել յուրաքանչյուր մասնագիտության առաքելությունը»: Այդ նպատակով մենք իրականացնում ենք մասնագիտական այցելություններ իրենց հաստատուն տեղն ունեցող ձեռնարկություններ և կազմակերպություններ, կազմակերպում էքսկուրսիաներ, արդյունավետ դարձնում պրակտիկաները:

Մեկօրյա արտադրական պրակտիկա են անցկացրել Վանաձորի «Գլորիա» , «Օվալ պլաստ» ֆաբրիկայում, «Ալեքս տեքստիլ», «Սևանի ձուկ», «Թամարա» կաթնամթերքի արտադրության ընկերություններում:

Տնտեսագիտական ֆակուլտետի 2022-2023 ուստարվա գործունեության «SWOT» վերլուծությունը՝ ըստ որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների

Տնտեսագիտական ֆակուլտետի զարգացման հայեցակագի իրականացման գործողությունների ծրագրում ամրագրվում են արդյունավետության ցուցիչները, որոնց կատարողականը ներկայացվում է վերլուծությունների և հաշվետվությունների միջոցով: Կատարվում է իրականացված աշխատանքների գնահատում, կանխատեսված արդյունավետության ցուցիչների և դրանց կատարման ցուցանիշների համադրում: Այս գործընթացն իրականացնելիս կարևորվում է «SWOT» վերլուծության դերն ու նշանակությունը, որի արդյունքում բացահայտվում են ֆակուլտետի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները:

Ուժեղ կողմեր	Հնարավորություններ
1. Մասնագիտական, մանկավարժական, անհրաժեշտ որակներ ունեցող, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների տիրապետող որակյալ դասախոսական կազմի առկայություն, որն ունի դասավանդման և ժամանակակից մեթոդների կիրառման կարողություններ ու փորձ: 2. Փորձառու դասախոսներ, որոնք տնտեսության տարբեր ոլորտների /բանկեր, ապահովագրական ընկերություններ, բիզնեսին աջակից կառույցներ, միջազգային կազմակերպություններ/ պրակտիկ աշխատողներ են: 3. Երիտասարդ դասախոսների և փորձառու մենթոր դասախոսների միջև առկա կայուն համագործակցային կապ, որը նպաստում է երիտասարդ, սկսնակ դասավանդողների մասնագիտական կարողությունների	1. Շահակիցների տեսլականների ուսումնասիրություն, նպատակների վերհանում և գործողությունների իրականացում: 2. «Համալսարան–դպրոց» կապերի ընդլայնում, դպրոցների մանկավարժական խորհուրդների հետ գործընկերային հարաբերությունների ակտիվացում: 3. Աշակերտների շրջանում ֆակուլտետի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրություն առաջացնող փոխադարձ հանդիպումների և մասնագիտական կողմնորոշմանը միտված տարաբնույթ միջոցառումների կազմակերպում: 4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի

զարգացմանը, հանդիսանում փորձի փոխանակման կարևոր միջոց:

4. Շրջանավարտների հետ հետադարձ կապերի առկայություն:
5. Աշխատաշուկայում Ֆակուլտետի շրջանավարտների ներգրավվածություն (Մագիստրատուրայի և բակալավրիատի 2022թ.-ի շրջանավարտների 60 տոկոսը աշխատում է, ընդ որում, նրանցից 53 տոկոսը՝ մասնագիտությամբ):
6. Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով եվրոպական շարժունության ծրագրերին ուսանողների և դասախոսների ակտիվ մասնակցություն:
7. Ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ կրթական միջավայր:
8. ՄԿԾ-ներին համապատասխան ուսումնամեթոդական բազայով ապահովվածություն, որը պարբերաբար թարմացվում և համալրվում է պահանջվող ռեսուրսներով:
9. Մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխանող առարկայական ծրագրեր, որտեղ վերջնարդյունքները սահմանված են ըստ ընդհանուր դասընթացի և յուրաքանչյուր թեմայի:
10. Սերտ համագործակցություն Հայաստանի գործատուների հանրապետական միության, հաշվապահական և աուդիտորական ընկերությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնագիտական կազմակերպությունների հետ:
11. Արտաքին շահակիցների շահագրգիռ, մասնակցություն ՄԿԾ-ների արդիականացման և բարելավման գործընթացին:
12. Աշխատաշուկայի պահանջների հետազոտություն, արդյունքների վերլուծություն, կրթական վերջնարդյունքներում դրանց ներառում:
13. Անվճար կրթություն ստանալու հնարավորություններ՝ պետբյուջեից, անհատ ներդրողներից, հիմնադրամներից, համալսարանի միջոցների հաշվին և այլ աղբյուրներից:
14. Արտակարգ իրավիճակներում ուսանողների, դասախոսների և դեկանատի աշխատակիցների միջև առցանց հաղորդակցության ապահովում և համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսների առկայություն:
15. Ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկություն, ակադեմիական ազնիվ և վարչության, դպրոցների և քոլեջների հետ համագործակցային կապերի ընդլայնում:
5. Ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում՝ ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական առաջնահերթությունների և զարգացման առանձնակատկությունների հաշվառմամբ:
6. Համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի ծրագրերի հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում /բենչմարքինգի իրականացում/, առաջավոր փորձի կիրառում:
7. Հանրապետությունում գործող տնտեսական կազմակերպությունների և ընկերությունների հետ ակտիվ համագործակցություն, նրանց հետ փորձի փոխանակման ապահովում, փոխըմբռնման նոր հուշագրերի կնքում և իրականացում:
8. ԵՄ «Erasmus+» և միջազգային ակադեմիական շարժունության այլ ծրագրերի շրջանակներում արտերկրում դասախոսների վերապատրաստման և ուսանողների կրթության կազմակերպում:
9. Դասախոսների մանկավարժական և մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում:
10. Ուսումնամեթոդական բազայի ամրապնդման նպատակով արտաքին ֆինանսական դրամաշնորհատու /դոնոր/ կազմակերպությունների ներգրավում:
11. Գավառի պետական համալսարանի Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեության ակտիվացում:
12. Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների օգտագործում մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները լուծելիս:
13. Գիտահետազոտական գործունեության ոլորտում հանրապետական և արտերկրի առաջատար գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների, ձեռնարկությունների, գործարար

հակակոռուպցիոն միջավայրի, հաշվետվողակա-նության հստակ գործիքակազմի առկայություն:	համայնքի, այլ կառույցների հետ համագործակցային կապերի ընդլայնում, միջազգային հետազոտական նոր նախագծերին մասնակցություն:

Թույլ կողմեր	Վտանգներ
1. Գիտահետազոտական գործունեության ժամանակակից մեթոդների դանդաղ կիրառում, ուսանողների կողմից հանրապետական և միջազգային գիտական ծրագրերին մասնակցության պակաս: Այդ նպատակներով ֆոնդահայթայթման գործընթացների պակաս: 2. Շրջանավարտների աշխատանքի տեղավորման խնդիրներ՝ մարզում արդյունաբերական ձեռնարկությունների, արտադրող, վերամշակող և այլ գործարանների բացակայության պատճառով: 3.Ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով ռեսուրսներից հստակ և համակարգված օգտվելու պակաս:	1. Դիմորդների քանակի նվազում՝ կապված սոցիալ-ժողովրդագրական բացասական գործընթացների, ՀՀ-ից և Գեղարքունիքի տարածաշրջանից արտագաղթի ծավալների աճի հետ: 2. Ուսանողական համակազմի շարունակա-կան նվազում՝ պայմանավորված արտա-գնա աշխատանքով, մարզից դեպի մայրաքաղաք և այլ պետություններ միգրացիոն շարժով: 3. Աշխատատեղերի պակաս, գործազրկու-թյան բարձր մակարդակ: 4. Մագիստրոսական կրթություն ստանալու մոտիվացիայի անկում: 5. Արտակարգ և այլ հատուկ ռեժիմներով պայմանավորված՝ վտանգներ, սահմանամերձ մարզի անվտանգային խնդիրներ:

7. Ֆակուլտետի շրջանավարտները.

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բակալավրիատի 18 և մագիստրատուրայի 10 ուսանողներ:

Ամփոփիչ ատեստավորմանը բակալավրիատի Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտությամբ մասնակցել է 8 ուսանող, Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ մասնագիտությամբ՝ 6 ուսանող, Տնտեսագիտություն մասնագիտությամբ՝ 4 ուսանող:

Հաշվետու տարում բակալավրիատի Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժինն ավարտեց 8 ուսանող, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 4 ուսանող:

Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ բաժինն ավարտեց 6 ուսանող, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 2 ուսանող:

Տնտեսագիտություն բաժինն ավարտեց 4 ուսանող այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 4 ուսանող:

Մագիստրատուրան ավարտել են 10 մագիստրոսներ, այդ թվում՝ Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտությամբ՝ 4 ուսանող, որոնցից 3-ը գերազանցության դիպլոմով, Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ մասնագիտությամբ՝ 4 ուսանող, որոնցից 4-ը գերազանցության դիպլոմով, Տնտեսագիտություն մասնագիտությամբ՝ 2 ուսանող, որոնցից 2-ը գերազանցության դիպլոմով:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները հետևյալն են.

Բաժինը		Ուսանողներիթիվը	A+	A	A-	B+	B	B-	C+	C	C-	F
Ֆինանսներ /ըստոլորտի/ /բակալավր/	Ավարտական աշխատանք	8	2	3	2		1					
Ֆինանսներ, դրամաշրջանառությունևվարկ /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	4	1	1	1			1				
Հաշվապահականհաշվառումև հարկում /ըստոլորտի/ /բակալավր/	Ավարտականաշխատանք	6	1	5								
Հաշվապահականհաշվառում /ըստճյուղերի/ /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	4	1	2	1							
Տնտեսագիտություն /բակալավր/	Ավարտակա նաշխատանք	4	3	1								
Տնտեսագիտություն /մագիստրատուրա /	Մագիստրոսական թեզ	2	2									

Ամփոփիչ ատեստավորման առաջադիմությունն ըստ մասնագիտությունների հետևյալն է.

Բաժինը	Բակալավր	Մագիստրատուրա
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	100	-
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	-	100
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	100	-
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	-	80
Տնտեսագիտություն	100	-
Տնտեսագիտություն	-	100

Հանձնաժողովները կատարեցին իրենց պարտականությունները և միաժամանակ հանդես եկան հետագա աշխատանքները կատարելագործելու վերաբերյալ արժեքավոր առաջարկություններով:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի դիտողությունները և առաջարկությունները քննարկվել են «Կառավարման և ֆինանսների» և «Հաշվապահական հաշվառման» ամբիոններում, դրվել են նպատակներ, մշակվել են միջոցառումներ՝ առաջարկությունները հաշվի առնելու և գալիք ամփոփիչ ատեստավորմանը պահանջվող մակարդակով պատրաստվելու համար:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2022-2023 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից կատարված առաջարկությունների կենսագործման միջոցառումների պլան

Առաջարկություններ և դիտողություններ	Կուրս	Նպատակ	Գործողություն
Բակալավրիատ			
Կային ավարտական աշխատանքներ, որտեղ հետազոտություններն իրականացվել էին հին տարեթվերով, կային աշխատանքներ, որոնք ունեին բավական տեսական բնույթ և կիրառված չէին հետազոտական տարաբնույթ մեթոդեր, որոնց շնորհիվ հնարավոր կլիներ բացահայտել թեմային վերաբերվող հիմնախնդիրները: Ցանկալի կլինի հետագայում մինչ պաշտպանությունները բոլոր գիտական ղեկավարները իրականացնեն նախապաշտպանություններ, որի արդյունքում ակնհայտ թերությունները կվերացվեն:	Ֆ 4-րդ	1.Հստակեցնել ավարտական աշխատանքների թեմաներին վերաբերվող չափանիշները: 2.Էլ ավելի բարելավել ուսանողների կողմից պաշտպանությունների որակը:	1.Ամբիոններում մշակել հետազոտությունների վերաբերյալ ուղեցույցեր, որտեղ կներառվեն հետազոտական տարաբնույթ մեթոդներ և կազմակերպվող հանդիպուների ժամանակ դրանք կպարզաբանվեն դասախոսների կողմից: 2.Հետազոտական վերլուծությունները կատարել ուսումնասիրվող կազմակերպությունների վերջին տարիների տվյալներով: 3.Գիտական ղեկավարները պարտադիր մասնակցեն նախապաշտպանություններին և այդ ընթացքում շտկեն թերությունները:
Ավարտական աշխատանքների թեմաները ընտրելիս՝ հնարավորինս հաշվի առնել գործատուների դիտարկումները և առաջարկները:	ՀՀ 4-րդ	Բարձրացնել ավարտական աշխատանքների որակը:	Ամբիոններում ավարտական աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ հաշվի առնել նաև գործատուների առաջարկությունները և դիտարկումները:
Ուսանողների վերլուծական կարողությունները զարգացնելու նպատակով ավելի խորացնել գործատուների հետ համագործակցությունը և կազմակերպել համալիր քննարկումներ:	ՀՀ 4-րդ	Զարգացնել ուսանողների վերլուծական կարողությունները:	Ամբիոններում կազմակերպել խորհրդատվություններ, վերլուծական կարողությունները զարգացնող խնդիրների լուծումներ՝ օգտագործելով նաև առցանց հարթակը և դրսի մանագետների ուժերը: Խորացնել կապը գործատուների հետ, պրակտիկաների ընթացքում կազմակերպել համալիր քննարկումներ:
Ակտիվացնել կապը ՀՀ հաշվապահների միության հետ:	ՀՀ 4-րդ	Բարձրացնել ուսանողների մասնագիտական տեղեկացվածությունը գիտական նորույթներին:	Ակտիվացնել կապը ՀՀ հաշվապահների միության, ինչպես նաև հաշվապահական գրասենյակների հետ:
Մագիստրատուրա			

Ցանկալի է հետագա տարիներին մեծ ուշադրություն դարձնել թեզերի հիմնական մասի և եզրակացություններ ու առաջարկություններ բաժնի կապի վրա: Եզրակացությունները և առաջարկություններն առավելապես պետք է բխեցված լինեն աշխատանքի վերլուծական մասից, և առաջարկությունները չպետք է լինեն հայեցակարգային բնույթի, դրանք պետք է ունենան հստակ նպատակներ և չափելիություն: Ցանկալի է նաև գրախոսներն ավելի խորքային դիտարկեն աշխատանքները և առավելապես նշեն այնպիսի թերություններ, որոնք կլինեն բովանդակային և ոչ միայն տեխնիկական բնույթի:	ՄՖԴ 2-րդ	1. Բարելավել մագիստրոսական թեզում հիմնական մասի, եզրակացությունների և առաջարկությունների որակը, այն հաշվով, որ դրանք լինեն նպատակային և չափելի: 2.Բարձրացնել գրախոսությունների որակը:	1.Ամբիոններում տարվա ընթացքում թեզերի հաշվետվությունները ներկայացնելու ժամանակ կազմակերպել մասնագիտական խորը քննարկումներ, բանավեճեր թեզի ղեկավարի և ուսանողի մասնակցությամբ: Հրավիրել նաև ֆինանսների գծով այլ մասնագետներ, պրակտիկ աշխատողներ: 2.Թեզերը գրախոսեն ավելի նեղ մասնագետներ կողմից, հնարավորինս հայտնաբերվեն և արձանագրվեն բովանդակային թերություններ և ներկայացվեն ավելի շատ դիտողություններ:
Ցանկալի է հետագա տարիներին մեծ ուշադրություն դարձնել աշխատանքի հիմնական մասի և եզրակացություններ ու առաջարկություններ բաժնի կապի վրա: Եզրակացություններ և առաջարկություններն առավելապես պետք է բխեցված լինեն աշխատանքի վերլուծական մասից և առաջարկությունները չպետք է լինեն հայեցակարգային բնույթի, դրանք պետք է ունենան հստակ նպատակներ և չափելիություն: Ցանկալի է նաև գրախոսներն ավելի խորքային դիտարկեն աշխատանքները և առավելապես նշեն այնպիսի թերություններ, որոնք կլինեն բովանդակային այլ ոչ թե տեխնիկական բնույթի:	ՄՏ 2-րդ	1. Բարելավել մագիստրոսական թեզում հիմնական մասի, եզրակացությունների և առաջարկությունների որակը, այն հաշվով, որ դրանք լինեն նպատակային և չափելի: 2.Բարձրացնել գրախոսությունների որակը:	1.Ամբիոններում տարվա ընթացքում թեզերի հաշվետվությունները ներկայացնելու ժամանակ կազմակերպել մասնագիտական խորը քննարկումներ, բանավեճեր թեզի ղեկավարի և ուսանողի մասնակցությամբ: Հրավիրել նաև ֆինանսների գծով այլ մասնագետներ, պրակտիկ աշխատողներ: 2.Թեզերը գրախոսեն ավելի նեղ մասնագետներ կողմից, հնարավորինս հայտնաբերվեն և արձանագրվեն բովանդակային թերություններ և նշվեն ավելի շատ դիտողություններ:
Թեմաների ընտրությունը կատարել՝ հաշվի առնելով դրանց կիրառական ուղղվածությունը, գործատուների կողմից ներկայացվող պահանջները:	ՄՀՀ 2-րդ	Բարձրացնել թեզերի որակը	Ամբոնի կողմից կատարել խորը պրակտիկ վերլուծություն, հիմնավորել արդիական այդպիսի խնդրին վերաբերվող թեմա կատարելու անհրաժեշտությունը, պարզաբանել դրա կիրառական ուղղվածությունը միաժամանակ հաշվի առնելով գործատուի պահանջները:

Ցանկալի է թեզի բովանդակությունը դարձնել հետազոտական աշխատանքի կառուցվածքին ավելի համապատասխան:	ՄՀՀ 2-րդ	Բարձրացնել թեզերի որակը	Թեզի կատարման ընթացքի մասին ուսանողի կողմից ամբիոն հաշվետվություն ներկայացնելիս քննարկել և ճշտել թեզի բովանդակության և կառուցվածքի համապատասխանությունը:
Թեմաները հնարավորինս համապատասխանեն մագիստրոսի աշխատանքային զբաղվածությանը:	ՄՀՀ 2-րդ	Թեզերը դարձնել ավելի գործնական: Բարելավել թեզի թեման ընտրելու գործընթացը:	Թեզի թեման ընտրելիս այն հնարավորինս համապատասխանեցնել մագիստրոսի աշխատանքային զբաղվածությանը:

Միաժամանակ հանձնաժողովը ամբիոնի ուշադրությունը հրավիրում է ուսանողների կողմից ավարտական աշխատանքները ներկայացնելու հմտությունների զարգացմանը և գիտամեթոդական պահանջների կատարմանը:

Անհրաժեշտ ենք համարում հանձնաժողովների առաջարկությունների նպատակի և գործողությունների պլանների իրականացման համար ամբիոններում ստեղծել ժամանակացույց, և հետևողականություն ցուցաբերել այդ խնդիրները գործնականում կազմակերպելու և կատարելու համար:

Տնտեսագիտական ֆակուլտետի խորհուրդն իր աշխատանքները պետք է նպատակամղի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի որակը ժամանակի պահանջներին համապատասխանեցնելուն, զարգացող աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ կադրեր պատրաստելուն:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1. ԿՐԹԱԿԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

1.1. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ դիմորդների ներգրավում, աշակերտներին մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցության նպատակով տնտեսագիտական մասնագիտությունների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում: Ուսանողների հավաքագրման մեխանիզմների կատարելագործում:

1.2. Մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացում, դրանցում ներառված առարկայական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանեցում գործատուների պահանջներին և տրամադրվող որակավորումներին ու կրթական աստիճաններին:

1.3. Ուսուցման արդյունավետ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում, կրթական վերջնարդյունքների ձեռքբերման, ուսուցման և գիտահետազոտական գործունեության զուգակցում, ուսանողների համակողմանի դաստիարակության ապահովում, մասնագիտական գործունեության նախապատրաստում:

1.4. Ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական, քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպում: Ուսման որակի բարձր մշակույթ, նորարարությունների, արդյունավետ ուսուցման և գրավիչ կրթական միջավայրի ապահովում:

1.5. Ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների զարգացմանը նպաստող գործնական և պրակտիկ պարապմունքների ավելացում ու արդյունավետ կազմակերպում: Ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման արդյունավետության բարձրացում:

1.6. Սովորողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքները և մասնագիտական կարողությունները, ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում արտահայտելու հմտությունների զարգացում, ամփոփիչ ատեստավորման գործընթացի բարելավում:
1.7. ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների և քոլեջների հետ համագործակցային կապերի ընդլայնում՝ ուղղված սովորողներին համալսարանի ուսանողական կյանքին մասնակից դարձնելուն:
1.8. Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, «Տնտեսագետների ակումբ»-ի գործունեության ակտիվացում և դրանց արդյունավետության բարձրացում:
1.9. Ուսանողների սոցիալական կարիքների բացահայտում, անձնական գործերի էլեկտրոնային բազայի համալրում և անընդհատ թարմացում, հասցեագրված սոցիալական օժանդակության ծրագրերի իրականացում: Արցախից բռնի տեղահանված և ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ ընդունված, այլ հաստատություններից տեղափոխված ուսանողների հետ անհատական ուսուցողական գործունեության կազմակերպում:
1.10. Ուսանողների ռազմահայրենասիրական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական գեղագիտական դաստիարակությանը միտված միջոցառումների, ինտելեկտուալ մրցույթների կազմակերպում:
1.11. Ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների դաստիարակում, նրանց բարոյականային հատկանիշների զարգացում, ուսանողների շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորում:
1.12. Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների մասնագիտական, մանկավարժական որակների շարունակական բարելավում, վերապատրաստումների անցկացում:
1.13. Փորձառու դասախոսների հետ համագործակցության ապահովում և ուսումնական գործընթացներում ներգրավում, մենթորության համակարգի կատարելագործում, գիտական աստիճան չունեցող երիտասարդ դասախոսների մասնագիտական աճի խրախուսում, պրոֆեսորադասախոսական կազմի համալրում պրակտիկ մասնագետներով և երիտասարդ կադրերով:
1.14. Համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում /բենչմարքինգի իրականացում/, առաջավոր փորձի կիրառում:
1.15. Գործատուների ներգրավում կրթական ծրագրերի մշակման, դրանց փորձաքննության իրականացման և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացներում:
1.16. Ուսումնառության ընթացքում ուսանողների շրջանում կարևորել օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացումը և միջազգային շարժունության ծրագրերին ակտիվ մասնակցությունը:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ

2.1. Տնտեսագիտական ֆակուկտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուժերը նպատակամղել կրթության բովանդակության հարստացմանը, նորարարական տեխնոլոգիաների կիրառմանը, ուսումնական ռեսուրսների բազմազանեցմանը և արդիականացմանը:
2.2. Մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման գործընթացում հետազոտական կարողությունների զարգացում, գիտական հոդվածների որակի և հրապարակումների բարելավում: Միջազգային գիտահետազոտական հարթակներում գրանցում:

2.3. Գիտահետազոտական գործընթացներում ուսանողներին ինտեգրում, գիտահետազոտական ժամանակակից մեթոդների կիրառում, անհրաժեշտ միջավայրի ապահովում, կրթության և հետազոտության կապի ամրապնդում:
2.4. Ուժեղացնել կապը ուսանողական գիտական ընկերության և ամբիոնների միջև, այն դարձնել համակարգված, ունենալ ՈՒԳԸ-ի համար հաստատված հոդվածների թեմաներ:
2.5. Վերանայել և արդիականացնել ֆակուլտետի ամբիոնների կողմից կատարվող գիտական հետազոտությունների ուղղությունները և ամբիոնի դասախոսների գիտական հետաքրքրությունների թեմաները ուղղորդել ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնակատկությունների ուսումնասիրություններին:
2.6. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների և գիտաժողովներին մասնակցության խրախուսում:
2.7. Դասախոսների ակտիվ մասնակցության ապահովում միջազգային շարժունության ծրագրերին:
2.8. Ակտիվացնել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական ներուժի մասնակցությունը դրամաշնորհային ծրագրերին:
2.9. Ամրապնդել ուսանողների և դասախոսների կապը հետազոտական աշխատանքների իրականացման, հոդվածներ հրատարակելու ուղղությամբ՝ ապահովել համատեղ հրապարակվող հոդվածների աճ:

3. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

3.1. Ակտիվացնել ֆակուլտետի խորհրդի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությունը:
3.2. Ֆակուլտետի խորհուրդի, ամբիոնների կողմից ուսուցման համակարգի դինամիկ գործընթացի ապահովում և կատարելագործում:
3.3. Ժամանակակից մանկավարժամեթոդական զինանոցին, արդի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին և գործնական հմտություններին տիրապետող դասախոսների ընտրություն:
3.4. Դեկանատի խնդիրն է հետևողականորեն բարելավել և արդիականացնել կրթական ծրագրերը և դրանց իրականացման գործընթացը:
3.5. Մշտական աշխատանքներ իրականացնել ֆակուլտետի լսարանների բարելավմանը, դրանք տեխնիկայով հագեցնելուն և ավելի հարմարավետ դարձնելուն:

4. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ

4.1. Հայաստանի Հանրապետության և զարգացած պետությունների առաջատար բուհերի տնտեսագիտական ֆակուլտետների, այլ կրթական, գիտական հաստատությունների, դաստիարակչական, մշակութային ուղղվածության կազմակերպությունների հետ արտաքին համագործակցային կապերի ընդլայնում:
4.2. Ուսանողների ակտիվ մասնակցության ապահովում ԳՊՀ իրականացվող միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերին:
4.3. Գեղարքունիքի մարզի կրթական կարիքների բացահայտում, աշխատաշուկայի ուսումնասիրություն, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստում:
4.4. Զանգվածային լրատվության միջոցների և համացանցի միջոցով հանրությանը հավաստի տեղեկատվության պատշաճ մատուցում և գովազդում՝ ֆակուլտետում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ:

4.5. Գեղարքունիքի մարզի համայնքապետարանների հետ գործընկերային հարաբերությունների ակտիվացում՝ այնտեղ կազմակերպելով տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաները:
4.6. «Համալսարան–դպրոց» կապերի ընդլայնում, մանկավարժական խորհուրդների, հետ գործընկերային հարաբերությունների հաստատում: Աշակերտների շրջանում ֆակուլտետի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրություն առաջացնող փոխադարձ հանդիպումների և մասնագիտական կողմնորոշմանը միտված տարաբնույթ միջոցառումների կազմակերպում:
4.7. Ֆակուլտետի շրջանավարտների միության գործունեության ակտիվացում, միջոցների ձեռնարկում հետադարձ կապն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:
4.8. Հանրապետությունում գործող տնտեսագիտական հաստատությունների և ընկերությունների հետ ակտիվ համագործակցության, նրանց հետ փորձի փոխանակման ապահովում, փոխըմբռնման նոր հուշագրերի կնքում և իրականացում:
4.9. Հայաստանի գործատուների հանրապետական միության, Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի հետ կապերի ակտիվացում, համատեղ ծրագրերի իրականացում:
4.10. Աշխատաշուկայի կարիքների բացահայտում, արդյունքների վերլուծություն և դրանց ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացում:
4.11. Շահառուների շրջանում կրթական միջավայրի վերաբերյալ հարցումների անցկացում, կարիքների բացահայտում, թերությունների շտկում, գրավիչ ակադեմիական միջավայրի ստեղծում:
4.12. Տնտեսավարող սուբյեկտների հետ գործընկերային հարաբերությունների հաստատում, խորհրդակցությունների, քննարկումների, «կլոր սեղանների» անցկացում՝ ֆակուլտետում կրթության որակը բարձրացնելու, աշխատաշուկան մրցունակ մասնագետներով համալրելու նպատակով:

5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

5.1. Տնտեսագիտական ֆակուլտետում ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացում, հակակոռուպցիոն միջավայրի պահպանում, կոռուպցիայի ցանկացած դրսևորման բացառում:
5.2. ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների պահպանում և իրագործում, տնտեսագիտական ֆակուլտետի դասախոսների և ուսանողների կողմից:
5.3. Ֆակուլտետում ԳՊՀ էթիկայի կանոնների, բարեվարքության կանոնների պահանջների պահպանում և կատարում:

Սամվել Ամիրխանյան՝
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/				
1-ին	4	1	-	80
2-րդ	11	1	7	84,6
3-րդ	10	-	9	90,9
4-րդ	5	-	4	62,5
Հաշվ. հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/				
1-ին	3	-	-	100
2-րդ	4	-	1	100
3-րդ	2	-	2	66,7
4-րդ	5	-	1	83,3
Տնտեսագիտություն				
1-ին	5	-	1	100
2-րդ	5	1	3	71,4
3-րդ	6	-	3	100
4-րդ	2	-	2	100
Ընդամենը	**62**	**3**	**33**	**84,9**
Մագիստրատուրա				
Ֆինանսներ, դրամաշրջ. և վարկ				
1-ին	5	-	-	83,3
2-րդ	2	-	2	50
Հաշվ. հաշվառում /ըստ ճյուղերի/				
1-ին	2	1	-	66,7
2-րդ	4	-	-	80
Տնտեսագիտություն				
1-ին	2	-	-	66,7
2-րդ	2	-	2	100
Ընդամենը	**17**	**1**	**4**	**73,9**

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/				
1-ին	5	-	1	100
2-րդ	11	-	6	78,6
3-րդ	8	-	8	72,7
Հաշվ. հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/				
1-ին	3	-	-	100
2-րդ	4	-	2	100
3-րդ	3		2	100
Տնտեսագիտություն				
1-ին	5	-	1	100
2-րդ	5	-	3	100
3-րդ	5	-	3	83,3
Ընդամենը	**49**	**-**	**26**	**87,5**
Մագիստրատուրա				
Ֆինանսներ, դրամաշրջ. և վարկ				
1-ին	5	-	2	100
Հաշվ. հաշվառում /ըստ ճյուղերի/				
1-ին	2	-	1	67
Տնտեսագիտություն				
1-ին	2	-	2	100
Ընդամենը	**9**	**-**	**5**	**90**

2022/2023 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Ձեկուցումների թեզիս
1	2	2	-	15	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Սուքիասյան Սերգեյ Սպարտակի** - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2. **Հերգնյան Մարիամ Նորիկի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Գայանե Արտիկի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Հարությունյան Հարություն Սարգսի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
5. **Մուրադյան Գուրգեն Գևորգի -** ասիստենտ
6. **Բագոյան Սոնա Սահակի -** ասիստենտ
7. **Մարտիրոսյան Ռշտուն Հովակիմի -** դասախոս
8. **Հովեյան Աստղիկ Գագիկի -** դասախոս
9. **Քալոյան Մանվել Խաչիկի** - դասախոս
10. **Բաղինյան Արա Պավելի** – դասախոս
11. **Ավետիսյան Աստղիկ Սիմոնի –** դասախոս
12. **Սաֆարյան Հերմինե Խաչատուրի–** դասախոս
13. **Ասատրյան Ռուզաննա Կարապետի –** ամբիոնի լաբորանտ, դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Սահակյան Արմեն Կոլյայի** - տնտեսագիտության թեկնածու, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. **Զաքոյան Հրաչյա Սամվելի-** տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Նալչաջյան Վահրամ Թորգոմի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Բաղդասարյան Արեգ Մերուժանի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
5. **Խաչատրյան Մարե Վահանի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
6. **Մարտիրոսյան Արտակ Արտուշի** - տնտեսագիտության թեկնածու
7. **Թորոսյան Դավիթ Լևոնի** – դասախոս
8. **Գևորգյան Կորյուն Սեդրակի** – դասախոս
9. **Ներսիսյան Ներսես Նորայրի** – դասախոս
10. **Սինանյան Արեգ Սամվելի**– դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման հնարավորությունները ՀՀ- ում,

բ) ՀՀ- ում տեղական և տարածքային համաչափ զարգացման ապահովման հիմնահարցերը,

գ) ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումներ թեզիսներ
1	-	1	-	13	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Խաչատրյան Մ. Վ., Քալանթարյան Հ.Լ**., EU Market Monitoring Survey: Analysis of Loans, Credit and Credit Cards Industry // «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, 2023թ. էջ 132-143:
2. **Գևորգյան Կ. Ս.,** «Սննդարդյունաբերության դերը մշակող արդյունաբերության մեջ»// ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2023թ. էջ 273-282:
3. **Ղազարյան Ա. Յ., Առաքելյան Գ**.,« Linux օպերացիոն համակարգեր» / Երևան, Տնտեսագետ, 2023թ.- 115 էջ:
4. **Ղազարյան Ա. Յ., Գրիգորյան Լ., Առաքելյան Գ**., Implementation of machine learning in the credit risk management system of individuals Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Բանբեր. Երևան 2022թ. N5(71), էջ 111-123:
5. **Նալչաջյան Վ., Թ.,** Աճեցված գումարի պարադոքսը// Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու-14, 2023թ., էջ 170-182
6. **Ղազարյան Ա. Յ., Մարուքյան Լ., Աբրահամյան Մ., Վ., Այվազյան Մ., Ա.,** The Opportunities of Economic and Legal Cooperation between EU – Armenia within the framework of the BRI Diskurs 2022 – 9., p. 1-16.
7. **Ղազարյан Ա. Յ.,** Искусственный интеллект в процессах образования и обучения, положительные и отрицательные стороны международный журнал гуманитарных и естественных наук. 2023г., стр.214-217.
8. **Саакян А.К.** Социокультурная ценность чеченской и армянской средневековой архитектуры Культурное наследие Северного Кавказа как ресурс межнационального согласия: программа и тез. докл. участ. IX междунар. науч. форума (Краснодар, 21–24 сентября 2023 г.). – М.: Институт Наследия, 2023г., стр.190-191.
9. **Саакян А.К.** Коллективная монография Человек и его мир / коллективная монография. – Минск: МГЛУ, 2023г., стр.115- 121
10. **Саакян А.К.** Город как этнокультурный ландшафт Институт искусств НАН РА 2023г. стр.22-28.
11. **Саакян А.К., Насибуллин Р.,** «Искусствоведческий журнал». Театральное искусство и его зрительв зеркале социологии. –Ереван: Изд-во «Гитутюн», 2023г., стр. 257—268.
12. **Саакян А.К. Насибуллин Р.**, научный журнал «История и политика». Социология и театр в социальном пространстве. Ереван: Изд-во «Мекнарк», стр. 105-116.
13. **Саакян А.К.** Государственный национальный драмамтический театр им. Г. Сундукяна как социологическая лаборатория. Доклад на 3 выездном заседании «Искусство и культура как источники развития духовно-нравственных ценностей », Ереван, ИИ НАН РА, 17-19 мая 2023г. стр. 16-20.
14. **Саакян А.К.** Организация и проведение 2 выездного заседания «Образ человека в искусстве разных народов», доклад «Роль искусства в современном мире», г.Грозный, ГГНТУ им. М.Д. Милионщикова, 15-17 февраля 2023г., стр. 37-43

15. **Саакян А.К.**, **Салгириев Р.Р., Амирханян С.Г., Саакян И.А.** и др. , коллективный научный труд – учебное пособие «Социология туризма», г.Ереван, изд-во «Ga-Ma print», 2023 г., стр. 147.

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ղուլոյան Հակոբ Մելսիկի
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ամիրխանյան Սամվել Գրիգորի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, *ԳՊՀ պրոֆեսոր*
2. **Մարգարյան Հասմիկ Անդրանիկի** - ասիստենտ
3. **Քոչարյան Գևորգ Արմենի** - դասախոս
4. **Հակոբյան Անահիտ Ալեքսանի** - դասախոս
5. **Ղաջոյան Կարինե Համլետի** – դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Հակոբյան Արմեն Աշմատի**- տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2. **Այրումյան Իրինա Գագիկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Առաքելյան Վալերի Հովհաննեսի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Մարկոսյան Սևակ Մեսրոպի** - տնտեսագիտության թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա/ Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի կազմակերպման և մեթոդոլոգիայի կատարելագործման հիմնահարցերը,
բ/ Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակման և կատարելագործման հիմնախնդիրները,
գ/ Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեջ հաշվապահական հաշվառման և վերլուծության մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման խնդիրները և կատարելագործման հիմնական ուղղությունները:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումներ թեզիսներ
-	2	1	-	2	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հակոբյան Ա. Ա.,** The Integrated Reporting Philosophy in Business Strategy WISDOM, Երևան, 2023, էջ 169-176:
2. **Հակոբյան Ա. Ա.,** Philosophy of Assets Fair Value Presentation in Financial Statements, WISDOM, ISSN 1829-3824, Vol. 24 No. 4, 2022, pp. 152-158 Web of Science.
3. **Հակոբյան Ա. Ա.,** «Տրանսֆերային գնագոյացում» Մենագրություն, Երաշխավորվել է ՀՊՏՀ Գիտ. Խորդրդի կողմից, հեղինակային հրատարակություն,, Երևան 2022թ., 200 էջ:
4. **Առաքելյան Վ. Հ.,** «Արդյունաբերական կազմակերպությունների մրցակցության և արտադրանքի մրցունակության բարձրացման հիմնախնդիրները», հեղինակային հրատարակություն, Երևան, 2022թ., էջ 255:
5. **Առաքելյան Վ. Հ., Ղուլոյան Հ. Մ., Գալոյան Կ., Հայրապետյան Գ.**, «Ներդրումների կազմակերպման հիմնախնդիրներ ինովացիոն գործունեության ոլորտում», Երևան, 2022թ., էջ 98:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2023Թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2024Թ. ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2023 թվականի ուսումնական տարում կրթական գործընթացն իրականացվել է բակալավրիատի 12 մասնագիտությունների գծով: ՀՀ ԿԳՄՍՆ «Գնահատման և թեստավորման կենտրոնի» կողմից սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպված ընդունելության քննությունների արդյունքներով, մրցութային հիմունքներով համալսարան ընդունվեցին 17 /նախորդ ուստարում ընդունվել էին 132/ դիմորդներ: Ընդունելության ցուցանիշի կտրուկ անկումը պայմանավորված է ԳԹԿ միասնական քննություններով ընդունելության կարգի ներդրմամբ, որին դիմորդները պատրաստ չէին: Չնայած այն հանգամանքին, որ համալսարանը պատրաստակամություն հայտնեց և մինչև միասնական քննությունները մնացած կարճ ժամանակահատվածում իրականացրեց բոլոր առարկաների գծով դիմորդների ընդունելության քննությունների համար նախապատրաստական դասընթացներ, այնուամենայնիվ ընդունելության ցուցանիշները ցածր էին, ինչը իր ազդեցությունն ունեցավ ֆակուլտետում սովորողների ընդհանուր թվաքանակի վրա, այն էականորեն զիջել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում եղած թվաքանակին: Հեռակա ուսուցման համակարգում սովորողների թիվը հաշվետու ուստարում կազմել է 375 (նախորդ ուստարում՝ 520): Համալսարանում ընդունված ներքին կարգապահական կանոնների համաձայն՝ անհարգելի բացակայելու համար 138 ուսանող ստացել է նկատողություն, 79 ուսանող՝ խիստ նկատողություն, հեռացվել է 34 ուսանող:

<u>Հեռակա ուսուցման ֆակուլտետում ուսանողական համակազմի շարժը հաշվետու ուստարում.</u>

1. ընդունվել են 17 ուսանող,
2. ՀՀ այլ բարձրագույն ուսումնական հաստատություններից ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 7 ուսանող,
3. երկրորդ բարձրագույն մասնագիտություն ստանալու նպատակով դիմել և սահմանված կարգով ընդունվել է 5 ուսանող,
4. շարունակական կրթության սկզբունքով ընդունվել է 18 ուսանող,
5. ԳՊՀ առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 9 ուսանող,
6. ուսանողական իրավունքները վերականգնել է 48 ուսանող,
7. հեռացվել է 34-ը՝ դասերից անհարգելի բացակայելու, ակադեմիական և ֆինանսական պարտքեր ունենալու, ակադեմիական ազնվության հայեցակարգի խախտման պատճառներով,
8. իրենց դիմումների համաձայն բուհից ազատվել է 5 ուսանող,
9. ԳՊՀ-ից այլ բուհ տեղափոխվողներ չեն եղել,
10. Հեռակա ուսուցման ֆակուլտետից ԳՊՀ այլ ֆակուլտետներ է տեղափոխվել 9 ուսանողներ, ֆակուլտետի այլ բաժիններ՝ 2 ուսանող,
11. տարկետում տրամադրվել է 5 ուսանողի՝ պարտադիր զինվորական ծառայության համար,
12. բուհն ավարտել է 77 շրջանավարտ:

13.Ուսանողական համակազմի շարժը եղել է բասացական /26 ուսանող/՝ մուտք 104 ուսանող, իսկ ելք՝ 130 ուսանող:

Ավարտական կուրսերի 77 ուսանողից ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բոլորը՝ ստանալով դրական գնահատականներ: Թվով 77 շրջանավարտ, այսինքն՝ ուսանողների թվի 100%-ը (2022թ. ուստարում՝ 99%-ը) ավարտել է բուհը:

Գերազանցության դիպլոմներ են շնորհվել Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Պատմություն բաժինների 5 ուսանողի:

Ըստ ուսումնական պլանների՝ ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «Learn. gsu.am» համակարգում համալրվել են հեռակա ուսուցման մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխան խմբերի, դասընթացների ուսումնական տիրույթները, ուսանողներին թղթային տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները, ինչպես նաև այլ տվյալներ ներառող տեղեկատվական թերթոններ՝ նրանց լիարժեք համալսարանական կյանքին ինտեգրման նպատակով: Ձևավորված մշակույթի համաձայն՝ բոլոնյան գործընթացի սկզբունքներով, կրեդիտային համակարգի հիմնադրույթներին համապատասխան, ուսանողակենտրոն ուսումնառության, որակի ապահովման գործարկվող կառուցակարգերի, համալսարանի կրթական, գիտահետազոտական գործընթացների կանոնակարգային փաստաթղթերի, բուհի ենթակառուցվածքների գործունեության, համալսարանում իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերի, ուսանողներին ցուցաբերվող ֆինանսական և ակադեմիական աջակցման ծրագրերի վերաբերյալ առաջին կուրս ընդունվածների, ինչպես նաև այլ ընթացակարգերով ուսանողական իրավունքներ ստացած անձանց համար կազմակերպվել են ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, ուսանողները ստացել են էլեկտրոնային ուսուցման համակարգ, էլեկտրոնային գրադարան մուտք գործելու հնարավորություն, պարզաբանվել են դրանցից օգտվելու կանոնները, տեխնիկական պահանջները, ինչպես նաև ներկայացվել են համալսարանում ընդունված ակադեմիական ազնվության և բարեվարքության կանոնները:

Մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները շարունակաբար համապատասխանեցվում են առկա ուսուցման ուսպլաններին՝ կրթության արդյունավետության բարձրացման, ուսանողների շարժունության դյուրացման նպատակով, լսարանային ժամերի, ինքնուրույն աշխատանքներին հատկացվող ժամաքանակները փոխկապակցվում են դասընթացներին տրվող կրեդիտների և ակնկալվող վերջնարդյունքների հետ: Յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրում ուսումնական պլանում սովորողների արտադրական, ուսումնական պրակտիկաներին հատկացվող ժամանակահատվածն ու տևողությունը պլանավորվում է՝ ըստ ուսանողների մասնագիտական ուղղվածության, ինչպես նաև համապատասխան մոդուլների ուսումնասիրման կիսամյակի, պրակտիկաների բազաներն ընդլայնվում են, պրակտիկաների անցկացման արդյունավետության գնահատման համար ուսումնասիրվում են նաև գործատուների պահանջները:

Հեռակա ուսուցման համակարգում դասավանդող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական իրազեկությունները լիովին համապատասխանում են կրթական ծրագրերի պահանջներին: ԳՊՀ հեռակա ուսուցման համակարգում տարեկան և կիսամյակային

իրականացվող լսարանային ժամերի քանակը 1.5 անգամ գերազանցում է ՀՀ-ում ընդունված պարտադիր նորմատիվ ցուցանիշը, այն է՝ կիսամյակում 80 ժամ, իսկ համալսարանում կատարվում է 120 ժամ: Նման մոտեցումը ելնում է որակյալ կրթության կարևորման և տրամադրման ԳՊՀ ուղենիշներից, ինչպես նաև ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքներից: Ուսանողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ ստուգման ու գնահատման գործընթացները ևս մշտադիտարկվում են, դրանց արդյունավետության բարձրացման նպատակով կարևորվում են գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման տարբերակված մեթոդների կիրառումը, կրթության որակի ապահովումը:

ԳՊՀ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2024Թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Հ /h	Հայեցակարգային խնդիրներ	Գործողություններ	Վերջնարդյունք
1.	Ուսումնական գործընթացի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, կիրառվող մեթոդների ու կրթական տեխնոլոգիաների, շարունակական արդիականացում	1. Ուսումնամեթոդական ռեսուրսների բազայի մշտադիտարկում և բարելավում, 2. ԳՊՀ առկա ուսուցման համակարգի, ՀՀ առաջավոր բուհերի նմանատիպ մասնագիտական կրթական ծրագրերի համադրական վերլուծություն, արդյունքների հաշվառում: 3. ԳՊՀ միջազգային ծրագրերում ընդգրկված գործընկեր բուհերի կրթության կազմակերպման կառուակարգերի ուսումնասիրում, լավագույն փորձի ներդրում 4. Աշխատանքի վրա հիմնված կրթության կազմակերպման գործիքների կիրառում	Աշխատաշուկայում մրցունակ շրջանավարտների պատրաստում
2	Հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների կրթական կարիքների շարունակաբար ուսումնասիրում, նրանց համար ակադեմիական ինտեգրման ծրագրերի իրականացում, խորհրդատվական ծառայությունների բազմազանեցում, առկա ուսուցման համակարգի կրթական ծառայություններից	1. ԳՊՀ-ում իրականացվող վերապատրաստումների, խորհրդատվությունների, աջակցման ծրագրերին հեռակա ուսուցմամբ սովորողներին լիարժեք ինտեգրում: 2. Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողներին առկա ուսուցման համապատասխան ֆակուլտետներում ազատ ունկնդրի կարգավիճակի տրամադրում:	Բուհի կողմից իրականացվող կրթական ծառայություններից ուսանողների բավարարվածության աստիճանի աճ, ուսանողների ակադեմիական առաջադիմության աստիճանական բարձրացում

	օգտվելու հնարավորությունների տրամադրում	3. Ուսանողների շրջանում հարցումների իրականացում, արդյունքների վերլուծությունների կատարում, դրանց հաշվառում ուսանողների հետ տարվող աշխատանքներում	
3..	Ուսուցման գործընթացում ուսանողների հետազոտական հմտությունների ձևավորում և դրանց տիրապետման աստիճանի բարձրացում	1. Բոլոր կրթական ծրագրերում «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի ներառում: 2. Անհատական, կուրսային, ավարտական աշխատանքների թեմաները, կատարման մեթոդաբանության մշակում՝ հնարավորինս հաշվի առնելով ուսանողների աշխատանքային զբաղվածության ոլորտները, աշխատավայրում նրանց ունեցած ձեռքբերումները կապակցել հետազոտության թեմաներին, ստեղծել արդյունքահեն հետազոտության և կրթության զուգակցման մշակույթ: 2. Խորհրդատվական ծառայությունների արդյունավետության բարձրացում:	Հասցեական աշխատանքի շնորհիվ ուսանողների առաջադիմության բարձրացում, նրանց ինքնուրույնության աստիճանի բարձրացում, հետազոտական հմտությունների զարգացում
4.	Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, Արցախյան քառասունչորսօրյա պատերազմների մասնակից ուսանողների, սոցիալական այլ խմբերի ուսանողների տվյալների բազաների համալրում, հոգեբանական, սոցիալական, իրավական աջակցության տրամադրում	1. Ուսանողների անձնական և անհատական տվյալների բազաների ստեղծում: 2. Կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցում, աջակցման ծրագրերի մշակում և իրականացում: 3. Մշտապես նրանց կարիքների վերհանման նպատակով հատուկ հարցաշարերի մշակում, հարցումների իրականացում, արդյունքների վերուծություն, խմբային և անհատական աջակցության ցուցաբերում:	Ուսանողների լիարժեք ինտեգրում համալսարանի կրթական գործընթացներին, նրանց բավարարվածության բարձր մակարդակի ապահովում
5.	Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողների լեզվական, համակարգչային և ընդհանուր տեխնիկական գրագիտության,	1. Ուսանողների կարիքների հաշվառմամբ լրացական կրթական ծրագրերի իրականացում:	Ուսանողների ընդհանրական իրազեկությունների զարգացում, մրցունակության և

	տեղեկատվական, հաղորդակցական հմտությունների հետևողական զարգացում:	4.Մասնակիցների բավարարվածության աստիճանի ուսումնասիրում, արդյունքների հաշվառում հետագա պլանավորման ընթացքում:	ինքնաիրացման հնարավորության աճ:
6.	Միջազգային համագործակցության շրջանակներում հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների ակադեմիական շարժունության ակտիվացում:	Տրամադրել համապատասխան տեղեկատվություն և անհրաժեշտ խորհրդատվություն:	Ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցած ուսանողների թվաքանակի աճ
7.	Ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքերում հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողների մասնակցության ավելացում:	1. Կազմակերպել առկա ուսուցման ֆակուլտետների ՈՒԳԸ, ՈւԽ անդամների և ՀՈՒՖ ուսանողների տեղեկատվական հանդիպումներ: 2. Խրախուսել ՀՈՒԽՖ ուսանողների մասնակցությունը ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքերում:	ՈւԳԸ-ում և ՈՒԽՍ-ում ընդգրկված ՀՈՒԽՖ ուսանողների թվաքանակի աճ:

Նելլի Կուրուզյան՝
ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Գավառի պետական համալսարանի ակադեմիական քաղաքականության բաժնի (այսուհետ՝ ԱՔԲ) աշխատանքները կազմակերպվել են համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի, ԱՔԲ կանոնակարգի դրույթների հիման վրա:

2022-2023 ուսումնական տարում ԱՔԲ-ում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. կատարվել է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթային հիմքերի ապահովում,
2. վերանայվել են բակալավրիատում և մագիստրատուրայում իրականցվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ-ների) ուսումնական պլանները, կազմվել դրանցից ածանցված աշխատանքային պլանները,
3. ստուգվել են ամբիոնների դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունները,
4. յուրաքանչյուր ամսվա վերջում կատարվել է ժամավճարի սկզբունքով աշխատող դասախոսների դասաժամերի ստուգում և հաշվարկում՝ ըստ ֆակուլտետներից ներկայացված կատարողական փաստաթղթերի,
5. պարբերաբար կատարվել են դասամատյանների ստուգումներ,
6. կատարվել է ուսումնական գործընթացի կազմակերպման, միջանկյալ և ամփոփիչ քննությունների, բակալավրիատի և մագիստրատուրայի պրակտիկաների անցկացման ընթացքի վերահսկում, մշտադիտարկվել են անհրաժեշտ փաստաթղթային և կառուցակարգային հիմքերը,
7. ԳՊՀ ամբիոնների, դեկանատների, որակի ապահովման բաժնի հետ միասին կազմակերպել և իրականացվել են հանձնաժողովային դասալսումներ, կազմակերպվել քննարկումներ, կատարվել է արդյունքների վերլուծություն,
8. յուրաքանչյուր կիսամյակի վերջում ստուգվել և ամփոփվել են ուսանողների առաջադիմության արդյունքները,
9. աշխատանքներ են կատարվել անվճար և վճարովի համակարգերում սովորող ուսանողների փոխատեղման գործընթացի ստուգման, վերահսկման ուղղություններով,
10. արձանագրվել են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթի ներբուհական փուլի արդյունքները, ստուգվել են ԳՊՀ թեկնածուների փաստաթղթային փաթեթները,
11. շարունակաբար համալրվել է ուսանողների տվյալների բազան, ներկայացվել են եռամսյակային հաշվետվություններ,
12. իրականացվել է ԳՊՀ գիտական պարբերականում տպագրության ներկայացվող հոդվածների մասնագիտական գրախոսման, տեխնիկական պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ աշխատանքների համակարգում,
13. կատարվել են ԳՊՀ տարբեր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների հավաքագրման և ԳՊՀ հաշվետվության կազմման աշխատանքներ,

14. աշխատանքներ են կատարվել դիպլոմների կրկնօրինակների, տեղեկանքների պատրաստման և դիմումատուներին տրամադրման ուղղություններով,
15. ՀՀ վիճակագրական կոմիտե են ներկայացվել ամենամյա վիճակագրական հաշվետվությունները,
16. կազմակերպվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու, երկրորդ մասնագիտություն ստանալու, միջբուհական և ներբուհական տեղափոխությունների հետ կապված առարկայական տարբերությունների հանձնման, փաստաթղթային փաթեթների կազմման, զեկուցագրերի, հաշվետվությունների, առաջարկությունների ներկայացման և փաստաթղթերի արխիվացման գործընթացներ,
17. հաշվառվել է ԳՊՀ ուսանողների շարժը՝ հեռացման, ազատման, տարկետման, վերականգման և տեղափոխությունների արդյունքները /Տե՛ս Աղյուսակ 2/:
18. կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ: Աղյուսակ 1-ում ներկայացված է հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառմանը նվիրված դասընթացների ծրագիրը:

Աղյուսակ 1.

ԳՊՀ-ում 2022-2023 ուսումնական տարում կազմակերպված և իրականացված վերապատրաստման դասընթացի ծրագիր՝ նվիրված հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառմանը

Հ/հ	**Վերապատրաստման դասընթացի ծրագիրը**	**Դասընթացավարները**	**Անցկացման ժամաքանակը**	**Մասնակից-ների թիվը**
1.	«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները և դրանց կատարման պրակտիկան, հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող իրավական ակտերը	Ղուլոյան Հակոբ Հակոբյան Անահիտ Ղաջոյան Կարինե Մուսոյան Արևիկ	6 ակադեմիական ժամ	74
2.	Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը		9 ակադեմիական ժամ	
3.	Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը		9 ակադեմիական ժամ	
4.	Հանրային հատվածի ‹‹ՀԾ›› ծրագիրը		9 ակադեմիական ժամ	

5.	«Client Treasury» ծրագիրը		6 ակադեմիական ժամ	

Աղյուսակ 2.

2022-2023 ուսումնական տարում ԳՊՀ ուսանողների շարժը՝ 2021-2022 ուսումնական տարվա համեմատությամբ

		2021-2022 ուստարի	**2022-2023 ուստարի**
1	**Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել**	**6**	**10**
2	**ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել**	**0**	**0**
3	**Երկրորդ մասնագիտություն ստացողներ**	**10**	**4**
4	**Քոլեջից ԳՊՀ են ընդունվել**	**30**	**27**
5	**Ներբուհական տեղափոխություններ**	**22**	**24**
	➢ Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	4	10
	➢ Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	12	9
	➢ Ներֆակուլտետային տեղափոխություններ	6	5
6	**Տարկետում են ստացել**	**23**	**15**
	➢ Առողջական վիճակի պատճառով /երեխայի խնամքի/	1	1
	➢ արտերկրում ուսումը շարունակելու նպատակով	9	8
	➢ զինծառայության մեկնելու հիմքով	13	6
7	**ԳՊՀ-ից հեռացվել են**	**96**	**109**
8	**ԳՊՀ-ից ազատվել են**	**21**	**15**
9	**Վերականգնվել են ԳՊՀ՝**	**78**	**69**
	➢ զորացրումից հետո	32	28
	➢ հեռացումից հետո	44	33
	➢ տարկետումից հետո	0	1
	➢ ազատումից հետո	0	3
	➢ ամփոփիչ ատեստավորման գործընթացին թույլատրվածներ	1	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐԺ		**286**	**273**

Հաշվետու ուսումնական տարում ԱՔԲ-ի կողմից կատարվել են մագիստրատուրայի ընդունելության գործընթացի կազմակերպման աշխատանքներ: 2022-2023 ուսումնական տարում մագիստրատուրա է ընդունվել 39 դիմորդ՝ յոթ մասնագիտությունների և տասնմեկ կրթական ծրագրերի գծով.

1. Մասնագիտական մանկավարժություն /011401.00.7/

- Հայոց լեզու և գրականություն– 2,
- Անգլերեն լեզու և գրականություն –1
- Ռուսաց լեզու և գրականություն -2

- Պատմություն – 2,
- Կենսաբանություն – 4

2. Ընդհանուր մանկավարժություն / 011301.00.7/

- Տարրական մանկավարժություն և մեթոդիկա –6

3. Համակարգչային ճարտարագիտություն /061103.00.7/

- Համակարգչային ճարտարագիտություն –2

4. Իրավագիտություն /042101.00.7/

- Իրավագիտություն – 6

5. Ֆինանսներ /041201.00.7/

- Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ – 8

6. Հաշվապահական հաշվառում և հարկում /041101.00.7/

- Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ - 3

7. Տնտեսագիտություն /031101.00.7/

- Տնտեսագիտություն – 3

2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակում կատարվել են առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի, ինչպես նաև մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողների փաստաթղթերի նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ: Պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 182 դիպլոմ /56-ը՝ մագիստրատուրայի, 126-ը՝ բակալավրիատի շրջանավարտներին /տե՛ս Աղյուսակ 3/:

Աղյուսակ 3.

2022-2023 ուսումնական տարվա ԳՊՀ շրջանավարտների թիվը՝ ըստ ֆակուլտետների և կրթական աստիճանների

Ֆակուլտետ	Կրթական աստիճան	***ոչ գերազանցության***	***գերազանցության***	***ընդամենը***
Բանասիրական	Բակալավր	3	9	*12*
	մագիստրոս	1	8	*9*
Բնագիտական	Բակալավր	7	4	*11*
	մագիստրոս	3	4	*7*
Հումանիտար մասնագիտությունների	Բակալավր	2	6	*8*
	մագիստրոս	17	13	*30*
Տնտեսագիտական	Բակալավր	8	10	*18*
	մագիստրոս	1	9	*10*
ԸՆԴԱՄԵՆԸ	Բակալավր	*20*	*29*	***49***
	մագիստրոս	*22*	*34*	***56***
ՀԵՌԱԿԱ	Բակալավր	72	5	***77***
ԸՆԴԱՄԵՆԸ		***114***	***68***	***182***

ԳՊՀ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Կրթական գործընթացի արդյունավետության շարունակական բարձրացում և արդիականացում, ֆակուլտետներում ուսումնամեթոդական ռեսուրսների մշտադիտարկում,
2. պրակտիկաների արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում՝ ներքին և արտաքին շահակիցների կարծիքների հաշվառմամբ,
3. բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ), դրանցում ամրագրված իրազեկությունների մշտադիտարկում՝ ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի, Որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրիչների, ՄԿԾ-ներում և առարկայական ծրագրերում դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների հաշվառմամբ, արտաքին միջնաժամկետ գնահատման գործընթացի իրականացում,
4. հենանիշային վերլուծության (բենչմարքինգի) իրականացման գործընթացի արդյունավետության բարձրացում,
5. դասալսումների թվի ավելացում և կազմակերպման գործիքակազմերի բազմազանեցում, դասավանդման արդյունավետ փորձի տարածում,
6. ԳՊՀ ուսանողներին կրթական գործընթացին վերաբերող հարցերով անհատական և խմբային խորհրդատվությունների տրամադրում,
7. շարունակական կրթությամբ սովորող, ինչպես նաև Արցախից բռնի տեղահանված և ուսումը ԳՊՀ-ում շարունակող ուսանողների ինտեգրում ուսումնական գործընթացին:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Գավառի պետական համալսարանի 2017-2022 թվականների գիտահետազոտական գործունեության շրջանակի, Գավառի պետական համալսարանի ամբիոնների 2017-2022 թվականների գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների կատարման արդյունքների մշտադիտարկում, վերլուծություն,
2. ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա ամբիոնների հետ համատեղ գիտահետազոտական երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլանների կազմում, հետազոտության թեմաների արդիականացում,
3. համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության խրախուսման կառուցակարգերի մշակում՝ բարձր ազդեցության գործակից ունեցող պարբերականներում հոդվածների տպագրման նպատակով,
4. ԳՊՀ ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում սովորողների ներգրավում, նրանց հետազոտական հմտությունների մակարդակի զարգացման նպատակով խորհրդատվությունների, դասընթացների կազմակերպում: Դասախոս-ուսանող համահեղինակությամբ ԳՊՀ հոդվածների ժողովածուում տպագրված գիտական հոդվածների քանակական ցուցանիշների մշտադիտարկում,

5. համալսարանի գիտական պարբերականում տպագրության ներկայացվող հոդվածների գրախոսման ընթացակարգի բարելավում, տպագրվող նյութերի թվային օբյեկտի նույնականացուցչի (ԹՕՆ՝ DOI-Digital Object Identifier) և համընդհանուր տասնորդական դասիչի (ՀՏԴ՝ UDC-Universal Decimal Classification) շարունակական ապահովում:
6. ԳՊՀ գիտական պարբերականում տպագրության ներկայացվող հոդվածների ստուգում՝ հակագրագողության ծրագրերով:

III. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի համար մասնագիտական և մանկավարժական ուղղություններով կազմակերպված վերապատրաստումների արդյունքների վերլուծություն,
2. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի մասնագիտական, մեթոդական զարգացման դասընթացների մշակում և վերապատրաստումների կազմակերպում՝ նրանց կարիքների հաշվառմամբ,
3. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորման գործընթացի իրականացում, արդյունքների վերլուծություն,
4. Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ համատեղ ակադեմիական քաղաքականության բաժնի էլեկտրոնային հարթակի գործարկում՝ ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Հանրակրթական դպրոցների և միջին մասնագիտական հաստատությունների հետ համագործակցության ապահովում, դիմորդների մասնագիտական կողմնորոշում, շարունակական կրթությամբ ուսումը շարունակելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում,
2. «ԳՊՀ-դպրոցներ» համագործակցության մինչհամալսարանական ցանցի աշխատանքների շարունակական համակարգում, աշակերտների և ուսուցիչների ընդգրկում Գավառի պետական համալսարանի կողմից իրականացվող կրթադաստիարակչական տարաբնույթ միջոցառումներին և գիտահետազոտական աշխատանքներին:

V. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԱՔԲ գործունեության շրջանակներում ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի, համալսարանի էթիկայի կանոնների և ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների իրականացում, ներքին և արտաքին շահառուների հետ հարաբերություններում բարեվարքության սկզբունքների ու նորմերի պահպանում:

Օլգա Ղազարյան՝
Ակադեմիական քաղաքականության
բաժնի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի (ՈԱԲ) 2022-2023 ուսումնական տարվա գործունեությունը բխել է ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրից, այդ ծրագրին համապատասխան ՈԱԲ 2022-2023 ուսումնական տարվա գործունեության պլանում ամրագրված նպատակներից և բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներից և ուղենիշներից:

Հաշվետու ուստարում ՈԱԲ-ը համալսարանում իրականացվող բոլոր գործընթացների որակը գնահատելու և դրա շարունակական բարելավման ընթացքն ապահովելու նպատակով ակտիվորեն համագործակցել է ներքին և արտաքին շահառուների, բուհի կրթության որակի ապահովման գործընթացներում ներգրավված անձանց ու մարմինների հետ: Հանդիպումների, քննարկումների և աշխատաժողովների արդյունքում համատեղ ուժերով ի մի են բերվել շահակիցների՝ բուհի կրթության որակի ներքին ապահովմանը միտված նկատառումները, կարծիքները և ներկայացվել են առաջարկություններ, որոնք տեղ են գտել համապատասխան վերլուծություններում:

2022-2023 ուստարում ՈԱԲ-ը վերանայել և բարեփոխել է բուհում կրթության որակի ներքին գնահատմանը վերաբերող բոլոր հարցաթերթերը, միաժամանակ ԳՊՀ ներքին շահառուների և արտաքին շահակիցների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մշակել և գործածության մեջ է դրել ևս 5 հարցաթերթ՝ ուղղված գործատուների, ուսանողների, ուսանող-պրակտիկանտների, Եվրոպական Միության «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրի մասնակիցների կարիքների վեհանմանը: 2022-2023 ուսումնական տարում ՈԱԲ-ի կողմից իրականացվել են թվով 14 հարցում՝ ներքին շահառուների և արտաքին շահակիցների շրջանում, որոնց արդյունքում ուսումնասիրվել և վեր են հանվել հարցվողների կրթական կարիքները, կարծիքներն ու առաջարկությունները, գնահատվել են ԳՊՀ-ում կրթության որակից նրանց բավարարվածության աստիճանը:

Հարցումների արդյունքում կատարվել են հետևյալ վերլուծությունները.

<u>Ներքին շահառուներին հասցեագրված</u>

ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին՝

1. ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծություն,
2. հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետությունից ԳՊՀ ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծություն,
3. ԳՊՀ-ում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն,
5. Գավառի պետական համալսարանի ուսումնական ռեսուրսներից առկա ուսուցման

համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծություն,

6. Գավառի պետական համալսարանի ուսանողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծություն,

Պրոֆեսորադասախոսական կազմին՝

7. ԳՊՀ-ում կրթական ռեսուրսներից դասախոսների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն,

Վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմին՝

8. ԳՊՀ աշխատակցի՝ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմերի անդամների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծություն,

<u>Արտաքին շահակիցներին հասցեագրված</u>

Գործատուներին՝

9. Գործատուի կողմից Գավառի պետական համալսարանի պրակտիկայի մասնակից ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման հարցման արդյունքների վերլուծություն,

Դիմորդներին՝

10. Դիմորդների կարիքների վերհանման հարցման արդյունքների վերլուծություն,

Ուսուցիչներին՝

11. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական, մանկավարժական որակների բարձրացման ուղղությամբ կարիքների վերհանման հարցման արդյունքների վերլուծություն,
12. շարունակական մասնագիտական զարգացման ծրագրի շրջանակներում հաշվապահների վերապատրաստման դասընթացից մասնակիցների բավարարվածության գնահատման վերլուծություն,

Շրջանավարտներին՝

13. Գավառի պետական համալսարանի բակալավրիատում ավարտական աշխատանքի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ՝ շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն,
14. Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքից, ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն:

Հարցումների և մշտադիտարկման արդյունքների վերլուծություններն ու առաջարկությունները, շահակիցների կողմից բարձրացված խնդիրները, նկատառումներն ու կարծիքները ներկայացվել են ԳՊՀ համապատասխան ֆակուլտետների խորհուրդների, ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերում, դրանց վերաբերյալ եղել են քննարկումներ, պարզաբանումներ: Արդյունքները կողմնորոշիչ են եղել բուհի կառուցվածքային ստորաբաժանումների 2023-2024 ուստարվա զարգացման ծրագրերը կազմելիս:

2023 թ. փետրվար, մարտ ամիսներին ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում ԳՊՀ ՈԱԲ աշխատակիցները ֆակուլտետների դեկանների, փոխդեկանների, այլ ստորաբաժանումների ներկայացուցիչների մասնակցությամբ հանդիպումներ ունեցան Գեղարքունիքի մարզի 9 հանրակրթական

դպրոցների շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ապագա դիմորդների և ուսուցիչների հետ /տե՛ս աղյուսակ 1/: Հանդիպումների ընթացքում բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն աջակցելու, նրանց կարիքները վերհանելու, ուսումնասիրելու, գնահատելու և Համալսարանում գործող մասնագիտական կրթական ծրագրերի ցանկը վերանայելու ու բարելավելու համար ՈԱԲ աշխատակիցների կողմից իրականացվեց հարցում:

Աղյուսակ 1.

Հ/հ	Դպրոց	Այցելության ամսաթիվը	ԳՊՀ ներկայացուցիչներ
1.	Մարտունու Տ.Աբրահամյանի անվան ավագ դպրոց	22.02.2023 թ.	1. Ամիրխանյան Ս.՝ Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան 2.Մուրադյան Ն.՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ 3. Նախրատյան Մ.՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ
2.	Լիճքի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց	22.02.2023 թ.	1. Ամիրխանյան Ս.՝ Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան 2.Մուրադյան Ն.՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ 3. Նախրատյան Մ.՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ
3.	Երանոս գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց	20.02.2023 թ.	1. Հայրապետյան Ք.՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ 2.Գևորգյան Գ.՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի փոխդեկան 3.Մարգարյան Ջ.՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի գործավար
4.	Երանոս գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց	20.02.2023 թ.	1. Հայրապետյան Ք.՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ 2. Գևորգյան Գ.՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի փոխդեկան 3. Մարգարյան Ջ.՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի գործավար
5.	Վարդաձոր գյուղի միջնակարգ դպրոց	20.02.2023 թ.	1. Հայրապետյան Ք.՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ 2. Գևորգյան Գ.՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի փոխդեկան

			3. Մարգարյան Ջ.՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի գործավար
6.	Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց	15.03.2023 թ.	1. Ամիրխանյան Ս.՝ Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան 2. Մուրադյան Ն.՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ 3. Նախրատյան Մ.՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ 4. Միրիբյան Ն.՝ Արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ
7.	Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց	15.03.2023 թ.	1. Ամիրխանյան Ս.՝ Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան 2. Մուրադյան Ն.՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ 3. Նախրատյան Մ.՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ 4. Միրիբյան Ն.՝ Արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ
8.	Վերին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց	22.03.2023 թ.	1. Հայրապետյան Ք.՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ 2. Գևորգյան Գ.՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի փոխդեկան 3. Մուրադյան Ն.՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ 4. Մկրտչյան Ս.՝ Արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ
9.	Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց	22.03.2023 թ.	1. Հայրապետյան Ք.՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժ/պ 2. Գևորգյան Գ.՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի փոխդեկան 3. Մուրադյան Ն.՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ 4. Մկրտչյան Ս.՝ Արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ

ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ համատեղ իրականացվել են ԳՊՀ կայքէջի և ՈԱԲ-ի էլեկտրոնային հարթակի մշտադիտարկում և համալրում: Հաշվետու ուստարվա ընթացքում կայքէջում թարմացվել են ԳՊՀ ընթացակարգերը, ներբուհական այլ իրավական ակտերը, «Որակի ապահովում» հարթակը համալրվել է համապատասխան ենթաբաժիններով և նյութերով: Հաշվետու ուստարում ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «learn.gsu.am» համակարգը պարբերաբար վերանայվել, ստուգվել է ՈԱԲ-ի կողմից, այնուհետ ըստ պատասխանատուների շարունակաբար համալրվել և թարմացվել է նոր նյութերով՝

դասախոսություններով, էլեկտրոնային ժամանակակից մասնագիտական գրականությամբ և այլ անհրաժեշտ ուսումնական նյութերով:

2022-2023 ուստարվա ընթացքում ԳՊՀ տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ աշխատանքի արդյունքում ՈԱԲ-ը մշտադիտարկել և թարմացրել է ԳՊՀ պայմանագրերը, համագործակցության հուշագրերը և համաձայնագրերը: Հիմք ընդունելով 2021-2022 ուսումնական տարվա ԳՊՀ-ում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման արդյունքները՝ ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի հետ համատեղ առկա ուսուցման 4 ֆակուլտետներում իրականացվել են թվով 23 դասալսումներ:

ՈԱԲ-ի աշխատակիցները հաշվետու ուստարում մասնակցել են ինչպես ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպած դասընթացներին, քննարկումներին, աշխատանքային հանդիպումներին, այնպես էլ այլ հանդիպումների և վերապատրաստումների.

1. 2022 թ. սեպտեմբերի 12-ից 16-ը Եվրոպական Միության «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրի շրջանակում ՈԱԲ բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Քանաքարա Հայրապետյանը մեկշաբաթյա վերապատրաստման դասընթաց անցավ Պորտուգալիայի Հանրապետության Էվորայի համալսարանում,
2. 2022 թ. նոյեմբերի 23–ին ՀՀ ՈԱԱԿ–ում ԳՊՀ պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և ՈԱԲ բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Քանաքարա Հայրապետյանը մասնակցել են «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով աշխատաժողովին,
3. 2023 թ. մարտի 21-ին ՈԱԲ աշխատակիցները մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված առցանց հանդիպմանը՝ նվիրված մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, բարելավման և լավագույն փորձի տեղայնացման հիմնահարցերի քննարկմանը,
4. 2023 թ. մայիսի 25-ին ՈԱԲ աշխատակիցները մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված առցանց հանդիպմանը՝ նվիրված «Դասի որակի ապահովում» թեմայով քննարկմանը,
5. 2023 թ. հուլիսի 3-ից 7-ը Եվրոպական Միության «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրի շրջանակում ՈԱԲ բաժնի մասնագետ Նոնա Մուրադյանը մեկշաբաթյա վերապատրաստման դասընթաց անցավ Պորտուգալիայի Հանրապետության Մինհոյի համալսարանում:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2023-2024 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները

ԳՊՀ զարգացման 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի նպատակներին և բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին, ինչպես նաև ՀՀ Որակի ապահովման ազգային կենտրոնի փորձագիտական խմբի զեկույցի հիման վրա մշակված՝ ԳՊՀ բարելավման ծրագրին համապատասխան՝ 2023-2024 ուստարում նախատեսվում են ՈԱԲ գործունեության հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1. Կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի շարունակական բարելավում՝ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցում, շահակիցների ավելի ակտիվ ներգրավում որակի ապահովման գործընթացներում, կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում, ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման գործընթացների համադրելիության ապահովում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) որակի ապահովման գործընթացներին, կրթության որակի ապահովման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում:
2. Ուսանող-դասախոս հաղորդակցության որակի, ուսուցման և ուսումնառության մեթոդաբանության, օգտագործվող կրթական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության գնահատում, բարելավման միջոցառումների մշակում և կիրառում:
3. Գավառի պետական համալսարանի կրթության որակի ապահովման ձեռնարկի վերանայում և համապատասխանեցում ԳՊՀ 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրին:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ, ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Ֆակուլտետների, ամբիոնների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մասնագիտական կրթական ծրագրերի պարբերական վերանայում, վերլուծությունների կատարում, արդիականացմանը միտված առաջարկությունների ներկայացում:
2. Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանում, վերլուծության իրականացում, հետադարձ կապի ապահովում:

III. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

1. ԳՊՀ-ում գիտահետազոտական աշխատանքների որակի ստուգման մեթոդաբանության մշտադիտարկում, դրանցում շահառուների ներգրավվածության ուսումնասիրում, այս ուղղությամբ նրանց կարիքները, նկատառումներն ու առաջարկություններն ուսումնասիրելու համար հարցումների անցկացում, դրանց արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում, կրթության և գիտահետազոտական աշխատանքի արդյունքների ինտեգրման գործընթացի բարելավում:

IV. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Ուսումնական ռեսուրսների կիրառման արդյունավետության գնահատում, կրթական միջավայրի վերաբերյալ ներքին շահառուների և արտաքին շահակիցների շրջանում հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն, համապատասխան եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում:
2. Որակի ապահովման ներբուհական գործընթացներում ուսանողների մասնակցության ակտիվացում, աշխատանքային խմբերի ձևավորում, նրանց հետ կրթության որակի բարձրացմանը միտված աշխատանքների իրականացում:

V. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. Սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման կառուցակարգերի որակի ստուգում և բարելավում:
2. Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի օբյեկտիվությունը ստուգելու նպատակով հարցումների իրականացում, արդյունքների վերլուծություն, եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում:

VI. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Դասախոսների կարիքների վերհանման և դրանց բավարարման հնարավոր ուղիների վերաբերյալ հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում, բարելավմանը միտված համապատասխան աշխատանքների իրականացում:
2. Ուսանողների շրջանում դասախոսների մասնագիտական և մանկավարժական որակների վերաբերյալ հարցումների շարունակական իրականացում, արդյունքների ներկայացում և քննարկում ԳՊՀ ռեկտորատում, համապատասխան միջոցների ձեռնարկում՝ դասախոսական կազմի որակյալ աշխատանքի ապահովման նպատակով:

VII. ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. ԳՊՀ գործունեության հրապարակայնությունն ապահովող մեթոդաբանության որակի ստուգում, գնահատում և բարելավման առաջարկությունների ներկայացում:
2. Որակի ապահովման ներբուհական գործընթացներում հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքի պահպանում:
3. ԳՊՀ կայքէջի պարբերաբար վերանայում, մշտադիտարկում, որակի ապահովման գործընթացների վերաբերյալ շահակիցներին հավաստի և պատշաճ տեղեկատվության տրամադրում:
4. ԳՊՀ գիտական խորհրդին, ռեկտորին, ներքին շահառուներին և արտաքին շահակիցներին հաշվետվությունների պարբերաբար ներկայացում:
5. ԳՊՀ որակի ապահովման բաժնի գործունեության որակի ստուգման կառուցակարգերի լավարկում և նոր կառուցակարգերի մշակում ու կիրառում, աշխատանքի արդյունավետության բարձրացում:

Քանաքարա Հայրապետյան՝
ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչի
ժամանակավոր պաշտոնակատար

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժինը հաշվետու ուսումնական տարվա ընթացքում իրականացրել է տարաբնույթ տեղեկատվական, ուսուցողական, ճանաչողական ծրագրեր, կազմակերպել միջոցառումներ, կատարել բուհի գիտահետազոտական, կրթական, ուսումնամեթոդական, դաստիարակչական գործունեության օպերատիվ լուսաբանում՝ ապահովելով սերտ համագործակցություն գործընկեր կազմակերպությունների, ներքին և արտաքին շահակիցների հետ:

Իր գործառույթներն իրականացնելիս՝ բաժինը համակարգված աշխատել է ԳՊՀ ռեկտորատի, ֆակուլտետների, դեկանատների, ամբիոնների աշխատակազմերի, ակադեմիական քաղաքականության բաժնի, որակի ապահովման բաժնի, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի, բուհում գործող ակումբների, ուսումնաօժանդակ, տնտեսատեխնիկական և այլ ստորաբաժանումների հետ:

Գավառի պետական համալսարանում 2022-2023 ուսումնական տարում շարունակվել են աշխատանքները բուհի միջազգայնացման գործընթացները խթանելու ուղղությամբ:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում վերակնքվել են մի շարք պայմանագրեր: Մասնավորապես, վերակնքվել են պայմանագրեր հետևյալ եվրոպական համալսարանների հետ.

1. Ալմերիայի համալսարան, Իսպանիա,
2. Վալլադոլիդի համալսարան, Իսպանիա,
3. Կորդոբայի համալսարան, Իսպանիա,
4. Մուրսիայի Սան Անտոնիո Կաթոլիկե համալսարան, Իսպանիա,
5. Մինհոյի համալսարան, Պորտուգալիա,
6. Սապիենզայի համալսարան, Իտալիա,
7. Կորունայի համալսարան, Իսպանիա,
8. Տիմիշոարայի համալսարան, Ռումինիա,
9. Բրագանսայի պոլիտեխնիկ համալսարան, Պորտուգալիա:

Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամները հաշվետու ուսումնական տարում մասնակցել են մի շարք միջազգային և հանրապետական գիտաժողովների, աշխատաժողովների, սեմինարների և վեբինարների:

2022թ. հոկտեմբերին ամփոփվել են Եվրոպական միության «ERASMUS+ MENVIPRO. Հայաստանի և Վրաստանի շրջակա միջավայրի պահպանման ծրագրերի արդիականացում» ծրագրի արդյունքները, տեղի են ունեցել ծրագրի ամփոփիչ աշխատաժողովը և փակման արարողությունը, որոնց առցանց մասնակցել են ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոսներ Թերմինե Խաչիկյանը և Մարինե Հովհաննիսյանը: Ծրագրի ամփոփիչ աշխատաժողովից հետո տեղի է

ունեցել ծրագրի ներքին մշտադիտարկում, որին առցանց ձևաչափով ԳՊՀ-ից մասնակցել են ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը: Ծրագրի կարևոր ձեռքբերումներից են չորս մագիստրոսական դասընթացների լրամշակումը, թվով 9 տեսակ տեխնիկական սարքավորումների ձեռքբերումը, ինչպես նաև ԳՊՀ-ի և Գիտությունների ազգային ակադեմիայի ERLEP լաբորատորիայի միջև համաձայնագրի կնքումը, որի շրջանակում ԳՊՀ ուսանողներին և դասախոսներին հնարավորություն կընձեռվի բնապահպանական տարբեր թեմաների վերաբերյալ կատարել գիտահետազոտական աշխատանքներ: Ծրագրի շրջանակում ԳՊՀ մի շարք ուսանողներ և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ մասնակցել են ամառային դպրոցների:

Հաշվետու ուսումնական տարում մեկնարկել է Եվրոպական Միության ‹‹Erasmus+ T-GREEN. Հետբակալավրիական կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» (The Erasmus+ CBHE project “Transforming Graduate Education for Green and Sustainable Future” (T-GREEN) ծրագիրը, որի կոնսորցիումի անդամ է հանդիսանում նաև Գավառի պետական համալսարանը: ‹‹T-GREEN›› ծրագիրը բարձրագույն կրթության անհրաժեշտ բարեփոխումներին ուղղված նախագիծ է, որի համար առանցքային է «կանաչ» քաղաքականությունը: Նախագծի իրականացումը բուհերին հնարավորություն կտա ավանդական կրթական ծրագրերից անցում կատարելու դեպի ապագային միտված, ‹‹կանաչ››, միջառարկայական ուսումնական ծրագրերին՝ խթանելով ուսանողների շարժունությունը, մշակելով համատեղ որակավորման աստիճան շնորհող կրթական ծրագրերի իրականացման կառուցակարգեր: Նախագծի հիմնական նպատակն է ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում վարչական կազմի, որոշումներ կայացնողների, քաղաքականություն մշակողների, դասախոսների, հետազոտողների և ուսանողների շրջանում այնպիսի կարողությունների զարգացումը, որոնց միջոցով նշված դերակատարները կկարողանան կայուն զարգացման նպատակները և բնապահպանական խնդիրները ինտեգրել կրթական քաղաքականությանը և բովանդակությանը: Ծրագրի մեկնարկային հանդիպումը տեղի է ունեցել առցանց ձևաչափով, իսկ հաշվետու ուստարում հուլիսի 10-ից 14-ը Հունաստանի միջազգային Հելլենիկ համալսարանում տեղի ունեցավ աշխատաժողով՝ նվիրված ‹‹կանաչ›› ուսումնական պլաններ մշակելու՝ եվրոպական բուհերի ունեցած փորձի ներկայացմանը: Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցել են ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հակոբ Ղուլոյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը:

Եվրոպական միության «ERASMUS+ FLEXWBL. Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատանքի վրա հիմնված ուսուցման ճկուն, նորարարական և գործնական հիմքի մշակում» ծրագրի շրջանակներում հաշվետու ուսումնական տարում Ավստրիայի Լինցի համալսարանում տեղի է ունեցել Եվրոպական Միության աշխատաժողով՝ նվիրված աշխատանքի վրա հիմնված կրթության կազմակերպմանը, աշխատանքահեն ուսուցման ճկուն և նորարարական հիմքի ձևավորմանը:

Աշխատաժողովին Գավառի պետական համալսարանից մասնակցել են ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս, ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Նարինե Նալբանդյանը:

Այնուհետև նույն ծրագրի շրջանակում հունիսի 6-ից 8-ը Հայաստանի Հանրապետության երեք բուհում՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում և Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ եռօրյա աշխատաժողով, որի ընթացքում հայաստանյան բուհերի ներկայացուցիչները ներկայացրին իրենց բուհերում մշակված և հաստատված աշխատանքահեն ուսուցման ընթացակարգի հիմնական դրույթները:

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ-ից միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերին մասնակցել է ուսանողների և դասախոսների հետևյալ համակազմը.

Ուսանողներ՝

	Անուն, Ազգանուն Name, Surname	Կրթական աստիճան/Պաշտոն Level/Position	Ժամանա-կահատված Duration	Համալսարանը University
1.	Մարատ Սարգսյան Marat Sargsyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Կառլ Լիննեուսի անվան համալսարան, Շվեդիա Linnaeus University, Sweden
2.	Մանե Մանուկյան Mane Manukyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Կառլ Լիննեուսի անվան համալսարան, Շվեդիա Linnaeus University, Sweden
3.	Զառա Պետրոսյան Zara Petrosyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Կորդոբայի համալսարան, Իսպանիա University of Cordoba, Spain
4.	Արմինե Սեյրանյան Armine Seyranyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Կորդոբայի համալսարան, Իսպանիա University of Cordoba, Spain
5.	Հասմիկ Հովեյան Hasmik Hoveyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Կորդոբայի համալսարան, Իսպանիա University of Cordoba, Spain
6.	Լիլիթ Պողոսյան Lilit Poghosyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Կորդոբայի համալսարան, Իսպանիա University of Cordoba, Spain
7.	Օնիկ Մկրտչյան Onik Mkrtchyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Բրագանսայի Պոլիտեխնիկական համալսարան, Պորտուգալիա Polytechnic University of Braganca, Portugal
8.	Լարիսա Բադալյան Larisa Badalyan	Բակալավր Bachelor	5 ամիս 5 months	Վալլադոլիդի համալսարան, Իսպանիա University of Valladolid, Spain

Պրոֆեսորադասախոսական կազմ՝

	Անուն, Ազգանուն Name, Surname	Կրթական աստիճան/Պաշտոն Level/Position	ժամանա-կահատված Duration	Համալսարանը University
1.	Քանաքարա Հայրապետյան Kanakara Hayrapetyan	Վերապատրաստում Trianing	1 շաբաթ 1 week	Եվորայի համալսարան, Պորտուգալիա University of Evora, Portugal
2.	Մարտին Ավագյան Martin Avagyan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Կորդոբայի համալսարան, Իսպանիա University of Cordoba, Spain
3.	Կարեն Սիրականյան Karen Sirakanyan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Կառլ Լիննեուսի անվան համալսարան, Շվեդիա Linnaeus University, Sweden
4.	Վարազդատ Ավետիսյան Varazdat Avetisyan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Կառլ Լիննեուսի անվան համալսարան, Շվեդիա Linnaeus University, Sweden
5.	Արմեն Ղազարյան Armen Ghazaryan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Կառլ Լիննեուսի անվան համալսարան, Շվեդիա Linnaeus University, Sweden
6.	Շահեն Գասպարյան Shahen Gasparyan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Կառլ Լիննեուսի անվան համալսարան, Շվեդիա Linnaeus University, Sweden
7.	Աստղիկ Հովեյան Astghik Hoveyan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Ալմերիայի համալսարան, Իսպանիա University of Almeria, Spain
8.	Արեգ Սինանյան Areg Sinanyan	Դասախոս Staff	1 շաբաթ 1 week	Մուրսիայի համալսարան, Իսպանիա University of Murcia, Spain
9.	Անիկ Բալագոզյան Anik Balagozyan	Վերապատրաստում Trianing	1 շաբաթ 1 week	Ալմերիայի համալսարան, Իսպանիա University of Almeria, Spain

10.	Լալա Մկրտչյան Lala Mkrtchyan	Վերապատրաստում Trianing	1 շաբաթ 1 week	Տիմիշոարայի արևմտյան համալսարան, Ռումինիա West University of Timisoara, Romania
11.	Նոնա Մուրադյան Nona Muradyan	Վերապատրաստում Trianing	1 շաբաթ 1 week	Մինհոյի համալսարան, Պորտուգալիա University of Minho, Portugal

Արտաքին կապերի և լրատվության բաժնի աշխատակիցները հաշվետու ուսումնական տարում մասնակցել են հետևյալ միջոցառումներին՝ Մոլդովայի պետական համալսարանի Erasmus+ MEDIA («Առցանց կրթության որակի ամրապնդում Մոլդովայի և Հայաստանի բուհերում») ծրագրի շրջանակներում կազմակերպված համաժողով՝ «ԵՄ. Արևելյան գործընկերության երկրների հետ կապերի հաստատում թվային կրթության միջոցով» խորագրով, Գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական ինստիտուտի կողմից կազմակերպված աշխատաժողով՝ «Ինչպես գրել դրամաշնորհային ծրագիր», Եվրոպական ուսումնական հիմնադրամի (ETF) և Եվրոպական արհմիության կրթության կոմիտեի (ETUCE) կողմից կազմակերպված սեմինար՝ «Ուսուցիչների դերը կանաչ և թվային անցման ժամանակաշրջանում, նրանց դերակատարումը սոցիալական երկխոսության մեջ» թեմայով, SPHERE (Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների կենտրոնացված աջակցություն և խթանում)-ի կողմից կազմակերպված վիրտուալ սեմինար՝ «Կրթություն և ուսուցում ՀԵՏԿՈՎԻԴ-ի համատեքստում. ստատուս քվո» թեմայով, Անգել Կանչևի անվան Ռուսեի համալսարանի կողմից կազմակերպված գիտաժողով՝ «Լեզուն, մշակույթը և ինքնությունը. վերջինիս դրսևորումները, փոխակերպումները և փոխազդեցությունը» թեմայով:

Ամենօրյա աշխատանքներ են իրականացվել բուհում սովորող սոցիալապես անապահով, բազմանդամ ընտանիքների ուսանողների, հաշմանդամություն ունեցող և ծնողազուրկ ուսանողների հետ: Թարմացվել է վերոնշյալ ուսանողների տվյալների բազան, որի հիման վրա համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողները ներգրավվել են կրթաթոշակային ծրագրերում և ստացել ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

Բաժինը շարունակել է համագործակցել ԳՊՀ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրող կազմակերպությունների հետ. Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամի, Հայ կրթական հիմնարկության, «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության, Գավառի համայնքապետարանի, «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերության և այլ բարեգործական, մարդասիրական կառույցների հետ:

ԳՊՀ-դպրոցներ համագործակցության ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ:

Բաժնի կողմից հիշյալ հաստատություններին են տրամադրվել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հարցաթերթեր, տեղեկատվական թերթիկներ:

Բաժնի կողմից համակարգվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների ուսուցիչների համար կազմակերպված տարաբնույթ վերապատրաստումների, մասնագիտական

կարողությունների զարգացման ծրագրերի, աշակերտների համար նախատեսված միջոցառումների, դասընթացների կազմակերպչական աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում բուհում կայացած բազմաբնույթ վերապատրաստումների, մրցույթների, միջոցառումների համար ըստ պահանջի պատրաստվել են շնորհակալագրեր, հավաստագրեր:

Իրականացվել է համալսարանում կայանալիք առցանց և անցանց միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության տարածում և մասնակցություն կազմակերպչական աշխատանքներում:

Իրականացվել է ԳՊՀ-ում կայացած միջոցառումների և հիշարժան իրադարձությունների լուսաբանում, լուսանկարում, և նկարված լուսանկարներն արխիվացվել են:

Իրականացվել է ԳՊՀ պաշտոնական կայքէջի ամենօրյա թարմացման աշխատանքներ:

ԳՊՀ ‹‹Դիմագիրք›› (Facebook) սոցիալական ցանցում կատարվել են ադմինիստրատիվ աշխատանքներ, թարմացումներ, պատասխան են տրվել բոլոր հաղորդագրություններին և մեկնաբանություններին:

Պատասխաններ են տրվել ԳՊՀ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներին՝ info@gsu.am, infogsu@mail.ru, iro@gsu.am ուղղված նամակներին:

Հաշվետու տարվա ընթացքում ԳՊՀ պաշտոնական կայքէջում www.gsu.am և ԳՊՀ ֆեյսբուքյան պաշտոնական (https://www.facebook.com/gavarstateuniversity/) էջում պատրաստվել և տեղադրվել է 284 նորություն՝ համապատասխան լուսանկարներով:

Աշխատանքներ են կատարվել ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերից օգտվող 78 ուսանողի հետ:

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ /2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ/

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	2021-2022	2022-2023
«Ժիրայր Նիշանյան հիմնադրամ» կրթավճար ծրագիր	49 ուսանող	45 ուսանող
«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն	13 ուսանող	3 ուսանող
«Հայ կրթական» հիմնարկություն	9 ուսանող	8 ուսանող
Գավառի համայնքապետարան	17 ուսանող	15 ուսանող
«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերություն	1 ուսանող	1 ուսանող
Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն		2 ուսանող
Այլ կազմակերպություններ		5 ուսանող

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ /2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ/

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ	2021-2022	2022-2023
Տնտեսագիտական ֆակուլտետ	23	18
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ	15	12
Բանասիրական ֆակուլտետ	26	19
Բնագիտական ֆակուլտետ	14	17
Հեռակա ուսուցման ֆակուլտետ	14	12
ԸՆԴԱՄԵՆԸ՝	92	78

ԳՊՀ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Գործունեության ոլորտները	2021-2022	2022-2023
www.gsu.am կայքի լուրեր	257	284
«info@gsu.am», «infogsu@mail.ru» ıորոնային փոստի հասցեներին ուղղված ıկների քանակը	6241	7738
Լուսանկարահանված միջոցառումներ/ ıվացված լուսանկարների քանակը	8577/445	8852/339
ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերից ող ուսանողների քանակը	92	78

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳՊՀ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

- Համալսարանի արտաքին կապերի համակարգում և զարգացում, հանրային պատասխանատվության ծրագրերի իրականացում, բոլոր ներքին շահառուներին և արտաքին շահակիցներին տեղեկատվության օպերատիվ տրամադրում,
- զանգվածային լրատվամիջոցների, ուսումնական հաստատությունների, գործընկեր այլ կազմակերպությունների հետ համագործակցության գործընթացի պլանավորում, կազմակերպում և իրականացում,
- ԳՊՀ միջազգայնացման նպատակով օտարերկրյա բուհերի, գիտակրթական կենտրոնների, պետական մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության խթանում,
- միջազգային տարբեր ծրագրերին անդամակցություն,
- օտարերկրյա բուհերի հետ փոխըմբռնման հուշագրերի և գիտակրթական ոլորտում համագործակցության պայմանագրերի կնքմանն ուղղված աշխատանքների իրականացում,
- ԳՊՀ-ում միջազգային գիտաժողովների և աշխատաժողովների կազմակերպման աշխատանքների համակարգում,
- ԳՊՀ-ում իրականացվող կարևոր միջոցառումների, ծրագրերի մասին տեղեկատվության օպերատիվ տարածում,
- ֆակուլտետների, ամբիոնների, այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցության արդյունավետության բարձրացում,
- բաժնի խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

Լիլիթ Թոռչյան՝
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) բաժնում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ ԳՊՀ պաշտոնական կայքի համար ակտիվացվել է SSL անվտանգության սերտիֆիկատ,
- ✓ ԳՊՀ կայքում ստեղծվել են 40-ից ավելի էջեր, համալրվել են կայքի անգլերեն և ռուսերեն տարբերակները,
- ✓ թարմացվել է կայքի փաստաթղթեր բաժինը, տեղադրվել են նորմատիվ ակտերը,
- ✓ փոփոխության է ենթարկվել կայքի գլխավոր էջը, կայքի ընդհանուր կառուցվածքը,
- ✓ կատարվել են ԳՊՀ պաշտոնական կայքում հայտարարությունների, էջերի օպերատիվ թարմացումներ,
- ✓ տեղադրվել են ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի դասացուցակները,
- ✓ պարբերաբար հրապարակվել են քննաշրջանների ժամանակացույցերը,
- ✓ «Գնումներ» էջում պարբերաբար հրապարակվել են գնումների վերաբերյալ հայտարարությունները, էլեկտրոնային հարցումների հղումները,
- ✓ շարունակական սպասարկման և ինֆորմացիոն համալրման է ենթարկվել «international.gsu.am» կայքէջը, այն տեղափոխվել է նոր սերվերի վրա,
- ✓ շարունակվել է «Learn.GSU.am» էլեկտրոնային ուսուցման համակարգի ինֆորմացիոն համալրումը,
- ✓ կազմակերպվել է 2022-2023թ ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի «Learn.GSU.am» էլեկտրոնային ուսուցման համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Ըստ ուսումնական պլանների՝ «Learn.GSU.am» համակարգում համալրվել են խմբերի, դասախոսների անվանական և առարկաների ուսուցման տիրույթները, թղթային տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկներ,
- ✓ շարունակական բնույթ է կրել «Learn.GSU.am» համակարգի վերաբերյալ դասախոսներին և ուսանողներին խորհրդատվությունների տրամադրումը, առարկաների փաթեթների խմբագրման գործում աջակցության ապահովումը,
- ✓ իրականացվել է ԳՊՀ «Office 365» էլեկտրոնային փոստերի ծառայությունների համակարգի սպասարկում,
- ✓ ԳՊՀ «Examenation Gsu» քննական թեստային համակարգի միջոցով հաշվետու ուսումնական տարում անցկացվել են քննություններ, համալրվել է համակարգում առկա առարկայական թեստերի բազան: Առարկայական թեստերի թիվը հասել է 59-ի: Համակարգի ակտիվ օգտատերերի թիվը հասնում է 585-ի,
- ✓ Սպասարկվել է էլեկտրոնային դեկանատ համակարգը,
- ✓ շարունակաբար ապահովվել է «Էլեկտրոնային դեկանատ» համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունների զարգացումը,
- ✓ շուրջ 10-ից ավել վիրտուալ լսարաններ են ստեղծվել Zoom համակարգով,

- ✓ իրականացվել է «VK TEAMS-MYTEAM» կորպորատիվ հաղորդակցություն ապահովող ծրագրի սպասարկում,
- ✓ ստեղծվել է ԳՊՀ կայքի «Առցանց դիմում» համակարգը,
- ✓ SS բաժնի կողմից իրականացվել է հեռահար համակարգչային տեխնիկայի սպասարկում, խորհրդատվությունների մատուցում,
- ✓ դիմորդներին և ԳՊՀ ուսանողներին տրվել են խորհրդատվություններ՝ տարբեր կապի միջոցների օգնությամբ,
- ✓ իրականացվել են համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում, խորհդատվությունների տրամադրում,
- ✓ Բնագիտական ֆակուլտետում բացվել է նոր համակարգչային լսարան,
- ✓ կատարվել են սերվերային կենտրոնի պահուստային պատճենման աշխատանքներ,
- ✓ իրականացվել է տպիչների սպասարկում՝ լիցքավորում, վերանորոգում,
- ✓ քննարկվել և ներկայացվել են համակարգչային գույքի գնումների ցուցակները,
- ✓ իրականացվել են անլար հասանելիություն ապահովող սարքերի սպասարկման աշխատանքներ, ավելացվել են նոր անլար հասանելիության սարքեր ԳՊՀ տարբեր մասնաշենքերում,
- ✓ հստակ և ժամանակին կազմակերպվել են համացանցի հասանելիության, ցանցի կառավարման, սպասարկման և մշտադիտարկման աշխատանքները,
- ✓ կատարվել են համակարգչային լսարանների արդիականացման աշխատանքներ,
- ✓ առցանց ուսուցման պայմաններում մշտապես վերահսկվել է վիրտուալ լսարաններում անխափան աշխատանքը:

ԳՊՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԳՊՀ պաշտոնական կայքի կատարելագործում, անգլերեն և ռուսերեն տարբերակների համալրում:
2. «ԳՊՀ էլեկտրոնային գրադարան» համակարգի կատարելագործում և ինֆորմացիոն ու աղբյուրագիտական համալրման շարունակական աշխատանքներ:
3. Գիտական հոդվածների ժողովածուների կայքի վերաթողարկում նոր ծրագրային միջավայրով:
4. Ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգերի ուսումնասիրություն և ներդնում ԳՊՀ-ում:
5. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «Learn.GSU.am» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացի պարբերաբար իրականացում (ուսումնական պլանների հիման վրա թարմացումների, փոփոխությունների կազմակերպում):
6. Համակարգչային լսարանների միասնական ղեկավարման համակարգի ներդնում և գործարկում:
7. Ակադեմիական քաղաքականության բաժնի համար ծրագրային համակարգի ստեղծում acb.gsu.am հասանելիության հասցեով:

8. Համալսարանում համացանցի կապի տրամադրման, համակարգչային ցանցի, բաժանորդային համակարգիչների ծրագրային և տեխնիկական սպասարկման, վերահսկման աշխատանքների իրականացում:
9. Անլար հասանելիության կետերի ավելացում և սպասարկում:
10. Նորացվող համակարգչային գույքի տեղադրման, համակարգչային լսարանների գույքի վերաբաշխման աշխատանքների իրականացում:
11. ԳՊՀ լոկալ ցանցի արդիականացում ժամանակակից սարքավորումներով և ստեղծված վիրտուալ ցանցի զարգացում:
12. «Linux Ubuntu» օպերացիոն համակարգի կիրառմանն ուղղված վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ինչպես նաև ներդնում որոշ համակարգիչների վրա:
13. Առցանց և անցանց՝ զուգակցված ուսումնական գործընթացի որակյալ տեխնիկական ապահովում, ծրագրային սպասարկում:
14. «ԳՊՀ էլեկտրոնային տեղեկագիր և էլեկտրոնային մատյան» համակարգերի նախագում և կիրառում:
15. SS բաժնի գործառույթների արդյունավետ իրականացում, առաջացող տարաբնույթ խնդիրների օպերատիվ լուծում:
15. ԻՆֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի հետ համատեղ աշխատակիցների, ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և արտաքին շահակիցերի համար վերապատրաստումների իրականացում:

Մարգար Հովհաննիսյան՝
ԳՊՀ տեղեկատվական
տեխնոլոգիաների բաժնի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան 1. ահա այս հասցեում է գործում մարզի միակ պետական բուհը, որն իր 30-ամյա գործունեության ընթացքում լավագույնս է կատարել իր առջև դրված պարտավորությունները և շարունակում է իր առաքելությունը՝ ապահովելով որակյալ բարձրագույն կրթություն: ԳՊՀ-ում ուսանում են ոչ միայն մարզի, այլև մայրաքաղաքի և այլ տարածաշրջանների դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտներ: Նրանց կրթական, հետազոտական գործունեությունը կազմակերպման գործում իր ներդրումն ունի նաև ԳՊՀ գրադարանը, որը միաժամանակ գործում է երկու մասնաշենքերում:

Կենտրոնական մասնաշենքում գտնվող թիվ 1 գրադարանը հագեցած է հումանիտար ու տնտեսագիտական ուղղվածությամբ մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, իսկ բնագիտական ֆակուլտետի մասնաշենքում տեղակայված թիվ 2 գրադարանը համալրված է բնագիտության ոլորտի մասնագիտական գրականությամբ:

ԳՊՀ գրադարանների ծառայություններից օգտվում են ինչպես ուսանողները, դասախոսներն ու վարչական անձնակազմը, այնպես էլ մարզի ընթերցասեր հասարակության ներկայացուցիչներ: Գրադարանում սպասարկումը և այլ աշխատանքներն իրականացվում են և՛ ավանդական և՛ նորարարական մեթոդներով: Գրադարանը նպաստում է ուսումնական գործընթացին՝ համալրելով գրքաֆոնդը, կազմակերպելով և ընթերցողներին տրամադրելով մասնագիտական ու գեղարվեստական գրականություն, շտեմարաններ՝ սովորողների մոտ ձևավորելով ու զարգացնելով ընթերցանության մշակույթ, տեղեկատվության հետ ինքնուրույն աշխատելու կարողություններ և հմտություններ:

2022-2023 ուստարում ԳՊՀ գրադարանը շարունակել է կատարել իր գործառույթներն ու պարտականությունները՝ ապահովելով սովորողներին և այլ ընթերցողներին անհրաժեշտ գրքերով, մասնագիտական գրականությամբ, տեղեկատվական տարբեր աղբյուրներով:

Գրադարանը մատուցում է հետևյալ ծառայությունները.

1. առաջին կուրսեցիների գրանցում որպես գրադարանի ընթերցողների, որպեսզի նրանք հնարավորության ստանան ուսումնառության տարիներին օգտվելու գրադարանից,
2. ընթերցասրահում և գրադարանում ընթերցողների սպասարկում՝ ավանդական և էլեկտրոնային եղանակներով,
3. տեղեկատվական-մատենագիտական սպասարկում, անհատական և խմբային աշխատանքների տարբեր ձևերի և մեթոդների կիրառում,
4. գրականության մատենագիտական ցանկերի կազմում և հանրայնացում, գրքերի ցուցահանդեսների, միջոցառումների, գրքերի քննարկումների կազմակերպում, գրապահոցի «Բաց դռների» օրերի անցկացում,
5. տեղեկատվություն որոնելու, ընտրելու, ԳՊՀ էլեկտրոնային գրադարանից (e.Librery.gsu.am) օգտվելու, նորություններին իրազեկ դառնալու գործընթացներում ընթերցողներին անմիջական օգնության ցուցաբերում,

6. մասնագիտական և գեղարվեստական գրականության ընտրության հարցում աջակցություն և խորհրդատվություն,
7. սովորողների շրջանում տեղեկատվության հետ ինքնուրույն աշխատելու կարողությունների ու հմտությունների ձևավորում,
8. ընթերցանության նկատմամբ հետաքրքրության խթանում և ընթերցանության մշակույթի տարածում:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ գրադարանում աշխատանքներ են իրականացվել հետևյալ հիմնական ուղղություններով.

1. գրադարանային ֆոնդի համալրում և արդիականացում,
2. մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում,
3. համալրումների ցուցադրություն և դրանց մասին տեղեկատվության տարածում,
4. գրքապաշարի մշակում,
5. գրքերի շրջանառում,
6. վնասված գրքերի վերանորոգում,
7. մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների լրամշակում,
8. մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում,
9. ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասի համալրում,
10. ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի հարստացում՝ լուսապատճենելով պահանջարկ ունեցող մասնագիտական և գեղարվեստական գրքեր:

Գրադարանային ֆոնդի համալրում.

Հաշվետու ուսումնական տարում գրադարանը համալրվել է թվով 439 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, որոնք ձեռք են բերվել ԳՊՀ ռեկտորատի նախաձեռնությամբ, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների աջակցությամբ, անհատ անձանցից ու կազմակերպություններից: Իրենց ներդրումն են ունեցել Հրանուշ Հակոբյանը, Լուսինե Ղոեջյանը, Գառնիկ Թոռչյանը, Ֆելիքս Բախչինյանը և ուրիշներ: Գրքեր ենք ստացել նաև Գեղարքունիքի մարզային գրադարանից, Եվրախորհրդի գրասենյակից:

Մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում.

Համալրված 439 միավոր գրքերը մուտքագրվել, նկարագրվել և դասակարգվել են: Արդյունքում ավելացել են.

1. 28 դասագիրք, ուսումնական ձեռնարկ, սեղմագիր,
2. 48 գիտական հանդեսներ և հոդվածների ժողովածուներ,
3. 46 գեղարվեստական գրականություն,
4. 317 այլ ձեռնարկներ, նյութեր:

Արդյունքում՝ ԳՊՀ գրադարանն իր գրքային ֆոնդում այսօր ունի 42.855 գրադարանային միավոր, որից.

1. հայերեն՝ 21.390 գիրք,
2. ռուսերեն՝ 15.575 գիրք,
3. այլ լեզուներով՝ 5.890 գիրք:

Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների լրամշակում.

Կատարվել է 42.855 գրքերից կազմված գրքաֆոնդի մասնագիտական գրացուցակների լրամշակում: Արդյունքում ստացել ենք յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխանող գրքերի հետևյալ քանակը.

1. Հայոց լեզու և գրականություն՝ 3698,
2. Ռուսաց լեզու և գրականություն՝ 2510,
3. Անգլերեն լեզու և գրականություն՝ 2308,
4. Պատմություն՝ 1819,
5. Իրավագիտություն՝ 2073,
6. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա՝ 1430,
7. Կառավարում և ֆինանսներ՝ 2645,
8. Հաշվապահական հաշվառում՝ 2645,
9. Կենսաբանություն՝ 2546,
10. Դեղագործական քիմիա՝ 242,
11. Աշխարհագրություն՝ 959,
12. Բնապահպանություն և բնօգտագործում՝ 111,
13. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա՝ 2666,
14. Քարտեզագրություն և կադաստրային գործ՝ 63,
15. Սերվիս՝ 43:

Համալսարանը շարունակում է մասնագիտական գրականության համալրման աշխատանքները:

Մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում.

Մասնագիտական տեղեկատվական բազան ներառում է մասնագիտական հոդվածների մատենագիտական ցանկերը: Գրադարանում յուրաքանչյուր տարի համալրվում և լրամշակվում է թեմատիկ հանձնարարականների մատենագիտական ցանկը, որը ներառում է տարբեր հանդեսների, գիտական նյութերի ժողովածուներում ընդգրկված հոդվածների վերնագրեր (վերաբերում է 4005 հոդվածի), ինչպես նաև ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը՝ 12 մասնագիտական ուղղություններով (ընդգրկում է 1872 հոդվածի վերնագիր):

Այս ցանկերը գրադարանում առկա են թղթային և էլեկտրոնային տարբերակներով, ինչպես նաև տեղադրված են ԳՊՀ www.gsu.am պաշտոնական կայքի «Գրադարան» հատվածամասում և պարբերաբար լրացվում են:

Գրքերի շրջանառում և վնասված գրքերի վերանորոգում.

Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ շրջանառվել է ինչպես մասնագիտական, այնպես էլ գեղարվեստական գրականությունը, որոնց հանդեպ մեծ հետաքրքրություն կա ուսանողների շրջանում: Մեծ պահանջարկ է նկատվում ժամանակակից հայ և օտար գրողների գրքերի նկատմամբ: Գրքատացքին նպաստում են համալրումների մասին տեղեկատվության տարածումը ամբիոններում, ուսանողներին խորհրդատվությունների մատուցումը, ինչպես նաև նոր գրականության ցուցադրությունը գրադարանում և ընթերցասրահներում:

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում՝ սեպտեմբեր-հոկտեմբեր և փետրվար-մարտ ամիսներին կազմակերպվում են ԳՊՀ գրադարանի «բաց դռների» օրեր, որոնց ընթացքում ուսանողները, հատկապես առաջին կուրսեցիները, ծանոթանում են համապատասխան մասնագիտական գրքապաշարին:

ԳՊՀ գրքաֆոնդի ֆիզիկական պահպանման, վնասված գրքերի վերանորոգման ուղղությամբ կատարվում են հետևողական աշխատանքներ:

Շարունակական աշխատանքներ են տարվել գրքի հանձնումն ուշացնող, հեռացված կամ տարկետման մեջ գտնվող, բուհն ավարտող ուսանողների հետ՝ գրքի վերադարձման մասին զգուշացնելու, գրքային պարտքերի վերադարձն ապահովելու ուղղությամբ: Գրադարանում մեծ պատասխանատվությամբ են կատարվել նաև գրքեր պատվիրած և պահանջ ներկայացրած ընթերցողներին գրականության առկայության մասին տեղեկատվության ապահովման և պահանջագրերի հիման վրա նրանց բարեխիղճ սպասարկման գործառույթները:

Գրադարանային միջոցառումներ.

2022-2023 ուսումնական տարում գրադարանը կազմակերպել ու անցկացրել է միջոցառումներ, ինչպես նաև իր ներդրումն է ունեցել համալսարանում անցկացված միջոցառումներին: 2022թ. դեկտեմբերի 16-ին «Եղիշե Չարենց 125. Չարենցը սերունդների աչքերով» գրական-թատերական ներկայացումը կազմակերպվել էր գրադարանի, բանասիրական ֆակուլտետի դեկանատի և ուսանողական խորհրդի համատեղ աշխատանքի շնորհիվ: 2023թ. մարտի 30-ին թիվ 1 գրադարանի ընթերցասրահում անցկացվեց «Ստեղծագործում են ԳՊՀ-ականները» միջոցառումը՝ նվիրված համալսարանի հիմնադրման 30-ամյակին: Առկա ուսուցման բոլոր ֆակուլտետներն ունեին իրենց պատվիրակ ուսանողները, որոնք ներկայացրին իրենց նախասիրությունները, հանդես եկան գրական ստեղծագործություններով, ձեռքի աշխատանքներով՝ հետևյալ ուղղություններով. հեյլունագործություն, ասեղնագործություն, ուլունքագործություն, նկարչություն՝ ինչպես կտավի, այնպես էլ թղթի, կտորի ու փայտի վրա, ինչպես նաև հրուշակագործություն: Ուսանողները ստեղծագործությունների միջոցով ևս արտահայտեցին իրենց սերն ու ջերմությունը հարազատ կրթօջախի հանդեպ: Տեղի ունեցավ ուսուցողական հարցազրույց պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների միջև: Կազմակերպվել են նաև այլ գրական-երաժշտական ցերեկույթներ, ուսանողական տարբեր միջոցառումներ:

ԳՊՀ գրադարանի համագործակցությունը.

Գրադարանային առաջավոր փորձի ներդրման և կիրառման համար անհրաժեշտ նախապայման է փոխադարձ կապը այլ գրադարանների հետ:

ԳՊՀ գրադարանը Հայաստանի գրադարանային ասոցիացիայի անդամ է և, համագործակցելով Հայաստանի ազգային գրադարանի հետ, ներկայացնում է ամենամյա հաշվետվություն գրադարանի հագեցվածության մասին, որոնք հրատարակվում են Հայաստանի ազգային գրադարանի «Հայաստանի գրադարանները» մատենաշարում: ԳՊՀ գրադարանը համագործակցում է նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) հիմնարար գրադարանի, ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի, Մանուկ Աբեղյանի անվան գրականության և պատմության ինստիտուտների գրադարանների հետ:

ԳՊՀ հրատարակությունների օրինակներ են տրամադրվում Հայաստանի ազգային գրադարանին, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի, Գեղարքունիքի մարզի դպրոցների գրադարաններին, Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարաններին:

ԳՊՀ գրադարանի շարունակական համագործակցության արդյունքում Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարաններում տարեցտարի համալրվում է ԳՊՀ

հրատարակությունների ֆոնդը: Մարզային գրադարանի հետ համագործակցության շրջանակում անցկացվում է գրքերի ամենամյա փոխադարձ նվիրատվություն:

2023–2024 ուստարում ԳՊՀ գրադարանի զարգացման հիմնական ուղղություններն են.

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է ԳՊՀ գրադարանի գործունեության ակտիվացում՝ հետևյալ ուղղություններով.

1. ապահովել կրթական և գիտահետազոտական գործընթացները անհրաժեշտ գրականությամբ, տեղեկատվական աղբյուրներով,
2. շարունակել ԳՊՀ գրադարանի համագործակցությունը ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի, ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի, Մանուկ Աբեղյանի անվան գրականության, պատմության ինստիտուտների և այլ գրադարանների հետ:
3. ընթերցողների պահանջների բավարարման աստիճանը բարձրացնելու նպատակով շարունակել գրադարանային պաշարների թվայնացման գործընթացը՝ կիրառելով տեղեկատվական և հաղորդակցական արդի տեխնոլոգիաներ,
4. կատարել ԳՊՀ «e-library.gsu» էլեկտրոնային գրադարանի համալրում անհրաժեշտ գրականությամբ,
5. լուսապատճենել և էլեկտրոնային գրադարանում տեղադրել մեկ օրինակից մասնագիտական գրքերը, դասախոսների և ուսանողների կողմից ներկայացված հազվագյուտ գրքերը, ձեռնարկները և այլ անհրաժեշտ ուսումնական նյութեր,
6. ընթերցասրահում արդիականացնել համակարգչային սարքավորումները,
7. խթանել ընթերցանությունը ուսանողների շրջանում, տարածել ընթերցանության մշակույթ,
8. կազմակերպել «Ճանաչե՛նք ստեղծագործող համալսարանականներին» խորագրով միջոցառումների շարք,
9. աջակցել ԳՊՀ դասախոսներին՝ իրականացնելու գիտահետազոտական գործունեություն, ապահովելով անհրաժեշտ գիտական գրականությամբ:

Ալվարդ Թորչյան՝
ԳՊՀ գրադարանավարուհի

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Գավառի պետական համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը (այսուհետ՝ նաև ՄՌԿ)՝ որպես բուհի կառուցվածքային ստորաբաժանում, գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ԳՊՀ կանոնադրության, ԳՊՀ ՄՌԿ քաղաքականության հիմունքների, ԳՊՀ ՄՌԿ բաժնի կանոնակարգի և այլ գերատեսչական ու ներբուհական ակտերի հիման վրա:

ԳՊՀ ՄՌԿ բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ներկայացնում է նախորդ ուսումնական տարում կատարված աշխատանքների հաշվետվություն և ընթացիկ ուսումնական տարվա զարգացման ուղությունները՝ ըստ առաջնահերթ խնդիրների և նպատակների:

Հաշվետու՝ 2022-2023 ուսումնական տարում աշխատանքները կատարվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

1. վերանայվել և լրացվել են աշխատակիցների անձնական գործերը,
2. նախապատրաստվել են կադրային, վարչական, ժամանակավոր կցագրման, ուսանողական և այլ հրամանների նախագծեր,
3. կնքման են ներկայացվել աշխատանքային պայմանագրեր, համաձայնագրեր, վերանայվել և ուսումնասիրվել է ԳՊՀ աշխատակիցների շարժը (տե՛ս Աղյուսակ 1):
4. 2022-2023 ուսումնական տարում ուսման վարձի զեղչ է տրամադրվել թվով 51 ուսանողի:
5. իրականացվել են ուսանողների ընդունման, վերականգման, ազատման, տեղափոխման, տարկետման, հեռացման ձևակերպումներ և ՄՌԿ բաժնին վերաբերող այլ գործառույթներ,
6. Գավառի պետական համալսարանը հանդիսանում է Գավառի (Կամոյի) ինդուստրիալ մանկավարժական քոլեջի և թիվ 70 պրոֆտեխուսումնարանի իրավահաջորդը: Քոլեջի և ուսումնարանի արխիվային փաստաթղթերը գտնվում են համալսարանի արխիվում: Ուստի, ԳՊՀ-ն ՄՌԿ-ն սահմանված կարգով նախապատրաստել է վերոհիշյալ ուսումնական հաստատությունների աշխատողների և ուսանողների վերաբերյալ տեղեկանքներ (տե՛ս Աղյուսակ 2):

2022-2023 ուսումնական տարում գրանցվել է ԳՊՀ աշխատակիցների հետևյալ շարժը

Աղյուսակ 1

Հ/Հ	*ԳՊՀ աշխատակիցներ*	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
	➢ **Ընդունվել են աշխատանքի**		
1.	**Դասախոսներ**	**77**	**82**
2.	**Այլ աշխատողներ**	**3**	**6**
3.	**Ընդամենը**	**80**	**88**
	➢ **Ազատվել են աշխատանքից**		
4.	**Դասախոսներ**	**70**	**81**
5.	**Այլ աշխատողներ**	**6**	**11**

6.	**Ընդամենը**	**76**	**92**
	➢ **Գործուղում ԵՄ Ծրագրերով**		
7.	**Դասախոսներ**	**6**	**3**
8.	**Այլ աշխատողներ**	**5**	**15**
9.	**Ընդամենը**	**11**	**18**
	➢ **Գործուղում ՀՀ տարածքում**		
10.	**Աշխատող**	**9**	**11**
11.	**Ուսանող**	**-**	**45**
12.	**Ընդամենը**	**9**	**56**
	➢ **Պարգևատրումներ**		
13.	**Աշխատող**	**14**	**18**
	➢ **Նկատողություններ**		
	Աշխատող	**1**	**2**
	➢ **Երեխայի խնամքի արձակուրդ**	**3**	**5**
	➢ **Հղիության և ծննդաբերության արձակուրդ**	**1**	**1**

Հաշվետվություն Գավառի (Կամոյի) ինդուստրիալ մանկավարժական քոլեջի և թիվ 70 պրոֆտեխուսումնարանի աշխատակիցների և շրջանավարտների վերաբերյալ պատրաստված և տրամադրված տեղեկանքների վերաբերյալ

Աղյուսակ 2

Հ/Հ	**Տեղեկանքներ և պատասխան գրություններ**	**Հայերեն**	**Ռուսերեն**
1.	պատասխան գրություններ Գավառի (Կամոյի) ինդուստրիալ մանկավարժական քոլեջի աշխատողների և ուսանողների վերաբերյալ	31	7
2.	պատասխան գրություններ թիվ 70 պրոֆտեխուսումնարան աշխատողների և ուսանողների վերաբերյալ	7	3
3.	Տեղեկանքներ Գավառի (Կամոյի) ինդուստրիալ մանկավարժական քոլեջ աշխատողների և ուսանողների վերաբերյալ	6	5
4.	Տեղեկանքներ թիվ 70 պրոֆտեխուսումնարան աշխատողների և ուսանողների վերաբերյալ	1	3
4.	Ընդամենը	45	18

2023-2024 ուսումնական տարվա համար ԳՊՀ ՄՌԿ բաժինն առաջնային է համարում գործունեության հետևյալ ուղղությունները.

1. ԳՊՀ ՄՌԿ քաղաքականության արդյունավետության բարձրացում,
2. ԳՊՀ աշխատակիցների անձնական գործերի էլեկտրոնային հաշվառում և վարում,
3. ուսանողների իրավական կարգավիճակի փոփոխությունների օպերատիվ արձանագրում,
4. ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կադրային ապահովվածության գնահատում և կադրային կարիքների բացահայտում, ՄՌԿ գործընթացների մշտադիտարկում,
5. ԳՊՀ արական սեռի դիմորդների և ուսանողների զինծառայության հետ կապված հարաբերությունների համակարգում,
6. ԳՊՀ տարբեր տարակարգերի աշխատակիցների պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի վերանայում,
7. դասախոսների վարկանիշային գնահատման արդյունքներով պայմանավորված՝ տարակարգերի համակարգի մշակում և աստիճանաբար գործարկում,
8. աշխատանքային պայմանագրերի կնքման գործընթացի շարունակական իրականացում և ԳՊՀ աշխատակիցների կողմից աշխատանքային պայմանագրերի պայմանների կատարման վերահսկում,
9. ԳՊՀ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման, արձակուրդի տրամադրման, գործուղման, կարգավիճակի փոփոխության և աշխատանքային բնույթի այլ հրամանների նախագծերի նախապատրաստում,
10. ԳՊՀ հրամանագրքերի, ԳՊՀ աշխատողների անձնական գործերի կազմման, վարման և պահպանության գործընթացների բարելավում,
11. ՄՌԿ բաժնի փաստաթղթաշրջանառության բարելավում:

ԳՊՀ ՄՌԿ ԲԱԺՆԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

h/h	***Նպատակը***	***Գործողությունները***	***Ժամկետը***	***Պատասխանատու սպորաբա ժանումները /պատասխանա տուները/***	***Հնարավոր խոչընդոտները***	***Արդյունավետո ւթյան ակնկալվող գնահատման ցուցչիները***
1.	ԳՊՀ ՄՌԿ քաղաքակա նության արդյունավետ իրականա ցում:	Աշխատակիցների հետ նպատակային աշխատանք, նրանց ներգրավում մասնագիտական վերապատրաստման և զարգացման ծրագրերում, աշխատակիցների կարողությունների արդյունավետ օգտագործում ու	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին:	Պատասխանա տու աշխատակցի կողմից պարտականու թյունների կատարման մեջ թերացում:	Ներքին շահակիցների բավարարվածու թյան աճ:

		զարգացում՝ ելնելով Համալսարանի առաքելությունից, զարգացման ռազմավարական ծրագրից, գերակա նպատակներից ու խնդիրներից: Համալսարանի կողմից մարդկային ռեսուրսների կառավարումն իրականացնելիս՝ բոլոր շահակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանություն: Ծառայողական առաջխաղացման պլանավորում: Փոխհատուցման և պարգևատրման կառուցակարգերի շարունակական կիրառում և դրանց բարելավում:				
2.	Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի բարելավում:	ԳՊՀ աշխատակից ների անձնական գործերի էլեկտրոնային հաշվառում և վարում:	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին:	Էլեկտրոնային համակարգի խափանում ներ	Ներքին շահակիցների բավարարվածության աճ:
3.	Ուսանողների իրավական կարգավիճակի փոփոխությունների օպերատիվ հաշվառում:	Ձեկուցագրերի հավաքագրում, ուսանողական հրամանների նախագծերի կազմում, կարգավիճակի փոփոխությունների պատշաճ արձանագրում:	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին, ԳՊՀ դեկանատներ:	Ֆորս-մաժորային իրավիճակներ	Ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աճ:

4.	ՄՌԿ գործընթացների մշտադիտարկում:	Իրականացնել ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կադրային ապահովվածության գնահատում և կադրային կարիքների բացահայտում:	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Կարիքի ոչ ժամանակին բացահայտում և ոչ ճիշտ գնահատում:	Համալսարանի աշխատակիցների գործունեության արդյունավետության աճ:
5.	ԳՊՀ արական սեռի դիմորդների և ուսանողների զինծառայության հետ կապված հարաբերությունների համակարգում:	Ձև 26 տեղեկանքների ժամանակին ներկայացում զինկոմիսարիատ, ԳՊՀ արխիվում պահպանվող համապատասխան փաստաթղթերի հաշվառում, դասակարգում, գրանցամատյանների կազմում:	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին, ԳՊՀ արխիվի աշխատակից:	Պատասխանատու աշխատակցի կողմից պարտականությունների կատարման մեջ թերացում:	Ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աճ:
6.	ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ ՄՌԿ բաժնի աշխատանքի արդյունավետության բարձրացում:	Տվյալների հավաքագրում և թվայնացում:	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Գործառույթների ոչ պատշաճ իրականացում	Հստակ և օպերատիվ փաստաթղթաշրջանառության ապահովում:
7.	Գործառույթների հստակ սահմանում, համաչափ բաշխում	ԳՊՀ բոլոր տարակարգերի աշխատակիցների պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի բարելավում:	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Պատասխանատու աշխատակցի պարտականությունների և գործառույթների ոչ հստակ սահմանում:	Պարտականությունների հստակ կատարում:
8.	Դասախոսների աշխատանքի արդյունավետության բարձրացում	Դասախոսների վարկանիշային գնահատման արդյունքներով պայմանավորված տարակարգերի համակարգի մշակում և աստիճանաբար գործարկում:	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Վարկանիշավորման չափանիշների ոչ հստակ սահմանում	Դասախոսների խրախուսման նոր կառուցակարգի ներդնում, դասախոսների շահադրդման (մոտիվացիայի) աճ

9.	Աշխատանքային պայմանագրերի կատարման գործընթացի բարելավում:	ԳՊՀ աշխատակիցների կողմից աշխատանքային պայմանագրերի պայմանների կատարման վերահսկում:	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Պայմանագրերի պայմանների ոչ լիարժեք և ոչ ժամանակին կատարում:	Պայմանագրային պարտականությունների հստակ կատարում:
10.	ԳՊՀ աշխատակիցների կարգավիճակների հստակեցում:	ԳՊՀ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման, արձակուրդի տրամադրման, գործուղման, կարգավիճակի փոփոխության և այլ աշխատանքային բնույթի հրամանների նախագծերի նախապատրաստում:	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Հրամանների նախագծերում կարգավիճակի և դրա փոփոխությունների ոչ հստակ և ոչ լիարժեք ամրագրում:	ԳՊՀ աշխատակիցների կարգավիճակների փոփոխություններ համարժեք արձանագրում:
11.	Էլեկտրոնային ՄՌԿ համակարգի ներդրում	ԳՊՀ հրամանագրքերի, ԳՊՀ աշխատողների անձնական գործերի կազմման, վարման և պահպանության գործընթացների բարելավում:	2023-2024 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	ԳՊՀ հրամանագրքերի, ԳՊՀ աշխատողների անձնական գործերի կազմման, վարման և պահպանության գործընթացներում թերություններ և բացթողումներ:	ԳՊՀ հրամանագրքերի, ԳՊՀ աշխատողների անձնական գործերի կազմման, վարման և պահպանության գործընթացների հստակ իրականացում:

Խաչատուր Սաֆարյան՝
ԳՊՀ մարդկային ռեսուրսների
կառավարման բաժնի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐԽԻՎԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ արխիվը շարունակել է աշխատանքները՝ ապահովելով բուհի ողջ արխիվային գործի վարումը, արխիվային փաստաթղթաշրջանառության իրականացումը:

Արխիվը՝ որպես Գավառի պետական համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում, 2022-2023 ուսումնական տարում իր գործունեությունն իրականացրել է «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության համապատասխան որոշումների, օրենսդրական և ենթաօրենսդրական այլ ակտերի դրույթներին համապատասխան, ինչպես նաև Համալսարանի կանոնադրության հիման վրա:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ արխիվի հետ կապված որևէ դիմում կամ հարցադրում անպատասխան չի մնացել, համակարգվել է արխիվի ընթացիկ գործունեությունը, ապահովվել են արխիվի գործավարության և արխիվային գործի վարումը, սահմանված կարգով կազմակերպվել են արխիվ հանձնվող փաստաթղթերի գրանցումը, հաշվառումը, արխիվացումը և արխիվ մուտքագրված փաստաթղթերի պահպանությունը, ինչպես նաև արխիվային փաստաթղթերի ու դրանց պատճենների տրամադրումը:

2023-2024 ուսումնական տարում առաջնային են ԳՊՀ արխիվի գործունեության հետևյալ ուղղությունները.

1. ԳՊՀ արխիվում պահպանվող փաստաթղթերի հաշվառում, օգտագործման, համալրման կազմակերպում, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից արխիվ հանձնված փաստաթղթերի ընդունում,
2. համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից համապատասխան փաստաթղթերը ժամանակին արխիվ հանձնելու գործընթացի հսկողություն,
3. արխիվում փաստաթղթերի պահպանման և տրամադրման համակարգի բարելավում,
4. Հայաստանի Հանրապետության և արտերկրի տարբեր կազմակերպություններից ստացվող հարցումներին սահմանված կարգով պատասխանների տրամադրում,
5. ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների դիմումների հիման վրա համապատասխան տեղեկանքների կազմում, դրանց հիմքերի ճշգրտում և ժամանակին տրամադրում կամ առաքում,
6. սահմանված կարգով փաստաթղթերի մարման գործընթացի կազմակերպում,
7. արխիվում պահպանվող փաստաթղթերի էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում:

ԳՊՀ ԱՐԽԻՎԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

հ/հ	*Նպատակը*	*Գործողությունները*	*Ժամկե-տը*	*Պատասխանատու ստորաբաժանումները /պատասխանատուները/*	*Հնարավոր խոչընդոտները*	*Արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցչիները*

12.	Արխիվում պահպանվող փաստաթղթերի հաշվառում, օգտագործման, համալրման կազմակերպում, համալսարանի կառուցվածքային ստորաբաժա-նումներից արխիվ հանձնված փաստաթղթերի ընդունում, համապատաս-խան հիմքերի առկայության դեպքում՝ տրամադրում կամ առաքում:	1.Արխիվում պահվող փաստաթղթերի գրանցամատյանների վարում, ուսանողների շարժին հետևում: 2.Շրջանավարտների անձնական գործերի ստուգում, ամբողջականացում: 3.Ուսումնական տարվա ավարտից հետո մատյանների, շրջանավարտների ուսանողական տոմսերի, ստուգման գրքույկների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ցուցակների կազմում, հանձնընդունելության գործընթացի կազմակերպում: 4. ԳՊՀ առկա, հեռակա, մագիստրատուրայի ընդունելության ավարտից հետո ուսանողների անձնական գործերում համապատասխան փաստաթղթերի առկայության ստուգում, հանձնընդունելության գործընթացի կազմակերպում: 5.Ուսանողներին վերաբերող հրամաններից քաղվածքների պահպանում նրանց անձնական գործերում (ընդունում, վարչական տույժ, տարկետում, վերականգնում, հեռացում, ազատում և այլն):	2023-2024 ուստա- րի	ԳՊՀ արխիվի վարիչ, ամբիոնի լաբորանտներ, առկա, հեռակա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության պատասխանատու քարտուղար, ընդունող հանձնաժողովի անդամներ, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի աշխատակից:	Պատասխա-նատու ստորաբաժան-ման աշխատակցի կողմից պարտակա-նությունների կատարման թերացում:	Արտաքին և ներքին շահակիցների բավարարված ության աճ:
13.	Սահմանված կարգով փաստաթղթերի ընդունում, ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանում ներից համապատաս-	Ըստ ժամանակացույցի աշխատանքի պլանավորում համապատասխան ստորաբաժանում ների աշխատակիցների՝ լաբորանտների, պատասխանատու քարտուղարի,	2023-2024 ուստա- րի	ԳՊՀ արխիվի վարիչ, ամբիոնի լաբորանտներ, առկա, հեռակա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության պատասխանատու քարտուղարի,	Պատասխանա տու ստորաբաժան ման աշխատակցի կողմից պարտականու թյունների թերի կատարում:	Արտաքին և ներքին շահակիցների բավարարված ության աճ:

	խան փաստաթղթերը ժամանակին արխիվ հանձնելու նկատմամբ հսկողության հետևողական իրականացում:	հանձնաժողովի անդամների հետ: Հանձնընդունելութ յան գործընթացի կազմակերպում:		ընդունող հանձնաժողովի անդամներ, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի աշխատակից:		
14.	Արխիվում գտնվող փաստաթղթերի պահպանման համակարգի բարելավում:	Արխիվում պահպանվող փաստաթղթերի էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծում:	2023-2024 ուստա- րի	Արխիվի վարիչ, SS բաժնի աշխատակիցներ:	Էլեկտրոնային գրանցամատ յանի ծրագրային և տեխնիկական մշակման աշխատանքն երի դանդաղում կամ ոչ պատշաճ կատարում	Արխիվային փաստաթղթե րի գրանցման և վարման էլեկտրոնային համակարգի ներդրում
15.	Հանրապետութ-յան և արտերկրի տարբեր կազմակերպութ-յուններից ստացվող հարցումներին պատասխանների սահմանված կարգով և ժամկետներում տրամադրում: Քաղաքացիների դիմումների հիման վրա տեղեկանքների կազմում և դրանց հիմքերի ճշգրտում:	Արխիվում պահպանվող համապատասխան փաստաթղթերի հաշվառում, դասակարգում, գրանցամատյանների կազմում:	2023-2024 ուստա-րի	Արխիվի վարիչ	Արխիվում համապատաս խան փաստաթղթերի կամ տվյալների բացակայութ յուն	ԳՊՀ-ի սոցիալական պատասխան ատվութ յան բարձրացում, համալսարան ի նկատմամբ հանրային վստահության աճ:
16.	Սահմանված կարգով փաստաթղթերի մարման գործընթացի կազմակերպում:	Հիմք ընդունելով ԳՊՀ արխիվի կանոնակարգը և ՀՀ «Արխիվային գործի մասին» օրենքը՝ արխիվում պահվող և վաղեմության ժամկետն անցած փաստաթղթերի մարում:	2023-2024 ուստա-րի	ԳՊՀ արխիվի վարիչ, ամբիոնի լաբորանտներ:	Ժամկետների բացթողում, փաստաթղթերի անհարկի կուտակում արխիվում	ԳՊՀ արխիվի գործառույթնե րի արդյունավետ իրականացում , ժամկետանց փաստաթղթե րի փոխարեն նոր փաստաթղթե րի մուտքագրում:

Գոհար Կարապետյան՝
ԳՊՀ արխիվի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը կանոնադրական խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով շարունակում է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության միջոցառումները համալսարանի աշխատողների, ինչպես նաև ուսանողների համար:

2023թ. օգոստոսի 31-ին արհեստակցական կազմակերպության և համալսարանի ռեկտորի միջև վերակնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիրը՝ համալսարանի աշխատակիցների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները պատշաճ կերպով ներկայացնելու և պաշտպանելու, աշխատավայրում տեխնիկական անվտանգության կանոնները ապահովելու, աշխատակիցների կողմից համալսարանի ներքին կարգապահական կանոնները պահպանելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհկոմիտեն ուշադրություն է դարձրել աշխատակիցների և ուսանողների սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով արհկոմիտեն իր միջոցներից որպես նյութական օգնություն աշխատակիցներին հատկացրել է 1 միլիոն 35 հազար դրամ:

2022 թվականի դեկտեմբերի 30-ին համալսարանի աշխատակիցների համար կազմակերպվել է ամանորյա միջոցառում:

2023թ. գարնանը կազմակերպվել է սեղանի թենիսի ներհամալսարանական առաջնություն:

Աշխատանքներ են կատարվել ուսանողների համար հայրենաճանաչողական միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Հաշվետու ուսումնական տարում իրականացվել է աշխատանքային պայմանների բարելավում ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում:

Արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական գործառույթներին համապատասխան 2023-2024 ուսումնական տարում ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցների և ուսանողների համար սոցիալական ծրագրերի իրականացմանը, ըստ անհրաժեշտության՝ աջակցության ցուցաբերմանը, իր կանոնադրական խնդիրների և գործառույթների պատշաճ իրականացմանը:

ԳՊՀ արհեստակցական կազմակերպության 2023-2024 ուստարվա գործունեության հիմնական ուղղություններն են.

1. նպաստել կազմակերպության անդամների աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական շահերի և իրավունքների պատշաճ իրականացմանը,
2. աշխատակիցներին տրամադրել սոցիալական օգնություն և ներկայացնել առաջարկներ կազմակերպության անդամների խրախուսման վերաբերյալ,
3. մշակել և իրականացնել ծրագրեր ուղղված արհմիության անդամների՝ ԳՊՀ դասախոսների և այլ տարակարգերի աշխատակիցների, ինչպես նաև ուսանողների հանգստի, հայրենաճանաչողական էքսկուրսիաների, մարզական միջոցառումների և մրցույթների կազմակերպմանը,

4. գործատուին ներկայացնել առաջարկություններ աշխատողների աշխատանքի և հանգստի պայմանների բարելավման, աշխատանքի անվտանգության տեխնիկայի նորմերի պահպանման, արհեստակցական կազմակերպության անդամներին աջակցության վերաբերյալ:

Լյովա Սիրունյան՝
ԳՊՀ արհեսպրակցական
կազմակերպության նախագահ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի (ՈՒԽ) 2022-2023 ուսումնական տարվա գործունեությունը ներկայացնում ենք՝ նախ նշելով իրականացված համահամալսարանական ծրագրերը, ապա ներկայացնելով միջոցառումներն ու զանազան ձեռնարկները՝ ըստ ֆակուլտետների.

ՀԱՄԱՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.

Գավառի պետական համալսարանում կայացավ «Ստեղծագործում են ԳՊՀ ուսանողները» խորագրով ցուցահանդես, որը կազմակերպել էր գրադարանվարուհի Ալվարդ Թոռչյանը, որին մասնակցում էին բոլոր ֆակուլտետների շնորհալի ուսանողները:

Գավառի պետական համալսարանի ուսանողները Վանաձորում մասնակցեցին «Ուսանողական գարուն» փառատոնին: ԳՊՀ «Գեղամա» թիմը ներկայացրեց Գեղարքունյաց աշխարհի ավանդական հարսանեկան ծիսակարգը՝ Բայազետի բարբառով: Արդյունքում «Թատերարվեստ» բաժնում գրավեցինք 2-րդ պատվավոր հորիզոնականը, իսկ «Ասմունք» բաժնում՝ 1-ին, 2-րդ և 3-րդ հորիզոնականները:

2023թ թվականի մայիսի 30-ին ՈՒԽ-ի նախաձեռնությամբ և Գավառի պետական համալսարանի աջակցությամբ կազմակերպվեց համահամալսարանական ճանաչողական բնույթի էքսկուրսիա, ուսանողները այցելեցին Հայաստանի Հանրապետության պատմության թանգարան, Եղիշե Չարենցի տուն-թանգարան և այլ պատմամշակութային վայրեր:

2023 թվականի փետրվարի 27-ից ապրիլի 17-ը Գավառի պետական համալսարանում Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվեց «Ժողովրդավար ուսանող» ծրագիրը: Իրականացվել են նաև այլ ծրագրեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ.

2022 թվականի նոյեմբերի 17-ը՝ ուսանողների միջազգային օրը, ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողները տոնական օրը ներկայացան ‹‹Բարև, մե՛նք ենք›› խորագիրը կրող գեղեցիկ և հուզիչ միջոցառմամբ:

2022 թվականի դեկտեմբերի 9-ին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ՈՒԽ-ի նախաձեռնությամբ բուհը հյուրընկալեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակի թիվ 1 միջնակարգ դպրոցի 10, 11, 12-րդ դասարանների աշակերտներին՝ գերմաներենի ուսուցչուհի, ԳՊՀ շրջանավարտ Ալինա Խաչատրյանի ուղեկցությամբ: Հյուրերը ներկա գտնվեցին նաև բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի կողմից կազմակերպված «Քյոլնի լեգենդները» թեմայով բաց դաս-քննարկմանը:

2022 թվականի դեկտեմբերի 19-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի, բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ալինա Ղարիբյանի և գրադարանավարուհի Ալվարդ Թորչյանի նախաձեռնությամբ բանասիրական ֆակուլտետում տեղի ունեցավ հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցին նվիրված

ցերեկույթ, որի նպատակն էր արժևորել հայ մեծ բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունները և դրանք ներկայացնել սերունդների աչքերով ու ընկալմամբ:

2023 թվականի փետրվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Լևոն Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի դահլիճում կայացավ հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրվան նվիրված միջոցառում, որը կրում էր «Գիրն ու գիրքը մեր» խորագիրը: Միջոցառմանը ներկա էին նաև Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողները:

2023 թվականի փետրվարի 21-ին ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ կայացավ Մայրենիի օրվան նվիրված առցանց միջոցառում, որին իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան նաև Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողները:

2023 թվականի մարտի 30-ին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում կայացավ գրական-երաժշտական ցերեկույթ, որը կրում էր «Կանաչ արև» խորագիրը: Այն կազմակերպել էր հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ալլա Բագոյանը և հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողները:

2023 թվականի ապրիլի 21-ին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ՈՒԽ-ի նախաձեռնությամբ կայացավ «Ձոն մայրերին» խորագիրը կրող ցերեկույթ:

2023 թվականի մայիսի 20-ին Գավառի պետական համալսարանի հիմնադրման 30-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում բանասիրական ֆակուլտետում տեղի ունեցավ «Հրանտ Խաչատուրի Հակոբյանի՝ «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գիրքը՝ ԳՊՀ ծննդյան վկայական» խորագրով ցերեկույթ:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ.

2022 թվականի սեպտեմբերին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ չոր սնունդ և առաջին անհրաժեշտության պարագաներ ուղարկվեցին հայոց բանակի զինվորներին:

2022 թվականի հոկտեմբերի 8-ին բնագիտական ֆակուլտետում կայացավ «Բարև, մե՛նք ենք» խորագիրը կրող միջոցառում, որի ընթացքում ներկայացան ֆակուլտետի առաջին կուրսերի ուսանողները:

2022 թվականի հոկտեմբերի 21-ին 1-ին կուրսեցիների համար ֆակուլտետում կազմակերպվեց կինոդիտում:

2022 թվականի դեկտեմբերի 2-ին կայացավ «Աշխարհագրական մեծ հայտնագործություններ» խորագրով միջոցառումը, որը կազմակերպվել էր դասախոս Լալա Մկրտչյանի և ԲՖ ՈՒԽ կողմից: Ներկա էին նաև աշակերտներ:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ.

2022 թվականի հոկտեմբերի 20-ին տեղի ունեցավ«Բարև, մե՛նք ենք» խորագիրը կրող միջոցառում, որի ընթացքում ներկայացան հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի առաջին կուրսեցիները:

2022 թվականի դեկտեմբերի 10-ին հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կայացավ «Մարդը բարձրագույն արժեք է» խորագիրը կրող միջոցառումը՝ նվիրված մարդու իրավունքների միջազգային օրվան:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ.

2022 թվականի նոյեմբերի 12-ին ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ՈՒԽ-ի աջակցությամբ կայացավ «Բարև, մե՛նք ենք» խորագիրը կրող միջոցառումը, որին մասնակցում էին տնտեսագիտական ֆակուլտետի առաջին կուրսեցիները:

2022 թվականի դեկտեմբերի 12-ին տնտեսագիտական ֆակուլտետում կայացավ ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ տնտեսագիտական ֆակուլտետի տարբեր կուրսերի ուսանողների մասնակցությամբ: խաղի ընթացքում հնչեցին տրամաբանական, հետաքրքրաշարժ հարցեր տարբեր ոլորտներից:

2023 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում տնտեսագիտական ֆակուլտետում կազմակերպվեցին ժամանցային խաղեր տարբեր բաժինների 3-րդ կուրսերի ուսանողների մասնակցությամբ: Խաղերի նպատակն էր զարգացնել ուսանողների արագ կողմնորոշվելու, առաջադրված խնդիրներին արդյունավետ լուծումներ գտնելու կարողությունները:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի 2023-2024 ուստարվա գործունեության ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով ուսանողների վերաբերյալ ԳՊՀ 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի դրույթները:

Մեր գործունեության մեջ առաջնորդվում ենք հետևյալ նպատակներով՝ ապահովել կրթական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, հասարակական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը, նրանց մասնագիտական, անձնային կարողությունների զարգացումը, ուստի Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը մշակել է գործունեության հետևյալ ուղղությունները.

1. Ուսանողների սոցիալ-մշակութային, մտավոր, ստեղծագործական կարողությունների, նրանց մեջ հայրենասիրական, բարոյական արժեքների զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացում:

2. Ուսանողական առօրյան հետաքրքիր ու բազմաբովանդակ դարձնելու նպատակով ներֆակուլտետային և համահամալսարանական միջոցառումների կազմակերպում:

3. Դպրոցներ-բուհ կապի ամրապնդման և ավարտական դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման նպատակով մարզի դպրոցներ ճանաչողական այցերի կազմակերպում՝ կազմում ընդգրկելով Գավառի պետական համալսարանի լավագույն ուսանողների, և արտասահմանում սովորած ուսանողների:

4. Միջբուհական սեմինար-քննարկումների, միջոցառումների կազմակերպում:

5. Հայաստանի Հանրապետության գիտահետազոտական և մշակութային կենտրոններ ճանաչողական այցերի կազմակերպում:

6. Ինտելեկտուալ, գրական և գեղարվեստական ցերեկույթների կազմակերպում:

7. Հանրապետության տարբեր կրթական հաստատություններում կազմակերպվող ուսանողական գիտաժողովներին և սեմինարներին ԳՊՀ ուսանողների ակտիվ մասնակցության ապահովում՝ ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ:

8. Ուշադրության կենտրոնում պահել ուսանողների հոգևոր-մշակութային, իրավական, գեղագիտական դաստիարակության, ուսանողների շրջանում ակադեմիական ազնվության և բարեվարքության սկզբունքների և նորմերի պահպանմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

9. Արցախից բռնի տեղահանված և ԳՊՀ ընդունված ուսանողներին կրթական գործընթացում աջակցության ցուցաբերում, նրանց ինտեգրում համալսարանական և համայնքային կյանքին:

10. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, Գավառի համայնքապետարանի, Գավառի երիտասարդական կենտրոնի, կրթամշակութային տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացում:

Անահիտ Պողոսյան՝
ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ նաև ՈՒԳԸ) հաշվետու ժամանակահատվածում ծավալել է որոշակի գործունեություն՝ իր հետևյալ գործառույթներից բխող.

- ուսանողների գիտահետազոտական գործունեության խրախուսում և խթանում,
- ուսանողական գիտաժողովների, սեմինարների, գիտակրթական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումների կազմակերպում,
- ուսանողների շրջանում գիտակրթական ծրագրերի, գիտաժողովների և այլ միջոցառումների մասին տեղեկատվության տարածում,
- ՀՀ այլ բուհերի ուսանողական գիտական ընկերությունների հետ շարունակական համագործակցություն,
- հանրապետական և միջազգային գիտաժողովներին ուսանողների մասնակցության ապահովում,
- ուսանողների կարողությունների զարգացման և մտահորիզոնի ընդլայնման խթանում:

Հաշվետու ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ՈՒԳԸ-ն իրականացրել է մի շարք ծրագրեր:

- 2022 դեկտեմբերի 7-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում գործող «Տնտեսագետների ակումբ»-ի և ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ, ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի աջակցությամբ տեղի ունեցավ վեբինար-քննարկում սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ֆինանսական վերլուծաբան Հայկ Թրունյանի հետ՝ «Վարքագծային տնտեսագիտություն և ֆինանսները ժամանակակից աշխարհում» թեմայով: Դեկտեմբերի 20-ին նույն խոսնակի հետ անցկացվել է հերթական վեբինարը՝ «Հաճախորդակենտրոն բիզնես» թեմայով:
- 2022 դեկտեմբերի 11-ին բնագիտական ֆակուլտետում անցկացվեց հոբելյանական գիտաժողով՝ նվիրված ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի ծննդյան 95-ամյակին և համալսարանի հիմնադրման 30-ամյակին:
- 2022 դեկտեմբերին ՈՒԳԸ անդամների մասնակցությամբ և ուսումնական խորհրդատու Հերմինե Սաֆարյանի նախաձեռնությամբ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ Համո Սահյանին՝ Հմայակ Սահակի Գրիգորյանին նվիրված ցերեկույթ: Միջոցառման մասնակիցները բնագիտական ֆակուլտետի Համակարգչային ճարտարագիտություն, Քարտեզագրություն և կադաստրային գործ բաժինների ուսանողներն էին:
- 2023 մարտի 19-ին ԳՊՀ գրադարանում տեղի ունեցավ բաց դաս՝ «Թումանյանի աշխարհում» թեմայով, որին մասնակցել են հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողները:
- 2023 մարտի 21-ին ՈՒԳԸ անդամները Գավառի քաղաքային գրադարանում մասնակցեցին «Պոեզիան՝ հոգու երաժշտություն» խորագրով գրական երաժշտական ցերեկույթին:

- 2023թ մարտի 23-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ տեղի ունեցավ ներֆակուլտետային գիտաժողով՝ նվիրված տնտեսագիտության արդի հիմնախնդիրներին: Ուսանողական գիտաժողովին ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, աշակերտներ՝ Գավառի ավագ դպրոցից, ինչպես նաև ուսանողներ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջից՝ դասախոս, ԳՊՀ շրջանավարտ Վարդան Գարեյանի ուղեկցությամբ:

Ուսանողական գիտական ընկերության աշխատանքներում ներառված են մշտական խորհրդատվության տրամադրումը ուսանողներին, ուսանողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը բուհի ղեկավար մարմին:

Հաշվետու ժամանակաշրջանում պարբերաբար առցանց կուրսային հանդիպումներ են կազմակերպվել բոլոր ֆակուլտետների 1-4-րդ կուրսի ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում ուսանողների ուշադրությանն է հրավիրվել գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, հոդվածներ գրելու և հասարակական ակտիվ գործունեություն ծավալելու կարևորության փաստը:

2022թ. -ի նոյեմբերին 5-ին ԳՊՀ ՈւԽ և ՈւԳԸ անդամների նախաձեռնությամբ անցկացվել է հանդիպում ԳՊՀ շրջանավարտ Կարեն Մաստոյանի հետ՝ «Գիտական հոդվածների կարևորությունը և հոդվածներ գրելու կարգը» թեմայով:

Մշտապես տրամադրվել է խորհրդատվություն հոդվածներ գրելու, գիտաժողովներին դիմելու և զեկուցումներ ներկայացնելու կարգի վերաբերյալ: ԳՊՀ ՈՒԳԸ ֆեյսբուքյան էջի, տելեգրամյան ալիքի, ինչպես նաև էլեկտրոնային նամակագրության միջոցով, ուսանողները տեղեկացվել են հանրապետական և միջազգային տարաբնույթ գիտաժողովների, մրցույթների, միջոցառումների և այլ հնարավորությունների մասին:

Ընկերությունն իր գործառույթների իրականացման ճանապարհին մշտապես համագործակցել է հայաստանյան այլ բուհերի ուսանողական գիտական կառույցների հետ: ՈՒԳԸ անդամները մասնակցել են թե՛ հանրապետությունում, թե՛ արտերկրում անցկացվող բազմաբնույթ մրցույթների, գիտաժողովների, դասընթացների ու սեմինարների:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսանողական գիտական ընկերության անդամները մասնակցել են մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովների.

- 2022 հոկտեմբերի 3-ից 7-ը Գավառի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետների 10 ուսանողներ մասնակցեցին Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպած միջազգային 8-րդ գիտաժողովին՝ նվիրված ԵՊՀ ՈւԳԸ 75-ամյակին:
- 2022 նոյեմբերի 11-ին Շիրակի պետական համալսարանում անցկացված հանրապետական ուսանողական գիտաժողովին մասնակցեցին նաև ԳՊՀ 7 ուսանողներ:
- 2023 փետրվարի 15-ից 17-ը Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանում կազմակերպված էր միջազգային գիտական սեմինար՝ «Էթնոմշակութային հետազոտություններ» խորագրով: Միջազգային գիտական

սեմինարին մասնակցել են նաև Գավառի պետական համալսարանի ներկայացուցիչները:

- 2023թ մարտին ԳՊՀ ՈւԳԸ անդամները մասնակցել են Բելառուսի Հանրապետության Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի կողմից կազմակերպված Արհեստական բանականությանը նվիրված էսսեների մրցույթին:
- 2023 մայիսի 11-ին Գավառի պետական համալսարանի ուսանողներն առցանց ձևաչափով մասնակցեցին Արցախի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած՝ Արցախյան շարժման 35-ամյակին նվիրված ուսանողական տարեկան գիտաժողովին: ԳՊՀ ուսանողները հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով՝ պատմության, իրավագիտության և մանկավարժության մասնագիտական բաժանմունքներում:
- 2023 մայիսի 15-ին տեղի ունեցավ Վանաձորի պետական համալսարանի նախաձեռնած «Երիտասարդ գիտնականների գիտահետազոտական ներուժի բացահայտում» խորագրով հանրապետական ուսանողական 12-րդ գիտաժողովը, որին մասնակցություն ունեցան ԳՊՀ 12 ուսանողներ:

2023-2024 ուսումնական տարում ԳՊՀ ՈՒԳԸ-ն մշակել է զարգացման ծրագիր՝ նախատեսելով հետևյալ գործողությունները.

1. ակտիվ մասնակցություն ԳՊՀ ամբիոնների գիտահետազոտական գործընթացներին, բուհում ուսանողների շրջանում հետազոտական հմտությունների զարգացման քաղաքականության իրականացմանը,
2. սովորողների խրախուսում՝ մասնակցելու հանրապետական և միջազգային ուսանողական գիտաժողովների,
3. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների հետ ուսանողների հետազոտական աշխատանքների որակի բարձրացման ուղիների և կառուցակարգերի քննարկում, շարունակական միջոցների ձեռնարկում, գիտահետազոտական աշխատանքների որակի ապահովման գործընթացներին մասնակցություն,
4. ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովների, գիտահետազոտական ուղղվածությամբ միջոցառումների կազմակերպում,
5. ամենամյա հանրապետական ուսանողական գիտաժողովի կազմակերպում,
6. սեմինարների, բանավեճերի, դերային խաղերի, ֆիլմերի դիտում-քննարկումների, գրական ստեղծագործությունների քննարկումների անցկացում,
7. համագործակցություն ՀՀ այլ բուհերի ուսանողական գիտական ընկերությունների հետ:

Արփի Միրիբյան՝
ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ՝ 2019-2023թթ.

ԳՊՀ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի 2022-2023 ուսումնական տարվա ֆինանսական և տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, համալսարանի կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովել բուհի բնականոն կենսագործունեությունը: Նշված ոլորտի համար բնութագրական են այն բոլոր օբյեկտիվ դժվարությունները, որոնք ուղեկցել են ընդհանրապես բուհական գործունեությանը:

Հեռակա ուսուցման ֆակուլտետ միասնական ընդունելության կարգով սակավաթիվ ուսանողներ ընդունվեցին, ինչպես նաև մեծ թվով ուսանողներ հեռացվեցին, և արձանագրվեց ուսման վարձերից մուտքերի կրճատումներ: Բացի այդ, ուսման վարձավճարները հավաքագրվում են դժվարությամբ, ժամկետների խախտումներով, այդուհանդերձ՝ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում սահմանված կարգով կատարվել են համալսարանի բոլոր ֆինանսական պարտավորությունները, ժամանակին վճարվել են հարկերն ու տուրքերը, այլ պարտադիր վճարները, վարչական աշխատակազմի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձերը, ուսանողների կրթաթոշակները: Օրենքով սահմանված կարգով կազմակերպվել են գնման անհրաժեշտ գործընթացները, իրականացվել գրքերի, համակարգչային պահեստամասերի և տեխնիկայի, ուսումնաօժանդակ նյութերի գնումներ, ինչպես նաև ընթացիկ վերանորոգումների և սպասարկումների համար ձեռք են բերվել շինանյութ, տնտեսական ապրանքներ, կենցաղային տեխնիկա, համալսարանի գործունեության համար անհրաժեշտ այլ ապրանքներ:

Ձեռնարկվել են հստակ միջոցառումներ ԳՊՀ մասնաշենքերի ֆիզիկական պահպանության, ձմռան ամիսներին ջեռուցման համակարգի հատուկ ռեժիմով գործարկման, բուհում համացանցային կապի ապահովման, ուսումնական գործընթացի և աշխատանքների կազմակերպման, համալսարանի տնտեսական, տեխնիկական սպասարկման ուղղությամբ:

ԳՊՀ տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվեց համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների մասնագետների ուժերով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի մասնագետները բուհի ֆակուլտետներում, ամբիոններում, աշխատասենյակներում և համապատասխան լսարաններում, լաբորատորիաներում ու կենտրոններում կատարել են համակարգչային տեխնիկայի շահագործման, ծրագրային և տեխնիկական սպասարկման աշխատանքներ, միաժամանակ նոր ուսումնական տարվան ընդառաջ սահուն կերպով իրականացվել է բնագիտական և բանասիրական ֆակուլտետների տեղափոխման աշխատանքները, որով պայմանավորված իրականացվել են տեխնիկայի տեղափոխման, տեղակայման և նոր համակարգչային ցանցի կառուցման աշխատանքները: Միաժամանակ, «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից, ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ակտիվ մասնակցությամբ, համալսարանում կառուցվել և շահագործման է հանձնվել անվճար համացանցային կապ, WiFi և լարային ինտերնետ համակցման ցանցեր: Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի մասնագետները, ինչպես և նախորդ տարիներին շարունակել են, որոշ դեպքերում առցանց ռեժիմով աշխատելու պահանջով պայմանավորված, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման բոլոր համակարգերի, վիրտուալ լսարանների, էլեկտրոնային

դեկանատի, թվային այլ տիրույթների սպասարկում՝ կատարելով առցանց ուսումնական գործընթացն ապահովող այլ աշխատանքներ:

Ինչպես և նախկինում, հաշվետու տարում ևս անխափան գործել է ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգը, որի անխափան և արդյունավետ շահագործումը ապահովվել է տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի, իսկ բովանդակային մասը՝ ԳՊՀ դասախոսների, ամբիոնների կողմից: Բաժնի գործունեությունն ուղղվեց նախորդ ուսումնական տարվա ընթացքում ստեղծված համացանցային հարթակների զարգացմանն ու սպասարկմանը՝ առցանց աշխատանքի գործընթացները հստակ և որակով կազմակերպելու նպատակով:

Համալսարանի տնտեսական, նյութատեխնիկական սպասարկման, անվտանգության ապահովման, մաքրության պահպանման գործառույթներն իրականացնող անձանց կողմից իրականացվել է համալսարանի հանրակացարանի բարելավման և կահավորման աշխատանքներ:

Համալսարանում 2022-2023 ուսումնական տարում կրթական և աշխատանքային գործընթացները կազմակերպվել են ԳՊՀ երեք մասնաշենքերում՝ օգտագործելով բոլոր աշխատասենյակները, լսարանները, գրադարաններն ու ընթերցասրահները, լաբորատորիաները, համակարգչային սրահները, մարզադահլիճները և ուսումնաօժանդակ այլ տարածքներ: Համալսարանի գործունեության համար ամրակցված ընդհանուր տարածքը 18.505 քմ է, որից առավել գործածական տարածքը կազմում է մոտ 14.858 քմ: Նոր՝ 2023-2024 ուսումնական տարվան ընդառաջ ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ բանասիրական ֆակուլտետը կենտրոնական մասնաշենքից տեղափոխվեց հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենք, իսկ բնագիտական ֆակուլտետը՝ կենտրոնական մասնաշենք: Ֆակուլտետների տեղափոխման արդյունքում համալսարանի 2-րդ մասնաշենքի մոտ 4186քմ տարածքի ձմեռային շահագործումը այլևս նպատակահարմար չհամարվեց և ծախսերը կրճատելու արդարացի հիմնավորմամբ նշված մասնաշենքում ջեռուցում, ջրամատակարարումը դադարեցվեց, միաժամանակ պահակային ծառայությունը փոխարինվեց անվտանգության ապահովման տեսահսկման համակարգով:

Թեև ծագած դժվարություններին, ԳՊՀ բոլոր աշխատակիցների աշխատավարձերը ողջ տարվա ընթացքում վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման միջոցներ:

Հաշվետու ժամանակահատվածում ևս ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերի միջոցներով շարունակվել են բուհի համակարգչային բազայի արդիականացման աշխատանքները, համալրվել են տեխնիկական ռեսուրսները: Միջազգային ծրագրերի շրջանակում համալսարանին մատակարարվել է մոտ 5 միլիոն ՀՀ դրամի համակարգչային տեխնիկա, և մոտավորապես 2 միլիոն ՀՀ դրամ արժողությամբ համակարգչային տեխնիկայով համալրում սպասում է առաջիկայում: Նախորդ ուսումնական տարվա ընթացքում ձեռք բերված համապատասխան տեխնիկայի գործադրմամբ ԳՊՀ գրադարաններում իրականացվել են գրքային ֆոնդի թվայնացման աշխատանքներ: Արդյունքում թվայնացվել է ավելի քան 160 կտոր գրականություն: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: ԳՊՀ գրադարանը համալրվել է բազմաթիվ նոր գրքերով, որոնց մեծ մասը նվիրատվություններ են: Բազմաթիվ արժեքավոր հայերեն և օտարալեզու գրքեր են նվիրաբերել ԳՊՀ դասախոսները:

2022 և 2023 թվականներին ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվել են թիվ 12, 13, 14 և 15 գիտական հոդվածների ժողովածուները, 2023թ-ին հրատարակվել է նաև Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի աշխատակիցների կողմից, ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ, իրականացվող՝ 21T-6B038 ծածկագրով «Եվրոպական էպիկական ավանդույթը և «Սասնա Ծռեր» էպոսը» թեմայով հետազոտական ծրագրի շրջանակներում կազմակերպված «Բանահյուսություն և գրականություն» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն:

Ուսումնական և աշխատանքային գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ձեռք են բերվել անհրաժեշտ նյութեր, սարքեր ու սարքավորումներ, գրենական պիտույքներ, անհրաժեշտ այլ պարագաներ՝ համաձայն համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների պահանջագրերի հիման վրա կազմված ԳՊՀ գնումների պլանի:

Հետևողական աշխատանքներ են կատարվել շենքերի և շինությունների վերանորոգման ուղղությամբ: Ընթացիկ վերանորոգվել է համալսարանի 2-րդ 3-րդ մասնաշենքերի տանիքիներ վնասված հատվածը, բարեկարգվել են մի շարք լսարաններ և աշխատասենյակներ: Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենքում կահավորվել է նոր համակարգչային լսարան: Ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ բոլոր մասնաշենքերում կատարվել են ներքին հարդարման աշխատանքներ:

Համալսարանի կանաչ տարածքներում կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման աշխատանքներ:

Համալսարանի տնտեսատեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվել են նաև մասնաշենքերի ջեռուցման ցանցերի և ջրագծերի մասնակի վերանորոգումներ, վերանորոգվել են բազմաթիվ հանգույցներ՝ ինչպես ջեռուցման, այնպես էլ ջրամատակարարման ցանցերում:

ԳՊՀ կաթսայատան միջոցով ջեռուցվել են բոլոր մասնաշենքերը, այդ թվում՝ հանրակացարանը: Ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ են կատարվել կաթսայատանը: Ապահովվել է համալսարանի բոլոր մասնաշենքեր էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումը:

ԳՊՀ փաստաթղթաշրջանառությունը կազմակերպվել է նամակագրության ներքին շրջանառության էլեկտրոնային համակարգով, ինչպես նաև արտաքին փաստաթղթաշրջանառության ‹‹Mulberry›› համակարգով:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում համալսարանում շարունակել է գործել գրենական պիտույքների վաճառքի և պատճենահանման կետը, որը, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ուսումնական տարվա ընթացքում շարունակել է ուսանողների համար մատչելի գներով ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման իրականացումը:

2023-2024 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի տնտեսատեխնիկական գործունեության զարգացման հիմնական ուղղություններն են՝

1. ձեռնարկել միջոցներ ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման ռեսուրսները համալրելու, անցանց-առկա և առցանց-հեռավար կրթության ու աշխատանքի պայմանները բարելավելու համար,
2. ԳՊՀ բոլոր մասնաշենքերում ապահովել ուսումնական և աշխատանքային գործընթացների համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմաններ՝

հետևողականորեն արդիականացնելով և առավել գրավիչ դարձնելով կրթական, հետազոտական և աշխատանքային միջավայրը,

3. իրականացնել մասնաշենքերի տեխնիկական հետազոտություններ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ վերանորոգման նախահաշիվների կազման և իրականացման ուղղությամբ,
4. պլանավորել և իրականացնել լսարանային ֆոնդի ընթացիկ վիճակի պարբերական գնահատումներ և վերանորոգումներ, ապահովել շարունակական արդիականացում և համապատասխանեցում կրթական գործընթացի զարգացման նոր պահանջներին, ուսանողների և դասախոսների սպասելիքներին, որակյալ կրթության ապահովման հրամայականին,
5. շարունակել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորման աշխատանքները՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող տեխնիկայով ու սարքավորումներով,
6. ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ վերաբաշխելով տարածքները զարգացման նոր գերակայություններին համապատասխան,
7. շարունակել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով ապագայում տարանջատել ջեռուցման համակարգը ըստ մասնաշենքերի՝ խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաներ տեղադրելով,
8. ապահովել համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացումն ու արդիականացումը՝ կրթական և հետազոտական ծրագրերի արդի պահանջներին համապատասխան: Այդ նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները.
    1) գնահատել համալսարանի ուսումնական լաբորատոր բազայի առկա վիճակը՝ ըստ կրթության և հետազոտությունների որակի ապահովման չափորոշիչների, և մշակել առկա լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային պլան՝ ըստ մասնագիտությունների,
    2) ապահովել լաբորատոր բազայի արդիականացման պլանների իրականացումն ըստ Հայաստանի Հանրապետության և, մասնավորապես, Գեղարքունիքի մարզի զարգացման հեռանկարային առաջնահերթությունների և տարիների՝ նախատեսելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ համալսարանի և դրամաշնորհատու կազմակերպությունների ներդրումներից,
    3) զարգացնելով և ընդլայնելով գործընկեր արտադրական կազմակերպությունների հետ հաջող համագործակցության առկա փորձը՝ ստեղծել համատեղ հետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ՝ դրանք առաջին հերթին նպատակաուղղելով ուսանողության կրթական պահանջների բավարարմանը,
    4) միջազգային դրամաշնորհային նախագծերի, ինչպես նաև առանձին կազմակերպությունների ու բարերարների միջոցներով իրականացնել կրթական միջավայրի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան՝ առկա լաբորատոր բազայի վերազինման և նորերի ստեղծման ծրագրեր,

9. ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպման պահանջները բավարարող նյութատեխնիկական պայմաններ համալսարանի բոլոր ֆակուլտետներում.
   1) մշակել ԳՊՀ տարածքային պայմանների բարելավման նոր պլան և համալսարանում առկա ներքին և արտաքին բոլոր հնարավորություններն ուղղել դրա իրականացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համալսարանի և դրամաշնորհատու կազմակերպությունների, բարերարների, հիմնադրամների ներդրումները,
   2) ստեղծել համալսարանի նյութատեխնիկական բազայի հետագա զարգացման լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով ուսումնական գործունեության չափորոշիչ պահանջների լիարժեք կատարումը,
   3) կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի պահանջներին համահունչ՝ մշակել և իրականացնել ուսումնական տարածքների արդյունավետ օգտագործման հեռանկարային պլան՝ ներառելով նաև դեռևս չվերականգնված մասնաշենքի ապագայի հարցը,
   4) օգտագործել արտաքին հնարավորությունները՝ համալսարանի մարզական բացօթյա բազայի վերանորոգման համար,
   5) շարունակել բուհի նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը՝ օգտագործելով համագործակցային կապերի ընձեռած հնարավորությունները,

10.ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումն ու որակական նոր մակարդակի ձեռքբերումը համալսարանի կրթական և գիտական բոլոր գործընթացներում.
   1) ակտիվացնել համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գործունեությունը,
   2) զարգացնել բուհի տեխնոլոգիական կարողությունները, ապահովել հեռաուսուցման լսարանների համալսարանական ցանցի զարգացման, շարունակական ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց՝ հեռաուսուցման անխափան ու որակյալ կազմակերպման համար,
   3) կատարելագործել ուսուցման համացանցային հենքով էլեկտրոնային համապիտանի համակարգը (Learn.gsu.am, E-Library.gsu.am)՝ ապահովելով ուսումնական նյութերի շարունակական համալրում և արդիականացում,
   4) կատարելագործել ուսանողական համացանցային հարթակը (students.gsu.am)՝ կցված էլեկտրոնային ուսուցման համակարգին՝ ապահովելով ուսումնառության, դասավանդման, խորհրդատվության և գնահատման էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը համալսարանի բոլոր ուսանողների և դասախոսների համար,
   5) խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը բուհի ամբիոնների հետազոտական ծրագրերում, նախագծերում, մագիստրոսական թեզերում և ավարտական աշխատանքներում:

Նախատեսված ուղղություններով զարգացման ծրագրերի իրականացումը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ կազմակերպել կրթական, գիտահետազոտական, դաստիարակչական գործընթացները համալսարանի բոլոր ֆակուլտետներում և կյանքի կոչել

ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարությամբ նախատեսված ‹‹Վիրտուալ համալսարան›› ծրագիրը:

Անհրաժեշտ ենք համարում նաև վերանայել Գավառի պետական համալսարանի՝ աղետների ռիսկերի կառավարման պլանը, հաշվի առնելով արտաքին մարտահրավերները, բնական և տեխնիկական աղետների հնարավոր վտանգները:

Գուրգեն Մուրադյան՝
ԳՊՀ գլխավոր հաշվապահ

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ԳՊՀ-ՈՒՄ ՆՇՎԵՑ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐ ՏՈՆԸ
01.09.2022 թ.

2022թ. սեպտեմբերի 1-ին Գավառի պետական համալսարանում հանդիսավորությամբ նշվեց սեպտեմբերմեկյան տոնը՝ Գիտելիքի և դպրության, լույսի և բանականության օրը: ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ջերմորեն շնորհավորեց առաջին կուրսեցիների համալսարանամուտը, շնորհակալություն հայտնեց համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ կրթության ու գիտության գործի նվիրյալներին, հաջողություններ մաղթելով երիտասարդների կրթության գործում: Ինչպես նախորդ տարիներին, 2022 թվականի սեպտեմբերի 1-ին նույնպես գիտելիքի աշխարհ տանող խորհրդանշական բանալին առաջին կուրսեցիներին փոխանցեցին ավարտական կուրսում սովորողները:

ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ՝ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՎՈՐԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
22.09.2022 թ.

Եվրոպական Միության «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս, որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Քանաքարա Հայրապետյանը մեկշաբաթյա վերապատրաստման դասընթաց անցավ Պորտուգալիայի Հանրապետության հնագույն բուհում՝ 1559 թվականին հիմնադրված Էվորայի համալսարանում: ԳՊՀ դասախոսը հանդիպում ունեցավ բուհի «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրի համակարգող Մարինա Կորդեիրոյի և հումանիտար գիտությունների՝ պատմության և հնագիտության, մանկավարժության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության ֆակուլտետների ղեկավար կազմերի, վարչարարության և ֆինանսական աջակցության բաժնի համակարգող Քրիստինա Սիմոեսի հետ, ծանոթացավ բուհի ենթակառուցվածքներին, ուսումնական ռեսուրսներին, դեռևս միջնադարյան ավանդույթները պահպանող գրադարաններին:

ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ
22.09.2022 թ.

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահի ընտրություն: ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահի հավակնորդներն էին բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Պողոսյանը և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Խաչատրյանը: Ընտրության արդյունքում ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ ընտրվեց Անահիտ Պողոսյանը, փոխնախագահ՝ Անահիտ Խաչատրյանը, իսկ քարտուղար ընտրվեց բնագիտական ֆակուլտետի «Սերվիս» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Նելլի Գրիգորյանը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ
29.09.2022 թ.

Գավառի պետական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի բազմաթիվ ուսանողներ հնարավորություն են ստանում ուսանելու գործընկեր եվրոպական բուհերում:

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի 3-րդ

կուրսի ուսանողուհի Մանե Մանուկյանը համալսարանի իրականացրած «Linnaeus Palme» ծրագրի շրջանակում այժմ կրթություն է ստանում Շվեդիայի Թագավորության Կառլ Լիննեյի անվան համալսարանի համակարգչային ճարտարագիտության բաժնում: Մանեն սիրով կերտում է հաջողության պատմություն Գավառի պետական համալսարանում և մեկն է այն բազմաթիվ ուսանողներից, ովքեր իրենց լավագույնս են դրսևորում եվրոպական համալսարաններում:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐՆ ՈՒՆԵՆ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄՈՒՐՍԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

30.09.2022 թ.

Եվրոպական Միության «Էրազմուս+» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի և Իսպանիայի Մուրսիայի կաթոլիկ համալսարանի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ ԳՊՀ բանասիրական, բնագիտական և տնտեսագիտական ֆակուլտետների դասախոսները հնարավորություն ունեն 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդելու Մուրսիայի կաթոլիկ համալսարանում:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԴԻՊԼՈՄԱԿԻՐ

03.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս, համալսարանի մանկավարժա-հոգեբանական կենտրոնի համակարգող Արմինե Դավթյանը մասնակցել է Գիտահետազոտական մշակումների համառուսական ընկերության կազմակերպած միջազգային մրցույթին և ներկայացրել գիտական հոդված՝ «Компетентностный подход в процессе подготовки кадров для преподавания предметов религиоведения в средней и высшей школе» թեմայով: Գիտահետազոտական աշխատանքների XVII միջազգային մրցույթի արդյունքում տիկին Դավթյանը եղել է հաղթողների շարքում՝ արժանանալով երկրորդ կարգի դիպլոմի:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՄԻՆՍԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

03.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանի և Բելառուսի Հանրապետության Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի միջև կնքված համաձայնագրի շրջանակում ԳՊՀ դասախոս, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սահակյանը մասնակցել է Մինսկի համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովին և ներկայացրել հետաքրքիր զեկուցում: Պարոն Սահակյանը հանդիպել է համալսարանի ռեկտոր Նատալյա Լապտևայի հետ և փոխանցել Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի ողջույնները և հետագա համագործակցության պատրաստակամությունը: Ողջունելի է, որ միջբուհական գործընկերային ծրագրի հիման վրա ԳՊՀ ուսանողներ Արմինե Սեյրանյանը և Զառա Պետրոսյանը առցանց մասնակցեցին Բելառուսի լեզվաբանական համալսարանի կազմակերպած ուսանողական միջազգային գիտաժողովին և հանդես եկան զեկուցումներով:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԳՊՀ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

03.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստերի օրակարգում առկա ուսուցման բանասիրական, բնագիտական, տնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների 2021-2022 ուսումնական տարվա հաշվետվության և 2022-2023 ուստարվա զարգացման հայեցակարգային ուղղությունների մասին հարցերի քննարկումն էր: Զեկուցեցին դեկաններ Թաթուլ Ասոյանը, Մարտին Ավագյանը, Սամվել Ամիրխանյանը և Համլետ Ղաջոյանը, ովքեր ներկայացրին համապատասխան

ֆակուլտետների տարեկան գործունեության արդյունքները, անդրադարձան բարելավման ծրագրերին, ուսանողների հետ տարվող աշխատանքներին, արտաքին համագործակցության և այլ հարցերի:

ԳՊՀ-Ն ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ‹‹ՋԻՆԻՇՅԱՆ›› ՀԻՇԱՏԱԿԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

03.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանը գրեթե երկու տասնամյակ հաջողությամբ համագործակցում է ‹‹Ջինիշյան›› հիշատակի հիմնադրամի հետ: ԳՊՀ ուսանողները հանդես են գալիս որպես հիմնադրամի ակտիվ կամավորներ և ուսանողական ծրագրերի համակարգողներ՝ նախաձեռնելով ու կյանքի կոչելով բազմաթիվ հանրօգուտ ձեռնարկներ: Համալսարանը հյուրընկալեց հիմնադրամի ներկայացուցիչներին և բարեկամներին, ովքեր կարևորեցին և բարձր գնահատեցին բուհի հետ շարունակական գործընկերությունը:

ԳՊՀ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍԱՆՈՂԸ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՆՈՒՄ ՇՎԵԴԻԱՅՈՒՄ

06.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանը համագործակցում է եվրոպական մի շարք բուհերի հետ՝ ուսանողներին ընձեռելով արտասահմանյան գործընկեր համալսարաններում մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու, լեզվական-հաղորդակցական հմտությունները զարգացնելու, ճամփորդելու և աշխարհայացքն ընդլայնելու հնարավորություններ: Գավառի պետական համալսարանի և Շվեդիայի Կառլ Ֆոն Լիննեյի անվան համալսարանի համատեղ իրականացրած «Linnaeus-Palme» ծրագրի շրջանակում ԳՊՀ ուսանողները սովորում են Շվեդիայում: Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանող Մարատ Սարգսյանը այժմ կրթություն է ստանում Շվեդիայի Թագավորության Լիննեյի համալսարանի նույն բաժնում: Գավառի պետական համալսարանի ուսանողն հաջողությամբ սովորում է Շվեդիայում՝ մրցունակ մասնագետ դառնալու և իր հայրենիքին ծառայելու հստակ նպատակադրումով:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

07.10.2022 թ.

2022թ. հոկտեմբերի 3-ից 7-ը Գավառի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետների տաս ուսանողներ մասնակցեցին Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) կազմակերպած միջազգային 8-րդ գիտաժողովին՝ նվիրված ԵՊՀ ՈՒԳԸ 75-ամյակին: Գիտաժողովին ներկայացվել էր 296 դիմում-հայտ, որոնցից մասնագիտական գրախոսության փուլը հաղթահարել էին 156-ը, այդ թվում՝ 8 երկրի 22 երիտասարդ գիտնականների և ԳՊՀ 10-ը ուսանողների հայտերը: Գավառի պետական համալսարանի ուսանողները հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով՝ մասնագիտական տարբեր բաժանմունքներում: ԳՊՀ տասը ուսանողներից ինը ելույթ ունեցան ԵՊՀ-ում, իսկ Իսպանիայի Կորդոբայի համալսարանում սովորող Զառա Պետրոսյանը զեկուցեց առցանց ձևաչափով:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

08.10.2022 թ.

2022թ. հոկտեմբերի 8-ին տարեկան գործունեության հաշվետվությամբ հանդես եկան Գավառի պետական համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմինների ղեկավարները՝ 2021-2022 ուսումնական տարում ուսխորհուրդը ղեկավարած Անահիտ Շահինյանը և ուսանողական գիտական ընկերության նախագահ Արփի Միրիբյանը: ԳՊՀ

ուսանողական խորհրդի 2022-2023 ուսումնական տարվա անելիքները ներկայացրեց ուսխորհրդի նորընտիր նախագահ Անահիտ Պողոսյանը:

ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

13.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողների՝ տեսական դասընթացներից ստացած գիտելիքներն ամրապնդվում են գործնական աշխատանքի շնորհիվ: Բնագիտական ֆակուլտետի «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Աշխարհագրություն» և «Սերվիս» բաժինների առաջին կուրսերի ուսանողներն «Աշխարհագրության հիմունքներ» դասընթացի շրջանակներում՝ դասախոսներ Արամայիս Ավագյանի և Լալա Մկրտչյանի ուղեկցությամբ, հերթական դասն անցկացրեցին դաշտային պայմաններում: Դասի թեման «Հրաբուխներ»-ն էր: Ուսանողները բարձրացան Նորատուսում գտնվող Հեր «ստորջրյա» հրաբխի գագաթ, տեղում բացահայտեցին հրաբխի առանձնահատկությունները, տեսան հրաբուխի խառնարանը, ուսումնասիրեցին Նորատուսում գտնվող երկրաբանական ուշագրավ գոյացությունները՝ Սարիկայա հրվանդանի տարածքում, եղան նաև մեզոզոյան շերտախմբերի հատվածում, հիացան բնության այս հրաշալիքներով, դրանց անկրկնելի գեղեցկությամբ:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

15.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժնի 3-րդ կուրսի ուսանողները՝ դասախոս Արտաշես Թադևոսյանի գլխավորությամբ ուսումնական պրակտիկայի շրջանակներում այցելեցին արտադրական ընկերություններ: Ուսանողները եղան «ԱԷՍ տրեյդ»-ում, որտեղ գործադիր տնօրեն Գրիգոր Հակոբյանի ուղեկցությամբ շրջեցին գործարանում և ծանոթացան պրոֆիլների արտադրության գործընթացին: Եղան գործարանի լաբորատորիայում և ծանոթացան այն սարքավորումների հետ, որոնց միջոցով ստուգում են պրոֆիլի ջերմակայունությունը և դիմացկունությունը արտաքին գործոնների նկատմամբ: Այնուհետ ուսանողները եղան «Լիքվոր» դեղագործական ընկերությունում, որտեղ ծանոթացան հեղուկ դեղամիջոցների արտադրության և որակի ստուգման պայմաններին:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ ԳՐՈԶՆԻՈՒՄ ‹‹ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ›› ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

15.10.2022 թ.

2022 թվականի ամառային արձակուրդի ընթացքում Գավառի պետական համալսարանի 20 ուսանողներ՝ ԳՊՀ դասախոս, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սահակյան ղեկավարությամբ մասնակցեցին Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի կազմակերպած «Ամառային համալսարան-2022» ծրագրին: Ուսանողները ներկայացրին հաշվետվություն Գրոզնիի համալսարանում իրենց ուսումնասիրած դասընթացների, ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մասին, անդրադարձան մշակութային ու մարզական միջոցառումներին և մրցույթներին, նշեցին հյուրընկալ համալսարանի ջերմ ընդունելության, նոր ընկերների հետ հետաքրքիր էքսկուրսիաների և արշավների, ստացած անջնջելի տպավորությունների մասին:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԼԵՎՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԵՔԻՅԱՆԻՆ

14.10.2022 թ.

2022թ. հոկտեմբերի 14-ին Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց Վենետիկի Մխիթարյան Միաբանության քահանայապետական պատվիրակ, պրոֆեսոր, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, Վենետիկի ակադեմիայի

անդամ, Գերապայծառ Տեր Լևոն Զեքիյանին: Սրբազան Հայրը մասնակցել էր Գավառի պետական համալսարանի կողմից 2020 թվականի հուլիսի 5-ին կազմակերպված առցանց գիտաժողովին՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին, և ընդունել էր հրավերը՝ համավարակից հետո այցելելու համալսարան: Ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը երախտագիտություն հայտնեց Մխիթարյան հայր Ղևոնդ Ալիշանի արժանի հետնորդին և ներկայացրեց համալսարանի գիտական խորհրդի որոշումը՝ Գերապայծառ Տեր Լևոն Զեքիյանին շնորհելու Գավառի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

ԿԱՅԱՑԱՎ ԵՄ ‹‹ԷՐԱԶՄՈՒՍ +›› ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ-ՈՒՄ
15.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ ‹‹Էրազմուս + -ը ԳՊՀ-ում›› խորագիրը կրող տեղեկատվական հանդիպում՝ ‹‹Էրազմուս+›› ծրագրի ամենամյա տեղեկատվական օրերի շրջանակում: Հանդիպման ընթացքում Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը ներկայացրեց ‹‹Էրազմուս+›› միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերը (Հիմնական գործողություն՝ ՀԳ-1), ‹‹Էրազմուս+›› կարողությունների զարգացման ծրագրերը (ՀԳ-2), ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցելու հնարավորություններն ու պայմանները:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԳՊՀ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
19.10.2022 թ.

Հաստատված ժամանակացույցի համաձայն՝ ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժնի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հաշվետվությունները: Բուհի արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետներ Նունե Միրիբյանն ու Սիրանույշ Մկրտչյանը բովանդակալից շնորհանդեսի տեսքով ներկայացրին բաժնի կատարած աշխատանքները, միջազգային համագործակցության ծրագրերը, 2022-2023 ուսումնական տարվա գործունեության հիմնական ուղղությունները:
ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2021-2022 ուստարվա գործունեության հաշվետվությունն ու 2022-2023 ուսումնական տարվա զարգացման ծրագիրը ներկայացրեց համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ Մարգար Հովհաննիսյանը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳՈՂՏՐԻԿ ՎԱՅՐԵՐԸ
27.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանողները՝ դասախոս Լալա Մկրտչյանի ղեկավարությամբ, հերթական ուսումնական-ճանաչողական էքսկուրսիան կազմակերպեցին դեպի ՀՀ Արագածոտնի մարզ: Համալսարանականները հայրենիքի գեղեցիկ վայրերը ճանաչելու նպատակադրումով այս անգամ եղան Արագածոտնի Եղիպատրուշ գյուղի Սուրբ Աստվածածին, Ուշիի Սուրբ Սարգիս եկեղեցիներում, Ապարանի ջրամբարում և ջրամբարի մոտ գտնվող Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցիներում, Ոսկեվազի գինու գործարանում և Աղձքի Արշակունիների դամբարանում:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ
27.10.2022 թ.

Ջերմորեն շնորհավորում ենք Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պրոֆեսոր Արա Առաքելյանին՝ իր հեղինակած

«Համեմատական գրականագիտության հիմունքներ» բուհական դասագրքի հրատարակման առթիվ, որը Երևանի և Գավառի պետական համալսարաններում մագիստրոսական կրթական ծրագրով հեղինակի կարդացած դասախոսությունների հանրագումարն է:

ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ
29.10.2022 թ.

Կայացավ Գավառի պետական համալսարանի և գործընկեր բուհերի համատեղ կազմակերպած միջազգային առցանց գիտաժողովը՝ նվիրված տարածաշրջանների կենսագործունեության արդի հիմնախնդիրներին, տնտեսական, սոցիալ-մշակութային զարգացման ուղղություններին և հեռանկարներին, կառավարման արդյունավետության բարձրացման հարցերին: Գիտաժողովին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի, Մոսկվայի կառավարման համալսարանի, Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի, Ա. Ս. Պուշկինի անվան Լենինգրադի պետական համալսարանի, Մինսկի պետական համալսարանի և այլ հայաստանյան ու արտասահմանյան բուհերի ու գիտահետազոտական հաստատությունների ներկայացուցիչներ՝ դասախոսներ և ուսանողներ:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՊՀ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ
29.10.2022 թ.

2022թ. հոկտեմբերի 27-ին և 28-ին Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետից Արցախյան 44–օրյա պատերազմում զոհված ուսանողների հիշատակին նվիրված հանրապետական գիտաժողով, որտեղ զեկուցումով հանդես եկավ Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի դասախոս Լալա Մկրտչյանը: Զեկուցման թեման էր «Սևանի տարածաշրջանի Վարսեր, Ծովագյուղ, Ծաղկունք և Գեղամավան համայնքների պատմաճարտարապետական հուշարձանները և դրանց պահպանման հիմնախնդիրները աղետների ռիսկի տեսանկյունից»:

ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ԵՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
30.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստերում սահմանված ժամանակացույցին համապատասխան ներկայացվում և քննարկվում են կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները: ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ Թերմինե Խաչիկյանը, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ Խաչատուր Սաֆարյանը, գրադարանավարուհի Ալվարդ Թոռչյանը մանրամասն ներկայացրին իրենց ղեկավարած ստորաբաժանումների 2021-2022 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություններն ու 2022-2023 ուստարվա զարգացման ուղղությունները: Կարևորվեցին գործողությունների ծրագրի մասնակցային կատարման, աշխատանքի արդյունավետության գնահատման նոր քանակական և որակական ցուցիչների կիրառման, մշտադիտարկման և բարելավման գործընթացները:

ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻՆ
30.10.2022 թ.

Գավառ քաղաքում անցկացվեց ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպության և ‹‹Առաքելություն Հայաստան›› հասարակական կազմակերպության համատեղ

կազմակերպած՝ ‹‹Փաստաթուղթ չունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը›› թեմայով աշխատաժողով: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ «Միգրացիոն գործընթացների կարգավորումը միջազգային և ներպետական իրավունքում և քաղաքացիություն չունեցող ու փաստաթուղթ չունեցող անձանց իրավական աջակցությունը ՀՀ-ում››:Աշխատաժողովին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի ուսանողներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

28.10.2022 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսներն ակտիվորեն մասնակցում եմ միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերին:
2022թ. հոկտեմբերի 28-ին ներկայացվեցին ԳՊՀ իրականացրած՝ Եվրոպական Միության «ERASMUS+» շարժունության ծրագրերով եվրոպական համալսարաններում սովորած ուսանողների շնորհանդես-հաշվետվությունները: Հետաքրքիր և բովանդակալից հաշվետվություններ ներկայացրին՝ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողներ Սոնա Հովեյանն ու Ալլա Վարդանյանը, ովքեր 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում սովորել են Իսպանիայի Թագավորության Մուրսիայի կաթոլիկ համալսարանում, տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» բաժնի 4-րդ կուրսի ուսանող Աշոտ Մովսիսյանը, ով 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակում սովորել է Իսպանիայի Թագավորության Կորդոբայի համալսարանում, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Իրավագիտություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողնուհի Մերի Սարգսյանը, ով 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակում սովորել է Իսպանիայի Թագավորության Վալլիադոլիդի համալսարանում:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

02.11.2022 թ.

Շնորհավորում ենք Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս, տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հակոբյանին՝ «Տրանսֆերային գնագոյացում» մենագրության լույսընծայման առթիվ: Մենագրությունում ներկայացված են տրանսֆերային գնագոյացման բովանդակային, կառուցակարգային, մեթոդական, վերահսկողության, որոշումների կայացման, զարգացման և հաշվետվողականության արդի հիմնախնդիրները:

ԳՊՀ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑ

02.11.2022 թ.

Գավառի պետական համալսարանի և «Մարզային նախաձեռնությունների և զարգացման ծրագրերի կենտրոն»-ի համագործակցության շրջանակում համալսարանում անցկացվեց երկօրյա դասընթաց՝ նվիրված Խնայողությունների միջազգային օրվան՝ հոկտեմբերի 31-ին: «Խնայողությունների խաղ» դասընթացը կոչված էր խաղարկային մեթոդով նպաստելու մասնակիցների ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացմանը:

«ԲԱՐԵՎ, ՄԵ՛ՆՔ ԵՆՔ». ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ ԵՆ ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ

06.11.2022 թ.

Գավառի պետական համալսարանում ձևավորված գեղեցիկ ավանդույթներից մեկը՝ «Բարև, մե՛նք ենք» խորագիրը կրող ամենամյա միջոցառումն է, որի մասնակիցները համալսարանական մեծ ընտանիքի կրտսեր անդամներն են՝ բուհի առաջին կուրսեցիները: Ս.

թ. նոյեմբերի 4-ին ԳՊՀ ուսանողական խորհրդի փոխնախագահ, տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Խաչատրյանի աջակցությամբ կայացավ բուհի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի առաջին կուրսեցիների բեմելը: Միջոցառմանը մասնակցում էին իրավագիտության, պատմության, տարրական մանկավարժություն և մեթոդիկայի բաժինների առաջին կուրսի ուսանողները: ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ, ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Ռոզա Աբրահամյանի աջակցությամբ նոյեմբերի 6-ին կայացավ բուհի տնտեսագիտական ֆակուլտետի առաջին կուրսեցիների բեմելը: Միջոցառմանը մասնակցում էին ֆինանսներ, հաշվապահական հաշվառում և հարկում, տնտեսագիտություն բաժինների առաջին կուրսեցիները: Գեղեցիկ ցերեկույթով ներկայացան նաև բանասիրական և բնագիտական ֆակուլտետների առաջին կուրսեցիները:

ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ
08.11.2022 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի սերվիս բաժնի ուսանողները շարունակում են ստացած տեսական գիտելիքներն ամրապնդել գործնականում: «Աշխարհագրության հիմունքներ», «Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն» և «Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշարձանները» դասընթացների գործնական աշխատանքները տեղի ունեցան դաշտային պայմաններում, ս. թ. նոյեմբերի 6-ին՝ դասախոս Լալա Մկրտչյանի ղեկավարությամբ: Այս անգամ ուսանողներն այցելեցին ՀՀ Արարատի մարզ: Նպատակն էր ուսանողներին ծանոթացնել ՀՀ լանդշաֆտային գոտիների, պատմաճարտարապետական հուշարձանների և աշխարհագրական տարբեր օբյեկտների հետ, բացահայտել մարզը նորովի:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՇՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ
11.11.2022 թ.

Գավառի պետական համալսարանի տասնվեց ուսանողներ մասնակցեցին Շիրակի պետական համալսարանի կազմակերպած ուսանողական հանրապետական գիտաժողովին: Գիտաժողովը մեկնարկեց ՇՊՀ ռեկտոր Երվանդ Սերոբյանի ողջույնի խոսքով: Գիտաժողովի 11 բաժանմունքներում զեկուցումներ ներկայացրին 103 ուսանողներ՝ առկա և հեռավար ձևաչափերով: Գավառի պետական համալսարանի 11 ուսանողներ հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ
11.11.2022 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները Եվրոպական Միության միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակում սովորում, դասավանդում և վերապատրաստման դասընթացների են մասնակցում գործընկեր եվրոպական բուհերում: Ս. թ. նոյեմբերի 11-ին ԳՊՀ դասախոսները հաշվետվություններ ներկայացրին արտերկրում իրենց դասախոսական աշխատանքի և վերապատարստման դասընթացի վերաբերյալ: ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Միրիբյանը ներկայացրեց Պորտուգալիայի Հանրապետության Մինհոյի համալսարանում իր կատարած դասախոսական աշխատանքի արդյունքները:

ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ՝ ԳՊՀ-ՈՒՄ
16.11.2022 թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9, 10, 11 և 12-րդ դասարանների աշակերտներին՝ կենսաբանության ուսուցչուհի, ԳՊՀ շրջանավարտ Գոհար Սարգսյանի, ֆիզիկայի ուսուցչուհի Սուսաննա Մարդոյանի ղեկավարությամբ: Նրանք հանդիպեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հետ, լսեցին օգտակար խորհուրդներ կրթության կարևորության և մասնագիտական ճիշտ կողմնորոշման մասին: ԳՊՀ բնագիտության լաբորատորիայի վարիչ Թերմինե Խաչիկյանը աշակերտների համար կազմակերպեց գործնական դաս՝ քիմիա և կենսաբանություն առարկաներից:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑԻՆ
17.11.2022 թ.

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության ամբիոնի դասախոս Անի Ամիրյանը, իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ Մերի Սարգսյանը, Գալուստ Գասպարյանը, Արամայիս Ավետիսյանը և նույն բաժնի 3-րդ կուրսի ուսանողներ Լարիսա Բադալյանը, Աղեկ Ստեփանյանը մասնակցեցին Դիլիջան քաղաքում կայացած ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ-ը) և ‹‹Առաքելություն Հայաստան›› հասարակական կազմակերպության համատեղ կազմակերպած՝ ‹‹Փախստականների իրավունքներ›› խորագիրը կրող 11-րդ աշնանային դպրոցի աշխատանքներին:

ԼՃԱՇԵՆԻ ԱՇՈՏ-ՏԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՕՐԸ
20.11.2022 թ.

Լճաշենի Աշոտ-Տեր Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտները ռուսաց լեզվի ուսուցչուհի Նարինե Ենգիբարյանի և ծնողկոմիտեի նախագահ Մերի Մուրադյանի ուղեկցությամբ հյուրընկալվեցին Գավառի պետական համալսարանում: Աշակերտները հանդիպեցին բուհի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հետ, ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները բարձրագույն կրթության և մասնագիտական ճիշտ կողմնորոշման վերաբերյալ: Հյուրերը շրջեցին Գավառի պետական համալսարանում. Արցախյան պատերազմի հերոսների անվան լսարանում գլուխ խոնարհեցին նրանց հիշատակի առջև, եղան գրադարանում, համակարգչային լսարաններում և բնագիտության լաբորատորիայում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ
19.11.2022 թ.

2022թ. նոյեմբերի 19-ին ԳՊՀ դասախոսները հաշվետվություններ ներկայացրին արտերկրում իրենց դասախոսական աշխատանքի և վերապատրաստման դասընթացների վերաբերյալ: Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Սարգսյանը ներկայացրեց Իսպանիայի Թագավորության Վալլադոլիդի և Պորտուգալիայի Հանրապետության Մինհոյի համալսարաններում մեկշաբաթյա դասավանդման և միաժամանակ վերապատրաստման իր փորձը: Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական

գիտությունների ամբիոնի դասախոս, որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Քանաքարա Հայրապետյանը ներկայացրեց Պորտուգալիայի Էվորայի համալսարանում անցկացրած մեկշաբաթյա վերապատրաստման դասընթացի վերաբերյալ հետաքրքիր տեղեկատվություն: Հաշվետու շնորհանդեսով հանդես եկավ նաև բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը, ով ներկայացրեց ս. թ. մայիսի 9-ից մայիսի 13-ը Պորտուգալիայի Բրագանսայի պոլիտեխնիկական համալսարանում ԳՊՀ արտաքին կապերի բաժնի աշխատակից Նունե Միրիբյանի և իր մասնակցությամբ կայացած վերապատրաստման դասընթացի և աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ «ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻՆ

25.11.2022 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողները հանդիպեցին «Հայկական Կարիտաս», «Նորարարություն հանուն առողջության» ծրագրի համակարգող Մարիամ Գրիգորյանին, ով ներկայացրեց կազմակերպության գործունեությունը, իրականացվող ծրագրերը և «Նորարարություն հանուն առողջության» ծրագիրը: 2021 հուլիս 1-ից Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում իրականցվում է «Նորարարություն հանուն առողջության» ծրագիրը, որը նպատակ ունի բարելավել բնակչության խոցելի խմբերի առողջությունը՝ ինտեգրված խնամքի ծառայությունների մատուցման միջոցով:

ԱՊԱԳԱ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕՐԸ

22.11.2022 թ.

2022թ. նոյեմբերի 22-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի երկրորդ կուրսերի ուսանողները՝ ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի ղեկավարությամբ, եղան տարբեր արտադրական ձեռնարկություններում: Նախ այցելեցին «Ալեքս Տեքստիլ» ընկերության գուլպաների գործարան: Այնուհետ ուսանողներն իրենց պրակտիկան շարունակեցին «ՕՎԱԼ պլաստիկ» ընկերությունում: Արդյունավետ ու հագեցած օրը նշանավորվեց Երևանի ժամանակակից արվեստի թանգարան այցով:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

24.11.2022 թ.

2022թ. նոյեմբերի 24-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի գրադարանում կայացավ հուզիչ ցերեկույթ՝ բաղկացած երկու մասից: Առաջին մասում բնագիտական ֆակուլտետի դասախոս Լալա Մկրտչյանը և «Սերվիս» բաժնի ուսանողները ներկայացրին իրենց հեղինակած ստեղծագործությունները: Ստեղծագործությունների մեծ մասը նվիրված էր Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած հերոսներին և յուրօրինակ խնկարկում էր հայրենասեր հայորդիների հիշատակին: Ցերեկույթի երկրորդ մասում տեղի ունեցավ Վիլյամ Սարոյանի «Հայ մուկը» գրքի քննարկում:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԳՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

26.11.2022 թ.

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Քանաքարա Հայրապետյանը բուհի գիտական խորհրդին ներկայացրեց բաժնի 2021-2022 ուսումնական տարվա գործունեության արդյունքները: Կարևորվեց կրթության որակի ապահովման գործընթացներում ուսանողների,

պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամների, ինչպես նաև արտաքին շահակիցների՝ շրջանավարտների, գործատուների, ուսուցիչների, համագործակից կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը:

ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ ՄԱՐՏԻՆ ԱՎԱԳՅԱՆԸ՝ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԴՈԲԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

27.11.2022 թ.

2022թ. նոյեմբերին Եվրոպական միության միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակում Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի դեկան Մարտին Ավագյանը մեկնեց Իսպանիայի Թագավորության Կորդոբայի համալսարանի ագրարային քոլեջ: Պարոն Ավագյանը հանդիպում ունեցավ Կորդոբայի համալսարանի միջազգային կապերի բաժնի համակարգող Կոնչա Մադրիդի, ագրարային քոլեջում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ԿԱՅԱՑԱՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

26.11.2022 թ.

2022թ. նոյեմբերի 26-ին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում՝ 2022թ. միասնական ընդունելության քննությունների արդյունքներով հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին կուրս ընդունված ուսանողների և նրանց ծնողների հետ: Համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ջերմորեն ողջունեց և շնորհավորեց առաջին կուրսեցիներին ու նրանց ծնողներին, ուսանողներին մաղթեց արդյունավետ ուսումնառություն և բարձր առաջադիմություն, կոչ արեց լինել աշխատասեր, պատասխանատու և նպատակասլաց:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻ ԱՐՄԻՆԵ ՍԵՅՐԱՆՅԱՆԸ ՊԱՏՎՈՎ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԻՐ ԲՈՒՀԸ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԿՈՐԴՈԲԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

30.11.2022 թ.

Արմինե Սեյրանյանը Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած հերոս Վահագն Ռուբենի Սեյրանյանի դուստրն է: Նա ծնվել է Արցախում՝ Մարտակերտի շրջանի Խաչենի հովտում գտնվող գողտրիկ անկյունում՝ գյուղ Հովտաշենում: 44-օրյա պատերազմից հետո հերոս Վահագն Սեյրանյանի ընտանիքը տեղափոխվել է Գեղարքունիքի մարզ, և Արմինեն ընդունվել է Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Տնտեսագիտություն» բաժնի 2-րդ կուրս: 2022 թվականի ամռանը ԳՊՀ ուսանողների հետ միասին մասնակցել է Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանում կայացած ամառային 15 օրյա ճամբարին, որտեղ ևս արժանացել է շնորհակալագրերի և դիպլոմների: Արմինեն մասնակցել է ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերին և Եվրոպական Միության «Էրազմուս+» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի և Իսպանիայի Թագավորության Կորդոբայի համալսարանի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ 2022 թվականի սեպտեմբեր ամսից իր կրթությունն է շարունակում Իսպանիայի Կորդոբայի համալսարանում:

ИТОГИ МЕЖДУНАРОДНОГО СЕМИНАРА ГАВАР — САРАТОВ

28.11.2022

28 ноября 2022 года в режиме онлайн с успехом прошёл международный методический семинар «Активные методы преподавания иностранных языков в формате дистанционного обучения». Организаторами семинара выступили Центр международных коммуникаций и образовательного туризма “Talk&Travel” г. Ереван, совместно с филологическим факультетом Гаварского государственного университета. Семинар собрал преподавателей Гаварского

государственного университета, Поволжского института управления имени П.А. Столыпина (г. Саратов, Российская Федерация), а также учителей иностранных языков школ Армении и России (44 человека), желающих разнообразить и совершенствовать свое преподавательского мастерство, используя активные методы в формате дистанционного обучения.

МЕЖУНИВЕРСИТЕТСКОЕ СОТРУДНИЧЕСТВО ГАВАР-ГРОЗНЫЙ ПРОДОЛЖАЕТСЯ
02.12.2022 թ.

Сегодня преподаватель ГГУ, доктор социологических наук, кандидат экономических наук Армен Саакян от имени ректора Гаварского государственного университета Рузанны Акобян вручил благодарственное письмо ректору ГГНТУ, доктору технических наук, профессору М. Ш. Минцаеву за продуктивное сотрудничество и за отличную организацию программы «Летний университет». На основании меморандума о сотрудничестве, заключённого между Гаварским государственным университетом и Грозненским государственным нефтяным техническим университетом имени академика М. Миллионщикова двадцать студентов ГГУ с 10 по 24 июля 2022 года отправились в Чеченскую Республику и приняли активное участие в программе «Летний университет», организованной Грозненским университетом. В рамках межвузовского партнерства Гавар-Грозный с 26 по 28 октября 2022 г. была проведена совместная международная научная онлайн-конференция, посвящённая актуальным проблемам социально-экономического, культурного развития регионов и путям их решения, важной роли региональных научно-образовательных учреждений в этом прцессе.

‹‹ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԹԱՔՆՎԱԾ ԿՈՂՄԸ››
08.12.2022 թ.

Գավառի պետական համալսարանում ձևավորված գեղեցիկ ավանդույթներից են գրքերի քննարկումները, հեղինակների հետ ուսուցողական հանդիպումները, արդի թեմաներով սեմինարները: ԳՊՀ ուսանողներն ու դասախոսները հանդիպեցին ‹‹Targeting›› ընկերության համահիմնադիր և տնօրեն, թվային շուկայաբան /մարկետոլոգ/, «Հաջողության թաքնված կողմը» գրքի հեղինակ Գոռ Կարապետյանի հետ: Տեղի ունեցավ գրքի քննարկում: Սեփական փորձի, անցած ճանապարհի փորձությունների մասին պատմություններն առվել հետաքրքիր դարձրին հաջողության հասնելու նախադրյալների և ուղիների մասին քննարկումը: Հանդիպմանը մասնակցեց նաև արձակագիր Արմեն Նիազյանը, ով «Բռնիր ձեռքս. ես վախենում եմ» և «Խավարից այն կողմ» գրքերի հեղինակն է: Արմեն Նիազյանը ուսանողներին հակիրճ ներկայացրեց իր գրքերի հիմնական գաղափարները: Քննարկման հաջորդ թեման թվային շուկայաբանությունն էր /մարքեթինգը/, որի գործիքներին տիրապետումը կարևոր է ուսանողների համար:

СОСТОЯЛСЯ ОТКРЫТЫЙ УРОК НА ФИЛОЛОГИЧЕСКОМ ФАКУЛЬТЕТЕ ГГУ
09.12.2022

На филологическом факультете Гаварского государственного университета состоялся открытый урок по Страноведению на тему “Легенды Кельна”, который вел преподаватель кафедры иностранного языка и литературы ГГУ, кандидат филологических наук Даштоян Егише. На открытом уроке присутствовали проректор Гаварского государственного университета по учебно-научной работе Кутузян Нелли, заведующая кафедрой иностранного языка и литературы Мирибян Гаяне, преподаватель Балагозян Аник, заместитель декана филологического факультета Саргсян Рузанна, академический консультант кафедры иностранного языка и литературы Налбандян Нарине и студенты. В рамках очередного совместного мероприятия гостями университета были ученики 10, 11, 12 классов школы N 1 Гандзака в сопровождении учительницы немецкого языка Алины Хачатрян.

ԳՊՀ-ՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑԻՆ ԳԱՆՁԱԿԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

09.12.2022թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակի թիվ 1 միջնակարգ դպրոցի 10, 11, 12-րդ դասարանների աշակերտներին՝ գերմաներենի ուսուցչուհի, ԳՊՀ շրջանավարտ Ալինա Խաչատրյանի ղեկավարությամբ: Հյուրերը նախ ներկա գտնվեցին ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի կողմից կազմակերպված «Քյոլնի լեգենդները» թեմայով բաց դաս-քննարկմանը: Գերմաներենի դասախոս Եղիշե Դաշտոյանը բովանդակալից շնորհանդեսի միջոցով աշակերտներին և ուսանողներին ներկայացրեց Քյոլն քաղաքը, անդրադարձ կատարեց Քյոլնի պատմությանն ու ժամանակակից կյանքին՝ ներկաների առջև քայլ առ քայլ բացահայտելով այդ հրաշալի քաղաքի խորհուրդն ու լեգենդները…

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ

10.12.2022 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ Անահիտ Պողոսյանի և քարտուղար Նելլի Գրիգորյանի նախաձեռնությամբ կայացավ ինտելեկտուալ խաղ-մրցույթ, որին մասնակցեցին բուհի բանասիրական, բնագիտական, տնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողական խորհրդի (ՈՒԽ) և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) անդամները:
Մրցույթը բաղկացած էր մի քանի հետաքրքիր փուլերից:

ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

10.12.2022 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում գործող «Տնտեսագետների ակումբ»-ի նախագահ Արեգա Հովհաննիսյանի, ուսանողական գիտական ընկերության նախագահ Մերի Խաչատրյանի նախաձեռնությամբ և ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի աջակցությամբ տեղի ունեցավ վեբինար-քննարկում սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ֆինանսական վերլուծաբան Հայկ Թրունյանի հետ՝ «Վարքագծային տնտեսագիտություն և ֆինանսները ժամանակակից աշխարհում» թեմայով:

ՄԱՐԴԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՐԺԵՔ Է. ԳՊՀ-ՈՒՄ ՆՇՎԵՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

10.12.2022 թ.

Դեկտեմբերի 10-ին Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում տեղի ունեցավ բաց դաս–քննարկում՝ նվիրված Մարդու իրավունքների միջազգային օրվան: Իրավագիտության ամբիոնի դասախոս Անի Ամիրյանը ներկայացրեց մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները սահմանող միջազգային փաստաթղթի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման պատմությունը, նպատակը, կառուցվածքն ու բովանդակությունը:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

11.12.2022 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի սերվիս բաժնի ուսանողները՝ դասախոս Լալա Մկրտչյանի ղեկավարությամբ կազմակերպել էին յուրօրինակ ցերեկույթ՝ նվիրված աշխարհագրական խոշոր հայտնագործություններին: Այս անգամ ուսանողները հանդես էին գալիս որպես ճանապարհորդներ՝ ցուցադրելով նաև իրենց

թատերական հմտությունները: Ներկայացվեցին Քրիստոփոր Կոլումբոսի, Վասկո դա Գամայի, Ֆեռնան Մագելանի ճանապարհորդությունները, նրանց կյանքի հետաքրքիր դրվագները:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԸ՝ ՄԻՆՍԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՎԻՐՅԱԼ ԴԱՍԱԽՈՍ

12.12.2022 թ.

Գավառի պետական համալսարանի և Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր, որի հիման վրա իրականացվում են միջբուհական ծրագրեր: Գավառի պետական համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, տնտեսական գիտությունների թեկնածու Արմեն Սահակյանը մեկնել է Բելառուսի Հանրապետություն և որպես հրավիրյալ դասախոս՝ ս. թ. դեկտեմբերի 12-ից 17-ը դասախոսությունների շարքով հանդես կգա Մինսկի պետական լեզվաբանական համալսարանում:

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ՝ ԳՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

16.12.2022 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ռոզա Աբրահամյանի նախաձեռնությամբ կայացավ ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ տնտեսագիտական ֆակուլտետի տարբեր կուրսերի ուսանողների մասնակցությամբ: Խաղի ընթացքում հնչեցին տրամաբանական, հետաքրքրաշարժ հարցեր տարբեր ոլորտներից: Խաղին մասնակցում էին «Liders» և «Victory» թիմերը: Խաղը բաղկացած էր 3 փուլերից: Ինտելեկտուալ խաղի ավարտին մեկ միավորի տարբերությամբ հաղթող ճանաչվեց «Victory» թիմը:

ԿԱՅԱՑԱՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳՊՀ ՀԻՄՆԱԴԻՐ ՌԵԿՏՈՐ ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ

17.12.2022 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կայացավ հոբելյանական գիտաժողով՝ նվիրված բուհի հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի ծննդյան 95-ամյակին: : Պրոֆեսոր Հրանտ Հակոբյանը հեղինակ է ավելի քան հարյուր գիտական աշխատությունների՝ մենագրությունների և հոդվածների: ԳՊՀ ուսանողները, հավատարիմ մնալով պատվարժան ռեկտորի՝ գիտությամբ զբաղվելու, մասնագիտական խնդիրները քննելու և լուծումներ առաջարկելու պատգամին, շարունակում են զբաղվել հետազոտական աշխատանքով: Հոբելյանական գիտաժողովին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանողները հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ «ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ՝ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ» ԽՈՐԱԳՐՈՎ

19.12.2022 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի, բանասիրական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ալինա Ղարիբյանի և գրադարանավարուհի Ալվարդ Թոռչյանի նախաձեռնությամբ բանասիրական ֆակուլտետում տեղի ունեցավ հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցին նվիրված ցերեկույթ, որի նպատակն էր արժևորել հայ մեծ բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունները և դրանք ներկայացնել սերունդների աչքերով ու ընկալմամբ: Միջոցառման մասնակիցները համալսարանի բանասիրական, հումանիտար

մասնագի–տությունների, բնագիտական և տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողներն էին: Իրենց գեղեցիկ ասմունքով, երգային ու պարային կատարումներով միջոցառմանը մասնակցեցին նաև Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի N 1 միջնակարգ դպրոցի աշակերտները, որոնք համալսարան էին եկել ուսուցչուհիներ՝ ԳՊՀ շրջանավարտներ Աննա Ասատրյանի և Լիլիթ Մելքոնյանի ուղեկցությամբ:

РЕКТОР ГАВАРСКОГО ГОСУНИВЕРСИТЕТА РУЗАННА АКОПЯН НАГРАЖДЕНА ЗОЛОТОЙ МЕДАЛЬЮ РАУ
20.12.2022

Постановлением Ученого совета вуза доктор юридических наук, доцент, ректор Гаварского государственного университета Рузанна Хачиковна Акопян награждена Золотой медалью Российско-Армянского университета. Награда присуждена в связи с 25-летием со дня учреждения Российско-Армянского университета, за весомый личный вклад в организацию в РАУ процесса подготовки специалистов в области правоведения. Поздравляем Рузанну Акопян и желаем благополучия и реализации всех намеченных планов! Ректор Гаварского государственного университета Рузанна Акопян: “Российско-Армянский университет — это не просто университет, это социально-культурный храм, это ценности, высокие ценности: справедливость, свобода и все те ценности, которые Армен Размикович Дарбинян распространяет. Я везде и всегда встречаю раушников, и мы сразу сродняемся, потому что носим эти общие ценности”. Отметим, что Золотая медаль Университета была учреждена в 2010 году. По решению Ученого совета РАУ она вручается с целью подтверждения заслуг профессорско-преподавательского состава и сотрудников вуза, внесших значимый вклад в становление и развитие Российско-Армянского университета. /www.rau.am/

ՀԱՃԱԽՈՐԴԱԿԵՆՏՐՈՆ ԲԻԶՆԵՍԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ
23. 12. 2022թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում գործող Տնտեսագետների ակումբի նախագահ Արեգա Հովհաննիսյանի, ուսանողական գիտական ընկերության նախագահ Մերի Խաչատրյանի նախաձեռնությամբ և ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի աջակցությամբ տեղի ունեցավ հերթական վեբինար-քննարկումը սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ֆինանսական վերլուծաբան Հայկ Թրունյանի հետ՝ «Հաճախորդակենտրոն բիզնես» թեմայով: Այս անգամ հենց խոսնակի նախաձեռնությամբ ընտրվեց թեման և ծավալվեց բովանդակալից քննարկում:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑԵՐԵԿՈՒՅԹ
25.12.2022թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ Համո Սահյանին՝ Հմայակ Սահակի Գրիգորյանին նվիրված ցերեկույթ: Միջոցառման նպատակն էր ներկայացնել բնապաշտ բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունները, արժևորել նրան որպես բնության և մարդկային ներաշխարհը գովերգող անհատի: Միջոցառման մասնակիցները բնագիտական ֆակուլտետի Համակարգչային ճարտարագիտություն, Քարտեզագրություն և կադաստրային գործ բաժինների ուսանողներն էին, իսկ նախաձեռնողը՝ ուսումնական խորհրդատու Հերմինե Սաֆարյանը: Ուսանողները ընթերցեցին հիշողություններ, ասույթներ՝ նվիրված Համո Սահյանին, ինչպես նաև ներկայացրին բանաստեղծի ստեղծագործություններից, որոնք ունկնդիրներին նվիրեցին հուզումնալից պահեր:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԳԵՐՄԱՆԻԱ. ‹‹ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ››
26.12.2022 թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի նախաձեռնությամբ Սուրբ Ծննդյան տոների նախօրեին տեղի ունեցավ «Հայաստան-Գերմանիա. Սուրբ Ծննդյան կամուրջ» խորագրով առցանց հանդիպում Գավառի պետական համալսարանի և Գերմանիայի Բոխումի համալսարանի ու Դորտմունդի տեխնիկական համալսարանի դասախոսների և ուսանողների միջև: Հանդիպման առցանց ձևաչափը հնարավորություն տվեց ջերմ կապեր հաստատելու մասնակիցների միջև: Հանդիպումը վարում էին ԳՊՀ գերմաներենի դասախոս, Երևանի «Talk & Travel» կենտրոնի ղեկավար Եղիշե Դաշտոյանը և ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Արուսյակ Սմբաթյանը: Հանդիպմանը ներկա էին ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գայանե Միրիբյանը, ամբիոնի ակադեմիական խորհրդատու Նարինե Նալբանդյանը, անգլերեն լեզվի և գրականության բաժնի ուսանողներ: Գերմանիայից միջոցառումը վարում էր Դորտմունդի տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Անդրեյ Սոկոլովը:

НА ВСТРЕЧУ С ПРЕПОДАВАТЕЛЕМ ИЗ ГАВАРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ПРИШЛИ СТУДЕНТЫ «ЗАРУБЕЖНОГО РЕГИОНОВЕДЕНИЯ»
20.01.2023

Студенты направления «Зарубежное регионоведение» Поволжского института управления имени П.А. Столыпина –филиал федерального государственного бюджетного образовательного учреждения высшего образования «Российская академия народного хозяйства и государственной службы при Президенте Российской Федерации» (РАНХиГС) познакомились с представителем Гаварского государственного университета, кандидата филологических наук Егише Даштояном.

Встреча прошла в формате презентации. Спикер рассказал о Гаварском государственном университете, отметил важность межкультурных взаимодействий, предложил возможность участия студентов нашего института в совместных научно-образовательных проектах, бинарных лекциях в формате онлайн, дополнительных образовательных программах. Стороны обменялись идеями и договорились разработать план мероприятий при участии сотрудников Центра международных программ и проектов Института.

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆ
01.02.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մելքոնյանը համալսարանի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ալլա Հովհաննիսյանի հետ միասին մասնակցեց Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղում կայացած, Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության, Երևանի գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի, Հայաստանում ռուսական բուհերի մասնաճյուղերի ուսանողների ասոցիացիայի կողմից կազմակերպված, ուսանողների տոնին նվիրված միջոցառմանը, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության տարբեր բուհերի և քոլեջների ուսանողներ: Գավառի պետական համալսարանից «Տարվա լավագույն ուսանող» անվանակարգում հաղթող ճանաչվեց և պարգևատրվեց բանասիրական ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մելքոնյանը:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ՝ ՇՎԵԴԻԱՅԻ ԿԱՌԼ ԼԻՆԵՈՒՍԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

09.02.2023 թ.

Գավառի պետական համալսարանը ‹‹Լինեուս-Պալմա›› երկկողմանի գործընկերության ծրագրի շրջանակներում տարիներ շարունակ հաջողությամբ համագործակցում է Շվեդիայի Թագավորության Կառլ Լինեուսի անվան համալսարանի հետ: Համագործակցության ծրագրի շրջանակում ս. թ. փետրվար ամսին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի անդամները հյուրընկալվեցին և դասախոսական աշխատանք կատարեցին գործընկեր բուհում:

ԳՊՀ պատվիրակության կազմում էին Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու Վարազդատ Ավետիսյանը, նույն ամբիոնի դասախոսներ Արմեն Ղազարյանը, Շահեն Գասպարյանը և Կարեն Սիրականյանը:

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

19.02.2023 թ.

Փետրվարի 19-ին՝ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ալինա Ղարիբյանի և ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ Անահիտ Պողոսյանի նախաձեռնությամբ ԳՊՀ գրադարանում կայացավ բաց դաս՝ «Թումանյանի աշխարհում» թեմայով:

Բաց դասին ներկա էին Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, բանասիրական ֆակուլտետի դեկան Թաթուլ Ասոյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Վիկտոր Կատվալյանը, հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողներ, մագիստրոսներ:

ԳՊՀ ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ՝ ԳՐՈԶՆԻԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

21.02.2023 թ.

Գավառի պետական համալսարանի պրոֆեսոր, տնտեսական գիտությունների թեկնածու, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր Արմեն Սահակյանը՝ Գավառի և Գրոզնիի պետական համալսարանների միջև կնքված համագործակցության պայմանագրի հիման վրա, որպես հրավիրյալ դասախոս ս. թ. փետրվարի 11-ից 20-ը աշխատել է Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանում:

Պարոն Սահակյանը հանդիպումներ է ունեցել Գրոզնիի պետական համալսարանի ռեկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Մինցաևի, պրոռեկտոր, տնտեսական գիտությունների դոկտոր Ռ. Սալգիրիևի, համալսարանի ղեկավար կազմի այլ անդամների հետ, հանդես եկել բաց դասախոսություններով, վարել միջազգային գիտական սեմինար՝ «Էթնոմշակութային հետազոտություններ» խորագրով:

ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ԳԻՐՆ ՈՒ ԳԻՐՔԸ ՄԵՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

24.02.2023 թ.

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Լևոն Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի դահլիճում կայացավ հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրվան նվիրված միջոցառում, որը կրում էր «Գիրն ու գիրքը մեր» խորագիրը: Միջոցառումը կազմակերպել էր Գեղարքունիքի մարզի Վարդգես Պետրոսյանի անվան մարզային գրադարանը՝ Գավառի համայնքապետարանի աջակցությամբ:

Գավառի պետական համալսարանից միջոցառմանը ներկա էին տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանը, հումանիտար մասնագիտությունների

ֆակուլտետի դեկան Համլետ Ղաջոյանը, գրադարանավար Ալվարդ Թոռչյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Նունե Միրիբյանը, ուսանողներ:

ՏՈՆ, ՈՐ ՄԻՇՏ ՄԵԶ ՀԵՏ Է
24.02.2023 թ.

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ կայացավ Մայրենիի օրվան նվիրված առցանց միջոցառում, որին մասնակցում էին ՀՀ լեզվի կոմիտեի, Գավառի պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի, Արցախի պետական համալսարանի, Հայկական պետական մանկավարժական համալսարանի, Բրյուսովի անվան պետական համալսարանի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Գորիսի պետական համալսարանի, Վանաձորի պետական համալսարանի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Շիրակի պետական համալսարանի, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներկայացուցիչներ, գիտաշխատողներ, դասախոսներ, մանկավարժներ, սովորողներ Հայաստանի Հանրապետությունից, Արցախի Հանրապետությունից, Սփյուռքից, հանրակրթական դպրոցների ուսուցիչներ, աշակերտներ, տարբեր բարբառների ներկայացուցիչներ:

ԿԱՅԱՑԱՎ ԵՄ ‹‹ERASMUS+FLEXWBLE›› ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ
27.02.2023թ.

Ավստրիայի Լինցի համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության ‹‹ERASMUS+FLEXWBLE›› ծրագրի աշխատաժողովը՝ նվիրված աշխատանքի վրա հիմնված կրթության կազմակերպմանը, աշխատանքահեն ուսուցման ճկուն և նորարարական հիմքի ձևավորմանը:

Ծրագրին Հայաստանի Հանրապետության բուհերից անդամակցում են Գավառի պետական համալսարանը, Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանը և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը: Գործընկեր եվրոպական բուհերն են Ավստրիայի Լինցի համալսարանը, Լիտվայի Կլայպեդայի համալսարանը, իսկ ծրագրի համակարգող բուհը Լատվիայի Լիպեյայի համալսարանն է: Աշխատաժողովին Գավառի պետական համալսարանից մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս, ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Նարինե Նալբանդյանը:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ
28.02.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի կողմից կազմակերպված հերթական ուսանողական գիտաժողովը: Առողջապահության ոլորտին առնչվող արդի հիմնախնդիրների վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան բնագիտական ֆակուլտետի դեղագործական քիմիայի բաժնի երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողները: Նրանք բովանդակալից շնորհանդեսների միջոցով ներկայացրին մարդու իմունային համակարգի աշխատանքը խաթարող գործոնները, անդրադարձան առավել տարածված և եզակի հանդիպող աուտոիմուն հիվանդություններին, օրգանիզմում կատարվող կենսաքիմիական ռեակցիաների բնականոն ընթացքի խաթարման հետևանքներին: Քննարկման առարկա դարձան ուռուցքային աճի ախտածնությունը, բուժման ժամանակակից եղանակները, կողմնակի ազդեցություններն ու առավելությունները: Հատուկ կարևորվեցին առողջ սնունդն ու

առողջ ապրելակերպի մշակույթը: Ներկայացվեցին արհեստական ծագման սննդամթերքին վերաբերող հարցեր, սննդարդյունաբերության մեջ կիրառվող գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների կիրառման որոշ ուղղություններ:

СОСТОЯЛСЯ НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ СЕМИНАР ПО ВОПРОСАМ ФОРМИРОВАНИЯ АНТИКОРРУПЦИОННОГО МИРОВОЗЗРЕНИЯ В СТУДЕНЧЕСКОЙ СРЕДЕ

02.03.2023

Состоялся Международный научно-практический онлайн семинар по вопросам формирования антикоррупционного мировоззрения в студенческой среде, противодействия коррупции и принципу добросовестности. Его организаторами выступили Гаварский государственный университет (ГГУ), Поволжский институт управления имени П.А. Столыпина – филиала РАНХиГС, (ПИУ РАНХиГС, Российская Федерация, г. Саратов) и Центр международной коммуникации и образовательного туризма «Talk & Travel» (T&T, Республика Армения, г. Ереван). Преподаватели и студенты армянских (Гавар, Ереван) и российских (Саратов, Казань, Чебоксары) вузов общались в режиме онлайн на русском языке. Основным докладчиком выступил кандидат юридических наук Максим Мокеев (ПИУ РАНХиГС), роль модератора взял на себя кандидат филологических наук Егише Даштоян (ГГУ, T&T).

ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ‹‹ԴԻՋԻԹԵՔ ԷՔՍՊՈ-2022›› ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ

11.03.2023 թ.

2023թ. մարտի 11-ին Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում մեկնարկեց «Դիջիթեք Էքսպո-2022» համաժողովը և տարածաշրջանում խոշորագույնը համարվող նույնանուն տեխնոլոգիական ցուցահանդեսը:
Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներից բաղկացած խումբը Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի գլխավորությամբ և ամբիոնի դասախոսներ Մարգար Հովհաննիսյանի, Արթուր Միրիբյանի, Կարեն Սիրականյանի, Երեմ Սարգսյանի, Կարեն Մաստոյանի ուղեկցությամբ այցելեցին ցուցահանդես:

ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹԻՆ

21.03.2023 թ.

Գավառի քաղաքային գրադարանում մարտի 21-ին տեղի ունեցավ Պոեզիայի միջազգային օրվան նվիրված գրական-երաժշտական ցերեկույթ, որին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Համլետ Ղաջոյանը, բանասիրական ֆակուլտետի փոխդեկան Ռուզաննա Սարգսյանը և բանասիրական ֆակուլտետի ուսանողներ:

Միջոցառումը վարում էր Գավառի քաղաքային գրադարանի գլխավոր մատենագետ Նորա Մարեմկոյանը: Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհիներ Անահիտ Պողոսյանը, Անահիտ Վարդանյանը, Թագուհի Պետրոսյանը, նույն ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Լիլիթ Սեյրանյանը, 2-րդ կուրսի ուսանողուհի Արուսյակ Սմբաթյանը ներկայացրին հայ պոեզիայի ակունքները, պատմական զարգացման փուլերը, երախտագիտությամբ հիշատակեցին հայ բանաստեղծության ականավոր դեմքերին և նրանց ստեղծագործությունները: Պոեզիայից բխող հզոր կենսափիլիսոփայության, նրա մաքրագործող և ապրեցնող ուժի մասին խոսեց ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Համլետ Ղաջոյանը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՓ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ՝ ԳՊՀ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ

24.03.2023թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտության լաբորատորիան հյուրընկալեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտներին՝ մաթեմատիկայի ուսուցչուհի, ԳՊՀ շրջանավարտ Լիանա Պետրոսյանի, կենսաբանության լաբորանտ, ԳՊՀ շրջանավարտ Սուզաննա Միերյանի ուղեկցությամբ: ԳՊՀ բնագիտության լաբորատորիայի վարիչ Թերմինե Խաչիկյանը ներկայացրեց լաբորատոր փորձերի դերը՝ բնագիտական առարկաների ուսումնասիրության գործում, աշակերտների համար կազմակերպեց լաբորատոր փորձեր և գործնական աշխատանք՝ ֆիզիկա և քիմիա առարկաներից:

ԳՊՀ-Ն ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԾՈՎԱԶԱՐԴ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

24.03.2023 թ.

‹‹ԳՊՀ-դպրոցներ›› համագործակցության ծրագրի շրջանակում համալսարան էին այցելել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գյուղի միջնակարգ դպրոցի 9-10-րդ դասարանների աշակերտները՝ կենսաբանության և քիմիայի ուսուցչուհի, ԳՊՀ շրջանավարտ Անուշ Օհանյանի, աշխարհագրության ուսուցչուհի, ԳՊՀ շրջանավարտ Լիլիթ Կարոյանի ուղեկցությամբ:

Աշակերտները հանդիպեցին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հետ, լսեցին օգտակար խորհուրդներ մասնագիտական ճիշտ կողմնորոշման և կրթության կարևորության մասին:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

26.03.2023թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված տնտեսագիտության արդի հիմնախնդիրներին:

Ուսանողական գիտաժողովին ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, աշակերտներ՝ Գավառի ավագ դպրոցից, ինչպես նաև ուսանողներ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջից՝ դասախոս, ԳՊՀ շրջանավարտ Վարդան Գարեյանի ուղեկցությամբ:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով:

ՁՈՆ ԳԱՐՆԱՆ ԵՎ ՍԻՐՈ

31.03.2023թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում կայացավ գրական-երաժշտական ցերեկույթ, որը կրում էր «Կանաչ արև» խորագիրը: Այն կազմակերպել էր հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ալլա Բագոյանը:

Մասնակիցները հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողներն էին: Միջոցառմանը ներկա էին Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, բանասիրական ֆակուլտետի դեկան Թաթուլ Ասոյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Գրիգորյանը, փոխդեկան Ռուզաննա Սարգսյանը,

գրադարանավարուհի Ալվարդ Թոռչյանը, «Արևի աշխարհ» կենտրոնի տնօրեն Աննա Հունանյանը, ուսանողներ:

ԲԱՑ ԴԱՍ ԳՊՀ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ
01.04.2023 թ.

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում տեղի ունեցավ «Արցախյան առաջին ազատամարտի արտացոլումը հայ գրականության մեջ» թեմայով բաց դաս:

Դասը վարում էին ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, «Հայ գրականության պատմություն» առարկայի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանը և «Հայոց լեզու և գրականություն» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Սուսաննա Բաղդասարյանը:

Դասին ներկա էին բանասիրական ֆակուլտետի դեկան Թաթուլ Ասոյանը, փոխդեկան Ռուզաննա Սարգսյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Վարսիկ Ներսիսյանը, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ:

Բաց դասի նպատակն էր ներկայացնել ժամանակակից հայ գրողների մոտեցումները, տեսակետներն ու դիրքորոշումը Արցախյան պատերազմի և առհասարակ պատերազմի վերաբերյալ:

ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴԱԾ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ
01.04.2023 թ.

2023թ. ապրիլի 1-ին ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի իրականացրած՝ Եվրոպական միության «ERASMUS+» ակադեմիական շարժունության ծրագրերով եվրոպական համալսարաններում սովորած ուսանողների և դասավանդած դասախոսների շնորհանդես-հաշվետվությունները:

Հետաքրքիր և բովանդակալից հաշվետվություններ ներկայացրին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, նույն ամբիոնի դասախոսներ Շահեն Գասպարյանը, Կարեն Սիրականյանը, տնտեսագիտական ֆակուլտետի Կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս Արմեն Ղազարյանը, ովքեր դասախոսություններով հանդես են եկել Շվեդիայի Թագավորության Կառլ Լիննեուսի անվան համալսարանում:

Հաշվետվություններով հանդես եկան նաև տնտեսագիտական ֆակուլտետի «Տնտեսագիտություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Արմինե Սեյրանյանը և Լիլիթ Պողոսյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Հովեյանը, ովքեր մեկ կիսամյակ սովորել են Իսպանիայի Թագավորության Կորդոբայի համալսարանում:

ՊԱՏԱՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԸ՝ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
02.04.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտության լաբորատորիան հյուրընկալեց «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի կողմից Գավառ համայնքում իրականացվող «Պատանի հետազոտող» նախաձեռնության ներկայացուցիչներին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի տասը դպրոցների 5-8-րդ դասարանների աշակերտներին:

ԳՊՀ բնագիտության լաբորատորիայի վարիչ Թերմինե Խաչիկյանի և աշակերտների մասնակցությամբ կատարվեցին փորձեր՝ Արքիմեդյան ուժի, ՀՈՒԿ-ի առաձգականության ուժի, լծակի հավասարակշռության կանոնի, շփման ուժի տարբեր տեսակների ուսումնասիրման նպատակով:

Աշակերտները ծանոթացան Մաքսվելի թափանիվի աշխատանքին, անիմոմետրի, մազային խոնավաչափի, անձրևաչափի գործարկման հմտություններին և սովորեցին ճիշտ կիրառել կողմնացույցը:

ԿԱՅԱՑԱՎ ԲԱՑ ԴԱՍ ԳՊՀ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ
03.04.2023 թ.

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում տեղի ունեցավ բաց դաս՝ «Կանանց կերպարները Սասնա ծռեր» էպոսում թեմայով:

Դասը վարում էր հայոց լեզվի և գրականության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Վարդուհի Կարապետյանը:

Դասին ներկա էին բանասիրական ֆակուլտետի դեկան Թաթուլ Ասոյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Գրիգորյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներ Վարսիկ Ներսիսյանը, Նաիրա Իսկանդարյանը, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ:

Բաց դասի նպատակն էր ներկայացնել կին հերոսների կերպարները «Սասնա ծռեր» հերոսավեպում, ընդգծել այն ինքնատիպ ու հերոսական գծերը, որ բնորոշ են նրանց:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ
05.04.2023 թ.

2023թ. ապրիլի 5-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ 2022 թվականի «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը:

Մրցանակաբաշխությանը ներկա էին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, բուհերի ռեկտորներ և ուսանողներ:

ՀՀ բուհերի լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթում 1-ին տեղին արժանացել է 13 ուսանող, որոնցից 4-ը Գավառի պետական համալսարանի ուսանողներն են: ԳՊՀ 1 ուսանող զբաղեցրել է 2-րդ տեղը:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԵՄ ‹‹ERASMUS+ T-GREEN›› ԾՐԱԳԻՐԸ
07.04.2023 թ.

2023թ. ապրիլի 4-ին մեկնարկեց Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ‹‹ERASMUS+T-GREEN. Կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» (THE ERASMUS+ CBHE PROJECT “Transforming Graduate Education for Green and Sustainable Future” (T-GREEN)) եռամյա նախագիծը, որը համակարգում է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (ՃՇՀԱՀ): Նախագծի համա-համակարգող է՝ Եվրասիա միջազգային համալսարանը (ԵՄՀ): ‹‹T-GREEN›› նախագիծը բարձրագույն կրթության անհրաժեշտ բարեփոխումներին ուղղված նախագիծ է, որի համար առանցքային է «Կանաչ» քաղաքականությունը: Գավառի պետական համալսարանից հանդիպմանը մասնակցեցին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, բնագիտական ֆակուլտետի դեկան Մարտին Ավագյանը, տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հակոբ Ղուլոյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, նույն բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը:

ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴԱԾ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

08.04.2023թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները Եվրոպական միության միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակում սովորում, դասավանդում և վերապատրաստման դասընթացների են մասնակցում գործընկեր եվրոպական բուհերում:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարման և ֆինանսներ» ամբիոնի դասախոս Աստղիկ Հովեյանը ներկայացրեց Իսպանիայի Թագավորության Ալմերիայի համալսարանում իր կատարած դասախոսական աշխատանքի արդյունքները:

Բովանդակալից և հետաքրքիր հաշվետվություններով հանդես եկան նաև բանասիրական ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Զառա Պետրոսյանը, ով ուսանել է Իսպանիայի Թագավորության Կորդոբայի համալսարանում, բնագիտական և հեռակա ուսուցման ֆակուլտետների «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողներ Մարատ Սարգսյանն ու Մանե Մանուկյանը, ովքեր մեկ կիսամյակ սովորել են Շվեդիայի Թագավորության Կառլ Լիննեուսի անվան համալսարանում:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԸ

20.04.2023թ.

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Քանաքարա Հայրապետյանի և բուհի արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Նունե Միրիբյանի ուղեկցությամբ համալսարանի առաջին կուրսերի ուսանողները եղան Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում և կինոռեժիսոր, սցենարիստ, ՀԽՍՀ և ՈՒԽՍՀ ժողովրդական արտիստ Սերգեյ Փարաջանովի անվան թանգարանում: Ուսանողները մեծ հետաքրքրությամբ ծանոթացան ցուցանմուշներին, ապա Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում ներկայացում դիտելուց հետո եզրափակեցին անմոռանալի տպավորություններով լի մշակութային օրը:

ՁՈՆ ՄԱՅՐԵՐԻՆ

21.04.2023թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում կայացավ «Ձոն մայրերին» խորագիրը կրող ցերեկույթ, որին ներկա էին Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանը, բանասիրական ֆակուլտետի փոխդեկան Ռուզաննա Սարգսյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Համլետ Ղաջոյանը, օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Արուսյակ Մուխսիխաչոյանը, ուսանողներ, ծնողներ:

Միջոցառմանը ներկա էին նաև Գավառի ավագ դպրոցի աշակերտները՝ ուսուցչուհիներ Անահիտ Զուրաբյանի, Ամալյա Զոլյանի, Լիլիկ Հակոբյանի ուղեկցությամբ, Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի աշակերտները:

ԳԱՎԱՌԻ ՍԱՄՎԵԼ ՔՈՉԱՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ Ն 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ՝ ԳՊՀ-ՈՒՄ

21.04.2023թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում Գավառի պետական համալսարանի բնագիտության լաբորատորիա էին

այցելել Գավառի Սամվել Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները՝ կենսաբանության ուսուցչուհի, ԳՊՀ շրջանավարտ Սիրունիկ Հարությունյանի ուղեկցությամբ:

Այցելության նպատակը ԳՊՀ լաբորատորիայում կենսաբանություն առարկայից լաբորատոր փորձերի և գործնական աշխատանքների իրականացումն էր՝ լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու Թերմինե Խաչիկյանի հմուտ ղեկավարությամբ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ՝ ԳՊՀ-ՈՒՄ
22.04.2023թ.

Գավառի պետական համալսարանը, Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Իմ կյանքը համայնքում» երեխաների փոխանակման ծրագրի շրջանակներում, հյուրընկալեց Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտներին՝ աշխարհագրության ուսուցչուհի Վարդուհի Վարդանյանի, լաբորանտ, ԳՊՀ շրջանավարտ Սիրուն Մարկոսյանի, ուսուցչի օգնական, ԳՊՀ շրջանավարտ Սիրուն Գասպարյանի ղեկավարությամբ, ինչպես նաև ծրագրի շրջանակներում իրենց դպրոց այցելած աշակերտներին:

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ‹‹ԿԱՆԱՉ›› ԵՎ ‹‹ԹՎԱՅԻՆ›› ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
22.04.2023 թ.

Տեղի ունեցավ սեմինար՝ նվիրված ‹‹կանաչ›› և ‹‹թվային›› կրթության բաղադրիչների բարեհաջող կիրառմանը և այդ նպատակով մանկավարժների միջև ակտիվ սոցիալական երկխոսություն խթանմանը: Սեմինարն անցկացվեց երկու նստաշրջանով. առաջին նստաշրջանի ընթացքում քննարկվեց մասնագիտական կրթական հաստատություններում դասավանդող մանկավարժների մասնագիտական զարգացման կարևորությունը՝ որպես Եվրոպական միության գործընկեր երկրներում կրթության թվայնացման և բնապահպանական բնույթի ապահովման անհրաժեշտ պայման: Գավառի պետական համալսարանից սեմինարին մասնակցեց արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը:

ԲԱՑ ԴԱՍ՝ ‹‹ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ›› ԹԵՄԱՅՈՎ
28.04.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի և ամբիոնի դասախոս, ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ բաց դաս՝ «Մաթեմատիկա և արհեստական բանականություն» թեմայով:

ԿԱՅԱՑԱՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ
05.05.2023 թ.

Գավառի պետական համալսարանը կազմակերպեց միջազգային գիտաժողով՝ նվիրված բուհի հիմնադրման 30-ամյակին: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և համագործակցության համար շնորհակալություն հայտնեց ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը: Լիագումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին տասնմեկ մասնագիտական բաժանմունքներում:

Հոբելյանական գիտաժողովին առցանց մասնակցեցին յոթ երկրի քառասունհինգ բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների աշխատակիցներ՝ ինչպես վաստակաշատ

գիտնականներ, այնպես էլ երիտասարդ հետազոտողներ, որոնք ներկայացրին հարյուրից ավելի զեկուցումներ բնական և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով: Զեկուցումները կհրատարակվեն Գավառի պետական համալսարանի գիտական պարբերականում:

ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԳՊՀ-ՈՒՄ՝ «ՇԻՐԱԿԻ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ» ԹԵՄԱՅՈՎ

10.05.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում անցկացվեց բանախոսություն՝ նվիրված ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» թեմայի լուսաբանմանը:

Բանախոսությանը ներկա էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, ԳՊՀ պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Վիկտոր Կատվալյանը, ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թաթուլ Ասոյանը, օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Միրիբյանը, դասախոսներ Ալինա Ղարիբյանը, Սաթենիկ Հայթյանը, Աննա Մելքոնյանը, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ‹‹ԳԵՂԱՄԱ›› ԹԻՄԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ-2023» ՓԱՌԱՏՈՆԻՆ

10.05.2023թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողների «Գեղամա» թիմը մասնակցեց Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի կազմակերպած «Ուսանողական գարուն-2023» մրցույթ-փառատոնին:

ԳՊՀ ուսանողները հանդես եկան ‹‹Ասմունք›› և ‹‹Թատերարվեստ›› անվանակարգերում: ‹‹Ասմունք›› անվանակարգում դափնեկրի կոչմանն արժանացավ ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողուհի Մելինե Ճնգոյանը: Նույն անվանակարգում տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողուհի Լիաննա Օհանյանը զբաղեցրեց 2-րդ տեղը, իսկ մյուս մասնակիցները ստացան շնորհակալագրեր: ԳՊՀ թիմը ‹‹Թատերարվեստ›› անվանակարգում գրավեց 2-րդ հորիզոնականը՝ Բայազետի բարբառով ներկայացնելով Գեղարքունյաց աշխարհի ավանդական հարսանեկան ծիսակարգը:

ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

11.05.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «Սերվիս» բաժնի 1-3-րդ, «Քարտեզագրություն և կադաստրային գործ» բաժնի 1-2-րդ կուրսերի ուսանողները՝ համալսարանի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ավագյանի ուղեկցությամբ իրենց ուսումնական պրակտիկան անցկացրին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

Պրոֆեսոր Ավագյանը ճանապարհի ընթացքում ներկայացրեց Գեղարքունիքի և Լոռվա մարզերի աշխարհագրական առանձնահատկությունները, բնակլիմայական պայմանները, տեսարժան վայրերը, անդրադարձ կատարեց անձեռակերտ և ձեռակերտ արժեքավոր հուշարձաններին, որոնք հիացմունք են պատճառում մարդկանց:

ԳՊՀ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐԻ

11.05.2023թ.

Եվրոպական համալսարանների ասոցիացիայի կողմից բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների փորձագետների մասնակցությամբ և Եվրոպական միության աջակցությամբ, հեռավար ձևաչափով անցկացվեց միջազգային սեմինար՝ «Ուսումնառության և դասավանդման փոփոխությունները COVID-19 համավարակի ազդեցությամբ» թեմայով: Գավառի պետական համալսարանից սեմինարին մասնակցեցին արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, նույն բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը, որակի ապահովման բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Քանաքարա Հայրապետյանը, ակադեմիական քաղաքականության բաժնի մասնագետ Օլգա Ղազարյանը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ԵՎ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐՈՒՄ

13.05.2023թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, ''TALK & TRAVEL'' միջազգային ուսումնական հաղորդակցության և զբոսաշրջության կենտրոնի ղեկավար Եղիշե Դաշտոյանը, «Գերմանիայի կրթական միջավայրը միջմշակութային համատեքստում» ակադեմիական փոխանակման ծրագրի շրջանակներում ԳՊՀ ուսանողների՝ բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Հովեյանի, հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Վարդանյանի, բնագիտական ֆակուլտետի «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Նոնա Հովեյանի և հեռակա ուսուցման ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» բաժնի 2-րդ կուրսի ուսանող Տարոն Բադալյանի հետ միասին 2023 թ. մայիսին մեկնեցին Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հաթինգեն, Բոննն, Քյոլն, Մյունսթեր քաղաքներ և Նիդերլանդների մայրաքաղաք Ամստերդամ: Այցն ուներ ճանաչողական, կրթական, հաղորդակցական և սոցիալական այլ հմտությունների զարգացման նպատակ:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՎՊՀ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

17.05.2023 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի կազմակերպած «Երիտասարդ գիտնականների գիտահետազոտական ներուժի բացահայտում» խորագրով հանրապետական ուսանողական 12-րդ գիտաժողովին: ԳՊՀ 11 ուսանողներ ներկայացրին զեկուցումներ:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՏԻՄԻՇՈԱՐԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

19.05.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Լալա Մկրտչյանը Ռումինիայի Տիմիշոարայի համալսարանում մասնակցեց 13-րդ «Էրազմուս» միջազգային շաբաթին, որին մասնակցում էին աշխարհի 30 երկրների 80 ներկայացուցիչներ: Դասավանդման արդի խնդիրներին նվիրված բաժանմունքում Լալա Մկրտչյանը հանդես եկավ դասախոսությամբ:

ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲՅԱՆԻ՝ «ԷՋԵՐ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ» ԳԻՐՔԸ՝ ԳՊՀ ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

20.05.2023թ.

Գավառի պետական համալսարանի հիմնադրման 30-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում տեղի ունեցավ «Հրանտ Խաչատուրի Հակոբյանի՝ «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գիրքը՝ ԳՊՀ ծննդյան վկայական» խորագրով ցերեկույթը, որը կազմակերպել էր հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, ԳՊՀ շրջանավարտ, բանասիրական գիտությունների թեկնածու Վարսիկ Ներսիսյանը՝ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողների մասնակցությամբ:

«ԺԱՅՌԻՑ ՄԱՍՈՒՐ Է ԿԱԹՈՒՄ, ԿԱՐՄԻՐ ՍԱՐՍՈՒՌ Է ԿԱԹՈՒՄ». ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՂԵՑԻԿԻ՝ ՍԱՀՅԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

20.05.2023թ.

Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը կազմակերպել էր «Ժայռից մասուր է կաթում» խորագրով գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված հայ մեծ բանաստեղծ, թարգմանիչ Համո Սահյանի ստեղծագործությանը:

Միջոցառմանը ներկա էին Գեղարքունիքի մարզպետարանի, Գավառի համայնքապետարանի ներկայացուցիչներ, կրթական և մշակութային կառույցների տնօրեններ, մանկավարժներ, ընթերցասերներ: Ներկա էր նաև արձակագիր, խմբագիր Տիգրան Նիկողոսյանը:

Գավառի պետական համալսարանից ցերեկույթին ներկա էին հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Համլետ Ղաջոյանը, բանասիրական ֆակուլտետի դեկան Թաթուլ Ասոյանը, փոխդեկան Ռուզաննա Սարգսյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ալլա Բագոյանը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԱԼՄԵՐԻԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

20.05.2023 թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Անիկ Բալագոզյանը Իսպանիայի Թագավորության Ալմերիա համալսարանում մասնակցեց Եվրոպական միության «ERASMUS+» ծրագրի շրջանակներում կազմակերպված 12-րդ միջազգային աշխատաժողովին: Անիկ Բալագոզյանը ներկայացրեց Գավառի պետական համալսարանի 30-ամյա պատմությունը, գործունեության հիմնական ուղղությունները, կառուցվածքը, կրթական ծրագրերը և իրականացվող միջազգային ծրագրերը:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

20.05.2023 թ.

Գավառի ավագ դպրոցում կայացավ հայ գրերի ստեղծման պատմությանը նվիրված ցերեկույթ: Այն կազմակերպել էր հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լիլիկ Հակոբյանը: Ներկա էին ավագ դպրոցի տնօրեն Նինա Ղուլոյանը, ուսուցիչներ, աշակերտներ և ծնողներ: Գավառի պետական համալսարանից ցերեկույթին մասնակցում էին բանասիրական ֆակուլտետի դեկան Թաթուլ Ասոյանը և փոխդեկան Ռուզաննա Սարգսյանը:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ‹‹ԱՐՎԵՍՏԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ›› ԹԵՄԱՅՈՎ

22.05.2023թ.

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հետաքրքիր միջազգային գիտաժողով՝ ‹‹Արվեստը որպես հոգևոր-մշակութային արժեքների զարգացման աղբյուր›› թեմայով: Գիտաժողովն անցկացվեց առկա-առցանց ձևաչափով: Համալսարան ժամանեցին և առկա ձևաչափով գիտաժողովին մասնակցեցին ներկայացուցիչներ Բելառուսի, Ռուսաստանի,

Լեհաստանի գործընկեր բուհերից: Կայացավ նաև ուսանողական հեռուստակամուրջ, որի ընթացքում զեկուցումներով հանդես եկան Գավառի պետական համալսարանի, Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի և Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի ուսանողներն ու դասախոսները:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
24.05.2023թ.

Գավառի պետական համալսարանի «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի ուսանողները բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի և դասախոսների ուղեկցությամբ մասնագիտական ճանաչողական էքսկուրսիայի շրջանակներում այցելեցին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացած կազմակերպություններ:

Համալսարանականները հյուրընկալվեցին «Ինսթիգեյթ», «Ռենդերֆորեստ», «Արեն Մեհրաբյան հիմնադրամ», «Պիքսարտ Ակադեմիա» կազմակերպություններում, այցելեցին «Ինժեներական քաղաքում» գործող Գիտության և տեխնիկայի թանգարան:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՍՍԵՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ
25.05.2023թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին Բելառուսի Հանրապետության Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի կողմից կազմակերպված արհեստական բանականությանը նվիրված էսսեների մրցույթին:
Մրցույթը բաղկացած էր երկու փուլից՝ ներբուհական և միջազգային:

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Լիլիթ Սեյրանյանը մրցույթի միջազգային փուլում զբաղեցրեց 3-րդ տեղը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆ՝ «ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՏԱՐԻ» ԽՈՐԱԳՐՈՎ VII ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑ
25.05.2023թ.

Երևանում կայացավ «ԱՊՀ երկրներում ռուսաց լեզվի տարի» խորագրով VII հանրապետական ուսանողական օլիմպիադան, որի փակման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ Հայ-Ռուսական համալսարանում: Գավառի պետական համալսարանից օլիմպիադային մասնակցեց տնտեսագիտական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողուհի Անահիտ Պարոնիկյանը, ում շնորհվեց «Ակտիվ մասնակցության համար» դիպլոմ:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԸ
03.06.2023 թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Քանաքարա Հայրապետյանի, արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Նունե Միրիբյանի ուղեկցությամբ ուսանողներն այցելեցին Հայաստանի պատմության թանգարան և Եղիշե Չարենցի տուն-թանգարան: Եղան Հայաստանի պատմության թանգարանի հնագույն, հելլենիզմի և նոր շրջանի զարդարվեստի բաժիններում:

ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ՖՈՐՄՈՒԼԱ ՎԱՐԴԵՆԻՍ» ԹՎԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

04.06.2023 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում կայացավ «Ֆորմուլա Վարդենիս» թվային կոնֆերանսը, որը կազմակերպել էր ‹‹TCF›› ընկերությունների խումբը՝ իր հիմնադրման տարեդարձի առիթով: Խորհրդաժողովի նպատակն էր Գեղարքունիքի և հարակից մարզերի բնակիչներին փոխանցել թվային մարքեթինգի, դիզայնի, բիզնեսի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասին արդի գիտելիք ու գործիքակազմ, կիսվել իրենց հաջողված փորձով և գիտելիքով, աջակցել երիտասարդներին մասնագիտական կողմնորոշման հարցում, ինչպես նաև խթանել զբաղվածությունը, ինքնազբաղվածությունը և գործարարությունը համայնքներում: Գավառի պետական համալսարանից միջոցառմանը մասնակցեցին բակավարիատի տարբեր խմբերի ուսանողներ, բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի անդամները՝ ամբիոնի վարիչ, «Լուսին Մոբայլ» ընկերության համահիմնադիր Վարազդատ Ավետիսյանի ղեկավարությամբ:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԷԿՈՏՈՒՐԻԶՄԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑ

10.06.2023թ.

Գավառի պետական համալսարանը Ֆրանսիայի ‹‹AFRAT›› կազմակերպության ներկայացուցիչների հետ միասին բուհի ուսանողների համար կազմակերպեց էկոտուրիզմին նվիրված դասընթաց: Մասնագետները ներկայացրին լեռնային արահետների մշակման սկզբունքները, ուղեկցորդների գործունեության առանձնահատկությունները, անդրադարձան Հայաստանում էկոտուրիզմի զարգացման ուղղություններին և հեռանկարներին:

ԿԱՅԱՑԱՎ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԷՊԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

10.06.2023թ.

2023թ. հունիսի 10-ին Գավառի պետական համալսարանում մեկնարկեց ‹‹Բանահյուսություն և գրականություն›› խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովը, որին առկա և առցանց ձևաչափով մասնակցեց հարյուրից ավելի անձ:

Հրավիրում ենք բոլոր ցանկացողներին ս. թ. հունիսի 11-ին, ժամը 11:00-ից առցանց ձևաչափով մասնակցելու գիտաժողովի աշխատանքներին: Գիտաժողովն անցկացվեց ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող ««Սասնա ծռեր» էպոսը և եվրոպական էպիկական ավանդույթը» թեմայով հետազոտական ծրագրի շրջանակում, որն իրականացվում է ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնում՝ ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանի ղեկավարությամբ: Գիտաժողովին մասնակցեցին բուհերի դասախոսներ, գիտաշխատողներ, Գեղարքունիքի մարզի դպրոցների ուսուցիչներ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԵՄ ‹‹ERASMUS+ FLEXWBL›› ԾՐԱԳՐԻ ԵՌՕՐՅԱ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

11.06.2023 թ.

2023թ. հունիսի 6-ից 8-ը Հայաստանի Հանրապետության երեք բուհում՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում,

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում և Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական Միության «ERASMUS + FLEXWBL›› ծրագրի հերթական աշխատաժողովը: Ծրագիրը նվիրված է աշխատանքահեն կրթությանը: Մասնակից եվրոպական բուհերն են Ավստրիայի Լինցի համալսարանը, Լատվիայի Լիեպայա և Լիտվայի

Կլայպեդա համալսարանները: Աշխատաժողովին Գավառի պետական համալսարանից մասնակցեցին արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դասախոս, ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի աշխատակիցներ Նունե Միրիբյանը և Սիրանույշ Մկրտչյանը:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ
13.06.2023 թ.

Երևանի պետական համալսարանում այսօր մեկնարկեց «Գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը՝ տնտեսության արդիականացման շարժիչ ուժ» խորագրով հայ-ռուսական գիտակրթական երկօրյա համաժողովը, որին մասնակցեց շուրջ 200 պատվիրակ: Գավառի պետական համալսարանից համաժողովին մասնակցեցին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հակոբ Ղուլոյանը:

ԿԱՅԱՑԱՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ԴԱՍԸՆԹԱՑ
26.06.2023թ.

Շարունակական մասնագիտական զարգացման ծրագրի շրջանակներում Գավառի պետական համալսարանի կողմից իրականացվեց Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վերաբերյալ վերապատրաստման դասընթաց, որին մասնակցեցին ՀՀ Գեղարքունիքի մարզի պետական ոչ առևտրային կազմակերպությունների 75 հաշվապահներներ: Մասնակիցները շնորհակալություն հայտնեցին Գավառի պետական համալսարանին ընձեռված հնարավորության համար:

ԳՊՀ-Ն ԿՅԱՆՔ ՃԱՆԱՊԱՐՀԵՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 25-ՐԴ ՍԵՐՆԴԻՆ
05.07.2023թ.

Գավառի պետական համալսարանը 2023 թվականի մայիսի 5-ին նշեց իր հիմնադրման 30-րդ տարեդարձը և հուլիսի 5-ին կյանք ճանապարհեց շրջանավարտների 25-րդ սերնդին: Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտությունների շրջանավարտները բուհն ավարտեցին և սահմանված կարգով արժանացան համապատասխան որակավորումների՝ պաշտպանելով ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահներն ու անդամները հայտնեցին իրենց գոհունակությունը շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության աստիճանի, նրանց ներկայացրած հետազոտությունների որակի, թեմաների արդիականության, վերլուծությունների և եզրակացությունների, կատարած առաջարկությունների տեսական ու գործնական նշանակության վերաբերյալ:

Հաջողություն ենք մաղթում ԳՊՀ բոլոր շրջանավարտներին:

Նունե Միրիբյան՝
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության
բաժնի մասնագետ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ազգանուն, անուն, հայրանուն	*ծառայողական*	*Էլեկտրոնային փոստի հասցե*
ԳՊՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ղազարյան Էդուարդ Մուշեղի	**0-60-46-02-01** **0-264-2-57-75**	info@gsu.am
ԳՊՀ ռեկտոր Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	**0-60-46-02-01**	rector@gsu.am
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կուտուզյան Նելլի Ալբերտի	**0-60-46-04-03**	n.kutuzyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկան Ասոյան Թաթուլ Արտիկի	**0-60-46-12-44**	t.asoyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Մարտին Պատվականի	**0-60-46-12-55**	m.avagyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Ղաջոյան Համլետ Գիրշայի	**0-60-46-12-70**	h.ghajoyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	**0-60-46-12-66**	s.amirkhanyan@gsu.am
Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ	**0-60-46-12-90**	faculty-of-correspondence-course@gsu.am
Ակադեմիական քաղաքականության բաժին	**0-60-46-12-42**	t.khachikyan@gsu.am
Ուսանողական խորհրդի նախագահ Պողոսյան Անահիտ Վաղինակի	**0-60-46-12-40**	student@gsu.am
Ուսանողական գիտական ընկերության նախագահ Միրիբյան Արփի Գարեգինի	**0-60-46-12-60**	sssgsu@mail.ru
Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Սարգսյան Ռուզաննա Մարատի	**0-60-46-12-40**	r.sargsyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Հերգնյան Մարիամ Նորիկի	**0-60-46-12-60**	m.hergnyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	**0-60-46-12-70**	g.gevorgyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Խանդանյան Սիրանուշ Կառլենի	**0-60-46-12-50**	s.khandanyan@gsu.am
Որակի ապահովման բաժին	**0-60-46-12-43**	qa@gsu.am
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին	**0-60-46-12-56**	IT-Department@gsu.am
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	**0-60-46-12-46**	g.muradyan@gsu.am
Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	**0-60-46-12-41**	kh.safaryan@gsu.am
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	**0-60-46-12-49**	l.sirunyan@gsu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը, արդյունքները, խնդիրները.....	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին.....	9
Միջազգային համագործակցություն.....	46
Դասախոսների գործուղումներ.....	60
Ուսումնագիտական աշխատանքներ.....	66
Ֆինանսական վերլուծություն.....	94
Բանասիրական ֆակուլտետ.....	104
Բնագիտական ֆակուլտետ.....	128
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.....	145
Տնտեսագիտական ֆակուլտետ.....	159
Հեռակա ուսուցման ֆակուլտետ.....	185
Ակադեմիական քաղաքականության բաժին.....	190
Որակի ապահովման բաժին.....	196
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժին	203
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին.....	211
ԳՊՀ գրադարան	214
ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժին.....	219
ԳՊՀ արխիվ.....	225
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն.....	228
ԳՊՀ Ուսանողական խորհուրդ	230
ԳՊՀ ուսանողական գիտական ընկերություն.....	234
Ֆինանսական, տնտեսատեխնիկական գործունեություն.....	237
ԳՊՀ հիշարժան միջոցառումներ.....	243
Տեղեկատու.....	273

CONTENTS

The Objectives, Outcomes and Process of GSU Strategic Program Implementation	3
General Information about the University.....	9
International Cooperation.....	46
Business Trips of the Academic Staff.....	60
Educational and Scientific Activities.....	66
Financial analysis.....	94
Faculty of Philology.....	104
Faculty of Natural Sciences.....	128
Faculty of Humanities.....	145
Faculty of Economics.....	159
Faculty of Part-Time Education.....	185
Academic Policy Department.....	190
Quality Assurance Department.....	196
GSU Foreign Relations and Information Department.....	203
Information Technology Department.....	211
GSU Library.....	214
GSU Department of Human Resource Management	219
GSU Archive.....	225
GSU Trade Union.....	228
GSU Student Council.....	230
GSU Student Scientific Society.....	234
Financial, Economic and Technological Activities.....	237
Memorable events of GSU.....	243
Information leaflet.....	273

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT OF THE 2022-2023 ACADEMIC YEAR AND SELF-ASSESSMENT REPORT

ԳՊՀ
Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան 1,
հեռ. (37460) 46-02-01
կայք. www.gsu.am
էլ. փոստի հասցե - infogsu@mail.ru
info@gsu.am

GSU
Gegharkunik Marz
1 Hrant Hakobyan Str., Gavar
tel. (37460) 46-02-01
website: www.gsu.am
E-mail - infogsu@mail.ru
info@gsu.am